140 ՏԱՐԻ ԱՌԱՋ՝ 1871Թ. ՀՈՒՆՎԱՐԻ 10-ԻՆ (22-ԻՆ), ԾՆՎԵՑ XX ԴԱՐԻ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՄՏՔԻ ԱՄԵՆԱԱԿԱՆԱՎՈՐ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻՑ ՄԵԿԸ՝ ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԴՈՆՑԸ:

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ

ՀԻՄՆԱԴՐԻ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՍՑԵ՝ ք.ԿԱՊԱՆ, ՇԱՀՈՒՄՅԱՆ 20/32
ՀԵՌԱԽՈՍ՝ (0285) 5 25 63 • (091) 45 90 47 • (077) 06 28 02

Սյունյաց երկիր

ՏԱՍՆՕՐՅԱ ԹԵՐԹ

Գինը՝ 500 դրամ:

ԵՐԵՔՇԱԲԹԻ
18 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2011Թ • № 17 (236)

www.syuniacyerkir.am

Հայոց պատմագիտության մեջ նրա տեղը դեռ շատ երկար ժամանակ բաց կմնա:

ԳԱՌՆԻԿ ԳՅՈՒՋԱԼՅԱՆ

Նիկողայոս Ադոնց, գործ՝ Ռոբերտ Կամոյանի, կտավ, յուղաներկ, 82x64.5, 2011թ.

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԴՈՆՑ. աշխարհահռչակ հայագետն ու բյուզանդագետը Սիսիանից

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Բացառիկ պատուհան դեպի Սյունիքի անցյալը

«Սյունյաց երկրի» էջերն այսօր նվիրում ենք Նիկողայոս Ադոնցին: Մեզ համար բաղձալի ու ախորժելի այս ձեռնարկման համար լուրջ ազդակներ ունենք, որոնցից մի քանիսին, ինչպես եւ առաջարկվող նյութի պարագծին, անդրադառնում ենք սփորեւ:

Նախ՝ Նիկողայոս Ադոնցը բոլոր ժամանակների ամենանշանավոր սյունեցիներից է, միջազգային անուրանալի արժեք, ով փառք է բերել (եւ շարունակում է բերել) հայագիտությանը: Իսկ «Սյունյաց երկիրը» իր առաքելության հիմնական ուղղություններից մեկն ի սկզբանե համարել եւ համարում է Սյունյաց մեծերին ու անվանիներին առավել ճանաչելի դարձնելը, նրանց կյանքն ու գործունեությունն ըստ պատշաճի սերունդներին ներկայացնելը: Ուրեմնեւ՝ ո՞վ է Նիկողայոս Ադոնցը, որտեղի՞ց է սերվում, կյանքի ի՞նչ ուղի է անցել. ահա հարցերի առաջին խումբը, որ ծառացած է թերթի սույն համարի առջեւ: Դրանց պատասխանն ավելի տպավորիչ կլինի, կարծում ենք, եթե ներկայացվի նաեւ նրա բնօրրանը՝ Սիսիանն ու Բռնակոթը, ինչպես եւ վարվում ենք: Կարեւոր է հարցի պատասխանը, թե ինչպես ենք Սյունիքում, հատկապես Սիսիանում հիշում նրա անունն ու գործը, հաղորդվում նրա գիտական ժառանգությանը:

Տասնամյակներ շարունակ, տարբեր պատճառներով, մեր պատմագիտությունը, մեր բանասիրությունը հրամցվել են այնպես, որ բուհերի ուսանողներն անգամ նվազագույն գիտելիքներ չեն ստացել ականավոր այդ գիտնականի աշխատությունների վերաբերյալ, մինչդեռ. **«Նրա շատ ուսումնասիրություններ դուրս են եկել ազգային պատմության շրջանակներից եւ դարձել համընդհանուր պատմությունը հարստացնող արժեքներ»** (պրոֆեսոր Պետրոս Հովհաննիսյան):

Հիմա, փա՜ռք Աստծո, նման խոչընդոտներ եւ նյութի անբավարարություն չկա, եւ չենք կարող անտարբեր անցնել մեծ գիտնականի ժառանգության կողքով, մանավանդ որ համաշխարհային ճանաչում ունեցող հայագետի ու

Շարունակությունը՝ էջ 10

«Սյունյաց երկրի» սույն համարը տպագրվում է Սիսիանի քաղաքապետ Աղասի Հակոբջանյանի նախաձեռնությամբ ու հովանավորությամբ, ինչի համար շնորհակալություն ենք հայտնում նրան: Համարի տպագրությանն աջակցել են նաեւ Սյունիքի մարզի սերմարտադրողների միության նախագահ Գագիկ Խաչատրյանը, Բռնակոթի գյուղապետ Ատոմ Առաքելյանը, որոնց նույնպես շնորհակալություն ենք հայտնում:

Սյունյաց աշխարհ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՄԱՐԶԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՕՐԱԳԻՐ
ԳԱՌԻՆ՝ ՍԻՍԻԱՆ, ՍԻՍԻԱՅԻ ՇՐՋ. 20/32
ՀԵՌԱԽՈՍ՝ (0285) 5 25 63 = (091) 45 90 47 = (077) 06 28 02
էլ. հասցե www.syuniacyerkir.am
էլ. փոստ syuniacyerkir@mail.ru
տպագրվում է 2003թ. հոկտեմբերի 1-ից
հիմնադիր եւ հրատարակիչ՝ «Սյունյաց աշխարհ» ՍՊԸ
№ 17 236
18 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2011

ՀԱՅՐԵՆԻ ԵՂԵՐՔ

140 ՏԱՐԻ ԱՌԱՋ՝ 1871Թ. ՀՈՒՆՎԱՐԻ 10-ԻՆ (22-ԻՆ), ԾՆՎԵՑ XX ԴԱՐԻ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՄՏՔԻ ԱՄԵՆԱԿԱԿԱՆԱՎՈՐ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻՑ ՄԵԿԸ՝ ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԴՈՆՑԸ:

Լուսանկարը՝ Կ. Հովհաննիսյանի

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԴՈՆՑԻ ՀՈՒՇԱՐՁԱՆԸ ՍԻՍԻԱՆՈՒՄ, 1990թ., հեղինակ՝ Արտաշես Հովսեփյան, ճարտարապետ՝ Ռոմեո Զուլհակյան: Թե ովքեր եւ ինչպես կառուցեցին հուշարձանը, կարդացե՛ք 50-րդ էջում:

Նա հայ միտքը հարստացրեց անանց արժեքներով

ԽՈՍՔ՝ ՀՈԲԵԼՅԱՆԻ ԱՌԻԹՈՎ

ՍՈՒՐԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ
Սյունիքի մարզպետ

Մենք ուրախ եւ հպարտ ենք, որ Սյունյաց բարեբեր արգանդն աշխարհին, գիտությանը պարգեւել է Նիկողայոս Ադոնց, որ հռչակավոր գիտնականի հայրենակիցն ենք: Եվ ուրեմն մեծ պատիվ է մեզ համար ծննդյան 140-ամյակի կապակցությամբ խոսք ասել նրա մասին:

Նիկողայոս Ադոնցի գիտական ժառանգությունը, հիրավի, լուրջ ներդրում է հայագիտության, համաշխարհային պատմագիտության մեջ: Նրա՝ ավելի քան հարյուրի հասնող ուսումնասիրությունները վերաբերում են պատմագիտությանը, բանասիրությանը, լեզվաբանությանը, կրոնի, եկեղեցու եւ արվեստի պատմությանը, Հայկական հարցին եւ այլ թեմաների: Դրանց մի մասը, վստահաբար կարող ենք ասել, հայագիտության ոսկե ֆոնդի մնայուն արժեքներից է: Առանձնապես նկատի ունեմ «Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում», «Դիոնիսիոս Թրակացին եւ հայ մեկնիչները», «Հայաստանի պատմություն. ակունքներ X-VIդդ. Ք.ա.» կոթողային գործերը:

Եթե ընթերցող լայն հասարակությունը (ինչ-որ չափով նաեւ գիտական աշխարհը) տասնամյակներ շարունակ զրկված է եղել Ն.Ադոնցի գիտական ամբողջ ժառանգությանն աղերսվելու հնարավորությունից, ապա դա բոլորիս եւ հատկապես հանրապետության կրթագիտական հաստատությունների բացթողումն է: Թեեւ ուշացումով, մենք պետք է հնարավորինս նպաստենք նրա երկասիրությունների ի մի հավաքմանը, նրա անտիպ եւ աշխարհի տարբեր գրապահոցներում ցրված նյութերի ի հայտ բերմանը: Խնդիրը շատ հստակ է՝ պետք է հնարավորն անել, որ Ն.Ադոնցի գիտական ժառանգությունն ամբողջապես դառնա ընթերցողի սեփականությունը: Այդ հարցում ճախանձախնդիրներից պետք է լինեն նաեւ Գորիսի պետական համալսարանի պատմության եւ բանասիրության ամբիոնները, Սյունիքի հայագիտական կենտրոնը:

Տեղին է խոստովանել, որ տարիներ շարունակ որոշ աշխատանք, այնուամենայնիվ, կատարվել է Ն.Ադոնցի գիտական ժառանգության հրատարակման ուղղությամբ: Այդ առումով անգնահատելի է պարբերական ամսուկի (նաեւ օտարալեզու) խաղացած դերը, դրանցից մի մասին աշխատակցում էր ինքը՝ Ն.Ադոնցը: Նրա կենդանության օրոք պատրաստված առաջին ժողովածուն, սակայն, լույս տեսավ մահվանից հետո՝ 1948-ին: 1960-ականներից հետո միայն կոնկրետ քայլեր ձեռնարկվեցին Ն.Ադոնցի առանձին գործերի հրատարակման ուղղությամբ: Ներկայումս հրատարակվում է ակամավոր հայագետի երկերի համահավաքը՝ հինգ հատորով: Իհարկե, դա Գալուստ Գյուլբենկյան հիմնարկության Հայկական մատենաշարի եւ մասնավորապես դոկտոր Զավեն Եկավյանի նախաձեռնությունն է, բայց դրանում անգերազանցելի է անվանի ադոնցագետ, հարգարժան պրոֆեսոր Պետրոս Հովհաննիսյանի դերը, որին մեր անկեղծ երախտագիտությունն ենք հայտնում:

Այսօր հարկ կա անդրադառնալ նաեւ Ն.Ադոնցի հիշատակի հավերժացման խնդրին, թեեւ այդ հարցը մասնակիորեն լուծվել է եւ Երեւան քաղաքում, եւ Սիսիանում: Ճակատագրի դառը հեգնանքով անշիրիմ ու անգավակ մնացած Ադոնցի հիշատակը պետք է հավերժացվի նորովի եւ նրա անվանը պատշաճող մակարդակով: Նրա երգած Հայաստանն ազատ եւ անկախ Հայաստանն է, որ կառուցում ենք: Ուստիեւ ըստ արժանվույն պետք է հավերժացվի նրա հիշատակն անկախ Հայաստանում: Մենք արդեն ձեռնամուխ ենք եղել նրա բռնակության տան վերակառուցմանը, որը յուրօրինակ քայլ կլինի այդ ճանապարհին:

Շատ կարեւոր է, որ ածող սերունդը, ընթերցող հասարակությունը հնարավորինս ակտիվ առնչվեն նրա գիտական ժառանգությանը: Այդ գործում լուրջ անելիք ունեն գրադարանները, կրթական հաստատությունները: Բուհերի, միջին-մասնագիտական կրթական հաստատությունների, հանրակրթական դպրոցների՝ պատմությանն ու բանասիրությանն առնչվող ծրագրերում, ըստ էության, թեմային առնչվող որոշ լրացումներ ու վերանայումներ կատարելու ժամանակն է: Գիտական ժառանգությունը հատկապես սյունիքյան հանրությանը մոտեցնելու ձեւերից մեկն էլ Սիսիանում կազմակերպվող Ադոնցյան օրերն են, որ պետք է ավանդական ու համայնքային դարձնել, հարստացնել նոր բաղադրիչներով, անցկացնել ադոնցագիտության երեւելի դեմքերի մասնակցությամբ:

Ծննդյան 140-ամյակի առիթով վերստին ծանոթանալով Ն.Ադոնցի ուսումնասիրություններին՝ կրկին հանգեցիցք եզրակացության, որ իր ժողովրդի պատմության բազում առեղծվածները հանգամանալից կարող էր քննել միայն իր երկրի, իր ժողովրդի հանդեպ բուռն սեր ունեցող գիտնականը: Եվ այդ հայրենասիրությունն էր այն խթանը, որի օգնությամբ նա կարողացավ լուծել բազմաթիվ առեղծվածներ, նորովի մեկնաբանել հայ հին մատենագիրներից շատերի անձն ու գործը եւ իր մնայուն նպաստը բերել հայ պատմաբանասիրական մտքին:

Անշուշտ, Ադոնցի պես գիտնականը կարող է պատիվ բերել յուրաքանչյուր ազգի:

Այո՛, բոլորս պետք է սովորենք Նիկողայոս Ադոնցից, թե ինչպես են սիրում հայրենիքը, թե ինչ է հայրենասիրությունն առհասարակ: Եվ տեղին է հիշել նրա՝ հայ ժողովրդին հղած բազում պատվիրաններից գոնե այս մեկը, որ այժմեական է. **«Ոչ որ չգիտի՝ անցքերի թավալգլոր անիվը ո՞ւր է տանում: Պատրաստ եւ զգաստ լինենք, որպեսզի չկորչենք անփառունակ...»:**

Ակնածալուր լինենք նրա պատվիրանին:

Ցավոք, մենք զրկված ենք ծննդյան 140-ամյակի առիթով նրա շիրմին այցելելու հնարավորությունից: Բայց մենք դրա փոխարեն բոլոր սյունեցիներով խոնարհվում ենք նրա վեհությանն առաջ եւ հավաստում երդիս՝ յուրաքանչյուրս մեր տեղում, յուրաքանչյուրս մեր հնարավորության սահմաններում ամեն ինչ կանենք Նիկողայոս Ադոնցի երազած Հայաստանը, որ բոլոր ժամանակների ազնիվ հայորդիների երազանքն է եւ կառուցելու համար: Իսկ Սյունիքը՝ նրա բնօրրանը, ընդմիշտ անշեջ կպահի նրա հիշատակը:

■

տպագրվում է 2003թ. հոկտեմբերի 1-ից
հիմնադիր եւ հրատարակիչ՝ «Սյունյաց աշխարհ» ՍՊԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՄԱՐԶԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՕՐԱԳԻՐ
ԳԱՌԻՆ՝ ՍԻՍԻԱՆ, ՍԻՍԻԱՅԻ ՇՐՋ. 20/32
ՀԵՌԱԽՈՍ՝ (0285) 5 25 63 = (091) 45 90 47 = (077) 06 28 02
էլ. հասցե www.syuniacyerkir.am
էլ. փոստ syuniacyerkir@mail.ru
Սյունյաց աշխարհ

ՀԱՅՐԵՆԻ ԵՂԵՐՔ

140 ՏԱՐԻ ԱՌԱՋ՝ 1871Թ. ՀՈՒՆՎԱՐԻ 10-ԻՆ (22-ԻՆ), ԾՆՎԵՑ XX ԴԱՐԻ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՄՏՔԻ ԱՄԵՆԱԿԱԿԱՆԱՎՈՐ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻՑ ՄԵԿԸ՝ ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԴՈՆՑԸ:

Լուսանկարը՝ Կ. Հովհաննիսյանի

Համո Սահյանի պուրակը Սիսիանում

Սիսիանը հիշում է իր նշանավոր զավակին

ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԱԶԳԻ ՀՈԳԵՎՈՐ ՆԿԱՐԱԳՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՐԵՎՈՐ Է, ԹԵ ՈՐՔԱՆ ԵՎ ԻՆՉՊԵՍ Է ՀԻՇՈՒՄ ԻՐ ՄԵԾԵՐԻՆ:

ԱՂԱՍԻ ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ
Սիսիանի համայնքի ղեկավար

Սիսիան աշխարհի կյանքում հայ մեծ պատմաբան, հայագետ, բյուզանդագետ, լեզվաբան, հայ ու հայասեր, հայրենասեր Նիկողայոս Ադոնցը պարզապես հիշողություն չէ. թեեւ նա Սիսիանից հեռացել է, երբ ընդամենը տասնմեկ տարեկան էր, միշտ ապրել է հրնթացս նրա կյանքին, առել եւ տվել է այն, ինչ, իրավամբ, կարող են տալ ու առնել կարոտյալ հայրենիքը եւ նրա սիրելի որդին:

Ադոնցի ծննդավայրը պատմական Սյունիքի նշանավոր Բռնակոթ գյուղն է: 17-րդ դարում գյուղաքաղաք կոչվող այս բնակավայրը տնտեսական մեծ վերելք է ապրում՝ գլխավորելով Տաթեւի վանքի հարկատուների ցուցակը: Գյուղում վերաբնակություն են հաստատում ոչ միայն աղքատության եզրին գտնվող շինականներ, այլեւ ունեւոր մելիքական տներ: Եռեքադրվում է, որ հենց այդ ժամանակ էլ՝ 1700-ական թվականներից սկսած, Բռնակոթում հիմնավորվում է Սիսիանում շատ հայտնի Սաֆրազբեկյան տոհմը: Վերջիններիս հետ Բռնակոթ են տեղափոխվում նաեւ Ադոնցները, որոնց հետ Սաֆրազբեկյանները քավոր-սանիկ էին (Ադոնցն օգտագործում է Սյունիք-Արցախում տարածված «պելի» բառը):

Հենց այս՝ Բռնակոթ գյուղի ծխական մատյանում է 1871թ. հունվարի 10-ին գրանցվել ծնունդը Նիկոլայ Գեւորգի Առաքելյանի՝ իմա՝ Նիկողայոս Ադոնցի:

Բռնակոթ գյուղի Սբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում սպասավորել են Ադոնցի պապը, նաեւ հայրը՝ Առաքել եւ Գեւորգ Տեր-Ավետիքյանները, սրան կից դպրոցում է տառաճանաչություն սովորել Ադոնցը: Գյուղի բոլոր անցքերի ակամատես եկեղեցին հիշատակներ ունի պահած Ադոնց նշանավոր տոհմից: Եկեղեցու հենց կենտրոնի սյան վրա փորագրված են այն բռնակոթցիների անունները, ովքեր Տաթեւի եպիսկոպոս՝ ծագումով Ագեղակոթ գյուղից, Յովսեփի նախաձեռնությամբ (զահակալել է 1775-ից մինչեւ 1796թ.), իրենց ծախքերով 1787թ. մի մատուռ-դամբարան են շինել Գրիգոր Տաթեւացու գերեզմանի վրա: Դա նշանավոր այդ բնակավայրի ներդրում-առաքելությունն էր՝ ի հիշատակ Գրիգոր Տաթեւացու, եւ հայտնի այն բանի, որ Բռնակոթը բովանդակ Սյունիքի հզոր ու անմրցակից բնակավայրն է: Այդ ցուցակում կա նաեւ Ադդէ անունը, որը եւ նախահայրն է այն տոհմի, որ կոչվում է Ադոնց: Ասել է թե, դեռ 1775-ից էլ շատ առաջ Ադոնց տոհմը բնակվում էր Բռնակոթում: Իր տոհմի ծագման պատմությանն Ադոնցն անդրադարձել է «Դավիթ բեկ եւ Տէր Աւետիքի սերունդ» հոդվածում՝ լույս տեսած «Հայրենիք» ամսագրում (Բոստոն, 1937թ.):

Ադոնցների տոհմի քահանայական լինելու մասին է հուշում նաեւ Ադոնց բառը, որով Սյունիքում ընդունված էր կոչել քահանաների ընտանիքները (տես՝ բարբռ.՝ տեր-դեր-ադեր-ադոնց ձեւափոխումը): Գյուղի հավատավոր ժողովրդին մատուցած ծառայությունների համար էր, որ եկեղեցու բակի աջ կողմում ամփոփվեց 1912թ. մահկանացուն կնքած Գեւորգ Առաքելի Ադոնցի՝ գիտնականի հոր աճյունը: Այդ ժամանակ Ն.Ադոնցը, ով Ն.Մառի արշավախմբի կազմում մասնակցում էր Անիի պեղումներին, եկավ Բռնակոթ՝ մասնակցելու հոր թաղմանը: Գեւորգ Ադոնցը մահացել է 70 տարեկանում: Նրա տապանաքարը չի տարբերվում մյուսներից՝ համեստ ու պարզ: Այն ունի հետեւյալ արձանագրությունը. **«Այս է տապան Ադոնց Գեւորգ Համո Սահյանի պուրակը Սիսիանում**

Առաքելի ծն. 1842 թ.վ. 1912թ. Հիշ. Ադոնց Դյանայից»: Դյանա (Դանա) Ռոստոմբեկյանը Ադոնցի մայրն է:

Եկեղեցուց ոչ շատ հեռու գյուղի կենտրոնում, կանգուն է այն տունը, որտեղ ծնվել եւ մանկությունն է անցկացրել Ն.Ադոնցը: Ընդունված եւ հարգի սովորույթ էր Սյունիքում. քահանայի տունը կառուցվում էր եկեղեցուց այնպիսի հեռավորության վրա, որ վերջինս քայլելով անցնի տուն-եկեղեցի ճանապարհը՝ այդ ընթացքում առնելով հավատացյալների բարեւը, զրույցի բռնվելով նրանց հետ, տեղյակ դառնալով իր ժողովրդի հոգսերին: Ադոնց տունը, հիմա էլ Բռնակոթում այդպես են կոչում այն, Սյունիքի ժողովրդական ճարտարապետության ոճով կառուցված երկհարկ կառույց էր՝ կից կամարակապ սրահով (1931թ. երկրաշարժի ժամանակ երկրորդ հարկը՝ արեւելք նայող պատշգամբի հետ, քանդվել է. հիմա կանգուն է առաջին հարկը): Այստեղ քահանայիվ էին սպասում նրա մոտ որեւէ հարցով եկած գյուղացիները. այն լավագույնս պատսպարում էր նրանց Սիսիանի սուր քամուց, ձյուն-անձրեւից: Տան դարպասը եւս կամարաձեւ է: Դրան ագուցված բարավորն ունի կառուցման արձանագրություն. **«Այս է տունն սուրբեաց բռնակոթցի բարոն Հովհաննէս Առաքելեան Տեր Աիէտիսյանցի:1861»**:

Ադոնցը Բռնակոթում վերջին անգամ եղել է 1916թ. ամռանը, երբ Ն.Մառի եւ Հ.Օրբելու արշավախմբի կազմում գործունվել էր ռուսական բանակի կողմից ազատագրված Մուշ եւ Էրզրում, ղեկավարել Վանի հնագիտական արշավախումբը: Օգտվելով Անդրկովկասում գտնվելու առիթից՝ նա այցելում է իր ծննդավայրը: Հավանաբար այդ այցի ժամանակ է Ն.Ադոնցը Սիսիանի Սյունի նշանավոր վանքի տանիքի վերանորոգման համար թիթեղ ձեռք բերելու խոստում տվել: Սիսիանում հիմա էլ հիշում են, որ եկեղեցու պատի տակ նստած ծերուկները, տեսնելով լայնեզր գլխարկով «օտարերկրացուն» (Ադոնցը միշտ գեղեցիկ եւ ճաշակով էր հագնվում, որը պարզ երեւում է նաեւ նրա լուսանկարներից), գիտնականին ցույց էին տվել գմբեթի վնասված տանիքը, որտեղից անձրեւաջրերը ներս էին լցվում: Ադոնցը Թիֆլիսից էր ուղարկել թիթեղը՝ տեր մնալով իր խոստմանը, ինչպես վայել է մտավորականին եւ սյունեցի տղամարդուն: Սյունի վանքի թիթեղե տանիքը նոր ծածկով փոխարինվել է 20-րդ դարի 70-ական թվականներին գմբեթի վերանորոգման ժամանակ:

Ադոնցն իր աշխատությունների մեծ մասում անդրադարձել է Սյունիքին, Սիսիանին, այս երկրի կնճռոտ, պարզաբանում է պահանջող հարցերին: Նա նաեւ պրպտել է իր տոհմի ծագման պատմությունը «Դավիթ բեկ եւ Տէր Աւետիքի սերունդ» հոդվածում, բերել փաստեր՝ ապացուցելու համար, որ ինքն իրավացիորեն է կրում Ադոնց ազգանունը, որ Ադոնց տոհմի նախահայրն ինքը՝ զենք կրող նշանավոր քահանան է՝ Տեր-Ավետիսը՝ թաղված Գորիսի

Շարունակությունը՝ էջ 31

ՀԵՌԱՍԻՐԻ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ
ՍՅՈՒՆԻՔԻ ՊԱՐԱՐԱՆԱԿԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ
Գնահատ՝ 1/4էջ, 20/32
Հեռախոս՝ (0285) 5 25 63 = (091) 45 90 47 = (077) 06 28 02
էլ. հասցե՝ www.syuniacyerkir.am
էլ. փոստ՝ syuniacyerkir@mail.ru

տպագրվում է 2003թ. հոկտեմբերի 1-ից ■
հիմնադիր եւ հրատարակիչ «Սյունեյաց աշխարհ» ՍՊԸ ■

№ 17 236
18 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2011

ԿՅԱՆՔՆ ՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

140 ՏԱՐԻ ԱՌԱՋ՝ 1871Թ. ՀՈՒՆՎԱՐԻ 10-ԻՆ (22-ԻՆ), ԾՆՎԵՑ XX ԴԱՐԻ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՄՏՔԻ ԱՄԵՆԱԿԱԿԱՆԱՎՈՐ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻՑ ՄԵԿԸ՝ ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԴՈՆՑԸ:

Վիթխարի անհատականություն

ՊՐՈՖԵՍՈՐ ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԴՈՆՑԻ ԾՆՆԴՅԱՆ 140-ԱՄՅԱԿԻ ԱՌԻԹՈՎ

ՊԵՏՐՈՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր

Հայ ականավոր պատմաբան, բանաստեղծ, բյուզանդագետ, կովկասագետ Նիկողայոս Ադոնցի մահվան պահից անցել է մոտ 70 տարի, սակայն բովանդակ հայագիտության մեջ այդ տարիների ընթացքում չգտնվեց որեւէ մեկը, որ բժեշտ նրա տեղը, շարունակեր նրա կիսատ թողած գործը: Սա է Ն.Ադոնցի գործի ինչպես մեծությունն ու վեհությունը, այնպես էլ ողբերգությունը: Խոսքն, անշուշտ, չի վերաբերում առանձին ինչ-որ փաստերի կամ խնդիրների, որոնք, բնականաբար, տարիների ընթացքում կարող էին եւ ստացել եւ փոքր-ինչ այլ ձեւակերպում կամ հակառակ ապացուցում, ճշգրտում: Խոսքն ընդհանրապես գործի մասին է: Զարմանալիորեն մարգարեական դարձան դեռեւս 1942թ. Ն.Ադոնցի մահվան կապակցությամբ պատմաբան Գառնիկ Գյուզալյանի գրած հետեւյալ տողերը. «Հայոց պատմագիտության մեջ նրա տեղը դեռ շատ երկար ժամանակ բաց կմնա» (1):

Արտասահմանի հայ իրականությունը չկարողացավ եւ չէր էլ կարող տալ նման մի մեծություն, իսկ խորհրդահայ իրականությունն էլ, կաղապարված վարչահրամայական, պատվերային ու հանձնարարված գաղափարներով, ի վիճակի չէր ծնել վերլուծող ու համադրող մտքի այն ազատ ու անկաշկանդ փայլատակումը, այն ինտելեկտն ու պատրաստությունը, որ պետք է շարունակեր Ադոնցի գործը, կարողանար նոր նյութերի քննության հիման վրա նոր տեսակետներ զարգացնել եւ նոր համակարգ մշակել:

Երեւի այս իրողությամբ պետք է բացատրել նաեւ այն, որ Ն.Ադոնցի կյանքն ու գործն էլ առայսօր չեն արժանացել պատշաճ ուշադրության (2): Հայ պատմաքննադատական միտքը դեռ չի տվել նրա կյանքի ու գործի անկողմնակալ, պատշաճ գնահատականը:

Նիկողայոս Ադոնցը ծնվել է 1871թ. հունվարի 10-ին (22-ին) Սիսիանի Բռնակոթ գյուղում (3): Նա սերում է հայտնի ընտանիքներից: Հայրը՝ Գեւորգ Առաքելի Տեր-Ավետիքյանը, ծոռն էր Դավիթ Բեկի զինակից Տեր-Ավետիքի, իսկ մայրը՝ Մելիք Մանուչարի եղբոր՝ Ռուստամի դուստրը՝ Դաճա Ռոստոմբեկյանն էր: Մանուկ Ադոնցը մեծանում է ավանդապահ ու խստաբարո ծնողների հսկողության ներքո:

Նախնական ուսումը ստացել է ծննդավայրի ծխական դպրոցում, ապա սովորել է Տաթեւի վանական վարժարանում: Տասնմեկ տարեկան հասակում՝ 1882 թվականին, ընդունվում է Գեւորգյան ճեմարանի դպրանոցական հանրակրթական բաժինը եւ այն ավարտում 1889թ. մայիսին: Պահպանվել է «հույժ գովելի» եւ «գովելի» գնահատականներով Ն.Ադոնցի դպրանոցական ավարտական վկայականը. «Ուսումնական խորհուրդ Հոգեւոր ճեմարանի Հայոց Մայր Աթոռ Ս.Էջմիածնի վկայե զի Նիկողայոս Գեւորգյան Տեր-Ավետիքյան ծնյալ ի 1871թ. ամի ի գ.Բռնակոթ թեմին Երեւանա յամի 1882 մտյալ պատրաստական դասարան դպրանոցական բաժնի եւ հույժ գովելի վարուք կատարել ի նմին զընթացս ուսմանց, եցուց հարցաքննության յամսյանն մայիսի 1889 ամի առաջադիմություն այսպիսի» (4):

1889թ. սեպտեմբերից նա շարունակում է ուսումնառությունը նույն ճեմարանի լսարանական մասնագիտական բաժնում: Սակայն, անսպասելիորեն, 1891թ. Ն.Ադոնցը որոշում է ընդհատել հետագա ուսումնառությունը ճեմարանում եւ լսարանական բաժնի երկրորդ կուրսի դասընթացները չավարտած՝ խնդրագիր է ներկայացնում վարչությանը, որը եւ ընդունվում է (5):

Գեւորգյան ճեմարանը, որտեղ անցկացրեց Ադոնցն իր պատանեկության տասը տարիները, անջնջելի հետք թողեց նրա աշխարհայացքի ձեւավորման, բնավորության, դաստիարակության ու հակումների վրա: Այն տարիներին այս հաստատությունում դասավանդում էին ժամանակի ամենաճշանակավոր մտավորականները, ինչպես օրինակ՝ Ստ.Պալասանյանը, Մ.Օրմանյանը, Ն.Քարամյանը, Մ.Սահդինյանը, Ա.Նահապետյանը, Մ.Սմբատյանը, Ս.Գասպարյանը, Ն.Խոսրովյանը, Ստ.Լիսիցյանը, Գր.Աղավիրյանցը, Ե.Մադթայանը, Հովհ.Հովհաննիսյանը եւ ուրիշներ:

Ազգային պահպանողական նկարագիրը, սերը հարազատ ժողովրդի պատմության, մշակույթի, լեզվի նկատմամբ, հոգեհարազատությունն ազգային ավանդույթներին ու մեծագույն պատկառանքն առ Հայոց եկեղեցին, որ եղել են Ն.Ադոնցի՝ որպես քաղաքացու հատկանիշները, գալիս էին իր ուսուցիչներից, Ս. Էջմիածնից, վաճառված այն մթնոլորտից, որ ստեղծվել էր Ամենայն հայոց կաթողիկոս Սակար Ա-ի շուրջբոլորը, եւ որտեղ դաստիարակվում էին Ն.Ադոնցն ու նրա դասընկերները: Իսկ Ն.Ադոնցի աշակերտակիցներից էին, ավագ կամ կրտսեր լսարաններում էին սովորում Սաճուկ Աբեղյանը, Ավետիք Իսահակյանը, Ներսես Մելիք-Թանգյանը, Կարապետ Տեր-Մկրտչյանը, Գեւորգ Չորեքչյանը, Ավետիս Ահարոնյանը, Գարեգին Հովսեփյանը, Հուսիկ Զոհրաբյանը, Տիգրան (Տիրան) Տեր-Հովհաննիսյանը, Սողոմոն Սողոմոնյանը (Կոմիտաս) եւ ուրիշներ, ովքեր հետագայում դարձան հայ կյանքի, մշակույթի, գիտության եւ եկեղեցու ականավոր դեմքերը:

1891թ. փետրվարի վերջերին Ն.Ադոնցը տեղափոխվում է Թիֆլիս, որտեղ ընդունվում է Թիֆլիսի ռուսական 2-րդ դասական գիմնազիան: Հետաքրքիր միջադեպ է տեղի ունենում գիմնազիայի ընդունելության ժամանակ: Գիմնազիայի վարչությունը, ըստ ռուսական սովորության, Ադոնցի «Տեր-Ավետիքյան» ազգանվան ձեւը փոխում է «Տեր-Ավետիքով»: Դրբոգլավ ազգանունով չէիս տեսուչն անուշադրության է մատնում նորեկ գիմնազիստի «ազգայնական» բուռն բողոքները, եւ գիմնազիայում սովորելու տարիներին Ադոնցն այդպես էլ մնում է՝ որպես Տեր-Ավետիքով: Սակայն, ավարտական քննություններին նախօրյակին նա ներկայացնում է Երեւանի կոնսիստորիայից ստացված վկայաթուղթ այն մասին, որ իր իսկական ազգանունը ոչ թե Տեր-Ավետիքով է, այլ՝ Ադոնց (6): Գիմնազիայի ավարտական քննություններից հետո նա արդեն դարձել էր Ադոնց, եւ ավարտական դիպլոմը նրան տրվում է այդ ազգանվամբ: Գիմնազիայում Ադոնցը հատկապես հմտանում է լատիներենի եւ հունարենի ուսումնառության մեջ: Որպես արտակարգ ընդունակ եւ մեծ հեռանկարներ խոստացող աշակերտի՝ նրան ներկայացնում են ազգային բարերար Ալեքսանդր Մանթաշյանին, ով խոստանում է հոգալ Ն.Ադոնցի հետագա ուսումնառության ծախսերը: Գիմնազիան ավարտելուց հետո Ն.Ադոնցի առջեւ եւս ծառանում է բարձրագույն կրթություն ստանալու հարցը: Իր հետաքրքրասիրություններով, նախասիրությամբ ու կրթությամբ նա հակված էր դեպի հումանիտար գիտությունները, մասնավորապես հայագիտությունը: Բարձրագույն կրթություն ստանալու Ն.Ադոնցի ձգտումն առարկայական հիմքերի վրա դնելու ուղղությամբ շոշափելի է դառնում միայն այն բանից հետո, երբ Ա.Մանթաշյանը պատրաստակամորեն իր վրա է վերցնում նրա ուսման ծախսերը:

1894թ. Ն.Ադոնցը ընդունվում է Ս. Պետերբուրգի համալսարանի պատմաբանասիրական ֆակուլտետը: Նա միաժամանակ հետեւում է նաեւ Արեւելյան լեզուների ֆակուլտետի դասընթացներին: Ակնհայտ է, որ Ադոնցը դեռեւս վերջնականապես չէր կողմնորոշվել իր ապագա մասնագիտության հարցում եւ շարունակել փնտրտուքների մեջ էր: Դրանով պետք է բացատրել նաեւ այն, որ նա շուտով թողնում է պատմաբանասիրական պարագմուտքները եւ տեղափոխվում նույն համալսարանի իրավագիտության բաժին: Մեկ կիսամյակ սովորելուց հետո՝ 1895թ. սկզբներին, նշանավոր ազգային գործիչ, պետական գաղտնի խորհրդական կարապետ Եղանցի բարեհաճությամբ տեղափոխվում է Դորպատ (Յուրտու)՝ տեղի համալսարանի Իրավաբանական ֆակուլտետում ուսումը շարունակելու մտադրությամբ:

Ի վերջո, 1895 թվականի սեպտեմբերին Ադոնցը վերադառնում է Ս. Պետերբուրգ եւ վերսկսում իր ընդհատված ուսումը պատմաբանասիրական ֆակուլտետի գրականության եւ արեւելյան

Շարունակությունը՝ էջ 6

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԴՈՆՑԸ՝ ՀՈՒՄԱՆԻԿՈՆԵՐՈՒՄ

Սյունյաց աշխարհ
ՏԱՍՆՕՐՅԱ ԹԵՐԹ
Գլխավոր խմբագիր՝ ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ
Հասցե՝ Կապան, Շահումյան 20/32
Հեռախոս՝ (0285) 5 25 63, (091) 45 90 47, (077) 06 28 02:
Էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru
Ինտերնետ՝ www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրությունն եւ հեղինակների կարծիքները կարող են չհանդիսանալ: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):

«ԳՈՎԱԶԴ - ՇԱՆԹԱԺՈՒՄ» բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է:

® նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր:

Գնացնման վկայական՝ 01Մ 000231:
Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:

Ծավալը՝ 15 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 2000, գինը՝ 500 դրամ:
Ստորագրված է տպագրության 17.10.2011թ.:

տպագրվում է 2003թ. հոկտեմբերի 1-ից ■
հիմնադիր եւ հրատարակիչ «Սյունյաց աշխարհ» ՍՊԸ ■
ՀԵՌԱՍԻՐԻ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ
ՍՅՈՒՆԻՔԻ ՊԱՐԱՐԱՆԱԿԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ
Գնահատ՝ 1/4էջ, 20/32
Հեռախոս՝ (0285) 5 25 63 = (091) 45 90 47 = (077) 06 28 02
էլ. հասցե՝ www.syuniacyerkir.am
էլ. փոստ՝ syuniacyerkir@mail.ru

Ն. ԱԴՈՆՑԻ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԸ

140 ՏԱՐԻ ԱՌԱՋ՝ 1871Թ. ՀՈՒՆՎԱՐԻ 10-ԻՆ (22-ԻՆ), ԾՆՎԵՑ XX ԴԱՐԻ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՄՏՔԻ ԱՄԵՆԱԿԱԿԱՆԱՎՈՐ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻՑ ՄԵԿԸ՝ ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԴՈՆՑԸ:

Աշակերտել է ճանաչված ուսուցչապետերի

ՆԻԿՈԼԱՅ ՎԵՍԵԼՈՎՍԿԻ
1848-1918թթ., ռուս հնագետ, արեւելագետ, 1890-ից՝ Պետերբուրգի համալսարանի պրոֆեսոր:

ՍԵՐԳԵՅ ՕԼԴԵՆԲՈՒՐԳ
1863-1934թթ., ռուս արեւելագետ, Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի անդամ (1908), հնդուսպանաբանության դպրոցի հիմնադիր:



ԿԱՐԼ ԿՐՈՒՄԲԱԽԵՐ
1856-1909թթ., գերմանացի բանաստեղծ, բյուզանդագետ, հունարեն լեզվի դասախոս Մյունխենի համալսարանում:

ՇԱՌԼ ԴԻԼ
1859-1944թթ., ֆրանսիացի գիտնական, բյուզանդագետ, Սորբոնի համալսարանի պրոֆեսոր (1899-1934թթ.), Ֆրանսիայի գիտությունների ակադեմիայի անդամ (1910թ.):

ԱՆՏՈՒԱՆ ՄԵՅԵ
1866-1936թթ., ֆրանսիացի լեզվաբան, հայագետ, սլավոնագետ, հասարակական գործիչ, Ֆրանսիայի գիտությունների ակադեմիայի (1924թ.), մի շարք երկրների ակադեմիաների եւ գիտական ընկերությունների անդամ:

Ծանոթություն *Յանկություն ունենք այս էջում զետեղել նաեւ Օգյուստ Կարիերի (1938-1902թթ., ֆրանսիացի հայագետ-արեւելագետ), Ֆրեդերիկ Կոնիբերի (1857-1924թթ., անգլիացի բանաստեղծ-հայագետ, 1881-ից՝ Օքսֆորդի համալսարանի դասախոս, 1903-ից՝ բրիտանական ակադեմիայի անդամ) լուսանկարները, բայց չհաջողվեց գտնել:*

Նիկողայոս Մառ

Մառը գիտական գործունեությունն սկսել է իբրեւ հայ մատենագրության պատմաբան եւ մանրազնին ուսումնասիրել Եղիշեի, Եզնիկ Կողբացու, Ղազար Փարպեցու, Մխիթար Գոշի գործերը: Մատենագրության պատմության խնդիրներ արծարծելիս Մառն ուսումնասիրել է ձեռագրական հավաքածուներ, քրիստոնյա Արեւելքի ժողովուրդների լեզուներով պահպանված խմբագրություն-պատմվածքներ: Էջմիածին, Սիւնք եւ Աթոռ կատարած գիտական ուղեւորությունների ընթացքում նա բացահայտեց եւ իրապարակեց բազմաթիվ առաջնակարգ գրավոր հուշարձաններ, այդ թվում՝ Ագաթանգեղոսի արաբական խմբագրությունը (թարգմանությունը՝ հուշարձանից), Գրիգոր Խանձթեցու վարքի վրացական բնագիրը եւ այլն: Աղբյուրագիտական առումով առանձնահատուկ նշանակություն ունեն Մովսես Խորենացու, Աճառունի (Սեբեոսի), Հովհաննես Կոգեռնի, Շոթա Ռուսթավելու, Պետրոիճիի եւ այլոց երկերին նվիրված հոդվածները ու մենագրությունները: Մառը մասնավորապես բացահայտել է հայ մատենագրության նշանակությունն ասորական եւ հունական հուշարձանների նախնական խմբագրությունները վերակազմելու գործում, ընդգծել նրա ազգային ոգին ու կոչվածությունը՝ չկտրելով Արեւելքի ընդհանրական մատենագրական միջավայրից: Նոր, ճշմարիտ եւ հեռանկարային էր հայ-վրացական պատմամշակութային ընդհանրությունների լուսաբանությունը, via armeniaca-ի (Անդրկովկասի ժողովուրդների արեւելյան քրիստոնեական մատենագրությանը հայերենի միջնորդավորմամբ հաղորդակցվելը) հաստատումը: Մշակութային պատմության խնդիրներ քննարկելիս Մառը հաճախ է անդրադարձել Անդրկովկասի ժողովուրդների էթնիկական ու դավանական պատմությանը: Առաջինը նա է ապացուցել, որ VII դարի սկզբին եկեղեցիների ազգայնացմամբ մշակույթային ու մատենագրական աղերսները շընդհատվեցին. Տայքի, Կղարջքի եւ Հերքի տարածքներում հայ քաղկեդոնական կանոնը պահպանում էր իր դավանակիցների հետ ունեցած գրական փոխթափանցումների ու պաշտամունքային կառույցների ընդհանրականությունը: Հայկադրվելով եվրոպացի մի շարք արեւելագետների (Գուտշմիդտ, Կարիեր եւ այլն)՝ Մառը հերքեց այն թյուր կարծիքը, թե իբր Մովսես Խորենացին նույն իրքը Սար Աբաս Կատիճան է, եւ ապացուցեց, որ Մովսես Խորենացին իր «Պատմությունը» գրելիս իրոք ձեռքի տակ ունեցել է իր նշած թագավորի ամբողջական արձանը, ինչպես եւ Գագկաշեն եկեղեցին՝ հատակագծով եւ ձեւով նման Զվարթնոցին: Ճարտարապետական եւ արվեստի կոթողներից բացի՝ այստեղ ուսումնասիրվում էին միջնադարյան քաղաքաշինությունը, քաղաքի սոցիալական ու վարչական կառուցվածքը, առեւտուրն ու արհեստագործությունը եւ այլն: «Անի» աշխատությունը (1934, ռուսերեն) վերոհիշյալ գիտական ուսումնասի-

Շարունակությունը՝ էջ 39

Սուրբ Էջմիածնի Գեւորգյան ճեմարանում

ՆՐԱՆ ԴԱՍԱՎԱՆԴԵԼ ԵՆ

ՍՏԵՓԱՆ ՊԱԼԱՍԱՆՅԱՆ
1837-1889թթ., արեւելյան աշխարհաբարի գիտական քերականության հիմնադիր, Նշանավոր լեզվաբան ու գրականագետ, պատմաբան ու հրապարակախոս, սոցիոլոգ ու մանկավարժ:

ՄԱՂԱԲԻԱ ԱՐՔ. ՕՐՄԱՆՅԱՆ
1841-1918թթ., ասպվածաբան, հայագետ, պատմաբան, բանաստեղծ, հրապարակախոս, ազգային պահպանողական ուղղության հասարակական գործիչ, Կ. Պոլսի հայոց պատրիարք (1896-1918թթ.):

ՄԱԿԱՐ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍ
Ն.Ադոնցի ուսումնառության տարիներին Ամենայն հայոց կաթողիկոսն էր: 1813-1891թթ., Հայոց հայրապետ է եղել 1885-91թթ.:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
1864-1929թթ., բանաստեղծ, ռուս գրականության եւ լեզվի, ընդհանուր գրականության եւ հունարենի դասախոս:

ՍՏԵՓԱՆ ԼԻՍԻՑՅԱՆ
1865-1947թթ., բանաստեղծ, աշխարհագրագետ, ազգագրագետ, պատմաբան, մանկավարժ:

Ծանոթություն
Մեզ չհաջողվեց գտնել ճեմարանի մյուս դասախոսների լուսանկարները, որոնք նույնպես կցանկանայինք տեսնել այս էջում: Նկատի ունենք հատկապես Սեդրակ Մանդիկյանի (1844-1915թթ., մանկավարժ, դերասան, հասարակական, գրական-թատերական գործիչ), Գաբրիել (Ստեփան) Սահակյանցի (1857-1939թթ., բանաստեղծ-հրապետ), Մեսրոպ Սմբատյանի (1833-1911թթ., բանաստեղծ, պատմաբան, եկեղեցական գործիչ, Ամենայն հայոց կաթողիկոսի տեղապահ 1895-ին), Եղիշե Մադաթյանի (1865-1918թթ., գրականագետ, թարգմանիչ), ինչպես եւ Գր.Աղափիրյանցի, Ն.Խոսրովյանի, Ս.Գասպարյանի, Ն.Քարամյանի եւ մյուսների նկարները:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՇԽԱՐՀԸ
ՄԱՍԱՍԱՅՈՒՄ ԿԱՄԱՎՈՐՈՒԹԻՒՆ ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆ ԱՄՆ, ՕՀԱՅՈՒԹԻՒՆ, 2010
ՀԵՌԱԽՕՍԻՐ (0285) 5 25 63 = (091) 45 90 47 = (077) 06 28 02
էլ. հասցէ՝ www.syuniacyerkir.am
էլ. փոստ՝ syuniacyerkir@mail.ru

տպագրվում է 2003թ.
հոկտեմբերի 1-ից ■
հիմնադիր եւ հրատարակիչ
«Այսօրեայ աշխարհ» ՍՊԸ ■

№ 17 236
18 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2011

ԿՅԱՆՔՆ ՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Վիթխարի անհպականություն

ՊՐՈՖԵՍՈՐ ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԴՈՆՑԻ ԾՆՆԴՅԱՆ 140-ԱՄՅԱԿԻ ԱՌԻԹՈՎ

Սկիզբը՝ էջ 4

լեզուների ֆակուլտետի (սանսկրիտ-պարսկերեն-հայերեն լեզուներ) ցյուղերում՝ աշակերտելով այնպիսի ճանաչված ուսուցչապետերի, ինչ-պիսիք էին՝ Ն.Մառը, Ն.Վեսելովսկին, Օ.Օլդենբուրգը, Վ.Ժուկովսկին եւ ուրիշներ: Ղամալարանում Ն.Ադոնցը մեծ եռանդով ուսումնասիրում է ինչպես դասական, այնպես էլ ժամանակակից լեզուներ: Այստեղ է, որ նա սովորում է սանսկրիտ, պարսկերեն, վրացերեն, գերմաներեն, ֆրանսերեն, ազգլերեն, խորացնում իր գիտելիքները հուսարեենից եւ լատիներեենից:

Ուսումնառության չորրորդ տարում Ն.Մառի գիտական ղեկավարության ներքո մասնակցում է Արեւելյան լեզուների ֆակուլտետի հայտարարած մրցանակաբաշխությանը, որն իբրեւ նյութ առաջադրել էր «Հայկական վարք սրբոց ժողովածուները՝ ըստ Գրիգոր Ծերենցի վերջին, ժամապաշտական խմբագրության» թեման: Դա է պատճառը, որ 1898թ. ամառային արձակուրդի ամիսներին նա մեկնում է Վենետիկ ու Վիեննա՝ անհրաժեշտ ձեռագրերի հետ ծանոթանալու եւ առաջադրված թեման գրելու համար: Ղամառ ու հետեւողական աշխատանքի շնորհիվ, համեմատաբար կարճ ժամանակամիջոցում նրան հաջողվում է հսկայական վարք կուտակել եւ ձեռնամուխ լինել հինգեակ շարադրաքին: Մեծ թափով սկսված աշխատանքները, սակայն, ժամանակվորապես ընդհատվում են հուլիսի կեսերին. սարսափելի դողէրոցքը (մալարիան) քսան օր շարունակ նրան գամում է անկողնում: Այդ ծանր օրերի վատառեսեալ տպավորության ներքո է, որ իր ուսուցչապետին ուղղված նամակներից մեկում նա անգուսպ տուրք է տալիս զգացմունքներիդ. «Ինձ համար ցավալի է, ցավալի արտասվելու աստիճան, որ ճակատագիրն ինձ պատժեց այսպես: Գլխավորը, հույս չունեմ, թե կկազդուրվեմ այն աստիճան, որ կարողանամ թեկուզ եւ ամփոփել արվածը» (7):

Հիվանդությունը կրկնվում է մի քանի անգամ: Անավոր տենդն ու «անիծյալ դողէրոցքը», ինչպես գրում է նա իր նամակներից մեկում, երկար ժամանակով զրկում են նրան իր սիրելի զբաղմունքից: «Եթե ես լսեմ բժիշկներին եւ կատարեմ նրանց ցուցումները, ապա պետք է մի կողմ դնեմ գրքերը եւ խնամեմ ինձ: Հիմար վիճակ է»: Ի վերջո, երիտասարդ հայագետը մտավոր եւ ֆիզիկական ուժերի գերագույն լարումով ավարտում է աշխատանքը եւ այն ներկայացնում մրցանակաբաշխությանը: Ցաւոնչաժողովը այն գնահատում է «գերազանց», իսկ հեղինակին՝ պարգեւատրում ոսկե մեդալով: Ն.Ադոնցի սույն ուսումնասիրության մասին հանալարանի 1898թ. տարեկան հաշվետվության մեջ ասված է. «Նյութերի հարստության, լուսաբանությունների նորությամբ եւ դիպուկ նկատողություններով (Ն.Ադոնցի) աշխատությունը ծանրակշիռ ավանդ է մասնագիտական գրականության մեջ եւ արժանի է հանալարանի միջոցներով տպագրվելու» (8):

Հետաքրքիր է, որ Ն.Ադոնցի սույն աշխատությունն այդպես էլ այն ժամանակ լույս չտեսավ: Հետագայում՝ փարիզյան տարիներին, նա այն վերանշակեց, մի քանի հատված տպագրեց թիանսերենով: Սակայն գիտական այսպիսի ծանր երկունքով ու տառապանքով էր ասպարեզ իջնում XX դարի հայագիտական մտքի ամենաակամավոր ներկայացուցիչներից մեկը:

1899թ. Ադոնցն առաջին կարգի դիպլոմով ավարտում է հանալարանը: Սակայն ստացած կրթությունը նրան թվում էր անբավարար եւ Կ.Եղյանցի միջնորդությամբ դարձյալ դիմում է Ա.Մաքաշչաձին՝ գիտական կատարելագործման նպատակով արտասահման մեկնելու եւ այդ կապակցությամբ ուսումնառության ծախսերը հոգալու համար: Բարեհաջող, ով չատ բարձր կարծիքի էր Ադոնցի գիտական նկարագրի վրա:

1902թ.՝ ուսումնական տարեվերջի քննությունների ժամանակ (9), նա մեծ հաջողությամբ հաղնում է հայկական բանասիրության մագիստրոսի կոչում ստանալու քննությունները: Ֆակուլտետի խորհուրդն առանձին որոշմամբ նրան ժամկետ է տալիս մինչեւ 1904թ. վերջերը պաշտպանելու ատենախոսություն՝ մագիստրոսական թեզը՝ իր վրա վերցնելով այդ աշխատանքի հետ կապված բոլոր ծախսերը՝ թե գիտական եւ թե կենցաղային: Ահա այս նպատակով է, որ 1903թ. Ադոնցը մեկնում է Ս. Էջմիածին, պարապում վանքի նշանավոր ձեռագրատանը, ապա Թիֆլիսում լրացնում վրացերենի իր գիտելիքները՝ հաճախելով մասնավոր պարապմունքների (10), Մցխեթում ծանոթանում վրաց հին մատենագիտության արժեքներին: Հատկանշական է, որ իր կյանքի այս չափազանց ճակատագրական օրերին նա ժամանակ, եռանդ եւ տրամադրություն է ունենում Ս. Պետերբուրգում հրատարակել. «Բանքեր գրականության եւ արվեստի» պարբերական զույգ, Ա.Չոպանյանի արտահայտությամբ՝ «փրուն» հատորները:

Մեծ հանառությամբ ու գրական անուրանալի ճաշակով Ադոնցը կարողանում է իր շուրջը համախմբել ժամանակի բոլոր նշանավոր գրողներին եւ գրականագետներին՝ Հովի. Թումանյանին, Ա.Չոպանյանին, Լ.Շաճին, Ա.Ահարոնյանին, Վ.Փափազյանին, Առաձնին, Ռ.Զարդարյանին, Ա.Իսահակյանին, Եր.Օտյանին, Հովհ.Հովհաննիսյանին, Սիամանթոյին, Վ.Թեքեյանին, Ն.Ադալյանին, Մ.Կյուրջյանին, Ա.Արփիարյանին: «Բանքերը» դառնում է մի հանելի ու հյուրընկալ անկյուն–ժամադրավայր արեւելահայ ու արեւմտահայ բարձր արժեք ներկայացնող մտավորականների համար: «Բանքերի» զույգ հանարերը անջնջելի հետք են թողել իայ մտքի անդաստանում, եւ հանալելի է, որ դրանում ճախեւառաջ վիթխարի եռ նրա անխոնջ խմբագրի ծառայությունները:

1908թ. լույս է տեսնում Ն.Ադոնցի «Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում» մենագրությունը, որը 1909թ. ապրիլի 5-ին որպես մագիստրոսական թեզ ներկայացվում է հրապարակային պաշտպանության: Պաշտոնական ընդդիմախոսներն էին Ն.Մառն ու Ի.Ջավախովը: Հայտնի է, որ Ն.Մառը խրախուսում էր հատկապես իր այն սաներին, ովքեր առավելապես զբաղվում էին տեքստաբանական–բնագրագիտական, լայն առումով՝ դասական բանասիրության հարցերով: Հաճգամանք, որ շեշտում է նաեւ ինքը՝ Ն.Ադոնցը, 1909թ. սկզբներին Գր.Խալաթյանցին ուղղված իր նամակում: «Ձեզ հայտնի է, որ Մառը այսպիսի հարցերով պարապելը վաղաժամ է համարում, եւ գովեստներ նրանից սպասել չի կարելի» (11): Սակայն սույն աշխատանքը կատարված էր այնպիսի հմտությամբ, այնպիսի գիտակցությամբ ու թափով, որ Մառը ոչ թե բարձր, այլ հիացական կարծիք է հայտնում իր սանի թեզի վերաբերյալ (12): Գիտական խորհուրդը միաձայն Ադոնցին շնորհում է հայկական բանասիրության մագիստրոսի աստիճան: Քիչ անց՝ հուլիսի 1-ին, նա ընտրվում է նաեւ պրիվատ-դոցենտ եւ իրավունք ստանում դասավանդելու Ս. Պետերբուրգի համալարանում:

Սա չափազանց կարեւոր հանգամանք էր ոչ միայն Ադոնցի անձնական կյանքում: Պետք է նկատի ունենալ նաեւ այն, որ Ք.Պատկանյանի մահից հետո (1889թ.) նա առաջին հայ պատմաբանն էր, ով իրավունք էր ստանում դասավանդել համալսարանում: Հայտնի է, որ համալսարանի եւ Լուսավորության նախարարության ղեկավարությունը չէին խրախուսում հայերի մուտքը պրոֆեսորադասախոսական կազմից ներս եւ ըստ ամենայնի խոչընդոտներ էին ստեղծում նման բոլոր դեպքերում: Շատ շուտով Ադոնցը դառնում է համալսարանի ամենահարգված ու ճանաչված գիտնական–դասախոսներից մեկը, հանգամանք, որը փաստում է հետեւյալով. 1918թ. Ս. Պետերբուրգում նախատեսված էր հրավիրել պատմաբանների միջազգային չորրորդ համագումարը: Այդ կարեւորագույն իրադարձությանը հավուր պատշաճի նախապատրաստվելու համար 1913թ. դեկտեմբերի 15-ին Ս. Պետերբուրգում հրավիրվել է նշանավոր պատմաբանների խորհրդակցություն, որը որոշում է ընդունում համագումարին Ս. Պետերբուրգի համալսարանից Ն.Ադոնցի մասնակցության վերաբերյալ: Նրա թեկնածությունը հաստատվում է նաեւ Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի պատմաբանասիրական բաժանմունքի նիստում (13):

Դեռ նոր էին ավարտվել մագիստրոսական թեզի պաշտպանությամբ հետ կապված հոգսերը, երբ երիտասարդ հայագետը ձեռնամուխ է լինում գիտական նոր հետազոտության՝ դոկտորական ատենախոսության պաշտպանությանը: Աշխատանքներն ամբողջ թափով ընթանում են 1911 թվականից: Նույն այդ ժամանակ նա այցելում է Վիեննա եւ Վենետիկ, 1912 թվականի ամռանը մասնակցում է Ամիի հնագիտական 11-րդ դաշտային աշխատանքներին (14), այնուհետեւ այցելում է Ս. Էջմիածին, 1913 թվականին դարձյալ Վենետիկ, ծանոթանում նշված մատենադարանների հին հայկական թերկանագիտական բնագրերին (15): 1915 թվականին լույս է տեսնում նրա «Դիոնիսիոս Թրակացին եւ հայ մեկնիչները» աշխատությունը, որը նույն՝ 1915 թվականի մայիսի 14-ին պաշտպանում է որպես դոկտորական թեզ՝ պաշտոնական ընդդիմախոսներ ունենալով Ն.Մառին եւ Ս.Ժեբելեւին: Ն.Ադոնցին շնորհվում է հայկական բանասիրության դոկտորի գիտական աստիճան: Հետաքրքիր է, որ ընդդիմախոսներից Ս.Ժեբելեւն առաջարկում է նրան միաժամանակ շնորհել նաեւ դասական բանասիրության դոկտորի գիտական աստիճան:

Գիտական նոր կոչումը հնազանդ էր ոչ միայն Ադոնցի անձնական կյանքում: Պետք է նկատի ունենալ նաեւ այն, որ Ք.Պատկանյանի մահից հետո (1889թ.) նա առաջին հայ պատմաբանն էր, ով իրավունք էր ստանում դասավանդել համալսարանում: Հայտնի է, որ համալսարանի եւ Լուսավորության նախարարության ղեկավարությունը չէին խրախուսում հայերի մուտքը պրոֆեսորադասախոսական կազմից ներս եւ ըստ ամենայնի խոչընդոտներ էին ստեղծում նման բոլոր դեպքերում: Շատ շուտով Ադոնցը դառնում է համալսարանի ամենահարգված ու ճանաչված գիտնական–դասախոսներից մեկը, հանգամանք, որը բավորություն է տալիս նրան զբաղեցնել պրոֆեսորի վերջին եւ, իրոք, 1916 թվականի վերջերին նա ընտրվում է հայկական եւ վրացական բանասիրության ամբիոնի պրոֆեսոր: Նույն՝ 1916 թվականի ամռանը նա Ն.Մառի, Ա.Լոռու, Մելիք-Քալանթարի, Հ.Օրբելու հետ մասնակցում է գիտական այն արշավախմբին, որը գործուղվել էր ռուսական բանակների կողմից գատագարված Մուշ եւ Էրզրում: Այնուհետեւ ղեկավարում է Վանի հնագիտական արշավախումբը: Այդ օրերի նրա գրառումները ցույց են տալիս, թե որքան խորն է ապրել հայագետն իր ժողովրդին հասած դաժան հարվածները, որքան մտահոգ է եղել հայկական հինավուրց մշակույթի հետագա ճակատագրի համար: Այնքան ցնցող են տպավորությունները, որ նա օրեր շարունակ հայտնվել է անգգայության վիճակում. «Չգիտեմ՝ ինչպես եմ շնչում եւ ինչպես եմ ապրում այս բոլորից հետո», – գրում է նա իր նոթատետրում (16):

Սակայն այդ գրառումներում կան նաեւ հույսի ինչ-որ շողեր արթնացնող տողեր: Հայագետը լիահույս էր, թե այս արհավիրքն էլ կանցնի, եւ ի վերջո հարազատ ժողովրդի մնացորդները հնարավորություն կունենան վերադառնալու հինավուրց հայրենիք:

Ն.Ադոնցի գիտական անվիճելի հեղինակությունն ու բանաքացու անբասիր նկարագիրը հաշվի առնելով է, որ Մոսկվայի եւ Պետերբուրգի հայկական բարձրագույն շրջանակներն իշխան Ս.Ս.Աբամելիք-Լազարյանի միաձայն հետո նրա թեկնածությունն են առաջադրում Արեւելյան լեզուների Լազարյան ճեմարանի պատվավոր հոգաբարձու պաշտոնը, եւ, բնականաբար, Ադոնցն ազատվեց ճեմարանի աշխատանքից: Շուտով այն վերամվավնեց Մոսկվայի հայկական ինստիտուտ, որի կոմիսար նշանակվեց Պ.Սակիճյանը, իսկ խորհրդական՝ ակադեմիկոս Ն.Մառը: Լազարյան ճեմարանի կնատմամբ այս անքթող հետաքրքրությունն սուղ են: Հայտնի է միայն, որ համագործակցել է հայագետ Ֆ.Կոնիբերի հետ (24), ում բոլոր փորձերը՝ Ն.Ադոնցին կապելու լոնդոնյան գիտական շրջանակների հետ եւ Օքսֆորդում նրա համար ապահովել ամբիոն, որեւէ հաջողություն չունեցան:

Տարվա վերջերին ավարտելով «Հայկական հարցը Սեւրում» ուսումնասիրությունը եւ այն երկու այլ հոդվածների հետ ամգլերենով մի գրքով հրատարակելուց հետո (Լոնդոն, 1920)՝ Ադոնցը տեղափոխվում է Փարիզ: Նախ ամենակամ շարժառիթ էր այս քայլի, եւ ընդհանրապես արտասահմանի տեղափոխվելու պատճառը: Նա ամուսնանում է շնորհաշատ երգչուհի Օլգա Հովսեթաբյանի հետ, ում գեղեցիկ արվեստի տարբեր տարիներ այնքան ջերմ տողեր է նվիրել փարիզյան «Յառաջ»-ը: Բացի դրանից՝ 1920-ական թվականների փարիզահայ միջավայրը հանմանության դույզգ-ինչ եզր չուներ որեւէ այլ քաղաքի հետ: Այստեղ էին եկել հավաքվել արեւելահայ ու արեւմտահայ համարյա բոլոր աչքի ընկնող արվեստագետներն ու գրողները, հասարակական-քաղաքական գործիչները: Փարիզը հայկական գրական-մշակութային կյանքի մի ուրույն բոհեմ էր, որը Հայկական տասնհինգից փարատելու ինչ-ինչ ճիգեր էր կատարում: Այստեղ էին հանգրվանել Ա.Չոպանյանը, Լ.Շանթը, Շ.Շահնուրը, Կ.Զարյանը, Ավ.Իսահակյանը, Ավ.Ահարոնյանը, Վ.Շուշյանը, Մ.Վարանդյանը, Կ.Սասունին, Զ.Բեյ-Նուպարը, Ա.Խան-Կորսյանը, Հ.Խան-Մասեհյանը, Ե.Քոչարը, Ալ.Խատիսյանը, Ս.Վրացյանը, Գ.Թորգոմյանը, Օհան Կարոն, Ա.Խոնդկարյանը, Ա.Գյուլխանդանյանը, Ա.Ջամալյանը, Ա.Հաճըմյանը, Ա.Շահխաթարունին, Հովհ.Ցավդյանը, Մ.Ամեմյանը, Ս.Պապաջանյանը եւ էլի շատ ու շատ ուրիշներ: Աշխարհի ոչ մի քաղաքում այսպիսի կարող հայկական ուժեր չկային, եւ Ադոնցի հայտնվելն այստեղ գտնվում էր Հայկական ազգային պատվիրակության կենտրոնատեղին, որի նորընտիր նախագահ Գ.Նորատունկյանը 1921թ. դեկտեմբերի 3-ի՝ Ադոնցին ուղղված հատուկ նամակով տեղեկացնում էր, թե նա նշանակվել է Ազգային պատվիրակության խորհրդական, եւ որ «Պատվիրակությունը ինչ-որ հույս ունի, թե չեք զլաճար Ձեր փորձված կարողությանն եւ արժանացաց նպաստը բերել այս ադթիվ» (25): Ուստի բնական է, որ Ադոնցը ձգտելու էր մոտ լինել ազգային կյանքի իրադարձություններին եւ իր հանմետ լուսաբ ներդնել այդ ուղղությամբ ձեռնարկվելիք միջոցառումներին: Ն.Ադոնցի կյանքի փարիզյան տարիները (1921-1931թթ.) լի են գիտական, ազգային-հասարակական բուռն իրադարձություններով: Ճիշտ է, նա չուներ հինգեակ աշխատանք, սակայն իր բարեկամ մեծահարուստ Արբահամ Ղուկասյանի նյութական անշահախնդիր աջակցության շնորհիվ ապրում էր տանելի պայմաններում:

Ն.Ադոնցը գործուն մասնակցություն է ունեցել փարիզահայ գրական կյանքի բոլոր նշանակալից իրադարձություններին: Հատկանշական է, որ մի տեղ հավաքված այդքան գրողներից նա է ընտրվել Փարիզի հայ գրական ակումբի (միության) առաջին նախագահ (1928): Եղել է Փարիզի հայոց թեմական կենտրոնական առաձնյա վարչության (1925) եւ Լեհինկական երկրաշարժի աղետյալների օգնելու կենտրոնական նպաստամատույց մարմնի (1926) անդամ, Ավետիս Ահարոնյանի քառասնամյա գրական գործունեության (1890-1930) հոբելյանական կենտրոնական հանձնաժողովի գործադիր մարմնի նախագահ (1930), «Աստվածաշնչի» հայերեն թարգմանության 1500-ամյակի հոբելյանական հանձնաժողովի (1935), Ռաֆֆու ծննդյան 100-ամյակի հոբելյանական կազմակերպիչ հանձնաժողովի (1937), Սասունցի Դավիթ էպոսի 1000-ամյակի (1939), Մելքոնյան հրատարակչական հանձնաժողովների (1939) անդամ եւ այլն: Չէր զլանում իր մասնակցությունը բերել երիտասարդ գրողների «Յարդաղող» միության՝ 1927թ. Փարիզում հիմնադրած Սասասարյան ժողովրդական համալսարանի աշխատանքներին: Համալսարանում նա ղեկավարում էր հայագիտական բաժնի աշխատանքները եւ դասավանդում «Հայոց քննական պատմություն» առարկան (26): Գրական, ուսանողական, երիտասարդական, կանանց, արվեստագիտական եւ այլ միությունների հրավերով բազմաթիվ դասախոսություններ է կարդում հայ կյանքի ամենատարբեր հարցերի վերաբերյալ (27):

Փարիզյան այս տարիներին է, որ Ադոնցը բուռն թղթակցում է հայ եւ օտար մամուլի («Բազմավեպ», «Հանդես ամսօրյա», «Հայրենիք», «Յառաջ», «Ազգարար», «Զվարթնոց», «Armeniaca», «The New Armenia», «Massis», «Revue de L' Orient Chrntien», «Revue des Etudes Armnniennest», «Byzantinische Zeitschrifttı եւ այլն)՝ տպագրելով հայագիտական իր արպտուսների արդյունքները: Ինքը՝ Ն.Ադոնցը, վարուց մի երազաք էր փայփայում՝ աշխարհի բոլոր լավագույն հայագետներին համախմբել եւ հայագիտական հանդես կամ տարեկան երկու հատորից բաղկացած հայագիտական նյութերի ժողովածու հրատարակել: Փարիզում: Ազգային բարերար Ա.Դուկասյանը խոստացել էր հոգալ այդ մեծածախս բացառիկ հրատարակության բոլոր հոգսերը: Ցավոք, այդ գեղեցիկ օրագիրն այդպես էլ չիրականացավ (28):

Թեեւ Ն.Ադոնցը չափազանց բազմազբաղ էր գիտական, հասարակական ու ազգային գործերով, սակայն նա կարոտով էր հիշում համալսարանական իր ամբիոնը, իր ուսանողներին: Նա կարիք էր զգում իր ծով, ամբարված գիտելիքները փոխանցել ուսանողներին, սակայն արեւելագիտության եւ բյուզանդագիտության մտքի կարեւորագույն կենտրոնների մեկը՝ Սորբոնի համալսարանը, այդպես էլ հնարավորություն չստեղծեց նրա համար՝ մշտական աշխատակից դառնալու: Անսպասելիորեն այդպիսի հնարավորություն ստեղծվեց 1931թ., երբ Բրյուսելի ազատ համալսարանում կազմակերպվեց արեւելագիտական կենտրոն (ավելի ուշ վերանվանվեց Արեւելագիտության ինստիտուտ): Կենտրոնի ստեղծման նախաձեռնությունը պատկանում էր հայտնի միլիոնատեր Որբերտ Վերներին, ով, ընդսառաջելով կենտրոնի փոխտնօրեն, նշանավոր բյուզանդագետ Անրի Գրեգուարի առաջարկությանը, սիրահոժար համաձայնվեց մասամբ ֆինանսավորել նաեւ հայագիտության ամբիոնի կազմակերպման աշխատանքները: Մնացած 20.000 ֆրանկ գումարը տրամադրեց Բրյուսելի հայկական համայնքը եւ մասամբ նվիրատվես կոմսուհի դ՝ Արաբոնը (29), որով հայագիտության ամբիոնն ի վերջո կյանքի կոչվեց (30): Այս ամենից հետո, Ա.Չոպանյանի վկայությամբ, Անրի Գրեգուարը Փարիզի հայկական շրջանակների հետ խորհրդակցում է հայագիտության ամբիոնի վարիչի հնարավոր թեկնածության վերաբերյալ: Հատկանշական է, որ բոլորն էլ մատնացույց են անում Ն.Ադոնցի թեկնածությունը (31): 1931թ. նոյեմբերի սկզբներին համալսարանի վարչությունը պայմանագիր է կնքում Ադոնցի հետ, որի համաձայն նա շշանակվում է Արեւելագիտության ինստիտուտի հայագիտության ամբիոնի վարիչ: Եվ այսպես, իրերի այսպիսի կտրուկ շրջադարձի հետեւանքով Ն.Ադոնցը 1931թ. աշնանը հայտնվում է Բրյուսելում, քառաք, որի հետ են կապված մեծ հայագետի կյանքի վերջին բուռն տասը տարիները:

Համալսարանում Ն.Ադոնցը դասավանդում է դասական եւ ժամանակակից հայերեն, հայագիտական եւ բյուզանդագիտական մի շարք առարկաներ (32), կազմակերպում հին հայերեն բնագրերի ընթերցումներ եւ մեկնություններ: Հետաքրքրությունից զուրկ չէ այն փաստը, որ Ադոնցի առաջին աշակերտների թվում էր նոյն ինքը՝ պրոֆ. Անրի Գրեգուարը (33):

Միեւնույն ժամանակ նա շարունակում է աշխատակցել ժամանակի գիտական մամուլին, հատկապես Գրեգուարի խմբագրած «Byzantion» եւ Բրյուսելի արեւելագիտության ինստիտուտի «Annuaire...» հանդեսներին, հայկականներից՝ «Սիոն», «Վեմ», «Անահիտ» ամսագրերին: Ադոնցի այս օրերի վերաբերյալ արժեքավոր վկայություն ունի Արեւելագիտության ինստիտուտի տնօրեն Մորիս Լըրուան. «Հայագիտության ամբիոնի հիմնադրումը Բրյուսելում հրապուրեց Ադոնցին, եւ նա հաստատվեց այստեղ, նա մեր մեջ, մեզ մոտ գտավ իր տունը, իր ճշմարիտ բարեկամներին, իր սիրելի սաներին, որոնք ընբռշխնում էին նրա պատկառալից խոնարհությունը, զմայլվում նրա գիտությամբ, սովորում նրա անբավ իմացությունից» (34):

Պրոֆեսորի վերջին աշակերտներից ապագա ճշանավոր բանասաեր Մուշեղ Իշխանը իր չափազանց արժեքավոր հուշերում եւս հավատում է, թե նա «եվրոպայի համալսարանական շրջանակներու հայ պարծանքն էր: Ուսանողներն անխտիր կապված էին իրենց՝ հայագնմէ: Իր անձն էր մեծագույն պատճառը, որ Պրյուսել դարձած էր նրոր Մշրնեն եւ հայ ուսանողներու կարելուր թիվ մը հավաքած իրեն շուրջ» (35):

Սակայն Բրյուսելում էլ Ադոնցը չգտավ այնքան սպասված հոգեկան հանգստությունը: Կնոջ երկարատեւ հիվանդությունն ու անմամանակ մահը (1935) այնքան էին հուսահատեցրել պատմաբանին, որ բարեկամներից մեկին հուղված նամակում խոստովանում է, թե «այլեւս աշխարհը կորցրեց ինձ համար իր իմաստը»: Հոգեկան ծանր վիճակը, հարազատների բացակայությունը, հայկական շրջանակներից կտրված լինելը, հայրենիքից եկող ծանր ու անմխիթար լուրերը, միայնությունը, հետզհետե զգալ տվող հին հիվանդությունն ամբողջովին վիատեցնում են պատմաբանին: Իր վերջին նամակներից մեկում, որն ուղղված է Ա.Շիլինկարյանին (Ռաբեն Դարբինյան. 15 ապրիլի, 1940), նա գրում է. «Խռովվահույզ մթնոլորտն այնպես է ազդել, որ զգացի այն թուլությունը, որ գալիս է ծերությունի՞ց, թե՞ վիատությունից: Ոչ անձնական, ոչ հայրենիքյան եւ ոչ ամենուրեքյան ոչ մի նշույլ չմնաց պայծառ եւ զվարթ լույսի, որ ողջագուրեր սառած էությունս նոր հոսքերով: Վախում եմ, որ ծրագրած գործերս էլ մնան թերի եւ կամ նույնչափ վիատ, ինչպես ես» (36):

1941թ. ապրիլին Ն.Ադոնցի առողջական վիճակը կտրուկ վատացավ, որի հետեւանքով անգամ սկսեց բաց թողնել համալսարանական պարապմունքները, որն ակնհայտ ապացույց էր նրա թիզիկական ուժասպառության. բժիշկներն ախտորոշում են ծյուրախտ՝ արագընթաց թոքախտ (galloping consumption, phthisis): Հ.Էսեկյուլյանն այսպես է ներկայացնում Մեծ Անծանոթի, ինչպես ինքն էր մամանգիր է կնքում Ադոնցի հետ, որի համաձայն նա ճշանվում է Արեւելագիտության ինստիտուտի հայագիտության ամբիոնի վարիչ: Եվ այսպես, իրերի այսպիսի կտրուկ շրջադարձի հետեւանքով Ն.Ադոնցը 1931թ. աշնանը հայտնվում է Բրյուսելում, քառաք, որի հետ են կապված մեծ հայագետի կյանքի վերջին բուռն տասը տարիները:

Համալսարանում Ն.Ադոնցը դասավանդում է դասական եւ ժամանակակից հայերեն, հայագիտական եւ բյուզանդագիտական մի շարք առարկաներ (32), կազմակերպում հին հայերեն բնագրերի ընթերցումներ եւ մեկնություններ: Հետաքրքրությունից զուրկ չէ այն փաստը, որ Ադոնցի առաջին աշակերտների թվում էր նոյն ինքը՝ պրոֆ. Անրի Գրեգուարը (33):

Միեւնույն ժամանակ նա շարունակում է աշխատակցել ժամանակի գիտական մամուլին, հատկապես Գրեգուարի խմբագրած «Byzantion» եւ Բրյուսելի արեւելագիտության ինստիտուտի «Annuaire...» հանդեսներին, հայկականներից՝ «Սիոն», «Վեմ», «Անահիտ» ամսագրերին: Ադոնցի այս օրերի վերաբերյալ արժեքավոր վկայություն ունի Արեւելագիտության ինստիտուտի տնօրեն Մորիս Լըրուան. «Հայագիտության ամբիոնի հիմնադրումը Բրյուսելում հրապուրեց Ադոնցին, եւ նա հաստատվեց այստեղ, նա մեր մեջ, մեզ մոտ գտավ իր տունը, իր ճշմարիտ բարեկամներին, իր սիրելի սաներին, որոնք ընբռշխնում էին նրա պատկառալից խոնարհությունը, զմայլվում նրա գիտությամբ, սովորում նրա անբավ իմացությունից» (34):

Պրոֆեսորի վերջին աշակերտներից ապագա ճշանավոր բանասաեր Մուշեղ Իշխանը իր չափազանց արժեքավոր հուշերում եւս հավատում է, թե նա «եվրոպայի համալսարանական շրջանակներու հայ պարծանքն էր: Ուսանողներն անխտիր կապված էին իրենց՝ հայագնմէ: Իր անձն էր մեծագույն պատճառը, որ Պրյուսել դարձած էր նրոր Մշրնեն եւ հայ ուսանողներու կարելուր թիվ մը հավաքած իրեն շուրջ» (35):

Սակայն Բրյուսելում էլ Ադոնցը չգտավ այնքան սպասված հոգեկան հանգստությունը: Կնոջ երկարատեւ հիվանդությունն ու անմամանակ մահը (1935) այնքան էին հուսահատեցրել պատմաբանին, որ բարեկամներից մեկին հուղված նամակում խոստովանում է, թե «այլեւս աշխարհը կորցրեց ինձ համար իր իմաստը»: Հոգեկան ծանր վիճակը, հարազատների բացակայությունը, հայկական շրջանակներից կտրված լինելը, հայրենիքից եկող ծանր ու անմխիթար լուրերը, միայնությունը, հետզհետե զգալ տվող հին հիվանդությունն ամբողջովին վիատեցնում են պատմաբանին: Իր վերջին նամակներից մեկում, որն ուղղված է Ա.Շիլինկարյանին (Ռաբեն Դարբինյան. 15 ապրիլի, 1940), նա գրում է. «Խռովվահույզ մթնոլորտն այնպես է ազդել, որ զգացի այն թուլությունը, որ գալիս է ծերությունի՞ց, թե՞ վիատությունից: Ոչ անձնական, ոչ հայրենիքյան եւ ոչ ամենուրեքյան ոչ մի նշույլ չմնաց պայծառ եւ զվարթ լույսի, որ ողջագուրեր սառած էությունս նոր հոսքերով: Վախում եմ, որ ծրագրած գործերս էլ մնան թերի եւ կամ նույնչափ վիատ, ինչպես ես» (36):

1941թ. ապրիլին Ն.Ադոնցի առողջական վիճակը կտրուկ վատացավ, որի հետեւանքով անգամ սկսեց բաց թողնել համալսարանական պարապմունքները, որն ակնհայտ ապացույց էր նրա թիզիկական ուժասպառության. բժիշկներն ախտորոշում են ծյուրախտ՝ արագընթաց թոքախտ (galloping consumption, phthisis): Հ.Էսեկյուլյանն այսպես է ներկայացնում Մեծ Անծանոթի, ինչպես ինքն էր անվանում Ադոնցին, վերջին օրերը: Ամռանը, երբ հանմեմատաբար իրեն լավ էր զգում, Բրյուսելի հարուստ հայրենակիցները նրան առաջարկում են գնալ Շվեյցարիա՝ բուժվելու, սակայն «ան շատ հպարտ էր նման առաջարկ մը ընդունելու համար» եւ մերժում է: 1941թ. հոկտեմբերին Ադոնցի առողջական վիճակն այնքան է ծանրանում, որ նրան տեղափոխում են հիվանդանոց, որտեղ «օրէ օր կսպառվեր», – գրում է Հ.Էսեկյուլյանը: Ադոնցի վերջին օրերին ու ժամերին ակամատես բուժող բժիշկ Սինաս Միսաքը, որ հարազատ զավակի նման մինչեւ վերջին պահը չէր հեռանում հիվանդի մահճակալից, պատմում է հետեւյալ ուշագրավ դեպքը: Մահվանից մեկ շաբաթ առաջ պրոֆեսորը սաստիկ տենդ ուներ եւ օրերով ուշքի չէր գալիս: Մի օր հանկարծ արթնանալով՝ բռնում է իր ձեռքը եւ հարցնում. «Ի՞նչ եղավ, Հայաստանի մասին տեղեկություններ մը պիտի բերեիր»: Հայտնի է, որ մինչեւ վերջին օրերը, մինչեւ վերջին պահը մտքով հայրենիքի հետ էր:

Ն.Ադոնցը մահացել է 1942թ. հուլիսի 27-ի առավոտյան, «երբ ծյուրը ամեն կողմ իր սպիտակ պատմեքը փռած էր»: Թաղումը տեղի ունեցավ փետրվարի 2-ին, հայ եւ օտար բազմության եւ «հավատարիմ բարեկամների ու բազմաթիվ սաների ներկայությամբ» (37):

Շափազանցություն չի լինի ասել, որ Ադոնցը մահանում է գրիչը ձեռքին, գիտակից՝ իր կոչումի վեհությանը: Աշակերտներից մեկը վկայում է, որ հիվանդանց ներկայացնում էր մի ամենամեկ կանգ, գիտակից՝ իր կոչումի վեհությանը: Ադոնցի վերջին օրերին ու ժամերին ակամատես բուժող բժիշկ Սինաս Միսաքը, որ հարազատ զավակի նման մինչեւ վերջին պահը չէր հեռանում հիվանդի մահճակալից, պատմում է հետեւյալ ուշագրավ դեպքը: Մահվանից մեկ շաբաթ առաջ պրոֆեսորը սաստիկ տենդ ուներ եւ օրերով ուշքի չէր գալիս: Մի օր հանկարծ արթնանալով՝ բռնում է իր ձեռքը եւ հարցնում. «Ի՞նչ եղավ, Հայաստանի մասին տեղեկություններ մը պիտի բերեիր»: Հայտնի է, որ մինչեւ վերջին օրերը, մինչեւ վերջին պահը մտքով հայրենիքի հետ էր:

Ն.Ադոնցը մահացել է 1942թ. հուլիսի 27-ի առավոտյան, «երբ ծյուրը ամեն կողմ իր սպիտակ պատմեքը փռած էր»: Թաղումը տեղի ունեցավ փետրվարի 2-ին, հայ եւ օտար բազմության եւ «հավատարիմ բարեկամների ու բազմաթիվ սաների ներկայությամբ» (37):

Շափազանցություն չի լինի ասել, որ Ադոնցը մահանում է գրիչը ձեռքին, գիտակից՝ իր կոչումի վեհությանը: Աշակերտներից մեկը վկայում է, որ հիվանդանց ներկայացնում էր մի ամենամեկ կանգ, գիտակից՝ իր կոչումի վեհությանը: Ադոնցի վերջին օրերին ու ժամերին ակամատես բուժող բժիշկ Սինաս Միսաքը, որ հարազատ զավակի նման մինչեւ վերջին պահը չէր հեռանում հիվանդի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌՔԵԼԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՇԽԱՐՀԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՕՐԱԳԻՐ
ՀԱՍԱՐ. ԳԱՂՈՒՆԻ, ՀԱՅԿԱՁՈՐ, 20/32
ՀԵՌԱԽՈՍ՝ (0285) 5 25 63 = (091) 45 90 47 = (077) 06 28 02
էլ.հասցե՝ www.syuniacyerkir.am
էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru

տպագրվում է 2003թ.
հոկտեմբերի 1-ից ■
հիմնադիր եւ հրատարակիչ
«Սյունյաց աշխարհ» ՍՊԸ ■

№ 17 236
18 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2011

ԿՅԱՆՔՆ ՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Վիթխարի անհատականություն

ՊՐՈՖԵՍՈՐ ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԴՈՆՑԻ ԾՆՆԴՅԱՆ 140-ԱՄՅԱԿԻ ԱՌԻԹՈՎ

Սկիզբը՝ էջ 7

ված հայկական խորհրդաժողովի աշխատանքներում (38), մասնավորապես օգնել է գեներալ Հ.Բագրատունու հայկական բանակային կորպուսի կազմավորման ուղղությամբ ձեռնարկվելիք միջոցառումներին: Ռ.Լեռնյանի (Լ.Նազարյանց) վկայությամբ հանձայն՝ Ադոնցը գործուն մասնակցություն է ունեցել Բրեստ-Լիտովսկի հաշտության բանակցությունների ժամանակ Հայկական հարցի վերաբերյալ Վ.Տերյանի տրամադրության ներքո գտնվող թղթածրարի ստեղծման աշխատանքներին (39):

Բացի պրակտիկ գործունեությունից՝ Ն.Ադոնցը զբաղվում է նաեւ գիտատեսական հարցերով: Այդ ժամանակ է, որ նա պետրոգրադյան ամսագրերում տպագրում է խիստ ուշագրավ հոդվածներ՝ նվիրված Հայկական հարցին, որոնցում մատնանշում է դրա լուծման ուղիները: Արտասահմանյան տարիներին եւս Լոնդոնում, Փարիզում, թե Բրյուսելում Ադոնցը, անշուշտ, ոչ պակաս ակտիվությամբ, շարունակում է իր հասարակական-ազգային գործունեությունը: Հայկական հարցի թեմատիկան եւ Հայաստանի ներկա կացությունը շարունակում են գրավել նրա ուշադրությունը, որոնք արտահայտվում են հիմնականում ձեռագիր մնացած նրա նոթերում:

Մինչեւ վերջին շունչը հայրենասեր պատմաբանը հավատարիմ մնաց իր պատանեկան իդեալներին, թե որեւէ ազգ կենդանի է իր լեզվով, հավատքով ու պատմությամբ: Նա ամեն ինչ արեց, որպեսզի կարելւոր գիտական ուսումնասիրություններով իր նպաստը բերի այդ վեհ իդեալների իրականացմանը:

Նիկողայոս Ադոնցը գիտական գործունեությունե է ծավալել XX դարի առաջին կեսին: Նա հեղինակ է 120-ից ավելի աշխատությունների՝ նվիրված հայ ժողովրդի հին, միջնադարյան եւ նոր պատմությանը, գրականությանը, բյուզանդագիտությանն ու կովկասագիտությանը, Հայ եկեղեցու եւ կրոնի պատմությանը, առասպելաբանությանը, ծիսագիտությանը, լեզվաբանությանը, արվեստին:

Հայագիտության խոշորագույն նվաճումներից է «Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում» (ռուսերեն, 1908, անգլերեն, 1969, հայերեն, 1987) կոթողային մենագրությունը: Այստեղ մանրամասն տրված է Հայաստանի պատմաաշխարհագրական նկարագիրը, լուսաբանված են նախարարական կարգն ու հողատիրության ինստիտուտները, շինականների իրավական ու տնտեսական դրությունը, Հայաստանի քաղաքական կացությունը եւ հարակից այլ հարցեր:

Հայ-հունական բանահիրության նշանակալից արժեքներից է «Դիոնիսիոս Թրակացին եւ հայ մեկնիչները» (ռուսերեն, 1915, ֆրանսերեն, 1970) հետազոտությունը, որտեղ 30 ձեռագրերի բաղդատությամբ հրատարակվել է Դիոնիսիոսի «Քերականության» հայերեն թարգմանությունը՝ հայ մեկնիչների մեկնություններով հանդերձ: Պատմաբանի գիտական ժառանգության մեջ առանձնանում են Հայոց եկեղեցու պատմությանը նվիրված ուսումնասիրությունները: Դեռեւս 1899թ. նա հրատարակության է պատրաստել Հայոց Հայսմավուրքներին, Ճառընտիրներին ու Ճաշոցներին նվիրված մենագրությունը, որտեղ վերլուծել է Հայոց եկեղեցու տոների համակարգը, տվել Հայսմավուրք ժողովածուների ծագման ու զարգացման ուղիները, տարորոշել դրանց խմբագրությունները: Ցավոք, այս շատ նշանակալից ուսումնասիրությունն առայսօր մնացել է անտիպ, միայն առանձին հատվածներ են լույս տեսել ֆրանսերեն թարգմանությամբ (1924, 1927-1928, 1980-1981): Հայոց եկեղեցու վերաբերյալ բազմաթիվ մանրամասներ են շոշափվել նաեւ նրա «Հայոց առաքելությունը Հոնաց աշխարհում» (1902), «Հայ ծաթերի ծագման մասին» (ռուսերեն, 1911, հայերեն, 1912), «Բեքոսոնի եպիսկոպոս Ամպելիոսը» (ռուսերեն, 1913), «Գրիգոր Լուսավորիչ եւ Ամակ Պարթեւ» (1928) եւ այլ ուսումնասիրություններում: Վերջինում Ադոնցը հերքել է Գրիգոր Լուսավորչի ծագման մասին տիրապետող կարծիքները եւ սկզբնավորյուրների քննական վերլուծությամբ հիմամ վրա առաջարկել միանգամայն նոր տեսակետ: «Հայացած «Աստվածաշունչ» ու նրա պատմական տարողությունը» (1936) աշխատությունում վերլուծել է «Աստվածաշնչի» հայերեն թարգմանության գրական-գեղարվեստական առանձնահատկությունները ու արժեքները: Եզնիկ Կողբացուն նվիրված քննական նշվարները ոչ ճշգրտել է հեղինակի անձի, ժամանակի եւ գործի խճողված խնդիրները, բնեղ ու վերլուծել «Եռաթ յանդիմանութեան» (1925-1926), «Սանոն Սրբոյն Գրիգորի Պարթեւի» (1928), «Նշանագիր կարգաց բանից» (1938) բնագրերը եւ այլն: Նշելի է հատկապես «Հայոց եկեղեցու հազարվեցհարյուրամյակի նախօրեին» ծրագրային հոդվածը (1903), որում Ադոնցը ցուցահանում է եկեղեցու տեղը, դերն ու անառարկելի դրական նշանակությունը հայոց պատմության մեջ: Հունաբյուզանդական եկեղեցու պատմության ամենադրամատիկ, իրադարձությունները հարուստ մի ժամանակաշրջանի է նվիրված պատմաբանի «Պատկերների խնդիրը» (1930-ական թվականների վերջ) ուսումնասիրությունը, որում ցուցահանել է հայերի խաղացած զգալի դերը պատկերամարտ-պատկերապաշտ հակամարտության ուրդտում: Մեծ հետաքրքրություն են ներկայացնում հայկական դիցաբանությանը նվիրված «Տորք՝ աստված հին հայոց» (1911), «Տարկուն հին հայերի մոտ» (ֆրանսերեն, 1927), «Հին հայոց աշխարհայացքը» (1926-1927), «Կիրելե աստվածուհին հին հայերի մոտ» (ռուսերեն, 1929) եւ այլ ուսումնասիրություններ:

Առանձնակի արժեք ունեն Ադոնցի բանասիրական բնույթի հետազոտությունները՝ նվիրված հայ հին ու նոր գրականության պատմության հարցերին: Այստեղ կարելի է առանձնացնել «Մաշտոցը եւ նրա աշակերտները՝ ըստ օտար աղբյուրների» մենագրությունը (1925, 1962) եւ «Հայ մշակույթի սկզբնավորությունը» հոդվածը (1932), որոնցում հայոց շինականությունը (1927), «Քաղաքական հոսանքները Հին Հայաստանում» (1927), «Հայաստանի ոսկեհանքը» (1928), «Բագրատունյաց փառքը» (1928-1929), «Աշոտ Երկրորդ Երկաթ» (ֆրանսերեն, 1935), «Սամուել Հայը բուլղարների թագավոր» (ֆրանսերեն, 1938) եւ այլն:

Ն.Ադոնցն անուրանալի ավանդ ունի հատկապես հայ-բյուզանդական հարաբերությունների ուսումնասիրության բնագավառում: Նա համակարգի ճանաչված ու անուրանալի հեղինակություն վայելող գիտնականներից էր: Բյուզանդագիտական շրջաններում Ադոնցը նկատվում էր որպես մի հեղինակ, որն իրեն հավասար չուներ հատկապես հայ-բյուզանդական հարաբերությունների ուսումնասիրության ոլորտում: Բյուզանդագիտությունը Ադոնցին է պարտական Բյուզանդիայի բազմաթիվ հայտնի պետական ու ռազմական գործիչների, ազնվականական ընտանիքների մասին գիտականորեն հիմնավորված վերջին՝ ամփոփիչ խոսք ասելու իրողությամբ: Հայագիտական ու բյուզանդագիտական ամագրերում մեկը մյուսի հետտեւից լույս են տեսել պատմաբանի՝ «Կապար միանձնուհին եւ հայերը» (1901), «Բյուզանդիայի Լեւոն V կայսեր ծագումը» (ֆրանսերեն, 1927), «Արտավան Արշակունի» (1929), «Դիգենիս Ակրիտաս հայ-բյուզանդական էպոսը» (ֆրանսերեն, 1929-1930), «Վարդ Սամիխոնյան» (1930), «Հայերը բյուզանդական գիտությանց մեջ» (1930), «Վասիլ Հայազն. մեծագործ կայսր» (հայերեն, 1931, ֆրանսերեն, 1933-1934), «Մորիկ եւ Կոստանդին V կայսրերի ծագումը» (ֆրանսերեն, 1934), «Ռուբինյանների նախահայրը» (ֆրանսերեն, 1935), «Հայ-բյուզանդական նոթեր» (ֆրանսերեն, 1934-1935), «Տարոնացիները Հայաստանում եւ Բյուզանդիայում» (ֆրանսերեն, 1935-1936), «Թոռնիկ Վանական» (ֆրանսերեն, 1938), «Դավիթ Կյուրապաղատ» (ֆրանսերեն, 1938), «Լիկանդոսի թեմը հայ-բյուզանդական հարաբերությունների» (ֆրանսերեն, 1939) եւ այլ ուսումնասիրություններ: Նկատի ունենալով նշված բնագավառում մեծանուն հեղինակի ներդրած ավանդը եւ այն ընթերցողներին ավելի հասու դարձնելու անհրաժեշտությունը՝ «Գալուստ Կիլպենկեան» հիմնարկությունն իր հայկական մատենաշաարով Լիսաբոնում մեկ գրքով ֆրանսերենով լույս ընծայեց Ն.Ադոնցի՝ հայ-բյուզանդական հարաբերություններին նվիրված առավել կարեւորություն ներկայացնող ուսումնասիրությունները (1965):

Ն.Ադոնց գիտնականի ու քաղաքացու ամբողջական դիմագիծն անհնարին է ստվերագծել՝ առանց Հայկական հարցին նվիրված նրա ուսումնասիրությունների գեթ թվարկմամբ՝ «Հայկական հարցի շուրջ Թուրքիայում» (1913), «Հայկական հարցը եւ գերմանական օրագրերը» (ռուսերեն, 1917-1918), «Թուրքական հայտագիրը եւ Թուրքահայաստանը» (ռուսերեն, 1918), «Հայկական հարցի լուծման շուրջ» (անգլերեն, 1920, ռուսերեն, 1984, հայերեն, 1989), «Հայկական հարցը Սեւրում», «Քրդերի ներթափանցումը Հայաստան» (անգլերեն), «Մեծ Եղեռնի տարելիցին», «Հայկական հարցի ներքին կողմերից մեկը», «Հայկական հարցը ամերիկյան սենատում» (ռուսերեն) եւ այլն: Ի դեպ, 1996թ. «Հայագիտակ» հրատարակչությունը մեկ գրքով լույս է ընծայել Հայկական հարցին վերաբերող Ն.Ադոնցի հոդվածներն ու ուսումնասիրությունները, որոնցով հանրությունը հնարավորություն ունեցավ ծանոթանալու պատմաբանի ժառանգության անծանոթ մնացած շատ էջերին:

Կյանքի վերջին տարիներին Ն.Ադոնցը ծրագրել էր իր պատմագիտական աշխատանքների արդյունքները հանրագումարի բերել եւ ստեղծել «Հայոց քննական պատմություն» խորագիրը կրող մի բազմահատոր աշխատություն (հնագույն ժամանակներից մինչեւ XX դարը): Իրերի բերումով նա հասցրել է գրել միայն առաջին հատորը (հայկական հնագույն ցեղերի միությունների եւ Ուրարտուի պատմության ժամանակաշրջանները): Հատորը լույս է տեսել Փարիզում՝ ֆրանսերեն(վ) (1946, հայերեն, 1972): Արժեւորելով Ն.Ադոնցի այս գործը՝ ֆրանսիացի նշանավոր պատմաբան-ակադեմիկոս Ռընե Գրուսեն գրել է. «Մեր ձեռքի տակ ունենք ըստ ամենայնի մի կատարյալ գործ Հայոց պատմության այն մասի վերաբերյալ, որ մինչեւ հիմա շատ քչերին էր մատչելի, եթե ոչ բոլորովին անծանոթ: Դա հոչակավոր գիտնականի կողմից մի փառավոր նվեր է իր հայրենակիցներին, քանի որ Ադոնցը նրանց վերադարձնում է մոտավորապես տասը դար: Սա Ադոնցի՝ մաիվան ժամին ընծայած արքայական պարգեւն է իր երկրին ու ժողովրդին, որի պատմությունը նա կրկնապատկում է» (40): Ադոնցը միաժամանակ աշխատել է նաեւ «Հայոց քննական պատմության» երկրորդ, երրորդ եւ չորրորդ հատորների վրա, նախապես շարադրել ամբողջական գլուխներ, բաժիններ, կազմել ժամանակագրական տախտակներ ու գաղաձանացանկեր: Ցավոք, այդ աշխատանքները չավարտվեցին, իսկ վերջնական խմբագրման կարոտ ու բազմաթիվ անմշակ նյութեր մնում են ցրված նրա թողոնի ամենատարբեր ծրարներում (41):

Հիրավի, վիթխարի, անընդդիմելի ժառանգություն: Թվարկվածը, անշուշտ, կարող է միայն ընդհանուր գծերով գաղափար տալ կատարված այն ահռելի աշխատանքի մասին, որ պատկանում է Ադոնցի գրչին: Հաստատապես կարելի է շեշտել, որ Ադոնցի գիտական ժառանգության յուրաքանչյուր կողմ, յուրաքանչյուր արտահայտություն հարստացրել է հայ միտքը մեծագույն, անանց արժեքներով: Ինչպես Հովհ.Թումանյանը գրականության ոլորտում, Կոմիտասը՝ երաժշտության, Հր.Աճառյանը՝ լեզվաբանության, Մ.Աբեղյանը՝ գրականագիտության, Վ.Սուրենյանցը՝ նկարչության, Ալ.Թամանյանը՝ ճարտարապետության, այնպես էլ Նիկողայոս Ադոնցը պատմագիտության ոլորտում անկրկնելի է ու մեծ: Իրերի բերումով թվարկված մեծությունների առավել հայտնի են հանրությանը, քան Ադոնցը: Եթե գիտական աշխարհը բավարար խորությամբ է տեղեկացված Ն.Ադոնցի ժառանգությանը եւ լայնորեն օգտվում է դրա անսպառ հնարավորություններից, ապա ընթերցող հանրությունը միշեւ վերջերս զրկված էր այդ մեծագույն հարստության հետ անմիջականորեն եւ ամբողջությամբ աղերսվելու երջանկությունից: Նման անհեթեթ իրողությունը հնարավոր եղավ շտկել միայն այն բանից հետո, երբ Լիսաբոնի «Գալուստ Կիլպէնկեան» հիմնարկության հայկական բաժանմունքի տնօրեն դոկտոր Ջավեն Եկավյանի նախաձեռնությամբ եւ հոգողությամբ Երեւանի պետական համալսարանի հրատարակչությունը ձեռնամուխ եղավ ականավոր պատմաբանի երկերի հիմգհատորյակի լույսընծայմանը: «Գալուստ Կիլպէնկեան» հիմնարկության հայկական մատենաշարով արդեն լույս են տեսել Ն.Ադոնցի երկերի առաջին չորս հատորները՝

1. Նիկողայոս Ադոնց, Երկեր հինգ հատորով, Հատ. Ա, Պատմագիտական ուսումնասիրություններ, Երեւան, 2006, 652 էջ:

2. Նիկողայոս Ադոնց, Երկեր հինգ հատորով, Հատ. Բ, Պատմաբանական ուսումնասիրություններ, Երեւան, 2006, 680 էջ:

3. Նիկողայոս Ադոնց, Երկեր հինգ հատորով, Հատ Գ, Հայերենագիտական ուսումնասիրություններ, Երեւան, 2008, 688 էջ:

4. Նիկողայոս Ադոնց, Երկեր հինգ հատորով, Հատ. Դ, Քննական պատմություն Հայոց, Երեւան, 2009, 720 էջ (42):

Հինգերորդ հատորը (Հայ-բյուզանդական ուսումնասիրություններ), որ այժմ պատրաստվում է տպագրության, լույս կտեսնի 2011թ. ընթացքում: Բացի նշվածից՝ «Հայագիտակ» հրատարակչությունը 2006 թվականին լույս ընծայեց Ադոնցի 17 փոքր ուսումնասիրությունների հատորյակը՝ «Հայաստանի ոսկեհանքը» խորագրով (160 էջ), իսկ 2010 թվականին «Բավիղ» հրատարակչությունը՝ Տիգրան Մեծին նվիրված նրա 3 ուսումնասիրություններն ընդգրկող գրքույկը (120 էջ): Այսպիսով՝ Ն.Ադոնցն այլեւս այն «Մեծ Անծանոթ»-ը չէ հայության համար: Նրա ժառանգությունը դարձել է իր պաշտելի ժողովրդի թանկ սեփականությունը:

Մեծագույն հայագետի մասին մեր խոսքը ուզում ենք ավարտել Մուշեղ Իշխանի բնութագրությամբ. **«Հայաստանն իսկ էր կարծես Նիկողայոս Ադոնց: Անոր լավագույն հատկանիշերնում մարմնացումը, անոր մարդկային պատկերը: Հայ մարդն էր ան՝ բարի ավանդական, արդիական եւ ազնվական իմաստով: Հայոց հինավուրց մշակույթի, հերոսական պատմության, զեղեցկության եւ հայ նկարագրի առաքինություններուն ապրող բերդը, որ գիտե ուրախություն եւ հպարտություն ներշնչել: Մեր հողին բույրը եւ մեր լեռներուն շունչը ուներ ան իր մեջ: Եթե կարելի է մարդու տիպարով մը բնորոշել ու երեւակայել ամբողջ երկիր մը, պրոֆեսոր Ադոնց առաքիններեն մեկն է, ապահովաբար Հայաստանը ներկայացնող մեր մտավորականներուն:**

...Նիկողայոս Ադոնց այն հայն էր, որ ամենեն ավելի իրավունք ուներ Հայաստանի հողին մեջ հանգչեցնելու իր ոսկորները, որոնք, վստահ եմ, հանգիստ չունին օտար հողի ցուրտ գրկին խորը: Ադոնցի տեղը Հայաստանի Պանթեոնն է, անմահներու հանգստարանին մեջ» (43):

Լուսանկարը Հ. Հովհաննիսյանի

Իշխանասար լեռ. Սյունիքի ամենաբարձր գագաթներից մեկը (3548մ), գտնվում է Սիսիան, Գորիս քաղաքների միջեւ:

Ծանոթագրություն

1. Գ.Գյուզալյան, Նիկողայոս Ադոնց՝ որպես պատմաբան, Աթիլիաս, 1943, էջ 1, հմմտ. «Հասկ», ամսագիր, Բեյրութ-Աթիլիաս, 1942, №5-6, էջ 88:

2. Թերեւս բացառությամբ Գ.Գյուզալյանի, Ռ.Ադալյանի եւ Կ.Յուզբաշյանի որոշ ակնարկների, որոնց կանդրադառնանք ստորեւ:

3. Ն.Ադոնցի ծննդյան թվականի վերաբերյալ գոյություն ունեցող տարբեր ցուցումները (1873թ., հիմնականում՝ 1875թ.) հետեւանք են հենց Ադոնցի փաստաթղթերում տեղ գտած անճշտությունների: Դեռեւս Կ.Յուզբաշյանը շրջանառությամբ մեջ էր մտցրել Ադոնցի ծննդյան կոնսիստորական վկայականը, որը փաստում էր նրա՝ 1871թ. ծնվելու իրողությունը (տես Կ.Յուզբաշյան, Նիկողայոս Ադոնցի գիտական ժառանգությունը, «Պատմա-բանասիրական հանդես», 1962, №4, էջ 115, հմմտ. Կ. Հ. Юзбашян, Н.Адонц и его книга “Армения в эпоху Юстиниана”, տես Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, Ереван, 1971, էջ 3): Ի հավելումն կարելի է ներկայացնել նաեւ Բռնակոթի գյուղական ծխական մատյանից կատարված հետեւյալ քաղվածքը՝ «Ծնունդ-հունվարի 10, 1871, Անուն-Նիկոլայ, Ամվանք ծնողաց-Գեւորգ Առաքելյան, Դանա Ռոստոմբեկյան» (տես ՀՀ ազգային արխիվ, ֆ.47, ց. 3, գ. 237):

4. ՀՀ ազգային արխիվ, ֆ. 312, ց. 2, գ. 1448, էջ 1:

5. «Ցուցակ էջմիածնի Հայկական հոգեւոր ճեմարանի հեռացված սաների» փաստաթղթում նշված է, որ Ն.Ադոնցը ճեմարանից հեռացել է 1891թ. փետրվարի 1-ին եւ նրան տրվել է ութերորդ դասարանի ավարտական վկայական (տես ՀՀ ազգային արխիվ, ֆ. 312, ց. 1, գ. 123, էջ 18):

6. Հրանդ-Սամուել, Նիկողայոս Ադոնց. կյանքն ու գործը, տես «Հայկաշեհ», ամսագիր, Փարիզ, գիրք երկրորդ, 1948, էջ 30:

7. Պ.Հակոբյան, Նիկողայոս Ադոնցի նամակները Կարապետ Եղյանցին եւ Նիկողայոս Մառին, տես «Լրաբեր» ՀԳԱԱ (հասարակ. գիտ.), №11, էջ 84: 8.Անդ, էջ 84, ծան. 1:

9. R. P. Adalian, Nicholas Adontz: The quest for a rational history, Los Angeles, 1987, p. 358.

10. Nicolas Adontz (notice biographique), տես N. Adontz, Histoire d’ Armznie, Paris, 1946, p. X.

11. Պ.Հովհաննիսյան, Նիկողայոս Ադոնցի անտիպ նամակներից, տես «Բանբեր երեւանի համալսարանի», 1988, №3, էջ 103:

12. H. Я. Марр, Выступление на защите диссертации Н. Г. Адонца “Армения в эпоху Юстиниана”, – текст выступления и материалы к нему, 1908 г. Архив Н.Я. Марра, А-996, л.262. հմմտ. В.А. Миханкова, Николай Яковлевич Марр, М.-Л., 1949, с. 165.

13. Г.И.Щетина, Центры изучения истории в дореволюционной академии наук, տես “История и историки”, Историографический ежегодник 1975 г., М., 1978, էջ 211:

14. Ա.Արզումանյան, Օրբելի եղբայրներ, Գիրք առաջին, «Թայֆուն», Երեւան, 1984, էջ 450-451:

15. Հ. Ադոնց, Դիոնիսի Փրակիցի եւ Արմենական մեկնիչներ, Պետրոգրադ, 1915, ներածություն, տես նաեւ R. Adalian, Nicholas Adontz, էջ 360:

16. Տես Համազգայինի Բեյրութի գրական պահոց, Նիկողայոս Ադոնցի ֆոնդ, պահարան I, զզրոց Բ, թղթածրար 5:

17. Ա.Սիմոնյանց, Լազարյան ճեմարանը, տես «Հայրենիք», ամսագիր, Բոստոն, 1965, №2, փետրվար, էջ 38, տես նաեւ R. Adalian, Nicholas Adontz, էջ 360:

18. Н. Я. Марр, Записка о преобразовании специальных классов Лазаревского института Восточных языков в Этнологическо-историко-филологический факультет Лазаревского Преднеазиатского института, Петроград, 1918, с.15.

19. Տես U. S. Ալիխանյան, Լենինյան փաստաթղթերը Հայաստանի մասին, Երեւան, 1980, էջ 45:

20. Տես Կ.Հ.Յոսեփյան, Иосиф Орбели, с. 49. Н. Каграманов, Дом культуры Советской Армении в Москве, Ереван, 1982, с.134.

21. Ա.Սիմոնյանց, Էջմիածնի բանկարժեք ձեռագիրները Առաջին Մեծ պատերազմի ընթացքին, տես «Հայրենիք», ամսագիր, Բոստոն, 1966, №6, էջ 70, հմմտ. նաեւ «Հայրենիք», 1946, №4, հուլիս-օգոստոս, էջ 86-87:

22. Կ.Հ.Յոսեփյան, Հ. Ադոնց և եր գիրգ «Արմենիա» ի Յուստինիանա», с. 9.

23. R.Hovhannisian, The Republik of Armenia, v. II, Berkley, 1982, p. 526.

24. Տես «The Armenian Mirror and Spectator», Boston-New York, 1951, 8 սեպտեմբերի:

25. Տես Համազգայինի Բեյրութի գրական պահոց, Նիկողայոս Ադոնցի ֆոնդ, պահարան I, զզրոց Ե, Ա-8, էջ 22:

26. Հ.Բերբերյան, Պրոֆ. Ն. Ադոնց, տես «Ձվարթնոց», տարեգիրք, Փարիզ, 1944, էջ 233:

27. Տես «Հայ մշակույթի օր», Փարիզ, 1932, էջ 153-155:

28. Հայագիտական այդ հանդեսի բնույթի, ուղղության եւ բովանդակության մասին հետաքրքիր տվյալներ է հաղորդում Ս.Վրացյանը Ադոնցին նվիրված իր հուշերում (տես Ս.Վրացյան, Հուշեր պրոֆ. Ն.Ադոնցի մասին, «Լրաբեր», ՀԳԱԱ (հասարակ. գիտ.), 1998, №1, էջ 202-210):

29. Պողոս Նուբար փաշայի դուստրը: 30.Տես «Annuaire de L’Institut de philologie et d’ Histoire Orientales pour 1932-1933», Bruxelles, p. 17.

31. Ա.Չոպանյան, Քրոնիկ. Մեկնողները (Նիկողայոս Ադոնց. բազմավաստակ բանասերը), տես «Ամանիտ», 1949, №21, հունվար-հունիս, էջ 32:

32. Հ.Ադամյան, Ն.Ադոնցի նամակները, տես «Բանբեր Հայաստանի արխիվների», 1966, №3, էջ 118:

33. Ա.Սարուխան, Բելգիան եւ հայերը, Վիեննա, 1937, էջ 217:

34. «The Armenian Mirror and Spectator», 1951, 8 սեպտեմբերի, հմմտ. նաեւ Գ. Գալեմատեր, Նիկողայոս Ադոնց, տես «Պայքար», ամսագիր, 1961, էջ 77:

35. Մուշեղ Իշխան, Պրոֆ. Ն. Ադոնց, տես «Ազդակ շաբաթօրյակ», 1944, 11 օգոստոսի, №24, էջ 5: հմմտ. նաեւ Մուշեղ Իշխան, Երեք մեծ հայերը (պրոֆ. Ն. Ադոնց. հուշեր եւ տպավորություններ), Բեյրութ, 1952, նաեւ նույնի՝ «Իմ ուսուցիչներս. Նիկողայոս Ադոնց», Բեյրութ, 1984, նաեւ «Armenian Review», Boston, 1986, v. 39, number 3.

36. Տես «Հայրենիք», ամսագիր, Բոստոն, 1963, №5, մայիս, էջ 25:

37. «The Armenian Mirror and Spectator», 1951, 8 սեպտեմբերի, հմմտ. նաեւ Գ. Գալեմատեր, Նիկողայոս Ադոնց, տես «Պայքար», ամսագիր, 1961, էջ 77:

38. Տես Ս.Վրացյան, Հայաստանի Հանրապետություն, 2-րդ տպագրություն, Բեյրութ, 1958, էջ 13:

39. Ռ.Լեռնյան, Իմ հուշերից, տես «Հայրենիք», տարեգիրք, Բոստոն, 1943, էջ 149-150:

40. Renn Grousset, Prnface, տես N.Adontz, Histoire d’ Armznie, p. VII.

41. Նիկողայոս Ադոնցի «Հայոց քննական պատմության» մասին մանրամասն տես Պ.Հովհաննիսյան, Նիկողայոս Ադոնցի «Հայոց քննական պատմության» ստեղծագործական ճանապարհը, տես «Պատմա-բանասիրական հանդես», 2001, №1, էջ 63-78:

42. Բոլոր հատորներն էլ լույս են տեսել մեր աշխատասիրությամբ:

43. Մուշեղ Իշխան, Երեք մեծ հայերը, էջ 17, 41: ■

տպագրվում է 2003թ.
հոկտեմբերի 1-ից ■
հիմնադիր եւ հրատարակիչ
«Սյունյաց աշխարհ» ՍՊԸ ■
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌՔԵԼԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՇԽԱՐՀԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՕՐԱԳԻՐ
ՀԱՍԱՐ. ԳԱՂՈՒՆԻ, ՀԱՅԿԱՁՈՐ, 20/32
ՀԵՌԱԽՈՍ՝ (0285) 5 25 63 = (091) 45 90 47 = (077) 06 28 02
էլ.հասցե՝ www.syuniacyerkir.am
էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru
Սյունյաց աշխարհ

Լուսանկարը Հ. Հովհաննիսյանի

ՍԻՍԻԱՆ, ՍՅՈՒՆԻՔ ՎԱՆՔ
Կոչվում է նաեւ Սուրբ Գրիգոր փաճառ, Սուրբ Հովհաննես եկեղեցի, Սիսավան: Կառուցվել է 7-րդ դարի վերջին Սյունյաց իշխան Կոհազարի կողմից՝ նախնական հոգեւոր առաջնորդ Հովսեփ Ա-ի (663-682) եւ վանական Թեոդորոսի օժանդակությամբ:

Լուսանկարը Հ. Հովհաննիսյանի

Սիսիանի Ն.Ադոնցի անվան թանգարանի բակում դրված «իծագրերից» (այծագրեր=այծապահարկերներ) մեկն է: Ժամանակին բերվել է Ուխտասար կոչվող հնավայրից, որտեղ՝ ծովի մակերեւույթից 3300մ բարձրության վրա, գտնվում են նմանատիպ մոտ 2000 քարաբեկորներ: Մոտ 5-7 հազար տարի առաջ Սյունիքի հնաբնակներն այդպես են արտահայտել իրենց մտքերը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՐԱՎԱՐՈՒՄ
ՀԱՍՑԵ՝ ք.ԿԱՐՄԻՐ ԲԼՈՒՐ,20/32
ՀԵՌԱԽՈՍ՝ (0285) 5 25 63 = (091) 45 90 47 = (077) 06 28 02
էլ.հասցե՝ www.syuniacyerkir.am
էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru

տպագրվում է 2003թ.
հոկտեմբերի 1-ից ■
հիմնադիր եւ հրատարակիչ
«Սյունյաց աշխարհ» ՍՊԸ ■

№ 17 236
18 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2011

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Բացառիկ պապուհան դեպի Սյունիքի անցյալը

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ
«Սյունյաց երկիր» թերթի խմբագիր

Սկիզբը՝ էջ 1

բյուզանդագետի գիտական ժառանգությունն այսօր հետաքրքիր է ոչ միայն նշված բնագավառների մասնագետներին, այլեւ ընթերցող հասարակության մի բավականին լայն շրջանակի: Հետեւաբար՝ ընթերցողին Նիկողայոս Ադոնցի գիտական ժառանգությանը, թերթի սուղ հնարավորության սահմաններում, հաղորդակից դարձնելը սույն համարի մյուս խնդիրն է: Մեր պարտքն է՝ գոնե առանձին հատվածների միջոցով ներկայացնել նրա՝ գլուխգործոցներ համարվող աշխատությունները՝ «Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում», «Հայաստանի պատմությունն. ակունքները, X-VIդդ. Ք.ա.», «Դիոնիսիոս Թրակացին եւ հայ մեկնիչները», ինչպես նաեւ այդ գործերի վերաբերյալ ջնջանվոր հայագետներ Նիկողայոս Մառի, Որբելի Գրուսեի, Գագիկ Սարգսյանի գրախոսությունները:

Հաջորդ հարցը. Ադոնցը Սյունիքի պատմությունը կամ Սյունիքին առնչվող հարցերն առանձին քննության առարկա չի դարձրել: Բայց նրան զբաղեցրած եւ բանասիրական, եւ պատմագիտական հարցերը մի բացառիկ պատուհան են դեպի Սյունիքի անցյալը: Նրա հայացքը, մի շարք հարցերում նրա ճշգրտումները, սրբագրումները, վերագնահատումները հնարավորություն են տալիս նոր պատկերացում կազմել Սյունիքի պատմության բազմաթիվ հարցերի վերաբերյալ: Ավելին՝ առանց նրա տեսակետների ծանոթանալու, մեզ թույլ ենք տալիս ասել, անհնար է Սյունյաց հին կյանքի եւ պատմության գիտական ըմբռնումը: Նման եզրակացության հիմք հանդիսացող որոշ հետազոտությունների մասին, անշուշտ, ընթերցողն ընդհանուր պատկերացում կկազմի այս համարում: Այդ մասին, որ առավել շատ տեղ է զբաղեցնում համարում, ընդհանրական եւ համառոտ տեղեկատվություն ենք տալիս հենց այս խոսքում:

...Հույն քերական Դիոնիսիոս Թրակացու (Ք.ա. II-Ադ.) «Քերականական արվեստ» աշխատությունը, որ 5-րդ դարից սկսած հիմք է դարձել հայերենի ուսումնասիրության եւ հայ քերականական ուսմունքի ստեղծման ու զարգացման համար, շուրջ մեկ հազարամյակ մեկնության առարկա է եղել հիշյալ հույն-բյուզանդական մեկնիչների, այնպես էլ հայ քերականների համար: Ամենաճշգրտավոր մեկնիչներից երկուսը՝ Մովսես Քերթողը եւ Ստեփանոս Սյունեցին, Սյունիքից են: Նրանց բուն երկերը մեզ հասնելու մասին, սակայն, Ն.Ադոնցը վերապահում ունի. **«Պրպտումները մեզ հանգեցրին այն եզրակացության, որ առաջին քերականների՝ Դավիթի, Մովսեսի եւ Ստեփանոսի բուն՝ հեղինակային երկերը՝ որպես առանձին գործեր, մեզ չեն հասել: Այն նյութերը, որոնք ձեռագրերում կրում են նրանց անունները, ոչ այլ ինչ են, եթե ոչ Մովսեսի «Քերականության» Ստեփանոս Սյունեցու աստվածաբանական մեկնությունները»** (Ն.Ադոնց, երկեր 5 հատորով, Գ հատոր, 2008թ., էջ XIII): Մովսես Քերթողի եւ Ստեփանոս Սյունեցու անվամբ մեզ հասած գործերի՝ Ադոնցի վերլուծությունը, որ տեղ է գտել «Դիոնիսիոս Թրակացին եւ հայ մեկնիչները» երկասիրության մեջ, ներկայացնելն այսօր մեր խնդրից դուրս է, բայց Ստեփանոս Քերականի մեկնությունը գոնե մասնակիորեն ներկայացնելը պարտադիր ենք համարում: Գրաբարով մեզ հասած այդ մեկնությունը «Սյունյաց երկրի» խնդրաքքով գրական հայերենի է փոխադրել մեր հայրենակից Սուսաննա Գրիգորյանը (բանասիրական գիտությունների թեկնածու): Սվաղոին ավելացնենք, որ Մովսես Քերթողը 722-729թթ. Սյունիքի մետրոպոլիտն էր, հայտնի է ոչ միայն որպես խոշոր քերական, այլեւ հոգեւոր երգերի հեղինակ ու թարգմանիչ: Իսկ Ստեփանոս Սյունեցին (Ստեփանոս Սյունեցի Երկրորդն է) 734թ. ձեռնադրվել է Սյունյաց թեմի առաջնորդ՝ մետրոպոլիտ, եղել է ճանաչված աստվածաբան եւ թարգմանիչ: (եւ Մովսեսի, եւ Ստեփանոսի աթոռակալության տարիների վերաբերյալ պատմագիտության մեջ կան իրարամերժ կարծիքներ):

Սյունիքյան թեմայի արծարծումներով բացառիկ է Նիկողայոս Ադոնցի «Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում» կոթողային մենագրությունը: Այն կարեւոր տեղեկություններ է պարունակում հետարշավունյաց Հայաստանում, որ Մարզպանական Հայաստանն է, Սյունիքի քաղաքական ու վարչական կացության մասին: Ուշագրավ տեղեկություններ կան նաեւ այնպիսի վիճելի (ադրբեջանական պատմագրության կողմից առայսօր շահարկվող) հարցերի վերաբերյալ, ինչպիսիք են՝ Արցախի, ապա եւ Սյունիքի ժամանակավոր անջատումը Հայաստանից, Սյունիք-Արցախ միասնական վարչական նոր միավորի (551(571)-642թթ.) ձեւավորումը Վահան Սյունու գլխավորությամբ, Սյունիք-արցախյան նոր շահիրի վարչական կենտրոնը Վարանդա (Սիսական-ոստան) փոխադրելու, Սասանյան Իրանի եւ Հռոմեական կայսրության կողմից 387-ին Հայաստանի (Մեծ Հայքի) առաջին բաժանման ու Արցախի վարչական կացության, Արցախն ու Սյունիքը իրար կապող Հաբանդի (երկու Հաբանդի) աշխարհագրական դիրքի վերաբերյալ:

Հովհաննես Որոտնեցի եւ Գրիգոր Տաթեւացի, Երեւան, ձեռ. 3295բ, Ժողովածու, XVIIդ.:

Ն.Ադոնցի այդ մենագրության մեջ մատենագիտական նոր վկայությունների, նոր հիշատակարանների միջոցով հավելյալ տեղեկություններ ենք ստանում Սյունյաց նախարարական տոհմի, ըստ Գահնամակ-փաստաթղթերի՝ այդ նախարարական տան զբաղեցրած դիրքի, ըստ Զորաճամակի՝ Սյունյաց իշխանի ունեցած այրուձիի (19400 կամ 21 հազար հեծյալ), Սյունյաց նախարարական տան ծագման, Սիսակյանների տոհմական հիմքերի, Սյունյաց եպիսկոպոսության առաջացման մասին:

Ն.Ադոնցն ուշագրավ դիտարկում է անում նաեւ Սյունիքում Սիսակյաններին հաջորդած Օրբելյանների մասին: Անդրադառնալով Մամիկոնյանների տոհմական հիմքերին՝ նա նշում է. **«....Վրաստանի Օրբելյան իշխանները եւս իրենց նախահայրերին որոնում էին ճենաց աշխարհում, եւ որ նրանց մոտ էլ հանդես է գալիս ճենբակուրը: Զուգադիպությունը պատահական չէ, ըստ երեւույթին տվյալ դեպքում գործ ունենք Մամիկոնյանների տոհմական զրույցի մի վերապրուկի հետ, եւ այդ կարելի է բացատրել նրանով, որ Օրբելյաններ իրենց համարում էին Մամիկոնյանների ժառանգներ: Եվ զարմանալու բան չկա. ինչպես որ Բագրատունիները շարժվեցին Սպերից դեպի Վրաստան, Մամիկոնյաններն էլ կարող էին Վրաստան անցնել հարեւան Տայքից: Օրբելյանների թշնամական վերաբերմունքը վրաց Բագրատունիների նկատմամբ կարծես թե Մամիկոնյանների՝ դեպի հայ Բագրատունիների ունեցած անբարյացակամ վերաբերմունքի արձագանքն է»** (Ն.Ադոնց, Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, Երեւան, «Հայաստան», 1987թ., էջ 448-449):

Ն.Ադոնցի դիտանկյունից նորովի է մեզ պատկերանում Սյունիքում 18-րդ դարակզբին Դավիթ Բեկի գլխավորած ազգային-ազատագրական պատերազմը: Ռաֆֆու ««Դավիթ Բեկ» վեպի պատմական հիմը եւ գաղափարախոսական արժեքը» հետազոտության մեջ նա, հիրավի, մի քանի եական շտկում է կատարում մեր՝ մինչեւ հիմա ունեցած պատկերացումների մեջ: Թեեւ սուղ է թերթի հնարավորությունը, բայց տեղին ենք համարում այդ հետազոտության հիմնական մասի զետեղումը սույն համարում: Դավիթբեկյան թեմային Ն.Ադոնցն անդրադառնում է նաեւ «Դավիթ Բեկի եւ Տեր Վվետիսի սերունդը» ուսումնասիրության մեջ, որը միաժամանակ յուրօրինակ անդրադարձ է իր տոհմական արմատներին:

Ն.Ադոնցի գիտական ժառանգության մեջ, ոչ միայն սյունիքյան տեսանկյունից, շրջադարձային նշանակություն ունեցավ «Մարզպան Վասակը պատմաբանների դատաստանի առաջ» հետազոտությունը (նրա պատմագիտական առաջին աշխատանքն է, որ լույս է տեսել 1904-ին): Նա կարողացավ Վասակ Սյունու մասին մեզ նոր պատկերացում առաջարկել՝ հակառակ եղիշեի եւ Ղազար Փարպեցու, որոնց միակողմանի եւ հակասական նկատառումները մեզանում ցավոք իշխող էին եւ են մեկուկես հազարամյակ շարունակ: Վասակ Սյունու թեման Ն.Ադոնցը քննում է նաեւ «Քաղաքական հոսանքները Հին Հայաստանում» հետազոտության մեջ: Մեծ հայագետն այդտեղ ավելի վճռական է արտահայտվում. **«Ոչ ուրացության եւ ոչ դավաճանության մասին խոսք անգամ չի կարող լինել: Երկու կողմն էլ հավասարապես հասարակական շահ ի նկատի ունեն: Տարբեր էին նրանց տեսակետները, երկուսն էլ՝ կասկածելի իրենց առավելությամբ»** (Ն.Ադոնց, Երկեր 5 հատորով, Ա հատոր, Երեւանի համալսարանի հրատարակչություն, Երեւան, 2006, էջ 225):

Խնդրո առարկայի վրա լույս է սփռում «Դարձյալ Կորյունի շուրջը» ուսումնասիրությունը, որի մեջ ենթադրություն է հայտնվում առ այն, թե Կորյունի պատմությունը գրվել է Ավարայրից հետո, ինչն ավելի արժեքավոր է դարձնում Վասակ Սյունու մասին դրանում տեղ գտած հայտնի խոսքը. **«Այն ժամանակ Աստված տվեց, որ Սյունիքի իշխանության գլուխն անցավ քաջ Սիսական Վասակը՝ խելացի ու հանճարեղ եւ կանխագետ, աստվածային իմաստության շնորհքով օժտված մի մարդ: Նա շատ նպաստեց Ավետարանի քարոզության գործին: Նա, ինչպես որդին հորը, հնազանդություն ցույց տալով եւ Ավետարանին վայել կերպով ծառայելով, մինչեւ վերջը գործադրում էր նրա հրամայածները»** (Կորյուն, «Վարք Մաշտոցի», Երեւան, 1962թ., «Հայպետհրատ», էջ 109, Գլուխ ԺԴ): Իսկ Ադոնցի եզրակացությունն այս է. **«Ինչպես եւ բացատրելու լինենք Կորյունի, եվթաղի, Մակաբայեցվոց գրքի, նաեւ Ագաթանգեղոսի փոխադարձ հարաբերությունը, գաղտնիքը որոնելու է 460 թվից հետո: Տրամադիր չենք չափազանցելու տոմարական վկայության արժեքը, բայց ուրեմնալը եւս անկարելի է, մասամբ երբ գալիս եմ հաստատելու բանասիրական-պատմական քննության կասկածները»** (Ն.Ադոնց, Երկեր հինգ հատորով, Բ հատոր, Երեւանի համալսարանի հրատարակչություն, Երեւան, 2006, էջ 86):

Մեր ուշադրությունից չի կարող վրիպել Ն.Ադոնցի մեկ այլ հետազոտությունը՝ «Խաչատուր Աբովյանի վախճանը»: Դա քննություն է մեր մեծ հայրենակից Ակսել Բակունցի «Խաչատուր Աբովյանի անհայտ բացակայումը» հետազոտության: Եվ քննությունն այսպես է եզրափակում աշխարհահռչակ գիտնականը. **«Ա.Բակունցի աշխատությունը, ամեն պարագայի, մի կարեւոր նպաստ է գործին՝ շնորհիվ նոր նյութերի եւ նոր մեկնաբանության»** (Ն.Ադոնց, Երկեր 5 հատորով, Բ հատոր, Երեւանի համալսարանի հրատարակչություն, Երեւան, 2006, էջ 537):

Ն.Ադոնցի սյունիքյան արծարծումներին կարելի է հանդիպել այլ գործերում եւս: Արժեքավոր տեղեկություններ է պարունակում մանավանդ «Քննություն Մովսես Կաղանկատվացու» հետազոտությունը: Դա նոր լույս է սփռում պատմագիտության մեջ իշխող մի կարծիքի վրա եւս, որ իբր Սյունիքում երբեմն-երբեմն իշխել են անջատական տրամադրություններ, ինչն արտացոլվել է նաեւ հոգեւոր իշխանության մեջ: Այդպիսի տրամադրությունների կոնկրետ դրսեւորումներից մեկի մասին ահա թե ինչ է ասում հայագետը. **«Հայոց եղիսա կաթողիկոս Անվանք գնալիս (704 թվին) թույլ է տվել իրեն երիցդ վանքում «խակագործություն», որով եւ ընդունված հարաբերությունները կաթողիկոսարանի եւ Սյունյաց աթոռի միջեւ խանգարվել են»:** Այդ հետազոտության մեջ եւս Ն.Ադոնցը ներկայացրել է Սյունյաց եպիսկոպոսության (ինչպես եւ Մարդպետական եպիսկոպոսությանց) մետրոպոլիտության արժեքի համարվելու մոտիվը:

Ն.Ադոնցը, թեեւ կրթությամբ ու նախասիրություններով նախեւառաջ միջնադարագետ էր, համաշխարհային հանրամբ ու ճանաչում ունեցող բյուզանդագետ, անդրադարձել է նաեւ մեր ամենացավոտ ազգային հարցին՝ Հայ դատին, որի վերաբերյալ նրա կշռադատումը (թեեւ մահվան ժամանակից անցել է մոտ 70 տարի) շարունակում է մնալ ամենասարդիականներից մեկը, եթե ոչ ամենասարդիականը: Մեր ձեռքի տակ է նրա երկերի չորսհատորյակի Ա հատորը («Հայագիտակ», 1996թ.), որն ընդգրկում է հայ մեծ պատմաբան հովանավորների ու ուսումնասիրությունները հայկական հարցի վերաբերյալ: Բոլոր հոդվածներն ու ուսումնասիրությունները, առանց վերապահումի կարելի է ասել, արժեքավոր են ու արդիական: Սակայն դրանցից մեկը՝ «Մեծ եղեռնի տարելիցին» (գրվել է 1928թ. Բոստոնի «Հայրենիք» ամսագրի խմբագրության հատուկ պատվերով), ընթերցողին ներկայացնելը պարտադիր ենք համարում:

Վերեւում անդրադարձանք Ն.Ադոնցի «Դիոնիսիոս Թրակացին եւ հայ մեկնիչները» աշխատությանը: Մինչդեռ դա հայոց լեզվի քերականությանը եւ ընդհանրապես հայերենին նվիրված միակ գործը չէ:

Մեր ձեռքի տակ են նաեւ Ն.Ադոնցին նվիրված բազմաթիվ գիտական հոդվածներ, արխիվային նյութեր, որոնցից մի քանիսը նույնպես առաջարկում ենք ընթերցողին:

Մեկ այլ առիթով վերեւում նշեցինք՝ **«....Առանց նրա հայացքին ծանոթանալու.... անհնար է Սյունյաց հին կյանքի եւ պատմության գիտական ըմբռնումը»:** Դրան հետեւյալ հավելումն ենք ուզում անապացման անել՝ հայագիտությունն այսօր առանց Ադոնցի հիմնարար աշխատությունների անհնար է պատկերացնել: Ուրեմնն՝ մեր թերթի սույն թողարկմանը, վստահ ենք, կհաջողդեն նմանատիպ նոր քայլեր: Եվ դրանց ձեռնարկողները, անշուշտ, հաշվի կառնեն մեր բացթողումները եւ ավելի տարողունակ նյութ կառաջարկեն ընթերցողին:

«Սյունյաց երկրի» սույն համարի թողարկումը եւս մեկ առիթ է երախտագիտություն հայտնելու բոլոր այն գիտնականներին ու հաստատություններին, որոնց մտքի ու ջանքի շնորհիվ Ն.Ադոնցի գիտական ժառանգությունն այլեւս հասանելի է ընթերցող հասարակությանն ու գիտական շրջաններին: Մենք, ցավոք, չկարողացանք (ծավալի պատճառով) սույն համարում ներկայացնել Ն.Ադոնցի գիտական ժառանգության մատենագիտական ամբողջ շրջանակը՝ հեղինակած վաստակաշատ պատմաբան Պետրոս Հովհաննիսյանի կողմից, բայց չենք կարող չնկատել, որ արդեն ընթերցողի սեղանին է Ն.Ադոնցի հինգ հատորով երկերի չորս հատորը, ինչն իրականությունն է դարձել Գալուստ Գյուլբենկյան հիմնարկության Հայկական բաժանմունքի տնօրեն, դոկտոր Ցավվեն Եկավյանի ջանքով, ում մեր անկեղծ երախտագիտությունն ենք հայտնում: Բազմահատորյակի հրատարակման գործում բացառիկ ներդրում ունենալու, ինչպես եւ թերթի սույն համար պատրաստելու գործում ցուցաբերած օժանդակության համար մեր առանձնահատուկ շնորհակալությունն ենք հայտնում Պետրոս Հովհաննիսյանին: Ի դեպ, վերջինիս ներդրումն այնքան ակնառու է ադոնցագիտության մեջ, որ կամենցանք նրան ներկայացնել առանձնակի: Շնորհակալություն ենք հայտնում նաեւ Սիսիանի քաղաքապետ Աղասի Հակոբջանյանին, Սյունիքի մարզի սերմացուադրողների միության տնօրեն Գագիկ Խաչատրյանին, Բռնակոթի գյուղապետ Ատոմ Առաքելյանին՝ խմբագրության սույն ձեռնարկումը քաջալերելու համար: Բարձր ենք գնահատում գեղանկարիչ Ռոբերտ Կամոյանի մասնակցությունը թերթի հերթական համարի ծննդյան գործին: Նրա՝ Ն.Ադոնցին նվիրված կտավը, կարծում ենք, նոր խոսք է առաջարկվող թեման ըստ պատշաճի ներկայացնելու հարցում: Մեր շնորհակալությունն ենք հայտնում Լեռնաձորի հիմնական դպրոցի տնօրեն Ռոբերտ Էջանեանցուն, Կապանի երկրագիտական թանգարանի տնօրեն Գրիշա Սմբատյանին՝ համարի նախապատրաստության ընթացքում թեմային առնչվող հարցերի քննարկումներին շահագրգիռ եւ օգտակար մասնակցություն ունենալու համար:

Միգուցեեւ Ն.Ադոնցին այսպեսով ներկայացնելն ամենաարդյունավետ ու ամենաօպտիմալ տարբերակը չէ: Բայց նախապատվություն տվեցինք հենց այս կերպին, թեեւ ունենք համարը կառուցելու այլ տարբերակներ եւս: Բնականաբար, հնարավոր չէր ներկայացնել Ն.Ադոնցի գիտական ամբողջ ժառանգության համառոտագրությունն անգամ: Սակայն առաջարկվող նյութերի, թեմաների ծիրը բավարար է, հանդգնում ենք, որ ընթերցողը նրա կյանքի եւ գիտական ժառանգության մասին ունենա ամբողջական ու ընդհանուր պատկերացում: Միաժամանակ, սույն համարը, կարծում ենք, յուրօրինակ ուղեցույց է դեպի մեծ հայագետի գիտական ընդարձակ եզր ձգվող ճանապարհին, ինչպես եւ հարգանքի յուրաքեր տուրք է ականավոր պատմաբան ու բանասեր, աշխարհահռչակ բյուզանդագետ Նիկողայոս Ադոնցի հիշատակին: Սա, ի վերջո, Սյունյաց աշխարհի հերթական անկեղծ ու համեստ գնահատանքն է իր տաղանդաղոր զավակին:

Ծննդյան 140-ամյակի առթիվ անհնարին էր ուխտագնացությունն կատարել նրա շիրիմին, որովհետեւ, որքան էլ ցավալի է, նրա գերեզմանի հետքերն այլեւս չկան: Ըստ էության՝ Բրյուսելի հայ համայնքն այդ հարցում ժամանակին ակնհայտ անպատասխանատվություն է ցուցաբերել, այլապես 1942թ. մահկանացուն կնքած գիտնականի շիրիմը մի քանի տարի անց չէր անհայտանա՝ գերեզմանոցի տարածքում կատարված քաղաքաշինական աշխատանքների պատճառով (կիսը՝ Օլգա Հովնաթանյանը, թաղված է Փարիզի Պեր-Լաշեզ գերեզմանոցում): Մենք չկարողացանք տեղեկություններ ստանալ նաեւ Լ.Ադոնցին առնչվող բրյուսելյան վայրերի մասին, թեեւ օգնություն էինք հայցել հանրապետության արտաքին գործերի նախարարությունից ու Բելգիայում ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպանից: Փոխարենն այցելեցինք Բռնակոթ, ծունկի եկանք, մոմ վառեցինք նրա հոր՝ Գեւորգ Անաքելի Տեր-Ավետիքյանի շիրիմին, որ գտնվում է գյուղի Սբ Գեւորգ եկեղեցու բակում, խնկարկեցինք այնտեղ (մայրը թաղվել է Բաքվի Արմենիթեմն շրջանի հայկական գերեզմանոցում): Խնդրելով ամենակալ Բարձրյալին, որ ընդմիշտ օրհնյալ լինի վիթխարի գիտնական, պատմական հայ, Սյունյաց աշխարհի անվանի զավակ Նիկողայոս Ադոնցի հիշատակը: ■

տպագրվում է 2003թ.
հոկտեմբերի 1-ից ■
հիմնադիր եւ հրատարակիչ
«Սյունյաց աշխարհ» ՍՊԸ ■
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՐԱՎԱՐՈՒՄ
ՀԱՍՑԵ՝ ք.ԿԱՐՄԻՐ ԲԼՈՒՐ,20/32
ՀԵՌԱԽՈՍ՝ (0285) 5 25 63 = (091) 45 90 47 = (077) 06 28 02
էլ.հասցե՝ www.syuniacyerkir.am
էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Տաթեւի վանք: Ծննդավայր Բռնակոթի ծխական դպրոցն ավարտելուց հետո Ն.Ադոնցը մինչեւ 1882թ. սովորել է Տաթեւի վանական վարժարանում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՒ ՀԱՅԱՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՇԽԱՐՀ
ԱՄՍԱԿԱՆ ԿԱՄԱՒՈՐԱԿԱՆ ԹԵՐԹԹԱԳԻՐ
ՀԱՍՑԷ՝ ք.ԿՊՈԼԻ, ՀԱՅԿԱԶՈՒՆ-20/32
ՀԵՌԱԽՕՍ՝ (0285) 5 25 63 = (091) 45 90 47 = (077) 06 28 02
էլ.հասցէ՝ www.syuniacyerkir.am
էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru

տպագրվում է 2003թ.
հոկտեմբերի 1-ից ■
հիմնադիր եւ հրատարակիչ
«Այսօրվայ աշխարհ» ՍՊԸ ■

№ 17 236
18 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2011

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԳԼԽԱՎՈՐ ԳՈՐԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ն.Ադոնցի «Դիոնիսիոս Թրակացին եւ հայ մեկնիչները»

Ն.ՅԱ.ՄԱՌ

Պետերբուրգի համալսարանի պրոֆեսոր, ակադեմիկոս (Ս.Պետերբուրգ, 1915թ.)

Ներկայացվող աշխատության մեջ առաջին անգամ արեւելագետի կողմից պատմական-գրականագիտական հարց է հետազոտվում, որն իր նյութով հուսարեն եւ հայերեն ուսումնասիրության միասնական աշխատանքի արդյունք է եւ բացառիկ հետաքրքրություն է ներկայացնում բանասիրությամբ զբաղվողների շրջանում: Արեւմտյան Եվրոպայում հեղինակն այս ոլորտում, այսինքն՝ փիլիսոփայաբերականական աշխատանքների բնագավառում, ունի նախորդներ (Բաումգարտներ, Կոնիբեր եւ այլք), ովքեր կատարել են հունհայկական տեքստերի, հունարեն բնագրերի եւ հայերեն թարգմանությունների որոշ հետազոտություններ:

Սակայն այս աշխատություններից ոչ մեկում մեզ չենք կարող որեւէ հեղինակի՝ Ադոնցին որպես նախորդ ընդունել ոչ բովանդակային եւ ոչ էլ գործելաոճի առումով:

Դիոնիսիոս Թրակացին որոշ առումով հայագետների համար սխոլաստիկ քերականության հայրն է: Ըստ էության, նրա քերականական աշխատությունը, առանձին վերցրած, կարող էր դառնալ հայագետի դոկտորական ատենախոսության նյութ: Այս հուշարձանը, որն առաջինն էր Ն.Ադոնցի հրատարակած տեքստերից, ճիշտ է, նորույթ չի պարունակում ոչ հունարեն բնագրի, ոչ էլ հայերենի հին թարգմանության առումով: Հայերեն տեքստը հունարենից առաջ ֆրանսերենով առաջին անգամ հրատարակվել է 90 տարի առաջ Փարիզում: Այն նույնպես հայագետ է հեղինակել, պրոֆեսոր Ֆրպետը կամ Ֆրպետյանը (1824թ.): Չեմ խոսում համեմատաբար ոչ վաղ անցյալի հետազոտող Մերքսի մասին: Եվ այնուամենայնիվ, Ն.Ադոնցի մշակմամբ հայտնի ստեղծագործությունը ներկայանում է նույնքան նորովի, որքան այլ՝ առաջին անգամ լույս տեսնող հուշարձանները, քանի որ խոսքը վերաբերում է իմ ձեռքի տակ եղած հայերեն տեքստին: Այդ արդյունքը կախված է լեզվի մասին ուսումնքի հայկական վարկածների կամ առանձին հայկական վարկածների վերաբերյալ ճիշտ հարցադրումից: Այդ ճշտությունը բխում է ուսումնասիրվող նյութերի ծավալից եւ դրանց ուսումնասիրման բուն եղանակից: Այս աշխատության մեջ ընդգրկված է հին հայերենի քերականական գրականության բոլոր հուշարձանների ամբողջությունը:

Ն.Ադոնցի կատարած բուն աշխատանքը պատմաբանասիրական է՝ ամբողջովին կառուցված բազմաթիվ ցուցակների, տարբեր հայրենական եւ արեւմտաեվրոպական հավաքածուների ձեռագրերի ընթերցումների համեմատական ուսումնասիրության հիման վրա:

Աշխատության մեջ շարադրված տեքստերից հիշ-որ բան հրատարակվել է եւ ավելի վաղ, սակայն ինչպես ողջ հրատարակվածի մեջ, այնպես էլ պատմագրական հետազոտություններում տեքստերը ներկայացվում էին որպես կարծրատիպեր, որոնցից ենթադրվում էր, որ բավական կլինի թարմացնել կամ վերականգնել ժամանակի ընթացքում տուժած այս կամ այն շտրիխը: Նույնիսկ այն ժամանակ, երբ կասված էր առաջանում, թե արդյո՞ք պատկանում է հուշարձանն այն անձին, որի անվան հետ կապվում էր ազգային ավանդույթը, ոչ ոքի մտքով չէր անցնում կասկածի տակ առնել բուն տեքստի ամբողջականությունը, որը կարծես բիել էր նույն դարաշրջանի ոճական բազմազանությունից:

Ն.Ադոնցի աշխատություններում հարցադրման առանձնահատկությունն այն է, որ նրա կողմից վերամշակված հայերեն տեքստը, նույնիսկ եթե այն դրոշմված է տպագրահաստոցով, գրքի հետ ծանոթացող մասնագետի աչքում չի դադարում ապրել դարեր շարունակ քաշած ճակատագրի մատուցած անակնկալներով: Ճակատագրի այդ անակնկալներն արտացոլում են ոչ թե պատահական արտագրողների քմահաճույքները կամ տեսական պատկերացումները, երբեմն էլ նրանց վրիպումները, այլ տեքստերի օրգանական բնականոն փոփոխությունները հայ հին գրականության զարգացման ընդհանուր պայմաններից համահունչ, նախ եւ առաջ համահունչ մի դարաշրջանի հին գրական լեզվի փոտեմատիկ վերածննդին մի այլ դարաշրջանի լեզվի:

Ամբողջ ծավալով եւ փաստացի մանրամասներով ակներեւաբար լուսաբանված լինելով՝ Ն.Ադոնցի կողմից հետազոտված հուշարձանների կյանքը կլանում է մասնագետին եւ մղում նրան հետագա հետազոտությունների: Հետազոտողն ակամա շարունակում է աշխատանքը Ն.Ադոնցի հրատարակությունում առաջարկված վերամշակված տեքստի վրա, հայտնաբերում նրանում նոր նյութ, որպեսզի ավելի համարձակորեն եւ վճռականորեն, քան այն արված է, ճշի հին Հայաստանի տարբեր լեզուների ուրվագծերը, որպեսզի զուտ լեզվաբանորեն, չհաշված ոճական առանձնահատկությունները, ամրագրի այս կամ այն հուշարձանը որոշակի գրական միջավայրին, որոշակի ժամանակահատվածին: Այսպիսով՝ Ն.Ադոնցի աշխատությունը ոչ միայն տալիս է որոշակի դրական մի բան, այլեւ իր մեջ պարունակում է հետաքրքրասիրության առումով ծայրաստիճան արդյունավետ սկիզբ:

Ինչ վերաբերում է բնագրերի գրաքննադատությանը դիմացած տեքստերի՝ փորձառու հայագետի տքնաջան աշխատանքի արդյունքներին, քիչ է ասել, թե դրանք նշանավորում են տեղաշարժ մեռյալ կետից, որից մինչեւ օրս ամուր կառչած են կամ ցանկանում են կառչել հին հայ գրականության նրբաճիտ գիտակները: Ն.Ադոնցի հետազոտության երեւան գալով՝ գիտական գրականության մեջ արդեն չի կարող խոսք լինել այն մասին, որ հնագույն ժամանակաշրջանին վերաբերող մեզ հասած քերականական աշխատությունները թվագրվում են մեկ դարաշրջանով, առավել եւս V դարով՝ իրենց եթադրվող ընդհանուր ոճով կամ անուններով հարմարեցվում այս կամ այն հարյուրամյակին, որոնց հետ կապվում էին այս աշխատությունները: Իրոք, Ն.Ադոնցի նուրբ վերլուծությունը խարխլեց հուշարձանների՝ ժամանակի մեջ այսպիսի ավանդական տեղաբաշխման գաղափարը, ընդ որում, հենց ինքը՝ Ն.Ադոնցը, ըստ երեւույթին, ավելի քան հակված էր այն ընդունել: Բացի դրանից՝ այս աշխատության շնորհիվ հնարավոր դարձավ այնպիսի խորությամբ ներթափանցել գրական հուշարձանների ոճի ուսումնասիրության մեջ, որ Ն.Ադոնցն ի վիճակի է ոչ առանց հիմքի հաստատելու հակառակը տեքստի ցուցադրական կողմին, այն է՝ ոչ այն ամենը, ինչ շարադրված է հին հայերենի բոլոր տեսանելի հատկանիշներով, իրականում համապատասխանաբար կամ գոնե համեմատաբար ավելի հին է: Ն.Ադոնցի կողմից հաստատվում կամ ավելի ստույգ նախանշվում է արխայիկ դպրոցի գոյությունը շատ ուշ, այսինքն՝ կիլիկյան շրջանի հայ գրականության՝ XII դարից սկսած եւ ավելի ուշ: Աշխատության մեջ մեծ ծավալով տրված են ոճական նյութեր հայկական ավելի վաղ շրջանի

Հույն քերական Դիոնիսիոս Թրակացի (Ք.ա. II-I դդ.), «Քերականական արվեստ» աշխատության հեղինակը, որ V դարից սկսած հիմք է դարձել հայերենի ուսումնասիրության համար:

հայերեն եւ թարգմանական քերականական աշխատությունների ժամանակագրության համար:

Մինչ այժմ այս աշխատության նշանակության մասին խոսելիս մեզք հայտնվել էինք հենց Ն.Ադոնցի կողմից հրատարակված աշխատությունների հետաքրքրությունների շրջանակում: Ն.Ադոնցն այդ հետաքրքրություններին ասես կարելուր նշանակություն է տալիս: Աշխատությունը՝ որպես դիսերտացիա ուղեկցող 12 դրույթներից տասը՝ սկսած 3-րդից, սահմանափակված էր այդ հատուկ հետաքրքրություններով: Բացի դրանից՝ այս աշխատանքի հետ կապված են նաեւ այլ հետաքրքրություններ: Նախ՝ Ն.Ադոնցը կապ է հաստատում հայերեն եւ հունարեն քերականական աշխատությունների միջեւ, ինչի մասին ես լռում եմ. հարգարժան Ս.Ժեբելեւը ստորեւ մեր գլխին քարոզ է կարդում այդ հարցի առիթով: Երկրորդ՝ Ն.Ադոնցը բացահայտում է եւ բուն հայերեն տեքստերի քերականական բովանդակության փոխհարաբերությունները, եւ ցյուղավորումները: Սակայն, կրկնում եմ, մինչ այժմ էլ մենք մնում ենք հենց հուշարձանների հետաքրքրությունների շրջանակում, այդ հետաքրքրությունների երկու աստիճաններին: Աշխատության մեջ հիշատակելով հայկական քերականական աշխատությունների ժամանակագրության համար հարուստ ոճական նյութի մասին՝ մենք հասնում ենք ավելի բարձր՝ արդեն երրորդ աստիճանի, որով բացահայտվում է հայ գրականության պատմության համար քերականական հուշարձանների իրական արժեքը եւ դրա հետ մեկտեղ Ն.Ադոնցի աշխատության ավելի ընդհանուր գիտական նշանակությունը: Ցնցադույց գրական հուշարձանների տարեգրության կարեւորությունը նախ եւ առաջ պատմական բովանդակության մեջ է:

Առանց հայ պատմաբանների ժամանակի շատ թե քիչ հստակ բնորոշման՝ որեւէ ամուր հայեցակարգի կառուցվածքի համար չի կարելի օգտվել Հայաստանի պատմության հիմնական աղբյուր հանդիսացող նրանց աշխատություններից: Նրանց ժամանակի որոշումը զգալի չափով կախված է հունարեն գրական ուղղության ժամանակի ճշտումից եւ հունարեն դպրոցից: Դա այն հունարեն ուղղությունն է, որի բացատրության համար Ն.Ադոնցը 2-րդ դրույթում սահմանափակվեց քաղաքական պատմության փաստի հետ կապը նշելով, այսինքն՝ «նախկին պարսկական Հայաստանի հողերի մեծ մասի» «անցումը» Բյուզանդիայի: Հունարեն դպրոցը փոխարինեց հնին, որը Ն.Ադոնցը նույն դրույթում անվանում է բիբլիական՝ պատահանկորեն կամ պատճեշվելով մեզ-ից, խուսափելով ժամանակակից պետրոգրադյաց, հայագիտական դպրոցում ավելի գործածական «ասորաբան», «միսիոներական» անվանումներից: Հունաբան դպրոցը, այդքան մոտ կանգնած լինելով Ն.Ադոնցի հետազոտության առարկային, ինչպես իրավացիորեն հաստատվում է իր դրույթներից առաջինում, «մինչ օրս հայկական բանասիրության համար մնում է որպես գայթակղության քար»:

Թե իրականում ինչ է թաքնված այս ձեւակերպման մեջ, ոչ մասնագետը հազիվ թե հասկանա: Սակայն դրա խմբագրմամբ արտահայտված խորիրդավորությունը կամ զգուշավորությունն ինձ համար անհասկանալի է: Համենայնդեպս փաստն այն է, որ մինչեւ վերջին տասնամյակը կամ երկու տասնյակ տարիները հունաբան ուղղության ժամանակահատվածը որոշվում էր բոլորովին կամայականորեն, առանց որեւէ գիտական հիմնավորման՝ հիմքում ունենալով ավանդական ընկալումն ու առասպելական պատմական հայացքները: Այդ բնորոշմանը, բնականաբար, վերջ է տրված, եւ այդ առումով հունաբան ուղղությունը կարող է մնալ փորձաքար միայն նրանց համար, ովքեր հակում ունեն քայլելիս անպայման սայթաքելու: Սակայն առ այսօր ճշգրտորեն հայտնի չեն հունաբան ուղղության ժամանակահատվածը եւ այդ ընթացքում կատարված նորամուծությունների ծավալը, որը կարող է ընդունվել որպես քրիստոնեական Հայաստանի հնագույն կյանքի արգասիք:

Հայագիտության, ինչպես եւ վրացագիտության եւ ընդհանրապես հայ-վրացական բանասիրության բնագավառում այժմ տեղի են ունենում զգալի փոփոխություններ՝ կապված արեւելքի երկու հնագույն քրիստոնյա ժողովուրդների պատմամշակութային կյանքում տեղի ունեցած զգալի տեղաշարժերի որոշման հարցում:

Այժմ տարբեր կարծիքներ կան արեւելքի երկու հնագույն քրիստոնյա ժողովուրդների պատմամշակութային կյանքի հնագույն դարաշրջանների ժամանակագրական սահմանների որոշման հարցում:

Այսպիսի տարակարծություն է դրսեւորվում նաեւ մասնավորապես Հայաստանում հունաբան գրական ուղղության ժամանակահատվածի նկատմամբ: Այդ ժամանակահատվածի բնորոշման համար կարեւորագույն նշանակություն ունեն քերականական աշխատությունները, քանի որ հեղինակների կողմից ստեղծված ոճական նորմերի գոյությունն ինքնըստինքյան այս կամ այն գրական հուշարձանը համապատասխան քերականական դպրոցի ծաղկման շրջանին հաջորդող դարաշրջանին դասելու հիմք է:

Այս հարցի համար առավել էական, հաճախ էլ վճռական նշանակություն ունեն Ն.Ադոնցի կողմից բերված քանակապես անշնչ մատնանշումների էջերը, այն է՝ Index graeco-armeniacus Դիոնիսիոս Թրակացու վերջում (էջ 67-76) եւ Index nominum et verborum ամբողջ աշխատության վերջում (էջ 289-302) եւ այդ նյութը լրացնող նախաբանի մասերը, այսինքն՝ այնպիսի հետազոտություններ, ինչպիսին, օրինակ, CLXXXIV-CLXXXV էջերում բերված նախդավոր կազմավորումների մանրամասն վերլուծությունն է:

....Տոհմային հարաբերությունների ժամանակաշրջանը ավարտվում է Ձարեհի եւ Ուտաշեսի օրոք Հայաստանում տեղի ունեցած քաղաքական խմորումներով: Այդ ժամանակվա է վերաբերում տոհմային կարգերի քայքայման սկիզբը եւ սոցիալական նոր հարաբերությունների ծնունդը: Հեղաշրջման էությունը սոցիալական զանգվածի շերտավորման եւ դասայնության սկզբունքի առաջացման մեջ էր. տոհմերի պարագլուխները կամ պետերը հետզհետե դառնում են անվանի մարդիկ, տիրակալներ, եւ դրանով իսկ դրվում է ապագա տոհմական իշխանությունների սկիզբը: Այս փոխակերպությունը տեղի է ունենում այն պահից սկսած, երբ տոհմապետի կոչումը դառնում է ժառանգական: Դրա շնորհիվ նրա սերունդն առանձնանում է հատուկ տեղ էր գրավում հասարակության մյուս անդամների շարքում: Ժառանգելու իրավունքը իր հետեւից բերում է նաեւ սեփականության իրավունք այն ամենի վրա, ինչ ենթակա է տոհմապետի իշխանությանը: Այս ճանապարհով նախկինում միատարր եւ իրավահավասար հասարակական օրգանիզմը սոցիալապես բաժանվում է երկու անհավասար մասերի, թվով փոքր մասը, որ ծագում է տոհմապետից, իշխում է, իսկ մեծամասնությունը հպատակվում է նրան: Տոհմապետը, տիրակալ դառնալով, շատ հեշտությամբ կարողանում է իր իշխանությունը տարածել նաեւ ուրիշ տոհմերի վրա եւ, հետզհետե ընդլայնելով իր ազդեցության ոլորտը, բարձրանում եւ հասնում է թագավորի աստիճանի: Այս պրոցեսը հիանալի կերպով կարելի է ցույց տալ Իբերիայի սոցիալական շերտավորման օրինակով: Այստեղ, ըստ Ստրաբոնի, կային չորս կարգի մարդիկ, առաջին կարգից նշանակվում էին թագավորները, երկրորդից՝ քուրմերը. երրորդ կարգը բաղկացած էր այն բնակչությունից, որ զբաղվում էր երկրագործությամբ ու զինվորական գործով, իսկ չորրորդը՝ հասարակ մարդկանցից, թագավորի ստրուկներից, որոնք նրան ապրուստի միջոցներ էին հայթայթում. նրանց ունեցվածքը ընդհանուր էր՝ ըստ տոհմերի, եւ յուրաքանչյուր տոհմը կառավարում էր ամենասավոգ անդամը:

Թագավորների տոհմը եւ քուրմերի տոհմը, այսպես ասած, արիստոկան տոհմեր էին, որ առաջացել էին այն անձնավորության սերունդներից, ով՝ որպես տոհմապետ, յուրացրել էր այդ կոչումը ժառանգաբար կրելու իրավունքը: Նա սերում էր այն նույն տոհմից, որի մեջ ճախապես մտնում էին այն մարդիկ, ովքեր հետագայում ստրկության մեջ ընկան, այլ կերպ ասած թագավորն իր ստրուկներով հանդերձ սկզբում տոհմային մի ամբողջական միավոր էր, որի գլուխը ինքն էր: Տոհմապետի ժառանգական իրավունքը ճանաչելուց հետո նրա ընտանիքը սկսում է սոցիալապես առանձնանալ տոհմից, եւ որքան նա վեր է բարձրանում, նույնքան էլ ցած է իջնում տոհմի մնացած մասը, վերջապես իր տոհմին ստրկացնելու գնով նա հասնում է թագավորական աստիճանի: Հետագայում նա իրեն է հպատակեցնում նաեւ ուրիշ տոհմեր՝ Իբերիայի մնացած բնակչությանը, որը բաժանված էր տոհմերի ու զբաղվում էր մասամբ հողագործությամբ եւ մասամբ էլ՝ զինվորական գործով:

Կարելի էր մտածել, թե քրմական տոհմն էլ նույնպիսի ծագում ունի, ինչ որ թագավորականը, այսինքն՝ այն առաջ է եկել տոհմի քայքայման հետեւանքով: Սակայն այդ դեպքում նրանք էլ պետք է ստրուկներ ունեցային, որը չենք տեսնում: Ստրաբոնը պնդում է, որ թագավորական տոհմից մեկը՝ անմեսավազք, ժառանգում էր գահը, իսկ թագավորից հետո եկող անձնավորությանը հանձնվում էին արդարադատությունը եւ զորքի հրամանատարությունը: Այդ վկայության մեջ է թաքնված այն ուղին, որով կազմվել է քրմական տոհմը: Թագավորը, բարձրանալով տոհմապետությունից, սկզբում իր ձեռքն է կենտրոնացնում բոլոր ֆունկցիաները. նա միաժամանակ իշխող է, զորապետ՝ կովի ժամանակ, դատավոր, քուրմ եւ առհասարակ ընդհանուր ղեկավար: Գալիս է մի ժամանակ, երբ մեկ անձի համար դժվար է դառնում կատարել այս բոլոր պարտականությունները, եւ նրան սկսում է օգնել թագավորի մերձավորներից մեկը՝ նա, ում պատկանելու է գահը՝ թագավորի մահվան դեպքում: Այնուհետեւ նրա վրա է դրվում ղեկավարության որոշակի բնագավառի պաշտոնական պարտավորությունը՝ կրոնի եւ միջազգային քաղաքականության գծով. առաջին հայացքից գործունեությանը միմյանցից տարբեր այս երկու պաշտոնների զուգակցումը բացատրվում է նրանով, որ կրոնական աշխարհայացքը, քրմերի բարձր հեղինակության եւ մի քանի պաշտամունքների համընդհանրության պայմաններում, այն հողն էր, որի վրա կարող էին միավորվել մշակույթով միմյանցից տարբեր ազգություններ: Հանգամանքներից ազատելու նպատակով նրանց ուղարկում է Հայաստան՝ իր ազգակից Արշակունու մոտ:

Այս զրույցի վերջին մասի նպատակն է բացատրել, թե ինչպես Սամիկոնյանները Չինաստանից եկան, հաստատվեցին Տայքում՝ իրենց տոհմական կալվածքում, բանից դուրս է գալիս, որ թագավորը դիտմամբ է նրանց ծանկցրել աշխարհի ծայրում: Ավանդության մեջ հիշված ճենաց աշխարհի մեկնաբանության շուրջը թյուրիմացություն կա: Նախնական ավանդության մեջ ճենք անվանումը հանդիպում է մի քանի հազարավոր չինացիներին, այլ հարեւան ծաներին, որոնք ապրում էին Սամիկոնյանների տոհմական կալվածքից՝ Տայքից ոչ հեռու: Ըստ Խորենացու էության շուրջ զանգվածի տոհմային հարաբերությունը, ցույց են տալիս, որ նրանք ավելի շուտ ազգակից են դեռեւս Զ դարում իրենց ռազմատենչությամբ աչքի ընկնող ծաներին, քան հեգաբարբարոս չինացիներին: Այս լուսաբանությամբ Սամիկոնյանների մասին եղած զրույցը պատմական հիմք է ձեռք բերում:

Հրնթացս նշենք նաեւ, որ Վրաստանի Օրբելյաների իշխանները եւս իրենց նախահայրերին որոնում էին ճենաց աշխարհում, եւ որ նրանց մոտ էլ հանդես է գալիս ճենբակուրը: Զուգադիպությունը պատահական չէ. ըստ երեւույթի տվյալ դեպքում գործ ունենք Սամիկոնյանների ժառանգներ: Եվ զարմանալի բան չկա. ինչպես որ Բագրատունիները շարժվելիցին Սպեռից դեպի Վրաստան, Սամիկոնյաններն էլ կարող էին Վրաստան անցնել հարեւան Տայքից: Օրբելյանների թշնամական վերաբերմունքը վրաց Բագրատունիների նկատմամբ կարծես թե Սամիկոնյանների՝ դեպի հայ Բագրատունիներն ունեցած անբարյացակամ վերաբերմունքի արձագանքն է:

....Տոհմային հարաբերությունների ժամանակաշրջանը ավարտվում է Ձարեհի եւ Ուտաշեսի օրոք Հայաստանում տեղի ունեցած քաղաքական խմորումներով: Այդ ժամանակվա է վերաբերում տոհմային կարգերի քայքայման սկիզբը եւ սոցիալական նոր հարաբերությունների ծնունդը: Հեղաշրջման էությունը սոցիալական զանգվածի շերտավորման եւ դասայնության սկզբունքի առաջացման մեջ էր. տոհմերի պարագլուխները կամ պետերը հետզհետե դառնում են անվանի մարդիկ, տիրակալներ, եւ դրանով իսկ դրվում է ապագա տոհմական իշխանությունների սկիզբը: Այս փոխակերպությունը տեղի է ունենում այն պահից սկսած, երբ տոհմապետի կոչումը դառնում է ժառանգական: Դրա շնորհիվ նրա սերունդն առանձնանում է հատուկ տեղ էր գրավում հասարակության մյուս անդամների շարքում: Ժառանգելու իրավունքը իր հետեւից բերում է նաեւ սեփականության իրավունք այն ամենի վրա, ինչ ենթակա է տոհմապետի իշխանությանը: Այս ճանապարհով նախկինում միատարր եւ իրավահավասար հասարակական օրգանիզմը սոցիալապես բաժանվում է երկու անհավասար մասերի, թվով փոքր մասը, որ ծագում է տոհմապետից, իշխում է, իսկ մեծամասնությունը հպատակվում է նրան: Տոհմապետը, տիրակալ դառնալով, շատ հեշտությամբ կարողանում է իր իշխանությունը տարածել նաեւ ուրիշ տոհմերի վրա եւ, հետզհետե ընդլայնելով իր ազդեցության ոլորտը, բարձրանում եւ հասնում է թագավորի աստիճանի: Այս պրոցեսը հիանալի կերպով կարելի է ցույց տալ Իբերիայի սոցիալական շերտավորման օրինակով: Այստեղ, ըստ Ստրաբոնի, կային չորս կարգի մարդիկ, առաջին կարգից նշանակվում էին թագավորները, երկրորդից՝ քուրմերը. երրորդ կարգը բաղկացած էր այն բնակչությունից, որ զբաղվում էր երկրագործությամբ ու զինվորական գործով, իսկ չորրորդը՝ հասարակ մարդկանցից, թագավորի ստրուկներից, որոնք նրան ապրուստի միջոցներ էին հայթայթում. նրանց ունեցվածքը ընդհանուր էր՝ ըստ տոհմերի, եւ յուրաքանչյուր տոհմը կառավարում էր ամենասավոգ անդամը:

Թագավորների տոհմը եւ քուրմերի տոհմը, այսպես ասած, արիստոկան տոհմեր էին, որ առաջացել էին այն անձնավորության սերունդներից, ով՝ որպես տոհմապետ, յուրացրել էր այդ կոչումը ժառանգաբար կրելու իրավունքը: Նա սերում էր այն նույն տոհմից, որի մեջ ճախապես մտնում էին այն մարդիկ, ովքեր հետագայում ստրկության մեջ ընկան, այլ կերպ ասած թագավորն իր ստրուկներով հանդերձ սկզբում տոհմային մի ամբողջական միավոր էր, որի գլուխը ինքն էր: Տոհմապետի ժառանգական իրավունքը ճանաչելուց հետո նրա ընտանիքը սկսում է սոցիալապես առանձնանալ տոհմից, եւ որքան նա վեր է բարձրանում, նույնքան էլ ցած է իջնում տոհմի մնացած մասը, վերջապես իր տոհմին ստրկացնելու գնով նա հասնում է թագավորական աստիճանի: Հետագայում նա իրեն է հպատակեցնում նաեւ ուրիշ տոհմեր՝ Իբերիայի մնացած բնակչությանը, որը բաժանված էր տոհմերի ու զբաղվում էր մասամբ հողագործությամբ եւ մասամբ էլ՝ զինվորական գործով:

Կարելի էր մտածել, թե քրմական տոհմն էլ նույնպիսի ծագում ունի, ինչ որ թագավորականը, այսինքն՝ այն առաջ է եկել տոհմի քայքայման հետեւանքով: Սակայն այդ դեպքում նրանք էլ պետք է ստրուկներ ունեցային, որը չենք տեսնում: Ստրաբոնը պնդում է, որ թագավորական տոհմից մեկը՝ անմեսավազք, ժառանգում էր գահը, իսկ թագավորից հետո եկող անձնավորությանը հանձնվում

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՆԱՅԻՆ ՕՐԳԱՆ
ՀԱՍՊԱՏ՝ Լ.ԳՐԻԳՈՐՅԱՆ, ՀԱՅԿԱՆՈՒՇ ԱՎԱԳՅԱՆ
ՀԵՌԱԽՈՍ՝ (0285) 5 25 63 = (091) 45 90 47 = (077) 06 28 02
էլ. հասցե՝ www.syuniacyerkir.am
էլ. փոստ՝ syuniacyerkir@mail.ru
տպագրվում է 2003թ. հոկտեմբերի 1-ից ■ հիմնադիր եւ հրատարակիչ՝ «Սյունյաց աշխարհ» ՍՊԸ ■
№ 17 236
18 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2011

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Վանի միջնաբերդը:

Հին հեղինակների տեղեկությունները հայերի ծագման մասին

Հատված Ն.Ադոնցի «Հայաստանի պատմությունը. ակունքները, X-VI դդ. Ք.ա.» աշխատությունից. տպագրվում է կրճատումներով եւ առանց ծանոթագրության

Ժողովուրդների ծագումը թաղված է դարերի մթության մեջ: Բոլոր ժողովուրդները երկար կյանք են վարել, թափառել անծանոթ ճանապարհների վրա, էքզիկական եւ աշխարհագրական այնպիսի պայմաններում, որոնք չեն ենթարկվում որեւէ վերահսկողության մինչեւ այն պահը, երբ նրանք երեւան են գալիս պատմության լուսավոր գոտիներում:

Հայերը բացառություն չեն կազմում այս ընդհանուր երեւույթից: Նրանք նույնպես ունեցել են իրենց կյանքի խավար ժամանակաշրջանը նախքան քաղաքակիրթ աշխարհին ներկայանալը: Հույները չէին հետաքրքրվում ոչ հույն ժողովուրդների ծագումով, որոնց կոչում էին բարբարոսներ: Այն տեղեկությունները, որ նրանք ավանդել են մեզ հայերի ծագման մասին, հիմնականում վերաբերում են այն վերջին փուլերին, որոնցով հայերն անցել են նախքան Հայաստանում հաստատվելը: Հայերի ծագման հարցին ձեռնամուխ լինելուց եւ այն ժամանակակից գիտության լույսի տակ մեկնաբանելուց առաջ անհրաժեշտ է քննարկել հների ունեցած տեղեկությունները այս նյութի շուրջ, որովհետեւ, ինչ կերպ էլ որ այդ տեղեկությունները ներկայացված լինեն, համեմայն դեպս նրանք արտացոլում են, ինչպես կտեսնեք, որոշ պատմական ճշմարտություն:

Մեզ հասել են երկու ավանդություններ, ըստ առաջինի՝ հայերը փոյուգիական ծագում ունեն, ըստ մյուսի՝ թեսալական: Առաջինը հերոդոտն է արծարծում, երկրորդը՝ Ալեքսանդր Մակեդոնացու երկու սպաները: Նախ քննենք հերոդոտի տեսությունը:

Քսերքսեսի բանակի նկարագրության մեջ հերոդոտն ասում է. «Փռյուգիացիների սպառազինությունը շատ նման էր պափլագոնիացիների սպառազինությանը. տարբերությունը շատ անշնչ էր: Ըստ մակեդոնացիների՝ փռյուգիացիները կոչվում էին բռիգներ, քանի դեռ մնում էին Եվրոպայում մակեդոնացիների հետ միասին: Սակայն անցնելով Ասիա, փոխելով երկիրը՝ անունը փոխեցին եւ անվանվեցին փռյուգիացիներ: Հայերը զինված էին փռյուգիացիների պես, որոնց գաղթականներն են: Եվ առաջինները, եւ երկրորդները առաջնորդվում էին Դարեհի դստեր ամուսնու՝ Արթաքմեխի կողմից»:

Պատմագրի անգնահատելի ցուցումն անկասկած շատ ավելի արժեք կունենար, եթե այն այլ տեղում գեսկայացված լիներ եւ ոչ Քսերքսեսի արշավանքի՝ այնքան գունազարդված պատմության մեջ: Այսուհանդերձ, ժողովուրդների ցանկը պաշտոնական վավերաթղթի հետաքրքրության է ներկայացնում՝ անկախ այն փտումնավոր կիրարկումից, որ պատմագիրը ուզեցել է կատարել: Պետք է կարծել, որ հայերի ազգակցությունը փռյուգիացիների հետ պատմագրի անձնական կարծիքը չէ՝ հիմնված այն իրողության վրա, որի համաձայն երկու ժողովուրդները հպատակվում էին մեկ ընդհանուր հրամանատարի: Ընդհակառակն, դա ավելի շուտ խոսում է այն ազգակցության մասին, որ նրանց հարվածների տակ Խաթթի պետության կործանման քվեկանն է:

Ամփոփենք այն, ինչ մենք այդ նյութի մասին պատմել ենք ըստ սեպագիր հուշարձանների:

Խաթթուշի (Բողազ-քյոյի) դիվանները միանգամից ընդհատվում են շուրջ 1200 թվականին, մի չարաղաշակ նշան այն բանի, որ խեթական պետությունը աղետի էր ենթարկվել: Քիչ հետո «Խաթթի» անունով որոշ «ռազմատենչ» ժողովուրդներ են երեւան գալիս Ասորեստանի սահմանի վրա: Նրանց մեջ է գտնվում մուշկերի քսանհազարանոց մի խումբ, որոնց անվան տակ ասորեստանցիները հասկանում են փռյուգիացիներին: Մուշկերը թափանցում են Ամգիտենեի շրջանը եւ առաջ խաղում մինչեւ երկու Տիգրիսների գետաբերանը, որտեղ 882 թվականին պատերազմ են մղում Ասորեստանի թագավոր Աշուրնասիրպալ II-ի դեմ: Դրանից հետո հանկարծ ոչինչ չի լսվում այդ ժողովրդի մասին մինչեւ Սարգոն II-ի թագավորությունը (721-705): Այդ դարաշրջանում նա նորից է երեւում Կիլիկիայի ծովափում: Խեթական պետությունը ընվանվում է հետո մուշկերը շարունակել էին իրենց հաղթարշավը մինչեւ Միջերկրական ծովը եւ Ասորեստանից խլել Արեւմտյան Կիլիկիան՝ Կուե երկիրը: Մուշկերի՝ Սարգոնի դեմ ունեցած կռիվը Խուլլիի՝ Սարգոնի թագավորի՝ Ասատարիշուհի, ամուսնությամբ էր տվել Խուլլիի որդի Ամբրիսին եւ որպես օժիտ՝ Խիլակկուն (Կիլիկիան): Այդ ժամանակաշրջանում այդպես էր կոչվում Կեսարիայից արեւելք ընկած Ջամանթիի հովիտը: Հակառակ այդքան շնորհների, Ամբրիսը՝ Միտայի եւ Ուրարտուի Ռուսայի կողմից գրգռված, ծառացել էր իր բարերարի դեմ: Սարգոնը նրան պատժեց եւ պետությունը Ասորեստանի ճահճոց էր դարձրել:

Կամմանուն դասական հեղինակների Խամանեենն է, բայց այդ ժամանակաշրջանում նա գտնվում էր Հալիսի եւ Մելիտենեի միջեւ: Նրա թագավոր Գունզիգանուն գահընկեց արվեց իր հարեւան Ամբրիսի պես ու միեւնույն պատճառով, եւ նրա երկիրը կցվեց Մելիդուրի (Մելիտենեն):

Սակայն Մելիդուրի թագավոր Թարխուլազին նույնպես դավաճանեց Սարգոնին: Վերջինս նրան բանտարկեց եւ պետությունը հանձնեց Կումմախուի իշխան Մուտալլուին: Մուտալլուն էլ հավատարիմ չմնաց Սարգոնին ու միացավ Ուրարտուի Ռուսային: Սարգոնը նրան վտարեց, եւ Կումմախուն ասուրական ճահճոց դարձավ:

Այսպես, Միտայի փորձերը Ասորեստանի դեմ ընդհանուր ճակատ ստեղծելու՝ անհաջող անցան: Կուեի ասորեստանյան կառավարիչը վերջին հարվածը հասցրեց. մխրճվեց նրա երկրի խորքը եւ ստիպեց նրան ճանաչելու Սարգոնի գերիշխանությունը 708 թվականին:

Սարգոնը Մուշկիի մոտ կառուցեց Ուսի, Ուսիանի եւ Ուարգին ամրոցները: Ուսին հռոմեական ճանապարհացույցների Խուսան է, որը գտնվում է Թիանայի ճանապարհի վրա, Նաքշիգուսից արեւմուտք տասներկու մղոն հեռավորության վրա: Ուսիանին հռոմեական Օսիանան է Նիսասյից արեւմուտք: Ուարգինի տեղը հայտնի չէ:

Այս բերդերը սահմանագծում էին Մուշկիի արեւելյան սահմանը, որը հաստատում է Մուշկերի՝ Միտայի եւ Միտայի նույնության մասին տարակուսանքը չափազանցված է: Ըստ Հերոդոտի՝ Միդասը ավելի վաղ է եղել, քան Լիդիայի թագավոր Գիգեսը: Մենք գիտենք, որ Միտասն ապրում էր Սարգոնի եւ նրա հաջորդների ժամանակ, մինչեւ Գիգեսը Ալչուբանիպալի (669-632) ժամանակակիցն է: Դրանով Հերոդոտի Միդասը նույնանում է Սարգոնի Միտայի հետ:

Փռյուգիայի պատմությունը, մեր ծանոթության սահմաններում, այնուհանդերձ, ոչ մի առիթ չի ընձեռում փռյուգիացիների եւ հայերի միջեւ բացահայտելու որեւէ այնպիսի կապ, որը նրանց ազգակցության մասին եղած ձեւական վկայության նեցուկ հանդիսանար: Կա միայն մի իրողություն, որը կարող է օգտակար լինել այդ հարցում: 705 թվականին Սարգոնը դուրս եկավ Թաբալի դեմ: Այդ արշավանքի մասին ոչինչ հայտնի չէ. բացի նրանից, որ Ասորեստանի թագավորն այնտեղ մահացավ: Թվում է, թե արշավանքն ուղղված էր Թիլ-Գարիմմու երկրի դեմ, խեթական հուշարձանների Թեգարաման, տեղավորված Մելիդուրի եւ Կամմանուի միջեւ, Գաուրարհայի շրջանում, այժմյան Գորուզը, որը, գուցե, պահպանել է Թեգարամա կամ Գարիմմու հին անունը: Թաբալը տոհմական անուն է, որը վերաբերում է կիլիկյան Տավրոսում տեղավորված մի քանի պետությունների: Քիչ ավելի ուշ տեղի ունեցած իրադարձությունները իրավունք են տալիս այն վարկածին, թե 705 թվականի արշավանքի նպատակն էր Թիլ-Գարիմմուի գրավումը: 695 թվականին Սենեքսերիբն իր զորավարներից մեկին ուղարկեց ոմն Գուրդիի դեմ, որն այդ երկրում նոր թագավորություն էր հիմնել: Գուրդին խոհեմաբար հետ քաշվեց Ասորեստանի գերազանց ուժերի առջեւ: Սենեքսերիբի զորավարը գրավեց Թիլ-Գարիմմուն, բայց նկատելով այն պահպանելու դժվարությունը՝ բավարարվեց կողոպտելով եւ հեռացավ: Այսպիսով, Թիլ-Գարիմմուն օձիքն ազատեց Ասորեստանի ամբարտավան նկրտումից եւ պահպանեց իր անկախությունը:

Հայտնի չէ, թե ինչպիսի պարագաներում էր Գուրդին հիմնել այդ նոր քաղաքական օջախը: Գուրդին բացառապես փռյուգիական անուն է: Եթե Թիլ-Գարիմմուի Գուրդին Միտասի որդին էլ չէր, ապա, անկասկած, թագավորական ընտանիքից էր: Հետեւաբար, կարելի է ենթադրել, որ նա փռյուգիացիների հրամանատարն էր եւ այսպես թե այնպես նրանց բերել ու հաստատել էր Թիլ-Գարիմմուի շրջանում: Եթե մենք հիշենք, որ Թիլ-Գարիմմուն կազմում էր Փոքր Հայքի տերիտորիա՝ հայերի առաջին օրրանը, նախքան Եփրատն անցնելը, ուրեմն իրավունք ունենք մտածելու, որ Գուրդին փռյուգիացիները հայերն էին եւ ոչ ուրիշներ:

Թեգարամա թագավորությունն այնքան էլ վաղանցուկ չէր, ինչպես կարելի էր կարծել: Բիբլիական ավանդությունը պատիվ է արել նրան՝ մտցնելով Ծննդոց գրքի նշանավոր Ժ գլխում գալարկված ժողովուրդների էպոնիմների մեջ՝ Հաբեթ, Գամեր, Մագոգ, Մադաի, Իովան, Թոբել, Մոսոք, Թիրաս, Ասքանազ, Ռիֆաթ կամ Էրիրաթ, Թերգամա կամ Թորգոմա:

Դժվար չէ ճանաչել այն երկրներն ու ժողովուրդները, որ ներկայացված են այս էպոնիմներով՝ Գամերը դա Գիմիրրին է՝ կիմմերները Կապադովկիայում, հայերի Գամիրքը. Մագոգը՝ Գոգի երկիրը, Գիգեսի Լիդիան. Մադաին՝ Մեդիան. Իովանը՝ Իոնիան. Թոբելը՝ Թաբալը, Կաթառնիան. Մոսոքը՝ Մուշկին, Թռյուգիան. Թիրասը հայտնի չէ, գուցե Թրաքս, Թրակիա:

Գամերի որդիները՝ Ասքանազ եւ Իշկուզի (կամ Իշկուզգի), սկզբները՝ Թերգամա կամ ավելի շուտ Թեգարմա, որտեղից Թոգարմա կամ Թորգամա, Թեգարամա կամ Թիլ-Գարիմմու՝ Փոքր Հայք. Ռիֆաթ՝ գուցե Արպաղ (այժմյան Ռֆաղը Տալեպից հյուսիս)՝ սիրիական փոքր պետություն, «Էրիրաթ» ընթերցվածը մտածել է տալիս Արարատի մասին (Ուրարտու):

Այսպիսով, Ծննդոց գրքի Ժ գլուխը նկատի ունի միջագետյան աշխարհի հյուսիսում՝ էգեսակեւ եւ Կասպից ծովերի միջեւ տեղավորված ոչ սեմական ժողովուրդները:

Տարօրինակ է, որ Ուրարտուի նման մի մեծ պետություն Ծննդոց գրքի մեջ չի հիշատակված: Երեք եղբայրներից Թեգրամա նկարագրվում է Գուրդիի թագավորությունը՝ Փոքր Հայքը, Ասքանազը էպոնիմն է սկսյութերի, որոնք տեղավորված են Կասպեսեեռում՝ Արեւելյան Հայաստանում, կամ Ատրպատականում՝ Սաճա երկրում կամ Գրան մոտ: Մարգարեն Սինհիի եւ Արարատի հետ միասին հիշատակում է ասքանազականներին: Շատ բնական է, որ երրորդ եղբայրը լիներ իր մյուս երկու եղբայրների մոտ: Դա ստիպում է ենթընտրել էրիրաթ ընթերցվածքը՝ այն նույնացնելու համար Արարատ-Ուրարտուի հետ: Արպաղը բավական անշշուկ մի կետ էր եւ հազիվ կարող էր հավակնել տեղ գրավելու իրական քաղաքական կարեւորություն: Ուցեղ այնքան երկրների շարքում, ինչպես եւ բավական հեռու էր նա Գամերի որդի հանդիսանալուց:

Հիշատակումը կիմմերների եւ սկյութների, որոնք երկար ժամանակ չմնացին քաղաքական ասպարեզում, ապացուցում է, որ Գիրք ծննդոցի տվյալ գլուխը վերարտադրում է ոչ սեմական Առաջավոր Ասիայի ազգագրական քարտեզը, ինչպես որ կար կիմմերա-սկյութական ներխուժման հաջորդ օրը, ոչ ավելի ուշ. քան յոթերորդ դարի առաջին կեսում:

Այնուհանդերձ, հայերը բիբլիական ծննդաբանության մեջ իրենց էպոնիմը չունեն, որը ցույց է տալիս, որ նրանց հաստատումը Հայաստանում տեղի է ունեցել հիշատակված թվականից ավելի ուշ, գուցե յոթերորդ դարի կեսին:

Հետագայում Աստվածաշնչի մեկնաբանները նպատակահարմար են համարել հայերին կապել Թեգարմայի հետ: Նույնը կատարվել է փռյուգիացիների նկատմամբ: Այս մոտեցումները հեցա՞ծ են արդյոք Թեգարմայի ծագման մասին որեւէ հուշի եւ երկու ժողովուրդների ազգակցության մասին տեղեկության վրա՝ նրանցից մերթ մեկին, մերթ մյուսին ներկայացնելու համար որպես նախահայր: Պատասխանն ավելի շուտ պետք է ժխտական լինի: Ժ գլխում հիշատակված բազմաթիվ ժողովուրդներ վաղուց անհետացել կամ ժամանակին իրենց ունեցած նշանակությունը կորցրել են: Մեկնաբանները, չիմանալով այս իրողությունը, ջանացել են ուրիշներով լրացնել՝ հաճախ ելնելով իրենց ժամանակվա իրերի դրությունից: Հովսեփոս Փլաբիոսը չգիտեր, որ Մոսոքը (Մոսոխը) մուշկերի էպոնիմն է, այսինքն՝ փռյուգիացիներինը: Նա նրան կապադովկիացիների նախահայր է դարձրել՝ առաջնորդվելով միայն մերձոհյուսլուսությամբ, որը, իր կարծիքով, նա գտել է Մոսոքի եւ կապադովկիայի մայրաքաղաք Մազաքայի միջեւ: Փռյուգիացիների համար նա պահանջում է Թերգամային, իսկ Թերգամայի հայր Գամերին վերապահում գալաթների համար: Նա ոչ մի տեղեկություն չի ունեցել, թե Ասքանազը ներխուժող սկյութներին էր ներկայացնում: Նրա համար Ասքանազը դառնում է հոեգիմների (?) նախահայր, իսկ նրա եղբայրը՝ Ռիֆաթը, պափլագոնիացիների նախահայր: Ամենուրեք զուտ սեփական եզրադրության մասին է խոսքը, որը զուրկ է պատմական որեւէ արժեքից:

Նույն պատճառաբանությամբ հռոմեական եկեղեցու նշանավոր հայր Հիպպոլիտը, որը վախճանվել է մոտ 235 թվականին, Ասքանազի ծագումը փնտրում է հեռավոր սարմատների մեջ: Ճիշտ լուր է, եթե նա լսել է այդ շրջանի սկյութների մասին, բայց նա սխալվում է՝ վերագրելով այն Սարմատիայի սկյութներին, քանի որ Աստվածաշնչում խոսքը Արեւելյան Հայաստանում կամ Ատրպատականում տեղավորված սկյութների մասին է:

Տարօրինակ է, որ Ուրարտուի նման մի մեծ պետություն Ծննդոց գրքի մեջ չի հիշատակված: Երեք եղբայրներից Թեգրամա նկարագրվում է Գուրդիի թագավորությունը՝ Փոքր Հայքը, Ասքանազը էպոնիմն է սկյութների, որոնք տեղավորված են Կասպեսեեռում՝ Արեւելյան Հայաստանում, կամ Ատրպատականում՝ Սաճա երկրում կամ Գրան մոտ: Մարգարեն Սինհիի եւ Արարատի հետ միասին հիշատակում է ասքանազականներին: Շատ բնական է, որ երրորդ եղբայրը լիներ իր մյուս երկու եղբայրների մոտ: Դա ստիպում է ենթընտրել էրիրաթ ընթերցվածքը՝ այն նույնացնելու համար Արարատ-Ուրարտուի հետ: Արպաղը բավական անշշուկ մի կետ էր եւ հազիվ կարող էր հավակնել տեղ գրավելու իրական քաղաքական կարեւորություն ունեցող

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԹԵՐԹԱԿԱՆ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԹԵՐԹ
Գնումը՝ ըստ պահանջի, ՀՀ, Երևան, Գ.Սրվանձտյան 2/3/32
Հեռախոս՝ (0285) 5 25 63 = (091) 45 90 47 = (077) 06 28 02
էլ. հասցե՝ www.syuniacyerkir.am
էլ. փոստ՝ syuniacyerkir@mail.ru
տպագրվում է 2003թ. հոկտեմբերի 1-ից ■
հիմնադիր եւ հրատարակիչ՝ «Այսօրվա աշխարհ» ՍՊԸ ■
№ 17 236
18 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2011

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Հին հեղինակների տեղեկությունները հայերի ծագման մասին

Հատված Ն.Ադոնցի «Հայաստանի պատմությունը. Ակունքները, X-VI դդ. Ք.ա.» աշխատությունից. տպագրվում է կրճատումներով եւ առանց ծանոթագրության

Սկիզբը՝ էջ 21

վի այդ վտանգավոր ճանապարհորդության ընթացքում: Յաւոնը, քաջարի ընտրյալ երիտասարդների գլուխն անցած, հաջողությամբ կատարում է հանձնարարված առաջադրանքը: Երբ վերադառնում է, Պելեասի որդին նրան արգելում է երկիր մտնել: Յաւոնը բռնում է վերադարձի ճանապարհը եւ գնում Կողքիս՝ իր Մեդեա կնոջ ուղեկցությամբ, որը Կողքիսի թագավորի աղջիկն էր: Մեդեայի՝ Աթենքի թագավորի հետ առաջին ամուսնությունից ունեցած որդին՝ Մեդոսը, նույնպես իր հետ էր: Յաւոնը հաշտվում է իր աներոջ հետ: Ապա պատերազմ է վարում ու նվաճում բոլոր հարեւան ժողովուրդներին: Հերակլեսից եւ Լիբերից (Բաքոս) հետո, որ երբեմն իշխում էին, ինչպես ասում են Արեւելքում, Յաւոնն առաջինը եղավ, ով հպատակեցրեց Արեւելքը: Նրա պատվին տաճարներ կառուցեցին, ինչպես մի աստծո: Սակայն Ալեքսանդրի զորավար Պարմենիոնը քանդել տվեց այդ տաճարները, որպեսզի ոչ ոք չկարողանա ուրանալ Ալեքսանդրի փառքն Արեւելքում: Յաւոնի մահից հետո Մեդոսը, ի պատիվ իր մոր, կառուցեց Մեդե քաղաքը եւ ստեղծեց մեդացիների թագավորությունը՝ Արեւելքի հզոր պետությունը:

Արմենիոսը, որը նույնպես Թեսալիայից էր եւ Յաւոնի զորավարներից մեկը, հավաքեց այն զորքերը, որոնք Յաւոնի մահից հետո թափառում էին ամենուրեք, եւ հիմնեց Հայաստանի թագավորությունը:

Կիրսիլոսն ու Մեդիոսը, ինչպես երեւում է, նույնպես շոշափել են մեդացիների ծագումը եւ նրանց բխեցրել են Մեդեայի որդի Մեդոսից: Ստրաբոնը նույնպես չի անգիտանում այս կետը:

Մի ոմն հեղինակ՝ Անթիպատրոս, որն այլապես անծանոթ է, հաստատում է թեսալիացի պատմիչների հետ, թե հայերը սերում են Արմենիոսից, բայց նրան Հոռոդոսի բնիկ է համարում եւ ոչ Թեսալիայի:

Ի՞նչ արժեք ունեն այս տեղեկությունները պատմական առումով: Ստրաբոնի նման քննադատական մի միտք գնահատել է թեսալական տեսությունը՝ ի նպաստ դրան իր կողմից ավելացնելով մի քանի գծեր, որոնք ընդհանուր են թեսալիացիների եւ հայերի համար: Օրինակ, երկու ժողովուրդների գործածած հագուստները՝ լայնածիգ պատմուճանը, որ ողբերգությունների մեջ կոչում են թեսալական եւ կապում են կրծքերին, ու այն վերարկուն, որ դեղասանները հագնում են թեսալական ձեւով. ձիավարության կիրքը, որ նույնպես ընդհանուր է թեսալիացիների եւ հայերի համար, ինչպես նաեւ մեդացիների:

Հակառակ նշանավոր աշխարհագետի հեղինակությանը՝ Կիրսիլոսի եւ Մեդիոսի տեսությունը քննադատության դիմանալ չի կարող: Նա հիմնված է մի քանի թեսալական անունների մերձեցման վրա՝ Արմենիոն, Յաւոնիա, Արաքս, Սինիանե, Օիտա, որոնք ենթադրաբար գործածվում են նաեւ Հայաստանում:

….Յաւոնի սրբավայրը, պալաս ազդեցություն չի գործել թեսալիացի հեղինակների վրա: Նրանք, անշուշտ, տեղական մի բառ են գտել, որ նշանակում է «սրբավայր», եւ ընդունել այն որպես Յաւոնիոն: Որոշ խարիսափումից հետո կարելի է եղել տվյալ բառի իմաստը ճշտել: Դա jazana բառն է, որի պարսկական ձեւն է՝ a-yadana, yaz «զոհել» բառից: Jazana-զոհաբերության վայր, «տաճար»՝ համապատասխանում է սանսկրիտ yajana-ին: Թեսալիացի սպաները yazana-ում տեսել են «Յաւոնի տաճար»-ը եւ Յաւոնիոն դարձրել երկրի հերոս:

Արաքս անվան վրա հիմնված փաստը կորցնում է իր արժեքը, քանի որ այդ բառը գործածվում է շատ երկրներում: Սկյութները, կիմմերները գործածել են Արաքսը այժմյան Վոլգայի համար: Դա Պոնտոսում Թերմոդոնտի հին անունն է: Միգաւ գետքի Խաբուր գետը այլ ձեւով Արաքս է կոչվել: Պարսկաստանի մայրաքաղաք Պերսեպոլիսը նույնպես ուներ իր Արաքսը: Նույնիսկ Իլլիրիայի մի ժողովուրդ Araxi անունն էր կրում:

Գալով այն ավանդության, թե իբր Արաքսի հովիտը հեռավոր ժամանակներում լիճ կամ ճահիճ էր կազմում, եւ թե այն չորացել է ջրերի՝ դեպի Կասպից ծովը ճանապարհ բանալու հետեւանքով, դա երկրաբանական տեսակետից ինչ-որ հիմք ունի, բայց Յաւոնն այստեղ վճռականապես դեր չունի:

Թեսալիայի Սինիանեի եւ Օիտայի բաղդատումը Հայաստանի Սինիանայի եւ Ուիտիայի հետ՝ զուտ ենթադրական է: Ուիտիան դա Օտեենն է, Ուտին՝ հայկական հայտնի ճահճագերից մեկը: Սինիանան, հավանական է, Հանին է՝ Փայտակարանի գավառներից մեկը: Փայտակարանը հայկական ճահճագ է Արաքսի ստորին հոսանքի վրա: Ուտին հայկական ժամանակաշրջանում չէր տարածվում մինչեւ Արաքսը, բայց հայտնի չեն նրա սահմանները թեսալիացի սպաների ժամանակ: Հանեայց դեպա, Թերոդոտի ……. ժողովրդի մասին չէ խոսքը՝ Դարեհի արձանագրությունների Yantiya-ի, որը վրանաբնակ մի ցեղ էր: Թեսալիայի սինիանեցիները պետք է որ տեղավորված լինեին Աբոսի եւ Նիբարոսի վերեւում: Անշուշտ, մարդ հակվում է մտածելու կամսարականների ամրոց Անիի մասին, որը հետագայում դարձավ Բագրատունիների մայրաքաղաքը:

Ստրաբոնի դիտողությունները, որպես բանահյուսական նյութ, հետաքրքրական են, բայց նրանց նշանակությունը շատ է նվազում, երբ վկայակոչվում են երկար հագուստները, որոնք ցուցտ երկրներում ընդհանուր գործածության առարկա են:

Հարցի առանցքը, իհարկե, ենթադրյալ հարաբերությունն է Արմենիոն անվան եւ Հայաստանի (Արմենիա) միջեւ: Հոմերոսը Թեսալիայի քաղաքը կոչում էր Օրմենիոն: Արդյոք դա նույն Արմենիո՞նն է, թե՞ նրանից տարբեր է: Հարցը վիճելի է: Անուններն, այնուհանդերձ, նույնն են: Դա մեզ համար բավական է: Հոմերոսը երկու անճանվորություն է ճանաչում, որոնք Օրմենոս անունն են կրում: Բացի դրանից, Արմենոսը թեսալական անուն է՝ վկայված մի արձանագրության մեջ:

….Ընդունենք, որ օ-ով ձեւը նախնական է եւ հետագայում օ-ն փոխվել է ա-ի: Համեմատվող անունների ստուգաբանությունը հայտնի չէ, եւ ոչինչ չի կարելի ասել նրանց հարաբերության մասին լեզվաբանական տեսակետից: Սակայն պատմաբանները լուրջ առարկություն են հակադրել: Նրանք ասում են, թե հայերի անունը առաջին անգամ երեւան է գալիս Դարեհի արձանագրության մեջ Armina «Հայաստան» եւ Arminiya «հայ եւ Հայաստան» ձեւով, եւ թե այդ անունը պարսիկներից է անցել հույներին: Այդ դեպքում այլեւս չի կարող հարց ծագել այդ անվան թեսալական եւ ընդհանրապես արեւմտյան ծագման մասին: Այդ տեսակետը միահամուռ ընդունվում է, բայց մեր կարծիքով՝ իզուր:

Հեկատեոսը իր գործը գրել է Դարեհի արձանագրությունից առաջ, եւ նա հիշատակում է … : Հույները հայերին ճանաչելու համար պարսկական միջնորդության կարիքը չունեին: Նրանք Սեւ ծովի ափին, հայերին մոտիկ, ծանկուն, բարգավաճ գաղութներ ունեին: Բավական է միայն ճշել Տրապիզոնը, որ հույներին էին հիմնել եւ որը ծառայում էր որպես ապրանքափոխանակության գլխավոր կետորոշ: Ներքին երկրների հետ, ներառյալ Փոքր եւ Մեծ Հայքը: Ըստ եվսեբիոսի մոտ պահպանված ավանդության՝ Տրապիզոնի հիմնադրումը տեղի է ունեցել VIII դարում (մ.թ.ա.), ուրեմն՝ ուրարտական դարաշրջանում: Այդ հուսկաան ծովյանի գաղութները կապված էին իրենց մայր երկրի հետ: Բնականաբար, այդ գաղութների միջոցով է, որ հայերի անունը հասել է հույներին, գուցե ավելի առաջ, քան մեդացիների եւ պարսիկների հետ ծանոթանալը:

Ի վերջո … հուսկաան ձեւը ավելի հին է, քան պարսիկների Armina-ն, որտեղ en-ը փոխվել է in-ի: Այսպիսով կվերանա մի անճիշտ առարկություն: Անշուշտ, դա ոչնչով չի նպաստում Արիսլիսի եւ Մեդիոսի դրույթին: Եթե նրանք ոչ միայն ապացուցող հեղինակներ են, այլ նաեւ դրույթը առաջադրող, ապա նրանց գործը տանուլ է տված, որովհետեւ ապացույցը բավարար լուրջ չէ: Սակայն հնարավոր է, որ դրույթը նրանց հնարածը չէ, այլ մի ավանդություն է, որը նրանք աշխատել են հիմնավորել: Այդ դեպքում փաստարկի թուլությունն իրավունք չի տալիս մերժել ավանդությունը: Գուցե Հերոդոտի առաջ քաշած ավանդությունն է նրանց ոգեւորել: Անհավանական չէ, որ նրանք տեղյակ լինեին իրենց հետաքրքրող հարցի վերաբերյալ պատմահոր ասածներին: Նրանց տեսությունը չի հակասում Հերոդոտի տեսությանը: Նրանց հետաքրքրել է հայերի անվան նմանությունը Օրմիհիրի կամ Արմենիոն-ին եւ այն միտքը է ներշնչել, որ հայերի բաժանումն իրենց համատոհմակիցներից տեղի էր ունեցել դ.թ Փոքր Ասիայում, այլ Թրակիայում, որից հետո հայերը նախ՝ հաստատվել են Թեսալիայում, իսկ հետագայում՝ անցել Փոքր Ասիա եւ Հայաստան:

Դժբախտաբար, Կիրսիլոսն ու Մեդիոսը մեզ ծանոթ են միայն ըստ Ստրաբոնի մեջբերումների: Նույնիսկ վստահ չենք, թե նա իր տեղեկությունները չի՞ քաղել միջնորդ աղբյուրից՝ Տիգրանի պատմագիր Մետրոդորոս Սկեպսիացուց կամ Թեոփանես Միտիլենացուց, որն ուղեկցում էր Պոմպեոսին՝ Հայաստանով նրա կատարած արշավանքում: Թե ինչ է մեզ հասել եւ թե որքան հարազատ է վերարտադրված բնագիրը, հայտնի չէ:

Չպետք է մոռանալ, որ մակեդոնացի աշխարհակալը Հայաստան չի մտել, եւ ոչինչ, ոչ մի փաստ մեզ թույլ չի տալիս ընդունելու այն տարածված կարծիքը, թե նա հպատակեցրել է Հայաստանը: Ուրեմն, այդ ե՞րբ եւ ի՞նչ առիթով են թեսալիացի սպաները կարողացել այցելել Հայաստան եւ այդքան արժեքավոր տեղեկություններ ստանալ: Նրանք ճանաչում են երկրի սրբավայրերը, շրջանները՝ Ուիտիան, Ակիլիսենեն, Սոֆենեն, Արաքս գետը, Արաքսենե հովիտը, եւ նրա երկրաբանական անցյալը: Նրանք տեղյակ են Ուիտիայի քաղաք Սինիանայում կատարված հնագիտական հայտնաբերումներին, հելլենական զենքերի նմուշներին, պղնձյա առարկաներին եւ դամբարաններին: Նրանց հայտնի է նաեւ Անարիակայի պատգամախոսը:

Որ Կիրսիլոսն ու Մեդիոսը Հայաստանում անճանաչ են հավաքել այս տեղեկությունները, պետք է դրան հավատալ:

Կիրսիլոսը անծանոթ դեմք է, որը ոչ մի տող այլեւս երեւան չի գալիս: Բայց Մեդիոսը Ալեքսանդրի մտերիմ բարեկամներից մեկը լինելու պատիվն է իրեն վերագրել: «Թեսալիացի Մեդիոսս»-ի մոտ է, որ խնջույքի ժամանակ, կերուխումի չափազանցության հետեւանքով, Ալեքսանդրը հիվանդացավ եւ ողբերգական վախճան ունեցավ:

Մեզը վստահ չենք, որ դա միեւնույն Մեդիոսն է, որին էր վստահված նավատորմիղը նախ՝ Պերդիկկասի, ապա՝ Անտիգոնոսի ճամբարում: Այդ ծովակալը, հավանական է, իր ասպարեզին վերջ տվեց Անտիգոնոսի անկման հետ միասին, որը 301 թվականի Իպսոսի ճակատամարտի անհաջող ելքից հետո ինքնասպան եղավ: Նա չի հիշատակվում Անտիգոնոսի որդի Դեմետրիոս Պոլիորկետեսի օրով:

Այդ ժամանակաշրջանում Հայաստանում իշխում էր Արոանդը (Արուանդ, Երուանդ): Նա թագավորական տիտղոս էր ընդունել ոչ ուշ, քան 306 թվականին՝ Անտիգոնոսի եւ մյուս դիադոխների հետ միաժամանակ: Անտիգոնոսի հակառակորդ Եվմենեսը նեցուկ էր փնտրում Հայաստանում եւ թվում է, թե շահել էր Արոանդի բարեկամությունը: Սակայն Եվմենեսի մահից հետո եւ Անտիգոնոսի կառավարության ընթացքում Հայաստանի թագավորի կողմնորոշումը հայտնի չէ. գուցե, Եվմենեսի օրինակով Անտիգոնոսն ուզեցել է իր կողմը գրավել Արոանդին՝ նախատեսելով 301 թվականի մեծ ճակատամարտը: Այդ նպատակով էլ, գուցե, Հայաստան էր ուղարկել Կիրսիլոսին եւ Մեդիոսին: Զուտ ենթադրություն, որը բխում է քաղաքական դրությունից: ■

Ն.ԱԴՈՆՑԻ ԳԼՈՒԽԳՈՐԾՈՑԸ

Նախարարության տոհմական հիմքերը

Հատված «Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում» աշխատությունից. տպագրվում է կրճատումներով եւ առանց ծանոթագրության

Սկիզբը՝ էջ 19

տանի կենտրոնական մասերից: Նրա ցեղային բացառիկությունը պահպանվում եւ բարմացվում էր մերձակա լեռնային երկրներից թափանցող գաղթականական հոսանքներով: Նրանց հետքերը պահպանվել են աշխարհագրական անունների մեջ, այսպես՝ Բաղք, Սոթք, Աղահեմք, Գարգար-ացիք, Մուխանք տեղանունների էթնիկական ծագումը կասկածից դուրս է:

Առաջին անվանումը կապ ունի Բաղասականի հետ եւ ծագում է լեռնական բաղասանի-ք ցեղից, որ հայտնի է դեռ Փավստոսից:

Սոթքը Այուհիքի գավառներից մեկն է, որ իր անունն ստացել է հարավային Աղվանքում ապրող sodia, հայկական՝ ծով-դէ-ացի Ժողովրդից եւ համապատասխանում է Սոդուկեմեթին, որ հին հեղինակների երկերում հիշատակվում է Օտեեայում գտնվող Կոլթեմեթի՝ հայկական Կոթթ-ի կողքին:

Գարգարների Փավստոսը հիշատակում է այն լեռնականների թվում, որոնք Խոսրով Կոտակի թագավորության ժամանակ բաղասմիք ցեղի հետ ներխուժեցին Հայաստան: Սրանք հենց Խորենացու գարգարներն են՝ Ուտիմների, Գարդմանների եւ ծավդեացիների հարեւանները: Հետագայում Գարգարների դաշտ կոչվեց հին Ուտիքը կամ Օտենեն parexcellence Պարտավ քաղաքի հետ միասին: Պարտավի մոտ Կուր գետի վտակներից մեկն այժմ էլ կոչվում է Կարկար: Հայ գարգարները, ինչպես երեւում է, ծագում են այն լեռնական գարգարցիներից, որոնք ապրում էին Աղվանքից հյուսիս՝ Կերավնյան նախալեռների ստորոտներում կամ Կովկասյան լեռնաշղթայի աղվանական ճյուղի վրա:

Սուխ-ան-ը Արցախի նահանգի գավառներից մեկի անունն է, որ ծագում է Կասպից ծովի ափերին ապրող ցեղերից մեկի՝ …-երից: Սրանց մասին հիշատակություն պահպանվել է այն տափաստանի անվան մեջ, որ կոչվում է Մուղան-դաշտ, այսինքն՝ մուղերի դաշտ:

Ինչպես բոլոր թվարկված, այնպես էլ մյուս էթնիկական խմբերը այն տարրերն են, որոնցից կազմվեցին համապատասխան հիշանական տոհմերը: Նոր տարրերի ներգաղթը, ցեղային առանձին խմբերի ներթափանցումը շարունակվեցին նաեւ դրանից հետո. շրջակա երկրներից հաճախ գալիս էին նոր խմբեր, որոնք ժամանակի ընթացքում նույնպես ծնունդ տվին իշխանական տների: Այդպիսի պայմաններում երկրի ազգվականացումը չէր կարող տեղի ունենալ միանգամից, եւ եթե մենք նշում ենք Տիգրան Մեծի դարաշրջանը որպես տոհմական հիմքերի կործանման եւ դասային ազնվականության առաջացման ժամանակաշրջան, ապա դա պետք է համարել իրավացի՝ ընդհանուր առմամբ:

Այս խմորումների հետեւանքն այն եղավ, որ ստվար թիվ կազմող կոմարքոսներն ու տոհմապետները դարձան փոքրիկ իշխանավորներ, նրանցից կազմվեցին 120 ստրատեգիաները, որ մենք տեսնում ենք Հայաստանում Արշակունիների երեւան գալու ժամանակ, եւ որոնց ձեւավորումը Հայաստանի հասարակական-քաղաքական աճի պատմության մեջ կարելի է համարել նոր իրավակարգի սկիզբ: ■

տպագրվում է 2003թ. հոկտեմբերի 1-ից ■
հիմնադիր եւ հրատարակիչ՝ «Այսօրվա աշխարհ» ՍՊԸ ■
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԹԵՐԹԱԿԱՆ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԹԵՐԹ
Գնումը՝ ըստ պահանջի, ՀՀ, Երևան, Գ.Սրվանձտյան 2/3/32
Հեռախոս՝ (0285) 5 25 63 = (091) 45 90 47 = (077) 06 28 02
էլ. հասցե՝ www.syuniacyerkir.am
էլ. փոստ՝ syuniacyerkir@mail.ru

ԳՐԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ



«Դավիթ Բեկ» վեպի պատմական հիմը եւ գաղափարախոսական արժեքը

Տպագրվում է կրճատումներով ու առանց ծանոթագրության:

«Դավիթ Բեկ» վեպը հիմնված է ամբողջովին մի գրքույկի վրա, որ լույս տեսավ Ս. Էջմիածնի տպարանից 1871 թվին Աբգար Գուլամիրյանի ջանքով: Գրքույկի վերնագիրն է՝ «Դաւիթ Բէկ, պատմութիւն Դաւիթ Բէկին եւ պատերազմացն Հայոց Խափանու որք եղեն ընդդէմ Թուրքաց ի մերում ժամանակի, այն է յամի տեառն 1722 եւ Հայոց 1171»:

Այս հրատարակության առթիվ Ռաֆֆին նկատում է, որ «նրա հեղինակը մինչեւ այսօր մնում է անհայտ, ձեռքից ձեռք անցնելով հեղինակի անունը եղծվել է: Եւ անտեղի եւ համարում խոսել այդ մասին, միայն կիիշեցնեմ հայկական առածը՝ «գողը գողից գողացավ, Աստված տեսավ՝ զարմացավ» («խամսայի մելիթությունները», էջ 305-306):

Ափսոս, որ Ռաֆֆին գաղտնի է պահել իր կասկածները: Արդյոք կարծո՞ւմ էր, որ Գուլամիրյանի հրատարակությունը պատկանում է Հասան-Ջալալյանի գրչին: Կարապետ վարդապետ Շահնազարյանը եւս գրի է առել Դավիթ Բեկի պատմությունը 1840 թվին, երբ Տաթեւի վանքի առաջնորդ էր: «Ո՞ր հայը չէ լսել, – գրում է նա, – Դաւիթ Բէկ Սիւնեցու գովանի գործերը, որ իր ազգի ազատութեան սիրով վառուած՝ փորձեց թօքափել մեր երկիրը օտար լծից: Եւ՝ թշնամեակաս, որ 16 տարի առաջ կոխում էի քաջերի արիւնով ոռոգուած երկիրը եւ աչքիս առաջ էին Հալիծորի, Կապաքի, Բաղաբերդի աւերակները, որպէս ցաւագին յիշատակներ մեր նախնեաց աշխարհաշէն ջանքերի եւ նրանց հանգած փառքի, սիրում էի նստել Պեխ գիւղի ալեւոր բեւեկնիների հովանու տակ եւ լսել հարիւրամեայ Ստեփանոս աւագ քահանայի պատմածները: Ստեփանոսը թոռն էր Պալի, Դաւթի կտրիճներէն մէկի: Դաւթի քաջագործութեանց ստոյգ պատմութիւնը գրի առի եւ դրի Ս. Էջմիածնի Մատենադարանը Յովհաննէս եպսկ. Շահխաթունեանի ձեռքով»; Կարապետ վարդապետը ցաւվ է յայտնում, որ իր գործը անհետ կորավ էջմիածնում. «Սիագիմ զերօ մի եկուլ զայն եւ անհետ արար առ յաւիտեան» (ՍՏԵՓԱՆՆՈՍ ՕՐԲԵԼԵԱՆ, առաջաբան, էջ 7-8):

Ռաֆֆու խորհրդավոր ակնարկը գուցե վերաբերում է Կարապետ վարդապետի կորած աշխատությունը: Եթե այս է նրա կասկածը, անհիմն է: Ռաֆֆին ուշադիր չի եղել Գուլամիրյանի հրատարակության խորագրին, որտեղ ասված է. «Զորս եւեուն գրել որք ի սկզբանէ մինչեւ զվախճան յառաջադէմ լեալք էին յանեայն պատերազմումս եւ ակաճատես իրացն եղելոց, այսինքն՝ Ստեփանոս Վրդանիսեան, որ ի տանէն էր Շահումեան, ի գաւառէն Փոքր Սիւնեաց եւ յաւանէն Եկեստատանաց, եւ այլ ոմանք ընդ նմա,... վարդապետի...»:

Հավանորեն ընդգծած վարդապետ բառն է, որ տեղիք է տվել մեր վիպագրի կասկածանքին: Հայտնի է՝ որ ծածկանուն վարդապետը Հ.Դուկաս Ստեփանեան Սեբաստացին է՝ Մխիթարի աշակերտը: Նա է, որ գրի է առել ինչ որ պատմել է Ստեփանոս Շահումյանը հավատացնում է, որ Դավիթ Բեկին մոտիկ եւ սիրելի անձ էր, եւ Ստեփանոսն էր գործի նախաձեռնողը: Գուլամիրյանի գրքույկը ներկայումս շատ հազվագյուտ է եւ անմատչելի լայն հասարակության, ուստի ավելորդ չենք համարում տալ նրա ամփոփ բովանդակությունը, նախքան նրա քննության անցնելը:

Շահումյանի պատմելով՝ 1721 թվին լեռնականները ասպատակում են Շամախի եւ Գանձակ քաղաքները եւ մեծ վնաս հասցնում ժողովրդին: Լուրը հասնում է Դափան եւ շփոթում ազգաբնակչությանը. հայ եւ պարսիկ (իմա՝ թուրք) կորցնում են փոխադարձ վստահությունը. դադարում է երթեւեկությունը: Ստեփան Շահումյանը թողնում է հայրենի Վանք գյուղը եւ անցնում Սիսական (իմա՝ Սիսիան), մտածելով գնալ Մծխեթ՝ Վրաց իշխանաց իշխան Շահնավազի մոտ եւ խնդրել մի առաջնորդ Դափանի համար: Այս նպատակով նա հորիհնում է մի թուղթ, ստորեւ շարում Դափանի 50 տանուտերների անունները եւ կնքում կեղծ կնիքներով:

Ինչո՞ւ էր պետք այս դիմումը: Ստեփանը պատասխանում է, որ շարժման գլուխը եթե տեղացի մեկը լիներ, ապստամբ կեկատվեր պարսից կողմից, մինչդեռ Շահնավազը զորավար էր եւ կարող էր զորագլուխ նշանակել: Շահնավազը հաճձնարարում է Սյունեցի Դավիթ Բեկին: Դավիթը գալիս է Ուչթեփե, որտեղ առաջին բախումն է ունենում Դարաչոռլու կոչված թուրքերի հետ եւ ապա՝ Օրուզիքի, այսինքն՝ 32 անունով թուրք ցեղի հետ:

Ուչթեփեն մի սարահարթ է՝ Գորիսից արեւմուտք, Հալիձորի վերեւը, հայտնի սոսկալի փոթորիկներով: Արրահամ Կրետացին (էջ 75) բրդական ցեղ է կարծում Դարաչոռլուն: Բայց իսկապես ոչ թուրք են եւ ոչ քուրդ, այլ այն, ինչ այժմ է կոչվում՝ թարաքյամա, այսինքն՝ թուրքմեն (Թարաքյամա արաբերեն թուրքմեն բառի հոգեկաի ձեւն է): Դարաչոռլու եւ Օրուզիքի ցեղերի ձմերոցն է Կուրի դաշտերը, որտեղից ամռանը չվում են իրենց հոտերով դեպի Զանգեզուրի եւ Սիսիանի լեռները եւ հասնում մինչեւ Դարալագյազ:

Առաջին հարվածն ուրեմն Դավիթ Բեկը հասցնում է քոչվորներին: Հետեւյալ տարի նույնպիսի ընդհարում է ունենում այն թարաքյամաների հետ, կամ ինչպես ճիշտ անվանված է մեր աղբյուրներում՝ թուրքմենների հետ, որոնք Բարկուշատի կողմերից բարձրանում են Ղազանգյոլ եւ Գազբել լեռներում անցկացնելու ամառը:

Այս լեռները պատում են Տաթեւը հարավից եւ որպես հսկայական պատնեշ՝ բաժանում Տաթեւի շրջանը Դափանից: Ուրեմն երկրորդ հարվածը եւս ուղղված էր քոչվորների դեմ, առաջինը՝ Զանգեզուրի, երկրորդը՝ Դափանի, խաշնարած քոչվորների դեմ, որոնք մինչեւ այժմ էլ մեծ պատտհաս են հայ ժողովրդի եւ երկրի համար, քայքայում են տնտեսությունը, վտանգում ապահովությունը որպես ավազակության եւ ավերածության ահավոր բուծարան:

Ուչթեփեից Դավիթը իջնում է Շնոհր, որ Որոտն գետի ափին է՝ Տաթեւի դիմաց:

Տաթեւ չի գնում, որովհետեւ տեղի մելիքը, որ նույնպես Դավիթ էր կոչվում, համակիր չէր Դավիթ Բեկին: Տաթեւում հնուց ի վեր միայն մի ազնվական տոհմ կա, այդ հռչակավոր Օրբելյան տունն է: Մելիք Դավիթը, անտարակույս, Օրբելյաններից էր: Դավիթ Բեկի հետ համամիտ չէին նաեւ Տաթեւի մելիք Փարսադանը, երիցվանկիի մելիք Ֆռանգյուլը, Ագուլիսի մելիք Մուսին եւ ուրիշները, որոնց անունները շեհ հիշված:

Մելիք Դավիթ ընկնում է Դավիթ Բեկի ձեռքը եւ գլխատվում Շնոհրում: Մելիք Փարսադանը հետո բռնվում է

Շարունակությունը՝ էջ 24

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՍԵՓԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՕՐԱԳՐԱՅԻՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ
Գլխավոր խմբագիր՝ Հրաչիկ Մանասյան
Հասցե՝ ք.Կոմիտաս, Զարոբյան 20/32
Հեռախոս՝ (0285) 5 25 63 = (091) 45 90 47 = (077) 06 28 02
էլ. հասցե՝ www.syuniacyerkir.am
էլ. փոստ՝ syuniacyerkir@mail.ru
տպագրվում է 2003թ.
հոկտեմբերի 1-ից ■
հիմնադիր եւ հրատարակիչ
«Այուսիսյաց աշխարհ» ՍՊԸ ■
№ 17 236
18 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2011

ԳՐԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

«Դավիթ Բեկ» վեպի պատմական հիմը եւ գաղափարախոսական արժեքը

Սկիզբը՝ էջ 23

իր փեսա Տեր Ավետիքի հետ եւ բանտ նետվում: Ազատվում է մի դիպվածով, որ արժանի է հիշատակության ուրիշ նկատառումով: Ընճախից գալիս է Գուգարաքզվոց պետ Հովհաննեսը՝ 56 հազար զորքով, գալիս է պաշարում Որոտն բերդը, բայց չի կարողանում առնել, թողնում մեկնում է Շներ, որտեղ ազատում է բանտարկյալ մելիք Փարսադանին եւ Տեր Ավետիքին ու ղրկում Դավթի մոտ: Ինքը մտնում է Տաթեւ, հափշտակում Դավիթ Բեկի գանձերը (?) եւ հեռանում:

Դժվար է հասկանալ այս անհեթեթ գրույցի ծագումը: Վրաց աղբյուրները խամսայի մելիքներին կոչում են սովորաբար Սրճանի մելիքներ: Խամսա անունը նրանց անծանոթ է: Գուգարացի՝ Ղուկաս վարդապետի ենթադրությունն է, որ նեղել կարելի էր, եթե Գարգարացի ասեր՝ համաձայն Խորենացու գործածության: Թվում է, թե Հովհաննեսն այն Ավանն է, մինը՝ չորս կտրիճ երիտասարդներեն, որ գենքով դիմադրեցին լեռնականներին Զրաբերդում: Հավանական է, որ Ավանը ուղեկցած լինի Դավիթ Բեկին, կամ լուրեր տարածված լինեին, թե խամսայի երկրից օգնություն պիտի գար նրան: Ստեփան Շահունյանը թեթեւամիտ է գտնվել՝ հավատալով, որ հայերը 56 հազար զորք կարող էին ունենալ այդ ժամանակները: Ռաֆֆին եւս անգամ կողմից առաջարկ է անում հարեւան Կաց գյուղի թուրք տիրոջը՝ Միրզա Սայիլիին, որ միասին ավերեն հայ Մաւլեւ գյուղը: Սայիլը չի հոժարում, եւ Սաժի ղուլին պարտվում է Թորոսից: Սայիլը, լսելով, որ Թորոսը ավերել է երեք թուրք գյուղ, հարձակվում է Մաւլեւի վրա, բայց Թորոսը սրան եւս փախցնում է: Այս կրկնակի հաղթությունից հետո Թորոսը թողնում է Պապ զորավարին Գենուազում եւ ինքը գնում Զավնդուր:

Պարտված Սաժի ղուլին իր թուրքերի հետ փախչում է Օրդուար (Օրդուբադ) եւ այնտեղից 500 հոգով գալիս է մի հայ գյուղի վրա եւ գերիներով դառնում Օրդուար: Փոխարենը Պապը ոչնչացնում է Լեվազի թուրքերին, ավարը ղրկում Զվար գյուղ եւ ինքը քաշվում Վահրավարա: Դավիթ Բեկը, այն միջոցին վերջացնելով Ղալիձորի բերդի շինությունը, լսում է, որ Սալամազ ղուլի թուրքը զորք է հավաքում իր դեմ Բուխլուրուբա լեռների կողմը, որտեղ Ձեվու բերդն է: Դավիթը սլանում է միահամուռ ուժերով, շնորհիվ Տեր Ավետիքի քաջալարության, գրավում եւ բերդը, կոտորում չորս հազար թուրք: Բուխլուրուբ՝ Ստեփանոս Օրբելյանի պատմությանը կցված հին ցուցակի Բեխորոտ ավանի անունն է՝ Զորք գավառում, որն է բուն Կապանը: Այս լեռը բաժանում է Կապանը (բուն Դաւ-

տպագրվում է 2003թ.
հոկտեմբերի 1-ից ■
հիմնադիր եւ հրատարակիչ
«Այուսիսյաց աշխարհ» ՍՊԸ ■
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՍԵՓԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՕՐԱԳՐԱՅԻՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ
Գլխավոր խմբագիր՝ Հրաչիկ Մանասյան
Հասցե՝ ք.Կոմիտաս, Զարոբյան 20/32
Հեռախոս՝ (0285) 5 25 63 = (091) 45 90 47 = (077) 06 28 02
էլ. հասցե՝ www.syuniacyerkir.am
էլ. փոստ՝ syuniacyerkir@mail.ru

ԳՐԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

կեալ զամենայն եւ իբրեւ տասն հազար արս ընտիրս եւ սպառազէնս»: (Եսայի Կաթողիկոս Հասան-Ջալալեան, Պատմութիւն հայոց առ Հաւսեպ Աղուանից երկրի, Երուսաղէմ, 1868, էջ 47-48):

Նույն 1722 թվին՝ գարնանը, լեռնականները մտան Սուլտանի կողմից Դիզակ գավառը, կողոպտուող անցան Վարանց, որտեղ մելիք Բաղիրը ընծաներով ընդառաջեց եւ ազատ պահեց իր երկիրը ավերումից: Սինչ-դեռ իսկ Ջրաբերդում ժողովուրդը քաշվեց լեռները, եւ «երիտասարդք ոմանք ընդդիմասային եւս զբաղումս հարին ի թշնամեաց»: Սիա այս երիտասարդների կազմակերպած դիմադրության մասին է եսայու ակնարկը, եւ նախաձեռնողներ, անտարակույս, նույն չորս երիտասարդներն էին՝ Ավան, Շրվան, Շահին եւ Սարուխան: Հայ տասիսազարանց բանկը ներկայանում է Վախթանգի, որ ընդունում է մեծ սիրով եւ խրախուսական խոսքերով. «Այսուհետեւ զօրասջիք եւ քաջ լերուք իբրեւ յորդիս զօրութեան. եւ յուսատեր եւ յուսեալ մի երկչեցիցիք, զի ահա հասեալ է ժամանակ փրկութեան քրիստոնէից»:

Ակնահատես եսայի Կաթողիկոսը վկայում է, որ Վախթանգը բնական սեր ուներ դեպի հայ ազգը «եւ ոչ այնքան հաւատայր ազգին իւրոյ Վրաց, որք միշտ նենգաւորք եւ խորամանք են, վասն այն կամէր զայս զօրս՝ մանաւանդ ազգս Հայոց իւրոյ սեփհականեցուցանել որպէս Տփխիսեցիք», պարզաբանում է Թիֆլիսի հայերը: Բացի դրանից, Վախթանգը, որովհետեւ սպասում էր Պետրոս Մեծի գալստեան, «կամէր հայ եւ վրաց զօրօք ճոխ եւ շքեղ ընդ առաջ ելանել նմա»: Վրաց թագավորը, իր կշիռը բարձրացնելու համար, ուզում էր ներկայանալ Կայսրին՝ որպես տեր երկրի քրիստոնյա տարիքի, հայ եւ վրացի:

Ռաֆֆին, ով քաջածանոթ է եսայի Կաթողիկոսի պատմությանը եւ իր ձեռքին ունեցել է մինչեւ անգամ ավելի ընդարձակ օրինակը, հնարավոր է գտնում ասել, որ Ղարաբաղի մելիքների խնդրանքով է, որ Գեորգի Շահնավազը ուղարկեց իր ծառայության մեջ գտնվող Դավիթ Բեկին, եւ թե Դավիթ Բեկը եկավ Ղարաբաղ 1722 թվին, ժողովեց 60 հազար զորք, զորապետներ նշանակեց մելիք Ավան խաչին եւ Ավան միրզային, եւ ինքը գնաց Ղափան՝ Շավնդուր կոչված տեղը, որ իր հայրենիքն էր: Քիչ ստորեւ հայտարարում է, որ հայերը եւ վրացիները սպասում էին Պետրոս Մեծի գալստյանը՝ բանակ զարկած Գանձակի մոտ, եւ որ Վրաց զորքերի հրամանատարն էր Վախթանգը, իսկ հայոց զորքերինը՝ Դավիթ Բեկը («Խամսայի մելիքությունները», էջ 28-29): Այս բոլորը հեռու են ստուգությունից: Դավիթ Բեկը Շավնդուրից չէր, եւ ոչ էլ Ստեփան Շահունյանը նրան բերեց Ղարաբաղ՝ առանց մելիքների որեւէ մասնակցության: 60 հազար թիվը առասպել է: Տեսանք, որ հայ զորքը հաշվում էր 10 հազար մարդ եւ կազմակերպված էր Եսայի Կաթողիկոսի միջնորդությամբ եւ ոչ թե Դավիթ Բեկի: Ավանը ոչ խաչ էր եւ ոչ միրզա, այլ այն չորս կտրիճ երիտասարդներից մեկը, ովքեր զենքով լեզգիների դեմ ելան: Որտեղի՞ց է հանել Ռաֆֆին 60 հազար թիվը, կտեսնենք ստորեւ:

Մեր նպատակն է պարզել, հասկանալ Դավիթ Բեկի ապստամբության մեր ծանվող շարժառիթը: Շահունյանի տված բացատրությունը լուրջ չէ: Լեզգիների արշավը չդիպավ Սյունիքին եւ չէր կարող որեւէ անդրադարձ ունենալ նրա վիճակի վրա:

Դավիթ Բեկի գալուստը հետեւանք էր Գանձակի մոտ կանգնած վրացի եւ հայ զորքերի ակնկալությունների: Ինչպես եսայի Կաթողիկոսն էր ուղարկված մելիքների մոտ, նույն առաքելությամբ էլ եկել էր Դավիթ Բեկը Սյունիք՝ Վախթանգի հրահանգով: Վրաց արքան անվերապահորեն հավատում էր կայսերական խոստումներին եւ պատրաստություն էր տեսնում պատշաճ գործակցություն բերելու ռուսական զենքին: Նա վայելում էր հայերի կատարյալ վստահությունը: Ռաֆֆին արդար չէ, երբ Դավիթ Բեկի բերանով շեշտում է հայի եւ վրացու մեջ բուն դրած դարավոր ատելությունը եւ անհնար է գտնում երկու ազգերի համերաշխ գործակցությունը, որի հետեւանքով Դավիթ Բեկը բաժանվում է Վախթանգից՝ առանց հայտնելու իր դիտավորությունը («Դավիթ Բեկ», էջ 363):

Վիպագիրը գտնվում է իր ատենի հայ-վրացի հարաբերության լարված դրության ազդեցության տակ: Այդպես չէր մոտիկ անցյալում: Հայ եւ ռուս հարաբերությանց պատմության վերաբերյալ աշխատությանց մեջ բավականին շեշտված չէ եւ երբեմն անտես է արված այն դերը, որ կատարել են վրացիները: Սրանք մեզանից դարեր առաջ են սկսել կոխտսել ռուսական դռները՝ իսկական ջատագովներ հանդիսանալով հյուսիսի միջանտությանը եւ մեզ էլ քաշելով իրենց հետեւից բարի հարեւանությամբ: Մեր օրերի վրաց հայրենասերերը, որ երազում են անջատվել Ռուսիայից եւ կշտամբում են հայերիս «ռուսասիրությունը», մոռանում են, որ երեկվա իրենց հայրերն են եղել մեր հարեւանը ուսուցիչները: Եթե այժմ էլ գտնվեին ազնվամիտ վախթանգներ, դժվար չէր լինի գտնել բարի հարեւանության համերաշխ ուղիներ:

Դավիթ Բեկի շարժումը գաղտնի թելերով կապված էր Վախթանգի վարիչ: Բաղդասար մետրոպոլիտը եւ Սարգիս արքեպիսկոպոս Հասան-Ջալալյանը քաջ տեղյակ էին Դավիթ Բեկի գործերին, եւ նրանց ստորագրությունը ուշադրության արժանի է գոնե այս կետում:

Վախթանգը սպասում էր ռուսերիին Գանձակում աշնանը: Եթե ճիշտ է մեր ենթադրությունը, որ Դավիթ Բեկը Գանձակից է եկել Սյունիք, գալուստը պիտի տեղի ունեցած լինի մոտավորապես նույն ժամանակները, եւ հավանորեն քոչվորները ենթարկվել են նրա հարձակմանը աշնանը՝ սարից իջնելիս: Երեւանը ընկավ օսմանցիների ձեռքը 1724 թվի հոկտեմբերի 1-ին: Երեւանի խանի եղբայրը անցած պետք է լինի Օրդուարից հետեւապես այդ միջոցները: Այսպիսով, Դավիթ Բեկի կռիվները տեւել են 1722-ի աշնանից մինչեւ 1724-ի աշունը, ուրեմն ուղիղ երկու տարի: Նա կռվել է երկու կարգի թշնամիների դեմ, նախ՝ քոչվոր թուրաքայամայի եւ երկրորդ՝ Շավնդուրի եւ Գենուազի շրջանում ապրող մի քանի բուրք պետերի: Սրանցից Ալալամազ Ղուլին եւ երկու եղբայրներ՝ Փաթալի սուլթանը եւ Ալանիի, ճանապարհ ցեղապետներ են, այսինքն՝ քոչվորների գլուխ: Ալալամազը զարկվում է Բուխլուրուբ լերան վրա, ապաստանում է Ձեվու բերդում եւ պարտվում: Երկու եղբայրները 12 հովիվ ուտեին եւ անհաճար հոտ: Նախահարձակը Դավթի գինակիցն է, որ թալանում է սրանց ոչխարները: Պարզ է, որ գործ ուներ խաշտարած ժողովրդի հետ: Մեր աղբյուրը նրանց անվանում է մեթոթ Գավնդուրի, մեթոթ Բարկուշատի դաշտերից: Այս ճշանակում է Գանձակ գավառի Գանձակ գավառ գաղափարը: Գանձակ-Ղազախ գավառներ: Ինչպես Ալալամազ Ղուլի՝ Գաց (Կաց) գյուղի Սաչիլճ՝ դրանք տեղական բերեր են, թերեւս, մեր մելիքների նման մի քանի գյուղի սեփականատեր: Ամեն պարագայում սրանք պետական պատասխանատու պաշտոնյաներ չեն: Երկրիը ենթական էր Նախվանքի խանի իրավասության: Սրա անցդուղի միջամտությունը անստույգ եք համարում: Արդարեւ, եթե նա Դավիթ Բեկի դեմ ելած լիներ եւ հաղթած, ընավ չէր նահանջի կռվի դաշտից՝ առանց զսպելու խռովությունը: Նրա միջամտությունը չենք տեսնում նաեւ հետագա տարիներին: Երկրի տերը էր եւ պատասխանատուն եւ պետք է, որ հետապնդեր խռովարարներին, եթե նրանք իրոք պետությանն թշնամիներ լինեին: Հաջորդ՝ 1724-1726 տարիները չգիտենք թ՞նչ էր Դավիթ Բեկի վիճակը: Ստեփանոսը այս մասին լուռ է: Դավանորեն տեղյակ չէ գործին: Երեւանի խանի եղբոր դատաստանը, որով պատժում է գանգատավոր բուրքերին եւ ոչ հայերին, թվում է, թե վերջ է դնում թշնամական ընդհարումներին: Դավիթ Բեկը եւս ստիպված է լինում զենքը վայր դնել եւ ահա ինչու: Նա եկել էր Վախթանգի եւ Եսայիի կողմից պաշտոնապես թե անպաշտոն կերպով: Վերեւ բացատրեցինք մեր ենթադրություններն այս առթիվ: Եկել էր նախապատասխանատու երկրիը ռուսերին ընդառաջելու ծրագրի ոգով: 1722-ի վերջերին Վախթանգի եւ Եսայի Կաթողիկոսի հույսերը ի դեռեւ ելան: Պետրոս Մեծը ձգձգում է իր խոստումը՝ հայտնելով, որ մինչեւ չտիրանա Կասպից ծովի եզերքին, չի կարող օգնության գալ, եւ խնդրում է Վախթանգին միջնորդել պարսից շահի առաջ՝ զիջանել հիշյալ ծովեզերքը ռուսներին: Վախթանգը հուսահատ վերադառնում է Թիֆլիս, որ գրավված էր իր հակառակորդ վրաց իշխանի կողմից, որ բարեկամ պարսիկների դեմ: Սակայն, ստորագրողները այդ չեն ասում, որովհետեւ նրանց գիտությամբ Դավիթ Բեկը եկած էր որպես պաշտոնյա կառավարման Վարդիս արքեպիսկոպոս Հասան-Ջալալյանց քաջ տեղյակ էին Դավիթ Բեկի գործերին, եւ նրանց ստորագրությունը ուշադրության արժանի է գոնե այս կետում:

Վախթանգը սպասում էր ռուսերիին Գանձակում աշնանը: Եթե ճիշտ է մեր ենթադրությունը, որ Դավիթ Բեկը Գանձակից է եկել Սյունիք, գալուստը պիտի տեղի ունեցած լինի մոտավորապես նույն ժամանակները, եւ հավանորեն քոչվորները ենթարկվել են նրա հարձակմանը աշնանը՝ սարից իջնելիս: Երեւանը ընկավ օսմանցիների ձեռքը 1724 թվի հոկտեմբերի 1-ին: Երեւանի խանի եղբայրը անցած պետք է լինի Օրդուարից հետեւապես այդ միջոցները: Այսպիսով, Դավիթ Բեկի կռիվները տեւել են 1722-ի աշնանից մինչեւ 1724-ի աշունը, ուրեմն ուղիղ երկու տարի: Նա կռվել է երկու կարգի թշնամիների դեմ, նախ՝ քոչվոր թուրաքայամայի եւ երկրորդ՝ Շավնդուրի եւ Գենուազի շրջանում ապրող մի քանի բուրք պետերի: Սրանցից Ալալամազ Ղուլին եւ երկու եղբայրներ՝ Փաթալի սուլթանը եւ Ալանիի, ճանապարհ ցեղապետներ են, այսինքն՝ քոչվորների գլուխ: Ալալամազը զարկվում է Բուխլուրուբ լերան վրա, ապաստանում է Ձեվու բերդում եւ պարտվում: Երկու եղբայրները 12 հովիվ ուտեին եւ անհաճար հոտ: Նախահարձակը Դավթի գինակիցն է, որ թալանում է սրանց ոչխարները: Պարզ է, որ գործ ուներ խաշտարած ժողովրդի հետ: Մեր աղբյուրը նրանց անվանում է մեթոթ Գավնդուրի, մեթոթ Բարկուշատի դաշտերից: Այս ճշանակում է Գանձակ գավառի Գանձակ գավառ գաղափարը: Գանձակ-Ղազախ գավառներ: Ինչպես Ալալամազ Ղուլի՝ Գաց (Կաց) գյուղի Սաչիլճ՝ դրանք տեղական բերեր են, թերեւս, մեր մելիքների նման մի քանի գյուղի սեփականատեր: Ամեն պարագայում սրանք պետական պատասխանատու պաշտոնյաներ չեն: Երկրիը ենթական էր Նախվանքի խանի իրավասության: Սրա անցդուղի միջամտությունը անստույգ ենք համարում: Արդարեւ, եթե նա Դավիթ Բեկի դեմ ելած լիներ եւ հաղթած, բնավ չէր նահանջի կռվի դաշտից՝ առանց զսպելու խռովությունը: Նրա միջամտությունը չենք տեսնում նաեւ հետագա տարիներին: Երկրի տերը էր եւ պատասխանատուն է պետք է, որ հետապնդեր խռովարարներին, եթե նրանք իրոք պետությանը թշնամիներ լինեին: Հաջորդ՝ 1724-1726 տարիները չգիտենք թ՞նչ էր Դավիթ Բեկի վիճակը: Ստեփանոսը այս մասին լուռ է: Դավանորեն տեղյակ չէ գործին: Երեւանի խանի եղբոր դատաստանը, որով պատժում է գանգատավոր բուրքերին եւ ոչ հայերին, թվում է, թե վերջ է դնում թշնամական ընդհարումներին: Դավիթ Բեկը եւս ստիպված է լինում զենքը վայր դնել եւ ահա ինչու: Նա եկել էր Վախթանգի եւ Եսայիի կողմից պաշտոնապես թե անպաշտոն կերպով: Վերեւ բացատրեցինք մեր ենթադրություններն այս առթիվ: Եկել էր նախապատասխանատու երկրիը ռուսերին ընդառաջելու ծրագրի ոգով: 1722-ի վերջերին Վախթանգի եւ Եսայի Կաթողիկոսի հույսերը ի դեռեւ ելան: Պետրոս Մեծը ձգձգում է իր խոստումը՝ հայտնելով, որ մինչեւ չտիրանա Կասպից ծովի եզերքին, չի կարող օգնության գալ, եւ խնդրում է Վախթանգին միջնորդել պարսից շահի առաջ՝ զիջանել հիշյալ ծովեզերքը ռուսներին: Վախթանգը հուսահատ վերադառնում է Թիֆլիս, որ գրավված էր իր հակառակորդ վրաց իշխանի կողմից, որ բարեկամ էր պարսից տիրապետությանը: Օսմանցիների հարձակումով դրությունը բարդանում է: Ռուսերը մի թեթեւ գունդ են ղրկում՝ պաշտպանելու Վախթանգին ընդդեմ օսմանցիների՝ 1723 թվին: Վախթանգը պարտվում է եւ հարկադրվում թողնել հայրենիքը եւ ապաստանել Ռուսիայում: 1724 թվի օգոստոս ամսին արդեն հայրենիքիցիցիցդ դուրս էր: Հույսերի եւ ծրագրի խորտակումը կատարյալ էր: Լուրը անտարակույս հասնում է Դավիթ Բեկին եւ սաստում նրա եռանդը: Ահա ինչու այնուհետեւ՝ 1724-1726թթ., նա անգործության է մատնվված: Հավանական է, որ լրաբերը նույն Հովհաննես Գուգարացին էր (իմա՝ Վլան Զրաբերդցին): Ստեփան Շահունյանը տեղյակ չէ Դավիթ Բեկի գաղտնի հարաբերությանը Վախթանգի եւ Եսայի Կաթողիկոսի հետ: Այս է պատճառը, որ Հովհաննեսի գալուն ոչ գնալը առասպելական ձեւ է ստացել նրան հասած լուրերի մեջ:

Այսպիսով՝ Դավիթ Բեկը ձեռնամուխ եղավ կատարելու միմիայն նախապատրաստական աշխատություն եւ առանց ապստամբական ցույցերի: Այդ աշխատությունն էր՝ տնտղել տեղական մելիքների, եկեղեցականների եւ ազդեցիկ ուժերի տրամադրությունները, այժմեսեղ մեկուսացնել վտանգավոր կամ անվստահելի իշխանություններ եւ ծանավանդ մաքրել ռազմագիտական դիրքերը՝ այնտեղ բուն դրած թուրք խաշտարած ցեղերից: Այս աշխատանքը կատարվեց մի բուռ քաջերով՝ առանց երկրի բարձր իշխանության՝ Նախվանքի խանի ուշադրությունը գրավելու, այնպիսի հմտությամբ, որ Երեւանի խանի եղբայրը մեղավոր ճանաչեց թուրք գանգատողներին՝ առանց խոժոռելու հայերի դեմ:

Քոչվորների հետ ընդհարվելը քաղաքական կասկած չէր կարող հարուցել: Սովորական երեւույթ էր հնուց ի վեր: Կար ժամանակ, երբ հայերը իրենց հոտը տանում էին ձմեռներս Կուրի եւ Երասխի դաշտերում եւ փոխարենը թույլ էին տալիս տեղացիներին՝ ամառը Հայոց սարահարթերում անցկացնելու: Լեռնականները ասպատակեցին 670-ական թվականներին Կուրի եւ Երասխի ափերում ճարպկոր հոտերը, ոչ միայն բնիկների, այլեւ որ «Այրարատեան գաւառաց» եւ ի Սիւնեաստանեաց աշխարհէ ի ձմեռնաւաճառկ դաշտն էին ելեալ յարօտ» (Մովսէս Կաղանկատվացի, Բ. Իհ): Իսկ 851 թվին տեղատարափ ամձրեւը «ուք հարիւր վրան խաշարարօ՛ց տարաւ, որք եկեալ էին ի Կովկասայ յապարէ՝ յաւուրս ամարեայ» Մեծ իրանց գավառ, որ գտնվում էր Խաչենի շրջանում (անդ, գ. Կ.Ի):

Ներկայումս թարաքյամա քոչվորները Կուրի ափերից բարձրանում են Արցախի եւ Սյունիքի վրայից մինչեւ Նախվանքի եւ Դարալագազի լեռները եւ շատ հաճախ տեղի են տալիս բախումների, երբեմն արյուտճաեեր: Սար բարձրանալիս կոխտսում են ու փչացնում կանաչ արտերը եւ իջնելիս քշում-տանում են՝ խառնելով իրենց հոտերին հայ գյուղերի անասունները:

Անցնինք «Դավիթ Բեկ» վեպին: Թեեւ մեր նյութից դուրս է գրական քննությունը, բայց նկատելու ենք, որ վեպի շեղը հանաչափ չէ եւ հորինված է, կարծես, անոնց մշակված օրագրի: Գրիչն ընթացել է ոչ մտքի ետեւեն, այլ նստ հետ միասին եւ ստեղծել է հերոսների համար երբեմն դժվար կացություններ, որտեղից հանելու համար ստիպված է եղել շեղվել պատմության թելից, նոր օժանդակ դեմքեր հանդես բերել, անբնական տանելով սրանցներ կերտել: Այս բոլորը խանգարել են երկի ներդաշնակությանը: Վերջին գիրքը ավելի ստվար է, քան առաջին երկուսը: Հեղինակը առանձին փույթ չունի գեղարվեստական մասին, նրա համար ավելի թանկ է երկի գաղափարախոսությունը, որ արտահայտում է ոչ միայն գործող անձերի բերանը դրած ճառերով, այլեւ նրանց հերոսական նկարագրով: Առաջին երկու գրքերը նվիրված են ամբողջովին Դավիթ Բեկին եւ Ստեփաննոս Շահումյանին:

Դավիթ Բեկը փրկվում է մահից, փախչում Կրասաան եւ այնտեղ «առաջին պետական մարդ դառնում»: Ճիշտ ինչպես հնում Տրդատը փախավ Հռոմ եւ հռչակ ստացավ իր քաջությամբ: Ստեփանն էլ գերությունից է ազատվում շնորհիվ իր թեղի Թորոսի: Պատմական քիչ բան կա այս երկաքանչ պատմության մեջ: Բացի մի քանի անունների՝ մնացածը՝ դեմքեր թե տեսարաններ, երեւակայության արդյունք են: Ավելի պատմական է երրորդ գիրքը՝ Դավիթ Բեկի գործունեությունը: Հիմք կազմում է Ստեփաննոսի՝ վերելը քննած պատմությունը: Աշխարհագրական քարտեզը եւ անձերը նույնն են՝ բացի մի քանի թարմատար դեմքերից: Հարկավ պատմության հանեստ գործիչները դարձել են վեպի մեջ հայտնի մեծությունները:

Գործողության դաշտը Սյունիքի յոթն գավառներն են, որոներ տիրում են՝ Գոդաան, մելիք Սուլիմ, Գենուազ, իշխան Ստեփան Շահունյան, Ղափան, մելիք Փարսադան, Չաւնդուր, Թորոս իշխան, Բարկուշատ, մելիք Ֆրանգյուլ, Սիսիան, իշխան Բայիզիդուր, Ջանգեզուր, Մխիթար սպարապետ: («Դավիթ Բեկ», էջ 371):

Այս անձերից ոչ ոք գավառատեր չէր, եւ ոչ էլ Ստեփանը, Թորոսը, Բայիզիդուրը իշխաններ էին:

Մելիք Փարսադանը «երկաթի սիրտ ունի եւ գայլի խիղճ», Ստեփանը՝ «սատանայի խելք եւ Ուուստեմի քաջություն», Թորոս իշխանը՝ «փոքր ուժ եւ առյուծի սիրտ», Բայիզիդուրը «սարսափելի հսկա է», Ներսես եպիսկոպոսը «Օմարի եւ Եազիդի նման արյունարբու է, իսկ Դարոն ալ Ռաշիդի նման անողոքելի» (էջ 518, 521): Այս նկարագիրները պատմական չեն եւ ոչ վիպական, այլ դյուցազներգական, եթե կուզեք: Վիպագրի ցանկությունն է տեսնել նրանց այդպիսի հատկություններով:

Վեպի գլխավոր գործողները վարում են գնդեր՝ գնդապետներ են: Կան եւ խմբապետներ, որոնք, փոքր խմբերի գլուխ անցած, շփոթություն են ձգում բշնամու բանակում՝ հեղակարգ հարձակումներով եւ ավազակային հափշտակություններով: Սրանց գործերը չեն ներկայացված, հիշված են միայն խմբապետների անունները՝ Վաղարշաւանդի Հարությունը տանուտեր, Գանձակեցի Եղիազար աղա եւ Թադեոս բեկ, Շուշեցի Զաքարիա իշխան (Շուշիկ գրությունում չուներ այն ժամանակ), Լոռեցի Ավթանդիլ, Երեւանցի Օհանես, Մեղրեցի մելիք Կոստանդին եւ այլն (էջ 308, 404, 519 եւ այլուր): Այս անունները պատմական են, առնված են վերը հիշված ցուցակից, գնդերի թիվը եւ քանակը եւս այստեղից է (էջ 422), բայց տիտղոսները եւ նրանց գործունեության վայրերը պատկանում են վիպագրին: Կոիվների դաշտը հասցրել է մինչեւ Դարալագազ եւ Սեւանա լճի ափերը:

Թշնամի բանակի գլխավոր դեմքերը եւս պատմական են, ինչպես Փաթալի եւ Ալանի եղբայրները, Ալալամազ ղուլիի եւ ուրիշները: Հարկավ սրանք է են արժանացել ավելի բարձր աստիճանի, քան ունեին: Փաթալին՝ հասարակ ցեղապետ, դարձել է խան եւ բռնապետ Փայտակարանի եւ ձգտում է ամբողջ Ղափանը ձեռք ձգել: Փայտակարանը Ղարադաղը չէ. ինչպես պսակվանք նույնացրել է Ռաֆֆին: Ալալամազ ղուլին նմանապես խանի դիրք ունի եւ տեր է Ձեվու բերդին:

Դավիթ Բեկի կռիվներից մեծ տեղ են բռնում վեպի մեջ Ձեվու բերդի պաշարումը եւ Եղվարդի ճակատը: Պաշարումի երկարաշունչ մանրամասնությունները վառ երեւակայությամբ գրված են, իսկ Դարոն ալ Ռաշիդի նման անողոքելի» (էջ 518, 521): Այս նկարագիրները պատմական չեն եւ ոչ վիպական, այլ դյուցազներգական, եթե կուզեք: Վիպագրի ցանկությունն է տեսնել նրանց այդպիսի հատկություններով:

Վեպի գլխավոր գործողները վարում են գնդեր՝ գնդապետներ են: Կան եւ խմբապետներ, որոնք, փոքր խմբերի գլուխ անցած, շփոթություն են ձգում բշնամու բանակում՝ հեղակարգ հարձակումներով եւ ավազակային հափշտակություններով: Սրանց գործերը չեն ներկայացված, հիշված են միայն խմբապետների անունները՝ Վաղարշաւանդի Հարությունը տանուտեր, Գանձակեցի Եղիազար աղա եւ Թադեոս բեկ, Շուշեցի Զաքարիա իշխան (Շուշիկ գրությունում չուներ այն ժամանակ), Լոռեցի Ավթանդիլ, Երեւանցի Օհանես, Մեղրեցի մելիք Կոստանդին եւ այլն (էջ 308, 404, 519 եւ այլուր): Այս անունները պատմական են, առնված են վերը հիշված ցուցակից, գնդերի թիվը եւ քանակը եւս այստեղից է (էջ 422), բայց տիտղոսները եւ նրանց գործունեության վայրերը պատկանում են վիպագրին: Կռիվների դաշտը հասցրել է մինչեւ Դարալագազ եւ Սեւանա լճի ափերը:

Թշնամի բանակի գլխավոր դեմքերը եւս պատմական են, ինչպես Փաթալի եւ Ալանի եղբայրները, Ալալամազ ղուլիի եւ ուրիշները: Հարկավ սրանք է են արժանացել ավելի բարձր աստիճանի, քան ունեին: Փաթալին՝ հասարակ ցեղապետ, դարձել է խան եւ բռնապետ Փայտակարանի եւ ձգտում է ամբողջ Ղափանը ձեռք ձգել: Փայտակարանը Ղարադաղը չէ. ինչպես սխալմամբ նույնացրել է Ռաֆֆին: Ալալամազ ղուլին նմանապես խանի դիրք ունի եւ տեր է Ձեվու բերդին:

Դավիթ Բեկի կռիվներից մեծ տեղ են բռնում վեպի մեջ Ձեվու բերդի պաշարումը եւ Եղվարդի ճակատը: Պաշարումի երկարաշունչ մանրամասնությունները վառ երեւակայու-

Շարունակությունը՝ էջ 26

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽ ԱՌՔԱՅԻՆ ԱՇԽԱՐՀԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍՆԱՎՈՐ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՆԱՅԻՆ ՕՐԱԳԻՐ
ՀԱՅԱՍՏԱՆ ԵՎ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ-2012Թ
ՀԵՌԱԽՈՍ՝ (0285) 5 25 63 = (091) 45 90 47 = (077) 06 28 02
էլ. հասցե՝ www.syuniacyerkir.am
էլ. փոստ՝ syuniacyerkir@mail.ru
տպագրվում է 2003թ. հոկտեմբերի 1-ից ■ հիմնադիր եւ հրատարակիչ «Սյունեյաց աշխարհ» ՍՊԸ ■
№ 17 236
18 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2011

ԳՐԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

«Դավիթ Բեկ» վեպի պատմական հիմը եւ գաղափարախոսական արժեքը

Սկիզբը՝ էջ 25

թյամբ արդյունք են: Ստույգ է միայն, որ Տեր Ավետիքը վճռական դեր է կատարել:

Եղվարդի կռիվը մղված էր ընդդեմ Փաթալի եւ Ավասի եղբայրների: Թորոսն ընկավ կռվում, բայց Շահուս մյանը գերվեց ոչ այս կռվում, այլ Խոտանանի արշավանքին: Սրա առաջին գերությունը եւ դարձը շնորհիվ Թորոսի՝ պատմական չեն: Ստեփանը Թորոսի քեռորդին էր:

Երկու հայ մելիքները՝ Դավիթ եւ Ֆրանգյուլ, հանված են խիստ թանձր գոյներով, քան իրավունք է տալիս պատմությունը: Նրանք պետք չունեին տողալու թուրք եղբայրների առաջ: Երկրի խանը նստում էր Նախճվան, որի իրավասության տակ էին հայ մելիքները եւ թուրք եղբայրները: Սրանք Դավիանի տերը չէին, ուրեմն եւ չէին կարող խոստանալ Դավիանը զիջանել փառատեր մելիքին որեւէ գնով:

Ընդհանուր առմամբ վեպը հավատարիմ է մնացել իր պատմական վերեւ քննված առքայուրին: Սակայն այս միայն վեպի կնախքն է: Որդո՞ք նրա մարմինը, ամբողջությունը եւս պատմական է: Անգամ պատմությունից առած դեմքերի նկարագիրը հեռու է պատմական իրականությունից: Պատմական լինելու համար անհրաժեշտ չէ ամենեւին, որ վեպի դեմքերը եւ նյութը քաղված լինեն պատմությունից: Գործող անձինք կարող են լինել շինծու, անծանոթ պատմությանը, բայց եթե նրանց նկարագիրը, նրանց ոգին, աշխարհայացքը համապատասխան են ընտրած պատմական միջավայրին, կլինեն պատմական:

«Դավիթ Բեկ» վեպը, չհավված կմախքը, մյուս մասերով խորթ է Դավիթ Բեկի ժամանակակից իրականությանը: Հեղինակն իսկապես նպատակ էլ չի ունեցել վերակենդանացնել գեղարվեստական պատկերների եւ տիպար դեմքերի միջոցով անցյալի մի էջը: Անցյալը նրան հետաքրքրել է ոչ անցյալի համար, այլեւ որպես մի «դասարան» քաղաքական կրթության: Եվ դասարանի մեջ ինքն է նստել եւ ինքն է խոսում, քարոզում: Հին ռազմիկներին հանել է դարավոր մեռելությունից, բայց նրանց մեջ դրել է իր ոգին, իր միտքը, իր լեզուն: Նրանք սոսկ դիմակներ են, որոնց ետեւը կանգնած է հեղինակը եւ թելադրում է ոչ միայն նրանց ճառերը, խորհուրդները, հուզումները, այլ անգամ գործելու կերպերը: Բոլորեքյան խոսում են հեղինակի բերանով, չէ թե միայն հերոսները՝ Դավիթ Բեկ, Մխիթար, Բայիդուդր, Ներսես եպիսկոպոս, Շահումյան, այլ անգամ Փաթալի խանի հարեմի բնակիչները՝ Սյուրմեն եւ Նեբրթնաթետ Ամմեղը, երկուսն էլ կրոնափոխ հայեր են, բայց մնացել են մաքուր, գաղափարական հայրենասերներ՝ ապրելով հանդերձ տասնյակ տարիներ հարեմական մթնոլորտի մեջ: «Դավիթ Բեկ» վեպը մի կեղտաջի հիշատակարան է հեղինակի անձնական հայացքների, հասարակական եւ քաղաքական գաղափարների եւ տրամադրությանց, մանավանդ նրա տեսությունների՝ բռնության դեմ պայքարելու եղանակների, ստրկության լուծը թոթափելու միջոցների վերաբերյալ:

Դավիթ Բեկի ծնողները մի խումբ ուրիշ հայերի հետ իրենք իրենց այրել էին խանի դատարանի առաջ, «կամեմնալով ինքնկամով մահով բողոքել տիրող անարդարության դեմ. իրանք մեռան, բայց անարդարությունը մնաց...» (էջ 157): Դավիթը փրկվել էր բարեսիրտ նեբրթնաթետի ջանքով, խնամվել: Պատանու կյանքը հնարավոր փորձանքից զերծ պահելու համար նեբրթնաթետը խորհուրդ է տալիս գնալ Վրաստան: Նախքան հեռանալը պատանին այցելում է իր անբախտ ծնողների գերեզմանը, որբում արտասուքով նրանց կորուստը եւ լսում է մի ծայն, թե «դառնությամբ բաժանը լցված է» եւ ուխտում է «մինչեւ մահ նրանց անարդարության դեմ» (էջ 161): Հրաժեշտի ժամին խանի կինը, որ տեղյակ է պատանու ընտանեկան դժբախտության, եւ նրա հովանավորը, ողջերթ է մաղթում խրախուսական խոսքերով, որ ինքը «հավատում է Աստծո արդարադատությանը եւ հույս ունի, որ բոլոր չարիքների հատուցում կլինի, նեղյալները կվայելեն ազատություն, իսկ նեղիչները՝ սոսկալի դատապարտություն» (էջ 160): Նեբրթնաթետն իր կողմից հաճձնում է պատանուն Սյունյաց աշխարհի մի հզոր թագավորի թուրը, որ հանել է խանի գանձարանից, մի թուր, որ միաժամանակ հայ թագավորի հզոր ձեռքում պաշտպանում էր մեր հայրենիքը. «Ոմոր այսուհետեւ այս թուրը հիշեցնե քեզ նրա ցավալի անկումը, թող ոգեւորե քեզ նրա վերակազմնմամ համար գործել»: Նեբրթնաթետն ավելացնում է, որ հորդորիչ խոսքերը «իր գլխից չի գալիս, բայց անարդարությունը մնաց...» (էջ 157): Դավիթը փրկվել էր բարեսիրտ նեբրթնաթետի ջանքով, խնամվել: Պատանու կյանքը հնարավոր փորձանքից զերծ պահելու համար նեբրթնաթետը խորհուրդ է տալիս գնալ Վրաստան: Նախքան հեռանալը պատանին այցելում է իր անբախտ ծնողների գերեզմանը, որբում արտասուքով նրանց կորուստը եւ լսում է մի ծայն, թե «դառնությամբ բաժանը լցված

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
Գլխավոր խմբագիր Ս.ԱՎԱԳՅԱՆ
Հասցե՝ 375Զեյթուն, Հանրապետության 26/32
Հեռախոս՝ (0285) 5 25 63 = (091) 45 90 47 = (077) 06 28 02
էլ. հասցե՝ www.syuniacyerkir.am
էլ. փոստ՝ syuniacyerkir@mail.ru
տպագրվում է 2003թ. հոկտեմբերի 1-ից
հիմնադիր եւ հրատարակիչ «Այսօրվա աշխարհ» ՍՊԸ
№ 17 236
18 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2011

ԱՆԴՐԱԴԱՐՁ Ա.ԲԱԿՈՒՆՑԻ ՀԵՏԱՁՈՏՈՒԹՅԱՆԸ

Խաչատուր Աբովյանի վախճանը

Սկիզբը՝ էջ 27

Ակսել Բակունց, գործ՝ Փանոս Թերլեմեզյանի:

վերջապես պատվիրում է ոստիկանապետին սկսել Աբովյանի գործի քննությունը: Ապրիլի 20-ին նույն գավառապետը հաղորդում է փոխարքային: Պետք է կարծել, որ 12 օրվա ապարդյուն որոնումներով գավառապետը գործը փակված է համարել եւ այս մասին հայտնել բարձրագույն իշխանության: Հավանորեն փոխարքայի դիվանեն նոր հրահանգ է գալիս գավառապետին: Մայիսի 17-ին ոստիկանապետը դիմում է դպրոցի տեսչին եւ հարցնում, արդյոք Աբովյան դրամական գեղծումներ չի արել եւ հարկադրվել փախչել: Ոստիկանապետը ինքը անձամբ ներկա էր եղել դրամարկղի եւ մատյանների քննության, գիտեր, որ ամեն ինչ իր տեղն էր, եւ ուրեմն իր դիմումը միանգամայն ավելորդ էր: Թվում է, որ բարձրագույն իշխանության առաջ արդարանալու համար գավառապետը եւ ոստիկանապետը փորձ են անում դրամական վատնում գտնել եւ տեսչի անհետացման մի հիմ գտնել, արատավոր հիմ: Ի՞նչ միջոցներ է ձեռք առնում այնուհետեւ ոստիկանապետը, ի՞նչ խուզումներ կատարում, հայտնի չէ: Հավաստի է միայն, որ այս անգամ եւս գործը փակված է համարվում հունիսի 24-ից առաջ: Նոր տեսչի փոխանցող Վեքիլովը իր հունիսի 24-ի հաղորդագրության մեջ հայտնում է Անդրկովկասի դպրոցների վերատեսչին, որ ոստիկանությունն ավարտել է Աբովյանի գործի քննությունը եւ ներկայացրել ուր հարկն է:

Հուլիսի 31-ին Երասխի ափին գտնում են մի կմախք: Ոստիկանությունը գոհ կլիներ, եթե կարելի լիներ ապացուցեմել, որ Աբովյանի կմախքն է: Սակայն, բժշկական քննությունը ցույց է տալիս, որ մատաղահաս աղջկա ոսկորներ են: Խոր Վիրապի մոտերքը գտնված կոշիկը եւս նույն նպատակին է ծառայում, բայց դարձյալ անհաջող: Վերջին երկու պարագաները իսկապես կապ չունին Աբովյանի գործի հետ, գոնե անմիջական կապ, այսինքն՝ ոստիկանության որոնումների արդյունք չեն, այլ պատահական հայտնություններ՝ քրեական բնավորությամբ:

Աբովյանի գործը երկու շրջան է ունեցել, ապրիլի 6-ից մինչեւ ապրիլի 20-ը եւ մայիսի 17-ից մինչեւ հունիսի 24-ը: Հակառակ Ա.Բակունցի հաստատության, թե ոստիկանապետը եւ գավառապետը ամեն ջանք գործ են դրել գտնելու Աբովյանին, տեսնում ենք, որ ընդհակառակը, այդ երկու պաշտոնյաները շատ անփույթ վերաբերում են ունեցել ոչ մի լուրջ քայլ չեն արել, ոչ մի հարցուփորձ, ոչ մի հետախուզություն տեղի չի ունեցել, զլացել են անգամ սուրհանդակներ ղրկել Երեւանից դեպի դուրս տանող գլխավոր ուղիները: Ընտանեկան հարցաքննությունն անգամ շատ պակասավոր է: Ընտանիքին վերագրած այն հայտարարությունը, որ վերջին երեք օրը Աբովյանն անքուն գիշերներ է ունեցել, նույնն է, ինչ որ ասել է ծառան, եւ այս տեղեկությունը եւս չի հաստատվում, եթե մարտի 31-ի թվականի ստացականը գրված է ապրիլի մեկին, ինչպես հավանական է թվում: Քննությունը չի աշխատել պարզել, թե ինը ռուբլին հանձնե՞լ է Աբովյան իր կնոջը, կամ ի՞նչ վիճակի մեջ է թողել իր գրքերը, ձեռագրերը, ինչպե՞ս է բաժանվել իր կնոջից եւ զավակներից, արդյո՞ք նկատելի էր որեւէ նշան հեռագնացության: Եթե Աբովյանի անհետանալը նախավճիռ ծրագրի ծնունդ լիներ, անկասելի է, որ այն զգայուն մարդը որեւէ կերպով չմատներ իր հոգեեղակ վիճակը վերջին հրաժեշտին:

Ա.Բակունց երկու նամակ է հրատարակել. երկուսն էլ գրված են Երեւանից Թիֆլիս Գեւորգ Ակիմյանին: Սա Աբովյանի աշակերտն էր եւ բարեկամը: Իր ուսուցչի կորստյան լուրն առնելուց հետո չի դադարել նամակներ գրել իր մերձավորներին եւ տեղեկություններ խնդրել: Նամակագիրներն անգրագետ մարդիկ են: Առաջին նամակագիրն Աբովյանի հեռանալը վերագրում է մի հանցագործության: Մի երկու տարի առաջ Աբովյան մի գերմանացու հետ պետք է բարձրանար Մասիսի գագաթը: Նրանց փորձը ձախողել է, բայց եւ այնպես թուրք էին գրել եւ հավատացրել իրենց ղրկողներին, որպես թե հաջող ելք են ունեցել: Վերջը քննությունը պարզել էր, որ նրանք իսկապես չեն կարողացել բարձրանալ: Նամակ գրողն այն գաղափարն ուզի, որ Մասիսի կատարը ելնելը մի հանձնարարություն էր, որ եթե չկատարեին, պետք է պատժվեին: Նամակագիրը կարծում է, որ գերմանացին գրել էր Աբովյանին հետեւյալ նախագծաշարումը, «մէկ էլ որ էն նեմեցն մէկ գիր էր գրել Աբովեանի վրէմ, թէ ես էս գիրսն թեզ գրեցի եւ տեղ գրաց(?) ես էսպէս(՞) մեռա դու ինքը քոյ գլխի չարէմ տես, բայց որ էն գիրքն էսպէս չի քաշեց որ նայ գորաւ»:

Ընդգծած բառերը սխալ են կարդացվում: Նեմեցը չէր կարող գրել, թե ես մեռա եւ մեռած տեղը նամակ գրել: Տեղ գրաց(?) ոչինչ չէ նշանակում, պետք է կարդալ դէզգէրայ, օտար բառ է՝ գործածական ժողովրդի բերանում եւ նշանակում է վկայաթուղթ: Գերմանացին գրում է, թե նամակս թող ծառայ քեզ վկայաթուղթ, որ ասածս ճշմարիտ է: Եվ ի՞նչ է ասում: Փոխանակ՝ ես էսպէս մեռայ, առաջարկում ենք կարդալ՝ ես եաայ մեռայ կամ ես էսայ մեռայ: Գերմանացու տողերի իմաստն այն է, թե իրեն արդեն սպանոնում է պատիժ եւ Աբովյանին զգուշացնում է, որ իր գլխի գաբը տեսնի: Հայ նամակագրի կարծիքով Աբովյան փախել է այս նամակի հետեւանքով, վերահաս պատժի երկյուղից, որովհետեւ որպես թե նամակն ստանալուց քիչ հետո է, որ անհետանում է Աբովյան:

Ամենարկույս է, որ գերմանացին հայտնի երկրաբան Հ.Աբիխն է, որ հիքաղաքի պահանջներին:

Բակունցի աչքում Աբովյանի հայտարարությունը մի ապացույց է ի նպաստ իր ենթադրության, որ նա կարող էր անցած լինել Երասխը: Սակայն, թվում է, թե Բոդենշտեդտի ուղղած տողերն այլ բան չեն, քան դառնացած սրտի վայրկենական գեղմունք, եւ սխալ կլիներ այնտեղ ծրագրային խորհուրդ տեսնել: Աբովյան այնքան միամիտ չէր եւ ոչ անտեղյակ հայ գեղջկական կյանքին, որ լրջորեն կարծեր, թե հնարավոր էր ավելի ապահով ապրուստ գտնել գյուղում:

Հայաստանի ներքին մասը, ըստ Բակունցի, Տաճկահայաստանն է: Աբովյան որպես թե հիասթափված էր ռուսներից եւ նաեւ հայ մթնոլորտից, սկսած Ներսես Աշտարակեցուց, ուստի եւ բարոյապես պատրաստ էր թողնելու Ռուսահայաստանը: Բակունց Աբովյանին վերագրում է տաճկական համակրանք՝ որպես հակադրեցություն ռուսական հուսախաբության: Այստեղ թվում է, թե մեղանչում է ճշմարտության դեմ՝ կամենալով տուրք տալ իր շրջապատում տիրող տրամադրության: Աբովյան հոգեկան տարտամ դրության մեջ էր, երբ հասավ Փետրվարյան հեղափոխության համբավը, որ կայծակի նման ճեղքեց խավարը եւ լուսավոր ուղի բաց արեց նրա առաջ: Այսպես է մտածում Ա.Բակունց: Բայց չէ պարզում, թե ի՞նչն է իսկապես քաշում Աբովյանին, թրքական լավատեսությո՞ւնը, թե՞ ֆրանսիական հեղափոխությունը: Թվում է, թե զկայսերն կայսեր տալու ցանկությամբ աշխատել է լծել խորհրդային արտաքին քաղաքականության երկու սրավար ճժույգները՝ հեղափոխություն եւ տաճկական բարեկամություն, Աբովյանի՝ հայ վերածնունդի հոր կաթքին, այն կաթքին, որ պիտի տաներ նրան դեպի խորհրդավոր անհայտությունը...

Աբովյանի ընկեր Ս.Նազարյանն այն միտքը էր հայտնել, որ Աբովյան հուսահատության տխուր ժամին թեթեւս հիքնասպան է եղել: Արեւմտահայ Ստեփան Ոսկանը հավանական է համարում, որ աքսորված լինի Սիբիր: Կամ մարդիկ, որոնց վտիտ միտքն ուրիշ պատճառ չէ գտել, քան այն, որ արատավոր սիրո զոհ է եղել: Կարելի է բնավին արհամարհել այս ենթադրությունը, ինչպես վարվել է պ. Բակունց եւ որ նրան պատիվ է բերում: Աբովյանի վերջին ժամերը այնքան տագնապալից են, որ սիրո մարմանց տեղ չէր կարող ունենալ նրա հուզումնալից հոգու մեջ: Երեւանի լոթիների վայել ենթադրությունն է, ինչպես որ վերջերս գրչի մի ստահակ անվարժ մտրուկի սանձարձակությամբ փորձեց սմբակահարել նշանավոր հայի հիշատակը՝ իր հոգեկան հիվանդությունից բաժին հանելով պաշտելի անձին:

Ա.Բակունց իրավունք ուի, երբ հետ է մղում սիրային արկածի ենթադրությունը, բայց սխալվում է՝ կարծելով, որ հայ քաղքենիության՝ դեպի խեղճ թուրքերն ունեցած ատելությունից է ծագել այդ վարկածը: Այս պատճառաբանության համեմը եւս ավելորդ է: Բնականն այն է, որ վատ ենթադրությունը բխում է վատ մարդկանցից: Ցայժմ հայտնած բոլոր ենթադրություններից այն, որ պատկանում է Ա.Բակունցին, ամենքեն ավելի է համապատասխանում Աբովյանի հոգեկան դրության: Աբովյան այն անձերիցն էր, որ աշխարհ են գալիս խորհուրդը ճակատին եւ երազելերը հոգում: Բնության այդպիսի ընտրահնձերի համար իրականությունը քանկ է այն չափով, որչափ նա հնարավոր դաշտ է ներկայացնում երազների համար: Հակառակ դեպքում, իրականությունը կորցնում է իր արժեքը, եւ երազներն են դառնում տիրական եւ քաշում դեպի այլ դաշտեր: Ա.Բակունց բանաստեղծ է եւ ըմբռնել է Աբովյանի հոգեբանությունը: Եթե կարողանար հիմնավորել իր ենթադրությունը, մի նոր ծաղիկ ձգած կլիներ անհայտ շիրիմի վրա: Տաճկահայաստան անցնելը, եթե հաստատվեր, մի նոր դափնի կբերեր Աբովյանին, որպես նախակարապետի այն գործունեության, որին հետագա սերունդները պետք է կապեին հայության քաղաքական անուրջները:

Սակայն, Ա.Բակունցի ենթադրությունը հեռու է իսկությունից, բանաստեղծական տեսություն է:

Աբովյանի կորուստը որոնելու է Երեւանում, ոչ Երեւանից դուրս: Ապրիլ ամսին, երբ անհետացավ Աբովյան, Այրարատյան դաշտը, եթե ոչ ամբողջ Հայ երկիրը, փայլում էր գարնան բոլոր պչրանքով: Գարնանացանի ժամանակ է, դաշտերը՝ լի աշխատավոր ձեռքերի հոծ բազմությամբ: Անկարելի է, որ եվրոպական զգեստով մի մարդ անցներ Երեւանից դեպի Երասխ, առանց ուշադրություն գրավելու: Հայ գյուղացին դիտող եւ զննող է: Մեզնից ամեն ոք գիտե անձնական փորձով: Երեւանից տանող ճանապարհներն անբնակ եւ խոպան վայրերով չեն անցնում: Մի՞թե հնարավոր է, որ ոչ մի աչք տեսած չլիներ օտարական ուղեւորին: Երեւանում Աբովյան երկու աշկարա թշնամի ուներ, այդ գավառապետն էր եւ ոստիկանապետը՝ երկրի զույգ գորավորները: Երկու տարի առաջ՝ 1846 թվին, հաջողել էին Աբովյանին երեքօրյա բանտարկության ենթարկել: Անզգուշությունն կլիներ սրանց օձիքը բաց թողնել եւ պետք է մշտապես կասկածի տակ պահել մինչեւ խնդրի վերջնական լուծումը: Ստեփան Ոսկանի երկյուղն այնքան էլ անհիմն չէ. հարկավ ոչ աքսորի իմաստով: Աբովյան վտանգավոր անձ չէր ճանաչված բարձրագույն իշխանության աչքում, որպեսզի խոսք լիներ Սիբիրի մասին: Սակայն, այլ է բարձրագույն իշխանությունը եւ այլ՝ գավառապետությունն: Կովկասյան գավառապետությունն ու ոստիկանությունը երբեք իր բարձրության վրա չեն եղել կանգնած: Հայ-թրքական կոտորածների ժամանակ երեւաց նրանց էությունը: Ի՞նչ էիր ներկայացնում, որպես մարդ եւ պաշտոնյա, գավառապետ Բլավացկի եւ մանավանդ ոստիկանապետ Սորոխովեց: Անշուշտ, ավելի վստահելի տիպեր չէին, քան նրանց հաջորդները՝ մեր օրերում: Աբովյան անճշան ոմն չէր. քաղաքի առաջին մտավորականը, տեղական հասարակության աչքը, եվրոպական գիտնական ուղեւորների առաջնորդը օր ցերեկով անհետանում է, եւ ոստիկանությունը չի կարողանում գտնել: Այս ապիկարությունն ավելի քան կասկածելի է: Երբ ոստիկանապետը, որ անձամբ ներկա էր եղել դրամական հաշիվների քննության եւ ոչ մի զեղծում չէր գտել, մի ամիս հետո դիմում է դպրոցի տեսչին եւ հարցնում, արդյոք դրամական վատնում չէ՞ գործել Աբովյան, սրանով արդեն մատնում է իր դերասանությունը: Իսկ դերասանությունը գործի մեջ մի վարագույր է, որ պարզում է որոնելի իսկությունը:

Այսպես, Աբովյանի դատը մնում է առայժմ բաց եւ երկու պաշտոնյաները՝ որպես միակ մեղադրյալներ, պիտի դնեն պատասխանատվության ծանրությունը՝ մինչեւ որ նոր փաստեր անպարտ արձակեն կամ դատապարտվեն:

Ա.Բակունցի աշխատությունը, ամեն պարագայնի, մի կարեւոր նպաստ է գործին շնորհով նոր նյութերի եւ նոր մեկնաբանության: Չենք կարող չկնատել, որ գիրքն ավելի պիտի շահեր, եթե լեզուն եւ ոճը խնամված լիներին, ինչ որ սպասելի էր մի վիպագրից:

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԴՈՆՑ

տպագրվում է 2003թ. հոկտեմբերի 1-ից
հիմնադիր եւ հրատարակիչ «Այսօրվա աշխարհ» ՍՊԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
Գլխավոր խմբագիր Ս.ԱՎԱԳՅԱՆ
Հասցե՝ 375Զեյթուն, Հանրապետության 26/32
Հեռախոս՝ (0285) 5 25 63 = (091) 45 90 47 = (077) 06 28 02
էլ. հասցե՝ www.syuniacyerkir.am
էլ. փոստ՝ syuniacyerkir@mail.ru

Ն.ԱԴՈՆՑԻ ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Մարզպան Վասակը պատմաբանների դատաստանի առաջ

Հայերի պատմական կյանքում V դարը հատուկ հոչակ ունի: Քրիստոնեական նորածին լուսավորության ազդեցության տակ տեղի ունեցած ժողովրդական ոգու արագ վերելքը արտահայտություն գտավ պարսկական միապետության դեմ ուղղված այսպես կոչված կրոնական շարժման մեջ:

Վասակ եւ Բաբիկ՝ ըստ Էդուարդ Իսաբեկյանի, 1967թ., Դերենիկ Դեմիրճյանի «Վարդանանք» պատմավեպի իլյուստրացիա:

Ավանդական հայացքը այդ շարժման նկատմամբ, որն անցել է այն նկարագրող պատմիչներից նոր հետազոտողներին, ինձ թվում է՝ միակողմանի է եւ Հայաստանում իրերի իրական դրությանը չհամապատասխանող: Հնարավորություն կա հիմքերորդ դարի իրադարձություններին տալ փոքր-ինչ այլ լուսաբանություն եւ պատմական այլ գնահատական:

V դարի պատերազմների պատմությունը մեզ հասել է եղիշեի եւ Ղազար Փարպեցու նկարագրությամբ: Փաստերի պատկերման մեջ նրանք ընդհանուր առմամբ համընկնում են: Հուզման պատճառը, ինչպես նրանք են կարծում, Ղազկերտ II-ի պաշտոնական հրովարտակն է եղել, որով առաջարկվում էր հայերին հրաժարվել քրիստոնեությունից եւ ընդունել մազդեզականությունը: Հոգեւորականությունն ու իշխանները երկրի մարզպան Վասակի հետ միասին հավաքվեցին Արտաշատ քաղաքում՝ խորհրդակցելու եւ պատասխան տալու համար: Նրանք վճռեցին չկատարել արքայի կամքը եւ զենքի ուժով պաշտպանել հավատն ընդդեմ բռնության: Վճիռը հաստատվեց փոխադարձ երդմամբ Սբ Ավետարանի վրա: Երբ ժամանեցին մոգերը եւ սկսեցին արծարծել սրբազան հուրը, գազազած ամբոխը նետվեց ատրուշանների վրա, ոչնչացրեց դրանք եւ սպանեց մոգերին: Շուտով հայտնվեց պարսից զորքը: Այդ ճգնաժամային պահին մարզպան Վասակը իր համախոհների հետ միասին անջատվեց հայերից եւ անցավ պարսիկների կողմը: Վարդան Սամիկոնյանի գլխավորությամբ ճակատամարտ տվեցին պարսից զորքին, որն ավարտվեց Վարդանի մահով: Պարսիկները բռնեցին մնացյալ խռովարարներին եւ դատի տվեցին: Դատավարության ժամանակ բացահայտվեց Վասակի խարդախությունը, եւ նրան դատեցին:

Այդ տեսքով են ներկայացնում մեզ պատմիչները հայերի ապստամբությունը V դարում, ընդ որում նրանք՝ որպես հոգեւոր կոչման եւ դաստիարակության տեր անձիք, ջանում են ամբողջ պատմությանը հաղորդել կրոնական բնույթ: Հուզումները Հայաստանում, իմ կարծիքով, հանգչում էին ուրիշ, առավել կենսական հիմքերի վրա: Եղիշեի երկում պահպանված որոշ դրական տվյալներ խոսում են հոգուտ այն բանի, որ խռովությունները Հայաստանում կրում էին ոչ միայն կրոնական, այլեւ ընդհանրապես սոցիալական բնույթ: Ցանկանալով մնալ զեկուցման սահմաններում՝ նա չեմ շոշափում հարցի այդ կողմը եւ քննարկում եմ սոսկ այն հիմնական գաղափարը, որն անցկացնում են պատմիչները:

Ըստ Եղիշեի եւ մասամբ ըստ Ղազարի՝ Վարդանը եւ նրա գինակիցները, ովքեր ընկել են մարտում, հավիտենական փառաց եւ հիշատակաց արժանի սուրբ նահատակներ են: Հակառակ կուսակցությունը՝ Վասակը եւ նրա համախոհները, դավաճաններ եւ նողկալի երդմնազանցներ են: Փառասիրությունից եւ անձնական շահագրգռություններից դրդված՝ նրանք տեղի են տվել պարսիկների թելադրանքին, ըստ Եղիշեի՝ նույնիսկ ընդունել են պարսից կրոնը եւ գլխավոր մեղավորները հանդիսացել երկրի բոլոր աղետների համար:

Մեսրոպի կենսագիրը՝ Կորյունը, խիստ համակրանքով է խոսում Վասակի անձի մասին(1): Կասկած է առաջանում պատմիչների դատողությունների ճշմարտացիության մասին, ուստի հարկ է առավել բանական հիմքեր փնտրել Վասակի գործողությունների:

Եթե մի կողմ նետելու լինենք վարքագրական տեսակետը, որով եղիշեն եւ Ղազարը դիտում են իրենց, եւ շարադրանքից հեռացնենք կուսակցական եւ Վասակի նկատմամբ թշնամական զգոն, ապա իրադարձությունը մեզ կներկայանա այլ լույսի ներքո:

Հայոց իշխանները, առավել եւս երկրի կառավարիչ Վասակը, օժտված էին քաղաքական խոհեմությամբ եւ քաջ գիտակցում էին, որ իրենց համար անհնարին է ուժերը չափել հզորագույն մի միապետության հետ:

Արտաշատի Ժողովում հարցը քննարկելիս նրանք հույս էին դնում արտաքին օգնության վրա: Ժողովից հետո Վասակը, որոշման համաձայն, դեսպանություն հղեց Թեոդոսիոս կայսեր մոտ, որի հետ հայերը մեծ հույսեր էին կապում: Այդ բոլորի մասին տեղեկացնում են Հայաստանի բյուզանդական մասի կառավարիչ Վասակ Սամիկոնյանին, ինչպես նաեւ Անտիոքի ստրատեգոս Անատոլիոսին, եւ խնդրում նրանց աջակցություն: Սուրհանդակներ ուղարկեցին նաեւ հայկական հարավային նահանգները՝ Ամիդիք, Անգեղտուն եւ Ծոփք, որոնք այն ժամանակ Բյուզանդիայի հովանավորության տակ գտնվող ինքնավար սատրապություններ էին: Կոչեր հղեցին Իբերիա եւ Ալվանք եւ, վերջապես, բանակցություններ են մեկնարկել մեծ մասամբ հոների թագավոր Հեռանի եւ ուրիշ լեռնականների հետ: Վասակը եւ նախարարները սպասում էին դեսպանների վերադարձին: Մինչ այդ հոգեւորականությունը եռանդով հրահրում էր ժողովրդի կրքերը: Ամբոխը տեղի տվեց նրանց բոցաշունչ քարոզների ազդեցությանը, եւ սկիզբ առավ թշնամական գործողությունները, ցույցեր եւ բախումներ: Զարհեւավանում խաժամուժը սրբազան կրակը ջուրը նետեց, բռնեց մոգերին եւ իրենց պատշաճ արեգակի ծագման ժամանակ սպանեց նրանց:

Իշխաններից ոմանք առաջարկեցին Վասակին կանգնել շարժման գլուխ եւ հայտարարել հանրնդհանուր ապստամբություն: Նա դանդաղում էր: Այդ ճգնաժամային պահին լուր ստացվեց Թեոդոսիոսի մահվան մասին: Նրա հաջորդը՝ Մարկիանոսը, կտրականապես հրաժարվեց աջակցել հայերին: Անատոլիոսի եւ Եղիշարիոս Ասորու (ավելի ճիշտ՝ Փղորենտիոս, ինչպես Ղազարի երկում է:

Հավանաբար՝ Փղորենտիոսը, նախկին praefectus praetoriis-ն արեւելքում՝ 435 եւ 438 թվականներին), Եղիշեի արտահայտությամբ այդ երկու անարդ եւ վատթար արանց խորհրդով կայսրը գերադասեց խաղաղություն պահպանել հեթանոսների հետ, քան թե օգնել քրիստոնյաներին: Մարկիանոսը անգամ հարկ համարեց նույն Փղորենտիոսի միջոցով այդ մասին տեղեկացնել Ղազկերտին: Դեսպանության անհաջող ելքը ջարդուփշուր արեց հայերի հույսերն ու ծրագրերը եւ շրջադարձային կետ հանդիսացավ շատ իշխանների համար՝ նրանց գործողություններում: Կայսեր մերժումին անմիջապես հաջորդեց Հայաստանի կայսերական մասի կառավարիչ Վասակի, ինչպես նաեւ հարավային նահանգների սատրապների մերժումը: Չգիտես՝ ինչու հոներին չհաջողվեց կատարել տված խոստումը: Հետագայում հայերը կշտամբում էին նրանց, որ իրենց խոսքը չպահեցին եւ պատերազմի ժամանակ չհայտնվեցին: Ինչ վերաբերում է Իբերիային եւ Ալվանքին, ապա այնտեղ ուղարկված պարսկական զորաջոկատը շեղեց նրանց ուշադրությունը եւ խանգարեց նրանց՝ միանալու հայերին: Ըստ երեւույթին, հոներին էլ այդ զորաջոկատն էր կասեցրել:

Հանգամանքների անհաջող դասավորման հետեւանքով հայերն ընկան անելանելի դրության մեջ: Այդպիսի պայմաններում խզել կապերը պարսիկների հետ եւ նրանց բացահայտ պատերազմ հայտարարել, նշանակում էր երկիրը տանել դեպի անխուսափելի կործանում: Վրա հասավ հուսախաբության ու տատանումների պահը: Կարծիքները տարամերժվում էին: Պարագլուխները պառակտվեցին երկու բանակի: Մի մասը կանգնած էր հանուն ապստամբության եւ խորհուրդ էր տալիս շարունակել սկսված գործը՝ հույսը դնելով սեփական ուժերի վրա: Մյուս մասը, հասկանալով նման հանդգնության ամբողջ վտանգը, խոհական համարեց կասեցնել հետագա գործողությունները եւ կոծկել գործը: Առաջին կուսակցության գլուխ կանգնած էին Մամիկոնյաններն ու Արծրունիները, իսկ երկրորդի՝ մարզպան Վասակն ու Բագրատունիները: Հաշտության չկայացավ: Տեսակետների անհամաձայնությունը շուտով վերաճեց փոխադարձ թշնամության, եւ երկու կողմերը սկսեցին գործել տարբեր ուղղություններով եւ բացահայտորեն միմյանց դեմ: Վասակը կոչ կոչի հետեւից էր ուղարկում երկրի բոլոր կողմերը եւ հուզված ժողովրդին խաղաղության եւ կարգի հրավիրում: Նա «ոչ երբեք դադարէր», ասում է Ղազար Փարպեցին, «գրել նամակաքի ամ իշխանս եւ շինականս եւ քահանայս աշխարհիս Հայոց, ցուցանէր ինձ բերեալս ի դրանէ ուխտս սուտս եւ վկայութիւնս ընդունայնս, թէ «Արքայից արքայ զքրիստոնէութիւն շնորհեաց աշխարհի, եւ զվնաս կոտորածի մոգուցն չխնդրէ. եւ գապստամբութենէն ասէ, թէ բնաւ ես յիշեմ իսկ ոչ, միայն թէ ի բաց դառնայք ի խրատուէ եւ ի բանից Վարդանայ, եւ մի կորնչիք ընդ դմա»: Այդ նույնն է հաստատում եղիշեն: Մարզպանի խոսքը ոչ բոլորովին կասեցրեց շարժումը: Ժողովուրդը եռանդով արձագանքեց Մամիկոնյանի կոչին եւ շարժվեց դեպի մարտադաշտ: Պարսից զորքի Հայաստանի սահմաններում հայտնվելուն պես Վասակը, որի վրա ավելի շատ էր պատասխանատվություն ընկած երկրի ճակատագրի համար, ներկայացավ պարսից զորավարին: Նա վերջինիս աշխատում էր տարհամոզել, որ թեեւ երկրում ապստամբություն է, սակայն դա ժողովրդական ապստամբություն չէ, ներշնչում էր մարզպանը, սոսկ մի բուռ մարդիկ, իրահրված Վարդանից,

Շարունակությունը՝ էջ 30

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՐԵՏԱԿԻՑ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՕՐԱԹԵՐԹ
Գլխավոր խմբագիր՝ Ավետիս Ավետիսյան
Հասցե՝ ք.Կիևյան, 22/3գ
Հեռախոս՝ (0285) 5 25 63 = (091) 45 90 47 = (077) 06 28 02
էլ.հասցե՝ www.syuniacyerkir.am
էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru
տպագրվում է 2003թ.
հոկտեմբերի 1-ից ■
հիմնադիր եւ հրատարակիչ
«Այսօրվա աշխարհ» ՍՊԸ ■
№ 17 236
18 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2011

Ն.ԱԴՈՆՑԻ ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Մարզպան Վասակը պատմաբանների դատաստանի առաջ

Սկիզբը՝ էջ 29

անկարգություններ են կատարում, նրանց հետ հեշտ է հաշիվ տեսնել եւ նրանց հարկավոր է հանդարտեցնել:

Վարդանը նույնպես շտապեց հանդիպելու պարսից զորքին: Արաքսից ոչ հեռու տեղի ունեցավ ճակատամարտ: Ճակատամարտի հենց սկզբում նրա գինվորությունը, որը գլխավորապես ռազմկներից էր կազմված, փախուստի դիմեց: Նա մի բուռ քաջերի հետ ընկավ մարտում: Պատմիչների խոսքերով, հայերի կողմից ընկավ 287 մարդ, իսկ մարտադաշտ էր հայտնվել, ըստ Եղիշեի, 60.000 մարդ, պարսիկների թիվը եռակի ավելի էր: Որքան էլ որ առասպելական են այդ թվերը, բայց ցույց են տալիս, որ մարտական ուժերը նշանակալի էին: Այդքան պատկառելի ուժերի բախումից ստացվեց զոհերի համեմատաբար աննշան թիվ: Ակնհայտ է, որ պարսիկները հայերին գիտում էին որպես խոռվարարների, որոնց հարկ էր ցրել եւ ոչ թե կոտորել որպես թշնամիների: Այդպիսով, շնորհիվ Վասակի միջնորդության, Հայաստանը փրկվեց սարսափելի կոտորածից:

Ճակատամարտից հետո մարզպանը վերստին դիմում է բանակյությանը նույն բովանդակությամբ կոչերով, եւ միաժամանակ աջակցում է պարսկական իշխանություններին գինաթափելու եւ հանդարտեցնելու ժողովրդին: Շուտով Վասակի տեղը նոր մարզպան նշանակեցին Ատրորմիզդին՝ հանձնարարելով շարունակելու երկրի խաղաղեցումը: Վասակը մյուս իշխանների ու հոգեւորականների հետ կանչվեց արքունիք՝ ամբողջ գործի քննության համար: Հարցաքննության ժամանակ պարզվեցին գործի բոլոր հանգամանքները: Տուժող կողմը, առաջնորդվելով Վասակի նկատմամբ տածած ատելությամբ, մատնեց բոլոր գաղտնիքները: Ներկայացվեցին գործին վերաբերող փաստաթղթեր՝ նկքված Վասակի կնիքով: Պարզվեց, որ մարզպանը ոչ միայն խառն է խռովություններին, այլեւ որ դրանք ամբողջապես նրա ձեռքի գործն են: Մերկացնելով Վասակին պետական դավաճանության մեջ՝ պարսիկները նրան զրկեցին բոլոր իրավունքներից եւ զնդան նետեցին, որտեղ եւ նա մահացավ:

Շրջանցելով մանրամասնությունները՝ նշենք պատմագրի սոսկ իրադարձությունների սխեմամբ այն հաջորդականությամբ եւ նշանակալի կապակցվածությամբ, ինչպես որ նա եմ հասկանում դրանք: Բոլոր փաստերը ես վերցրել եմ պատմիչներից, որոնց մոտ, սակայն, դրանք հայտնվում են այլ երանգավորումով: Դեպքերի հարկերի հարցին նրանք հարկ եղած ուշադրությունը չեն դարձնում եւ շարադրանքում բավարար տեղ չեն հատկացնում: Իշխանների եւ ժողովրդի միջեւ տեղի ունեցած պառակտումը կախման մեջ չի դրվում դեպքերի սպասված ելքից: Ղազար Փարպեցին կարծում է, որ Բյուզանդիա ուղարկված դեպքությունը վերադարձի ճանապարհին հասպատց Յուսիպային Հայաստանում եւ չհասավ պատերազմին: Պատմիչը ճիշտ չէ: Նախ եւ առաջ՝ նրա տեղեկությունը հակասում է՝ Եղիշեի ցուցումին, համաձայն որի հայերը իմացան դեսպանության հետեւանքների մասին, բայց եւ այնպես վճռեցին շարունակել գործը՝ ապավինելով Ստմոնու եւ իրենց: Երկրորդ՝ Թեոդոսիոսը մահացել է 450 թվականի հուլիս ամսին. Արաքսի մոտի ճակատամարտը տեղի է ունեցել հաջորդ թվականին՝ Քրիստոսի հայտնության շաբաթ օրը: Դեսպանությունը Կոստանդնուպոլիս էր ժամանել դեռեւս Թեոդոսիոսի կենդանության օրոք: Մեկ ամբողջ տարվա ընթացքում այն կարող էր հայերին հաղորդել իր առաքելության արդյունքները մասին, ինչպես որ, օրինակ, Մարկիանոսը հաջողեցրեց ժամանակին տեղեկացնել Ղազկերտին իր որոշման մասին:

Եղիշեն աղավաղում է Վասակի կոչերի իմաստը: Նա չի հավատում նրանց անկեղծությանը եւ կարծում է, որ այդ կոչերի հետեւանքով հարավային ճահճացները եւ Հայաստանի բյուզանդական մասի կառավարիչը օգնության չեկան: Նրանց մերժումի իսկական պատճառը վերը բացահայտվեց: Արդարացի չէ Եղիշեն նաեւ իր այն պնդման մեջ, որ իբր թե Վասակը եւ նրա համախոհները ուրացել են քրիստոնեությունը եւ մազդեզանություն ընդունել: Առավել անկողմնակալ Ղազարը ոչ մի տեղ որոշակի չի ասում Վասակի հավատուրացության մասին, բոլոր մակդիրները, որոնք ուղեկցում են նրա անվանը, մատնացույց են անում միայն նենգություն, ուխտադրժություն: Վասակի կուսակցությունը նա բնութագրում է որպես մի խումբ մարդկանց, «զորոց», ինչպես նա է արտահայտվում, «գիտէր զհոլովումն ի վատթար կողմն, եւ ոչ ուղղակի ի խորհուրդ ուխտապահութեան»: Փաստորեն, չի արդարանում նաեւ երկու պատմիչների համար էլ ընդհանուր principium divisionis-մասնակիցների բաժանումը տվյալ ուխտի կամ դաշինքի նկատմամբ նրանց ունեցած վերաբերմունքի տեսանկյունից: Արտաշատի ժողովին մասնակցում էր 18 իշխան: Նրանցից գործին նվիրված դուրս եկավ լոկ 8 մարդ, մնացյալ տասը հրաժարվեց մասնակցել եւ կանգնած էր Վասակի կողմը: Ակնհայտ է, դրանում չի կարելի տեսնել ուխտադրժություն, այլ սոսկ հարցի վերավճռում:

Պառավտումից հետո Վասակին հարեցին եւս հինգ իշխաններ՝ Խորխոռունի, Գաբեղյան, Ակեսաքի եւ Ուրծեցիք, իսկ Վարդանին՝ երեքը Մամդակունի. Ոուխտնյան եւ Տաշրաց իշխանները, ինչպես երեւում է պարսիկների բռնած ճախարարների ցուցակից: Մամիկոնյանների հետո շարժման ճանապարհ դրեցին Արծրունի եւ Կամսարական իշխանները: Մամիկոնյանները սերտ կապերի մեջ էին գտնվում հոգեւորականության հետ: Վարդանը Սահակ կաթողիկոսի թոռն էր: Հոգեւորականության շարքերում Արծրունիներ ունեին խիստ հայտնի ներկայացուցիչ՝ ի դեմս Աղանի, որի եղբայր Մեհրուժանը մտնում էր Թեոդորոսիոսի մոտ ուղարկված դեսպանության կազմի մեջ: Արշավիր Կամսարական իշխանը ամուսնացած էր Վարդան Մամիկոնյանի դստեր հետ: Մյուս իշխաններից խռովությունների ժամանակ հատկապես աչքի ընկավ Վահան Ամատունին. նա անձնական հաշիվներ ուներ Վասակի հետ. դրանից առաջ պարսից պաշտոնյա Դենշապուհը նրան հեռացրել էր Հայաստանի հազարապետի պաշտոնից: Հնարավոր է, որ նա իր անկման մեջ կասկածում էր Վասակին:

Խռովությունների պատմության մեջ Բագրատունյաց իշխանությունի նրանց հզորությանը վայել ուշադրություն չի դարձված: Ամենաազդեցիկ ճախարարական տունը հետին պլան է մղված այն պատճառով, որ ձեռնպահ էր մնացել հուզումներին մասնակցելուց: Բագրատունիները նույնիսկ ժողովին չէին եկել: Բայց երբ Վասակը ուխտը դրժեց, ապա Տիրոց Բագրատունին հարեց նրան եւ օժանդակում էր նրա գործողություններին: Բագրատունիների ազդեցության ոլորտում գտնվող Արարատյան ճահճի տարբեր գավառների իշխանները (Աբեղյան, Գաբեղյան, Վահեւունի, Վահանդի, Աշոցքի, Ղվինի տերերը) հետեւեցին Տիրոցի օրինակին:

Բագրատունյաց իշխանների գործելակերպը ցույց է տալիս, որ հենց սկզբից հայոց ավագանու մեջ հանդարշխություն չկար: Այն պահին, երբ տարաձայնությունը պարզորոշ երեւան եկավ, եւ իշխանները պառակտվեցին կուսակցությունների, Վասակը՝ երկրի մարզպանը, կանգնեց մեծամասնության կողմը եւ վարվեց նրա ցանկությանը համապատասխան (2):

Երկու պատմիչներն էլ՝ Եղիշեն եւ Ղազարը, վայելում էին Մամիկոնյանների հովանավորությունը եւ նրանց հանձնարարությամբ գրեցին իրենց երկերը: Զարմանալի չէ, որ նրանք իրերը դիտում են իրենց հովանավորների աչքերով: Եղիշեն ուղղակի հայտարարում է, որ նա գրել է պատմությունն այն բանի համար, որպեսզի գալիք սերունդներն անիծեն ուխտադրուժ Վասակի հիշատակը:

Նման կանխակալ նպատակով է բացատրվում այն պարագան, որ Եղիշեն պատմությունից մասամբ դուրս է նետել որոշ տարրեր, մասամբ էլ վերամշակել է դրանք:

Ըստ Ղազար Փարպեցու՝ Հազկերտն իր մոտ էր պահել Վասակի երկու որդիներին՝ իբրեւ պատանդներ: Եղիշեն լռում է այդ մասին, ընթերցողի աչքում այդ պարագան կարող էր փոքր-ինչ մեղմել ուխտադրուժ Վասակի մեղքը: Ընդհակառակը, նա հորինում է պատմություն, որ իբր թե Վասակը սպանել էր իր հորեղբայր Վաղինակին եւ նրանից հափշտակել իշխանությունը (էջ 255 եւ 259), եւ որ նա հետապնդում էր իր զարմիկներին (էջ 179): Ըստ Ղազարի՝ Վասակի փեսան՝ ոմն Վարազ-Վաղան, կնոջ՝ Վասակի դստեր հետ վատ վարվելու պատճառով ընկել էր անեղոջ աչքից:

Վարազ-Վաղանը փախել էր Պարսկաստան, ընդունել մազդեզականություն եւ փոքր դեր չէր խաղացել խռովությունների մեջ: Ղազարը նրա մասին արտահայտվում է կծու արտահայտություններով եւ նկարագրում է նրա տանջալից մահը: Եղիշեն ամենեւին չի հիշատակում նրա մասին, փեսայի անձնավորությունը նրա մոտ միաձուլվում է անեղոջ կերպարին՝ քրիստոնեությունից նրա ուրացումը եւ մահվան պատկերը, որը նկարագրում է Ղազարը, Եղիշեն փոխանցում է Վասակին: Մարզպանի գահընկեցությունից հետո նախարարական իշխանությունը տոհմում անցնում է Վարազ-Վաղանին: Նա երկար չվայելեց անեղոջ նկատմամբ իր հաղթանակը եւ մահացավ սոսկալի ձեւով:

«Այլ աստեղ իսկ նպաս ընկալեալ յարդար դատաստանեն Աստուծոյ զվճիռ հատուցման ըստ արժանի գործոց իւրոց, – ասուն է Ղազարը, – քանզի տեսիլ նշանակի եղեւ ամենայն տոհմին իւրոյ գաւառին մարդկան: Վասն զի ի խորհրդակցէն, ի դիպուածոյ մինյոյ կայր կենդանի ի բերան նորա, եւ ոչ գտաւ խոստովանութիւն ի շրթունս նորա: Ճաշակեաց զմահ հեղձամղձուկ, եւ էջ ի դժոխս անհնարին դառնութեամբ: Ոտնհար եղեն նմա ամենայն տիրելիք նորա, եւ ոչ յագեցաւ սաստիկ հարուածովք ամենայն թշնամիք նորա:

Եւ այն որ կամէրն թագաւոր լինել մեղոք Հայոց աշխարհին, ոչ երեւեցաւ տեղի գերեզմանի նորա. քանզի իբրեւ զշուն մեռաւ եւ իբրեւ զգէշ քարշեցաւ» (էջ 263-264):

Առավել ճշգարտացի Ղազարը այլ կերպ է ներկայացնում Վասակի մահը:

«Եւ նենգաւորն Վասակ կացեալ ի դրանն ամս ինչ կարի վշտագին եւ նեղութեամբ բազմամ՝ մաշէր զաւուրս իւր հառաչելով եւ յոգւոց հաւնելով... ինքնին զիւրոյն ծեծէր զդէմսն, ասելով. «Սիա ընկալ զայս ծաղսս, ասէր, զոր տո բերել քեզ ուխտանենգաւթիւն սրբոյ Աւետարանին եւ արիւն նահատակութեան սրբոյն Վարդանայ Մամիկոնէի եւ այլոցն ցանկալի հաղորդելոցն ընդ նմա, որոց ժառանգեալ զյաւիտենից կեանսն՝ ընկալաւ զանուն բարի յերկրի եւ անանց ազգաց զազգս իւրեանց: Իսկ դու, ասէ, մեղաւոր անձն իմ, կեաս խղճիւ եւ ցաւոք մնաց զսակաւաթիւ զաւուրս կենցաղոյս, եւ պատրաստեալ պահիս ի՜զտնցես՝ ճաւոր եւ անանց գեհենին»» (էջ 284-285):

Ըստ Ղազարի՝ Վասակը մինչեւ կյանքի վերջը մնաց քրիստոնյա, եւ դրա համար էլ մահվան մահճում նրա շուրթերին զրջման խոսքեր է դնում:

Եղիշեն, քանի որ նրան հավատուրաց է համարում, նրան զրկում է այդ մխիթարությունից եւս (3):

Բերված զուգահեռը եւ ուրիշ հանգամանքներ հանգեցնում են այն մտքին, որ գրական կապ գոյություն ունի Եղիշեի եւ Ղազարի միջեւ: Անուններին միեւնույն ցանկերը միեւնույն կարգով երկուսի մոտ էլ կան: Նման ապշեցուցիչ զուգադիպությունը կարելի է բացատրել մեկի կախվածությամբ մյուսից, եւ կամ նրանով, որ երկուսն էլ ունեցել են մեկ ընդհանուր աղբյուր: Կարծիքը, որ Ղազարը օգտվել է Եղիշեից, քանի որ, ըստ ավանդության, ավելի ուշ է ապրել, հիմքից զուրկ է: Գրական առումով Ղազարի երկը ավելի առաջնային է, քան Եղիշեինը: Մեզ հասած խմբագրությամբ Եղիշեի պատմությունը չի կարող բարձրանալ մինչեւ ավելի վաղ ժամանակ, քան VI դարը: Եղիշեի գիրքը կազմված է երկու մասից՝ առաջինը նվիրված է պատերազմների պատմությանը, իսկ երկրորդը պարունակում է Դեւոնդի եւ մյուս քահանաների չարչարանքների պատմությունը: Հայոց եկեղեցական օրացույցում Վարդանի եւ նրա գինակիցների եւ Դեւոնդյանց քահանայից հիշատակները նշվում են առանձին, տարբեր օրեր: Այդ օրացույցին համապատասխան գոյություն ուներ նաեւ ժողովածու, որն ամփոփում էր օրացույցում նշված բոլոր սրբոց վարքերը: Եղիշեի ներկա երկատված տեսքը, ինչպես ինձ թվում է, առաջացել է եւ պայմանավորված է օրացուցային նկատառումներով, այլ կերպ ասած, Եղիշեի երկը գրված է այդ ժողովածուի համար: Բայց քանի որ օրացույցը եւ նրան համապատասխանող ժողովածուն առաջացել են VI դարից ոչ վաղ, ապա եւ Եղիշեի պատմությունն էլ այդ տեսքով չի կարելի վերագրել ավելի վաղ ժամանակի: Այդ դեպքում երկու պատմիչների միջեւ կախվածության հարցը կարելի կլիներ լուծել հօգուտ Ղազարի: Սակայն Եղիշեի երկում կան հիքմուրույն բնույթի ամբողջ էջեր, որոնց համար Ղազարի երկը իբրեւ աղբյուր չէր կարող ծառայել:

VII դարի պատմիչ Սեբեոսը, սեղմ բառերով շարադրելով V դարի իրադարձությունները, վկայակոչում է ինչ-որ պատմություն. «այն ամենայն ի մեռն այլոց գրեցաւ, որպէս ցուցաւեմ նոյն իսկ պատմութիւնն», – նշում է նա (էջ 23): Այդ պատմության Վարդանը կոչվել է Կարմիր («Կարմիրն կոչեցեալ Վարդան»): Այդպիսի մականուն Վարդանը չունի ոչ Եղիշեի, ոչ էլ Ղազարի երկերում: Դրա համար էլ չի կարելի նույնացնել Սեբեոսի հայտնի պատմությունը նրանց երկերի հետ: Սեբեոսի բառերը «ի մեռն այլոց գրեցաւ» ցույց չեն տալիս շատ հեղինակներ, որոնց տակ կարելի կլիներ հասկանալ Եղիշեին եւ Ղազարին, այլ պարզապես նշանակում են հեղինակի անհայտ լինելը. չիմանալով կամ չցանկանալով նա չի տալիս հեղինակի անունը:

Պետք է եզրադրել, որ գոյություն է ունեցել հատուկ հին պատմություն՝ «Կարմիր Վարդանի պատմություն» վերնագրով, որը եւ ընկել է Ղազարի եւ Եղիշեի երկերի հիմքում:

Ծանոթագրություն

Գրված է 1904թ. Ս.Պետերբուրգում: Որպես զեկուցում այն նախապես ընթերցել է Ս.Պետերբուրգի հանալսարանի գիտական նստաշրջանում, ապա հրատարակել «Записки восточного отделения императорского русского археологического общества» պարբերականում (СПБ, 1904, №15, стр. 0122-0130): Երկրորդ անգամ լույս է տեսել Շ.Ղալթյանի աշխատանքներում (տես «Հայրենի տուն», 1993, 2-8 հուլիսի, №9, էջ 6-7): Հղումները Վ.Դիլոյանի հայերեն թարգմանությամբ լույս է տեսել Բեյրութի «Ազդակ» օրաթերում (1993, 18 փետրվարի, №283, էջ 4; 20 փետրվարի, №284, էջ 4, նույնը տես նաեւ «Հարաքեւտական», պաշտոնաթերթ Հայաստանի հանրապետական կուսակցության, 1966, №10, նոյեմբեր-դեկտեմբեր, էջ 6-7; №11, դեկտեմբեր, էջ 5-6): Տես նաեւ Շ.Ղալթյան՝ «Մարզպան Վասակը պատմիչների դատի առջեւ» վերտառությամբ, Շ.Ղալթյան, Սիսիական բնակավայրի պատմությունը, Երեւան, 1997, էջ 115-121, նաեւ՝ Շ.Ղալթյան, Սկսնավոր սյունեցիներ, Երեւան, 1998, էջ 17-24:

Տպագրվում է ըստ Վ.Դիլոյանի թարգմանության:

1. Ակնարկում է Վասակին ընութագրող Կորյունի հետեւյալ գնահատականը. «Յորում ժամանակի պարգեւեալ յԱստուծոյ, հասաւեր ի գլուխ իշխանութեանն Սիւնեաց քաջն Սիսականն Վասակ, այր խորհրդակաւ եւ հաճճարեղ եւ յառաջիմաց, շնորհատուր իմաստութեամբն Աստուծոյ: Բազում ինչ նպաստութիւն ցուցանէր Աւետարանագործ վարդապետութեանն, իբրեւ որդւոյ առ հայր՝ հպատակութիւն ցուցեալ, եւ ծառայեալ ըստ Ավետարանին վայելչութեան, մինչ ի վախճան գիրամնայեալն ի գործ բերէր» (տես Կորյուն, Վարք Մաշտոցի, Երեւան, 1941, էջ 62):

2. 748-750թթ. հակառաբական ապատամբության իրադարձությունները քննելիս Ադոնցը համերաշխության եզրեր է մատնանշում Աշոտ Բագրատունու եւ Վասակ Սիսականի միջեւ. «Պետք կա՞ նկատելու, որ Աշոտ Բագրատունին իր վարմունքով նվազ ուխտանենգ չէր Գրիգոր Մամիկոնյանի նկատմամբ, քան Վասակ Սյունեցի՝ Վարդան Մամիկոնյանի: Բայց տես, որ Դեւոնդ պատմիչը «որդիք յանցանաց» է անվանում Գրիգորի կուսակից ուխտապահներին….», իսկ Աշոտին՝ «պապակ պերճութեան եւ փառք ազգիս Հայոց» (տես սույն հատորը, էջ 235):

3. Վարդան-Վասակ հարաբերության եւ աղերսվող հարցերը բավականին անդրադարձ են ունեցել պատմագիտության մեջ, որոնց համառոտ վերլուծությունը տես Հ.Մուրադյան, Վարդանանց ապատամբության մասին, Երեւան, 1989: ■

տպագրվում է 2003թ.
հոկտեմբերի 1-ից ■
հիմնադիր եւ հրատարակիչ
«Այսօրվա աշխարհ» ՍՊԸ ■
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՐԵՏԱԿԻՑ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՕՐԱԹԵՐԹ
Գլխավոր խմբագիր՝ Ավետիս Ավետիսյան
Հասցե՝ ք.Կիևյան, 22/3գ
Հեռախոս՝ (0285) 5 25 63 = (091) 45 90 47 = (077) 06 28 02
էլ.հասցե՝ www.syuniacyerkir.am
էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru

ՀԱՅՐԵՆԻ ԵԶԵՐՔ

Սիսիանը հիշում է իր նշանավոր զավակին

ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԱԶԳԻ ՀՈԳԵՎՈՐ ՆԿԱՐԱԳՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՐԵՎՈՐ Է, ԹԵ ՈՐՔԱՆ ԵՎ ԻՆՉՊԵՍ Է ՀԻՇՈՒՄ ԻՐ ՄԵԾԵՐԻՆ:

Սկիզբը՝ էջ 3

եկեղեցու բակում:

Նույն հոդվածում Ադոնցը շատ սիրելի պատմություն է անում նաեւ իր հորեղբոր՝ խոջա Գրիգորի որդի Ստեփանի մասին՝ առանձնակի շեշտելով նրա շեթ լինելը: Սա, անշուշտ, բռնակոթցիների շատ սիրելի «շեթ» բառն է, որով մեր օրերի Բռնակոթում էլ անվանում են խեցթավուն-քաջերին: Ադոնցը գրում է. «….շեթ նշանակում է այն, ինչ որ Սասնա ծուռը. գիժ, բայց կտրիճ գիժ: Իր նախնին՝ Ադին, եւս արժանացել էր այդ կոչմանն. նա էլ էր շեթ: Ադոնցը այդ շեթությունը Ադին չէր ժառանգել Տէր-Ավետիք քահանայից, եթե իմքը նրա գավակն է: Մի քահանա, որ, խաչը թողած, սուր է առնում ձեռքը, անպայման շեթ է»:

Մենք այս բառերում անսահման սեր ու քնքշանք ենք տեսնում դեպի այն ծննդավայրը, դեպի այն Բռնակոթը, որը միջ այսօր էլ այդ զգացմունքը փոխադարձում է Ադոնցին՝ սիրով ու երախտագիտությամբ:

Ն.Ադոնցը Սիսիանում ներկայանում եւ հիշվում է նաեւ իր հզոր տոհմով, այդ տոհմի՝ հայրենիքին մատուցած անգնահատելի ծառայություններով՝ շնորհիվ քաղաքական-պետական գործիչների, գիտնականների: Բարձր գնահատանքի, սիրո ու քնքշանքի բազում խոսքեր ենք ուզում ասել Ադոնցի քրոջ՝ Շուշան Ադոնց-Սարգսյանի մասին: Նա մայրե է սիսիանցի գնդապետ եղբայրներ, դիվիզիայի հրամանատարներ, Մեծ հայրենական մասնակիցներ Աշոտ եւ Ամրոսիկ Սարգսյանների: Այդ Ադոնց ընտանիքի ուժե էր, որ արգելված տարիներին երիտասարդ մորը չի խանգարել որդիների համար կարալ Բաֆֆի, Սասունցի Դավիթ, դաստիարակել նրանց ազգապաշտ-նվիրյալների ոգով: Սիսիանի Աշոտավան գյուղը հենց Շուշան Ադոնցի դաստիարակած որդու՝ Աշոտ Սարգսյանի՝ խՍՀՄ մարշալ Ցոփի-Բաղրամյանի սիրելի մարտական ընկերոջ անունով է կոչվում:

2010թ. Սիսիանում նշվեց Ավ.Իսահակյանի 135-ամյակը: Պարզվեց, որ նրա եւ Ադոնցի միջեւ մեծ կապ է եղել, որը 1920-ական թվականներին, երբ նրանք ապրում էին Փարիզում, ավելի էր սերտացել: Երկու մեծ հայերը իրար օգնել են ամեն առումով, իսկ երբ Ցոփի. Թումանյանի՝ «Արի, Ավո՛ ջան, արի» կանչին անսալով՝ Իսահակյանը եկել է հայրենիք, նրա ճանապարհությունը շարունակվել է Ադոնցի հետ: Իսահակյանը հրաշալի գիտեր Ադոնցի՝ Սիսիանում ապրող քրոջ՝ Շուշանի մասին: Եվ 1947թ. օգոստոսին, երբ մեծ պոետը գալիս է Սիսիան, առաջինը բացում է Շուշան մայրիկի դուռը՝ որպես ընդգծված պիրտ եւ հարգանքի տուրք մեծ հայագետի, մեծ մարդու հիշատակին:

Նիկողայոս Ադոնցը, սակայն, սիսիանցիների հետ է ոչ միայն անցյալի հուշ-հուշարձանների: Սիսիանցին լավ է գիտակցում այն պատվախնդրությունը, որ իր վրա դրել են հանճարեղ նախնիները՝ սկսած Ստեփանոս Օրբելյանից մինչեւ Նիկողայոս Ադոնց: 1988-ին, երբ սկսեց ճեղքվել խորհրդային տարիների կարծրատիպը, Սիսիանում հիմնադրվեց պատմության թանգարան: 1990թ. թանգարանի ձախ կողմում ճարտարապետ Ռոմեո Զուլֆհայանի նախագծով կառուցվեց հուշահամալիր, որտեղ տեղադրվեց Ն.Ադոնցի արձանը: Արձանի հեղինակն է հայ քանդակի նշանավոր վարպետ, ծագումով սիսիանցի Արտաշես Հովսեփյանը: Մեծ գիտնականը պատկերված է կրոնավորի սքեմով, գիրքը ձեռքին բարձր բռնած, հայացքը՝ դեպի հեռուն: Հուշարձանի բացման արարողության ժամանակ, Սիսիանի քաղխորհրդի գործկոմի որոշմամբ, նորաստեղծ թանգարանը եւս կոչվեց Ն.Ադոնցի անունով: Այն, որ Սիսիանի թանգարանը ոչ թե Ն.Ադոնցի նվիրված թանգարան է, այլ նրա անունը կրող թանգարան, փոքր-ինչ չի նվազեցնում Ադոնցին եւ նրա ծննդավայրը, նրա հսկայածավալ գիտական ժառանգությունը հավուր պատշաճի ներկայացնելու մշակութային այդ օջախի պատասխանատվությունը:

Ադոնցի ֆոնդ ստեղծելը թանգարանի, նաեւ բոլորիս առաջնային խնդիրներից է: Ադոնցի հզորությունը, սակայն, նրա գիտական ժառանգության մեջ է պարում: Այդ ժառանգությունն է, որ մենք սիսիանցիներին, նրա երիտասարդությանը, հատկապես դպրոցականներին պետք է փոխանցենք: Ի պատիվ մեր քաղաքի մտավոր ուժի, մանկավարժների, թանգարանի՝ պիտի ասենք, որ տեղում գտել են դրա լուծման բանալին. դա «Ադոնցյան օրեր» միջոցառումն է, որ արդեն 12 տարի է՝ հուսվար-մարտ ամիսներին կազմակերպվում է Սիսիան քաղաքում, տարածաշրջանի գյուղական բնակավայրերում: Անցկացվում է շարադրությունների մրցույթ, կարդում են զեկուցումներ, ներկայացնում Ադոնցի գործերը, որոնք եւ անհրաժեշտ են, եւ մատչելի, հատկապես դպրոցական տարիքի համար: Սիսիանում սակավ չեն այն երիտասարդները, պատանիներն ու դպրոցականները, ովքեր արդեն իսկ որդեգրել են Ադոնցյան մոտեցումը դեպի Վասակ Սյունի մարզպանը, կարող են ճիշտ մեկնել Դավիթ Բեկին, ծանոթ են հայոց Տիգրան Մեծ արքային ներկայացնելու Ադոնցյան տարբերակին, ծանոթ են հայ կրոնի, ավատատիրական կարգերի, բանակի ու դաստիարակության նկատմամբ Ադոնցի ունեցած մոտեցումներին: Ադոնցն ամեն քայլի հուշում է՝ ազնիվ գտնվել գիտության մեջ, հասարակության մեջ, ճիշտ կողմնորոշվել եւ ճիշտ օգտվել պահի, իրավիճակի ստեղծած հնարավորություններից: Նա պատգամում է. **«Ոչ ոք չգիտե՝ անցքերի բավալցոր անիվն ուր է տանում: Պատրաստ եւ զգաստ լինենք, որպեսզի չկորչենք անփառունակ, կռվողների ոտքի տակ կոխան»:** Մենք փորձում ենք կռել այդ զգոնությունն ու զգաստությունը: Սիսիանի քաղաքապետարանը, անհատ անձինք հնարավորության սահմաններում օգնում եւ աջակցում են Ադոնցյան օրերի անցկացմանը, խրախուսում, պարգեւատրում լավագույն մասնակիցներին: Ուզում ենք հանդգնված լինել, որ տարիների հետ մենք կքաղենք մեր աշխատանքի պտուղները, որ Սյունյաց պտղաքեր արգանդը մեզ մի նոր Ադոնց կպարգեւի:

Ադոնցը մեծ էր ամեն ինչում. նա մեծ հայրենասեր էր, մեծ հայ, հայասեր, մեծ ընկեր ու ճվիրյալ: Իր հագեցած կյանքում նա շատ քիչ տեղ ուներ անձնական համար: Ուշ ամուսնանալով՝ նա եւեւ շուտ կորցրեց իր կնոջը՝ մնալով անգավակ: Եվրոպական Բրյուսելում, որտեղ նա ապրել է իր կյանքի վերջին տասնմեկ տարին, կնքել է իր մահկանացուն եւ թաղվել 1942թ. հուլվարին, ոչ ոք չգիտի նրա գերեզմանի տեղը: Բայց կա աշխարհում այն գյուղը, որ ծնունդ է տվել մեծ հային, կա նրա հայրական տունը, կա Սիսիան քաղաքը, որտեղ կանգնած է նրա արձանը, եւ որի իովանու տակ գործում է նույնանուն թանգարանը: Ապրում է Ադոնցին սիրող, նրանով հպարտացող սիսիանցիներ: Այս ամենով էլ Ադոնցը ձեր օրերում մնում է ոչ միայն մեր ժամանակակիցը, այլեւ մի մարդ, ով շատ հեռուն է գնացել եւ ով, իրավամբ, մեզ տանում է իր հետեւից: ■

ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐ

Սուրբ Էջմիածնի Գեւորգյան Ճեմարան. Ն.ԱԴՈՆՑԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԸ

Մանուկ Աբեղյան
1865-1944թթ., հայագետ, հասարակական գործիչ, գրականագետ, լեզվաբան, բառարանագիր, բանահավաք, բանասիրական գիտությունների դոկտոր, ՀԽՍՀ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս:

Ավետիք Իսահակյան
1875-1957թթ., բանաստեղծ, արձակագիր, հասարակական գործիչ, ՀԽՍՀ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս:

Գեւորգ Զ Չորեքչյան
1868-1954թթ., Ամենայն հայոց 129-րդ կաթողիկոս:

Ավետիս Ահարոնյան
1866-1954թթ., քաղաքագետ, գրող, ՀՅԴ ղեկավար գործիչ, 1917թ. ընտրվել է Հայոց ազգային խորհրդի նախագահ, 1919-ին՝ ՀՅ խորհրդարանի նախագահ, 1920թ. Հայաստանի անուներից ստորագրել է Սեւրի հաշտության պայմանագիրը:

Ներսես արքեպիսկոպոս Մելիք-Թանգյան
1866-1948թթ., հայ եկեղեցական գործիչ, Արարատյան թեմական առաջնորդ (1912-1948թթ.):

Կարապետ եպիսկոպոս Տեր-Մկրտչյան
1866-1915թթ., փաղանդավոր գիտնական, եկեղեցական-հասարակական գործիչ:

Գարեգին Ա Հովսեփյան
1867-1952թթ., Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս (1943-1952թթ.), նշանավոր հայագետ, արվեստաբան, Լայպցիգի համալսարանի փիլիսոփայության դոկտոր, մասնակցել է Սարդարապատի հերոսամարտին:

Սողոմոն Սողոմոնյան (Կոմիտաս)
1869-1935թթ., կոմպոզիտոր, երաժիշտ-բանահավաք, երաժշտագետ, երգիչ, խմբավար եւ մանկավարժ, հայկական ազգային կոմպոզիտորական դպրոցի հիմնադիր:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ ՕՏԱՐԱԾՈՒՄ.
ՀԱՍԷ՝ ք.ԿՊՐԻՆ, ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑ
ՀԵՌԱԽՕՍ՝ (0285) 5 25 63 = (091) 45 90 47 = (077) 06 28 02
էլ.հասցէ՝ www.syuniacyerkir.am
էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru

տպագրվում է 2003թ.
հոկտեմբերի 1-ից ■
հիմնադիր եւ հրատարակիչ
«Սյունեյաց աշխարհ» ՍՊԸ ■

№ 17 236
18 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2011

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑ

Մեծ եղեռնի փարելիցին

Կան աղետներ, որոնք չեն մոռացվում եւ որքան հնանում, այնքան դառնանում են: Հրեշավոր ոճիրը, որին ճարակ եղանք ազգովի, անօրինակ է մարդկության տարեգրության մեջ եւ տեսակով, եւ ծավալով:

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԴՈՆՑ

Ապրել դարեր լավագույն օրերի հույսով, ապրել սոսկալի զոհողությամբ՝ հլության շղթաները կրծելով, բախտի ոտերի տակ քարշ գալով, ելնել ժամանակի խորխորատներից, գալ հասնել քսաներորդ դարը եւ նրա գրկում, նրա լուսի տակ, մորթվել, բնաջինջ լինել, ի տես համայն աշխարհի-մի երեւույթ, որի հետ չի կարելի հաշտվել, առանց ատելու մարդկությունն իր բոլոր քաղաքակրթությամբ:

Մեր անմոռուչ նահատակների ոսկորները մնացին անապատներում՝ անթաղ, երկնքից լույս չիջավ նրանց վրա, երկնքի սուրը, արդարության սուրը չշողշողաց սուրբ արյան հատուցման պահանջով...

Սեւ գիշերը փռվեց մեր իղձերի եւ հայրենիքի վրա, անլույս, անհույս գիշեր: Երազների բոցավառ խարույկից մնաց միայն մի աղոտ ծրագ(1), որ առկայծում է Արագածի ստորոտին, ավա՜ղ, այնքա՜ն թույլ, որ նրա շողերը հազիվ են հասնում մինչեւ Արաքսի ջրերը եւ անգոր են լուսավորելու Մասիսի մռայլ ճակատը, անուժ ճեղքելու այն կողմը տիրող որբ եւ ամայի մթությունը...

Ճիշտ այն պահին, երբ ակնիվեր սպասում էինք թափած արյան գնին, մեր մարտիրոսության եւ մարդկային իրավունքների հաղթանակին, շրջվելիկ բախտը մի անգամ եւս երեսը շրջեց մեզմից:

Եվ ահա հալածվաս թափառում ենք անհայտության մեջ, անտուն, անտեր: Իսկ այնտեղ մեր տունն ու տեղը, քրտնաթոր աշխատանքը՝ «լքյալ գույքերը»(2) լափում են գերփիչները (=կողոպտիչները - Պ.Հ.): Այնտեղ մեր սրբազան հայրենիքը, շինարարության վկայարանը(3), ընկած է որպես դիակ գիշակերների առաջ ավեր եւ խոպան: Նորեմ հին վերքերը, նորեմ հին մրմունջը՝

Եւ թուխ ալիք մշտափրփուր
Վանայ ծովուն ծիածաւալ
Հառաչանօք լի են տխուր...(4)

Մոռացությունը չէ, որ հանգիստ պիտի բերե մեր բեկված եւ կողոպտված հոգուն:

Ինչ էլ լինեն մեզ վիճակված դառնությանց բազմիցս բարդ պատճառները, անուրանալի է գործուն սերնդի պատասխանատվությունը:

Առաջին անգամ չէ, որ արյունը ողողում է մեր երկիրը, ոչ հին, այլ նոր ժամանակները: Անցյալ դարի բոլոր պատերազմների ընթացքին(5), որոնց ռազմադաշտը մեր հայրենիքն է եղել, մեզ վիճակվել են նույն սարսափները՝ տեղահանություն, կոտորած եւ փախուստ դեպի հարեւան երկրներ:

Երբ դժբախտության ալիքը բախում է մեր ճակատին, մի վայրկյան կարծես սթափվում ենք անցած եւ դեռ հնարավոր արհավիրքների գիտակցությամբ:

Բայց շուտով ամեն ինչ մոռացվում է, եւ մնում ենք նորեմ մերկապարանոց գալց օրերի հորձանուտ խաղերի հանդեպ:

Պատճառն այն է, որ ավանդություն չենք պիրում, հայրերի խրատը հարգ չունի որդիների աչքում: Ամեն սերունդ իջնում է գործունեության ասպարեզ առաքելական հավակնությամբ, վստահ, որ մութ երկնակամարում նոր աստղեր է գտնելու եւ անանց հորիզոններում նոր դռներ բանալու:

Սպրած սարսուռները մնում են անկշիռ, եւ հին սայթաքումները կրկնվում են ավելի ծանր հետեւանքներով: Որով հայ կյանքը նմնում է սահանուտ գետի՝ անակնկալ ջրվեժներով: Եվ ահա այսօր մեր դրությունը՝ մտամոլոր կանգնած ենք սեփական դիակների առաջ, «տեսանենք կենդանեաւ զդիակունս անձանց մերոց», ինչպես ասում է հեռավոր նախնիքներից մինը(6):

Ահավոր թշվառության առջեւ կծկված է ինքը՝ հայ միտքը՝ անթեւ, անճարակ: Ո՞լր է մեր լուսաստղը, ո՞լր միահամուռ գործունեության ուղեցույցը:

Կան ինքնակոծներ, որոնց կարծիքով հայի ճակատագրական հատկանիշն է սայթաքել մշտապես քաղաքական ուղիների վրա:

Կան պիղատոսներ, որ հայտարարում են, թե իրենք անպատ են բոլոր փլուզումների հանդիմանմ եւ գոհ են, որ մեղավորներն ուրիշներն են: Այսօրինակ վերաբերումով չենք կարող ամոքել մեր ցավը: Քննադատությունը հասարակական առաջադիմության հիմնն է եւ մեր սուրբ իրավունքը, բայց ոչ թե դատական վճիռներ արձակելու համար, այլ որպեսզի ըմբռնենք անցյալի խոտորումներն իրենց ծագումով եւ նորապես դարմանել աշխատենք:

Սնում են, որ պատճառը բոլոր այն չարիքների, որ անցան-դարձան մեր գլխից, որեւէ մասնավոր երեւույթ չէ, այլ մի քաղաքական գիծ, որ հիմնովին սխալ է եւ կորստաբեր: Արեւելքի լինելով՝ փարում ենք եվրոպայինի, փոխանակ խորհելու բարի հարեւանության, խաղաղ կենսագրության մասին մեր պատմական եւ աշխարհագրական միջավայրում, այջ ենք ածում հեռուները եւ օրորվում խաբուսիկ հույսերով: Սնում են՝ մեզ օգնելու օտարի ցանկությունը շատ կասկածելի է: Նա իր քաղաքական եւ տնտեսական շահերն ունի, որոնց համար մեր չարտանջիարքը լոկ բարոյական վարձադույր է: Խրոխտ սպառնալիքից հետո, ճայթած իբրեւ թե մեր լուծը դյուրացնելու նպատակով, ահա երկու կողմերը ողջագուրվում են հաշտության ժպիտով, հետ են կանգնում եւ մեզ ձգում մեր չար բախտին: Լավ կլիներ, եզրակացնում են, որ հանդարտ կենցաղիք, համակերպման ճանապարհ բռնեինք, եւ ոչ թե սիր առնուկով եւ գանգատներով դրսի աշխարհը թնդացնելիք եւ ակամա պատճառ դառնայիք զորացնելու այն ճիրանները, որ սեղմում են մեզ անգաթաբար:

Այս մի հայացք է, որ սակայն որոշ չափի մեջ է պահելու, որպեսզի չկորցնի իր արժեքը: Հասարակական խնդիրներում հայացքները նման են թելի, որ շատ ձգելու է:

Նախ կնայենք անցորդակի, որ առավելապես մեր դրացիներն են, որ սիրում են կրկնել այս միտքը՝ անկոտեպ համարելով հայերիս բոլորքը եվրոպա՝ ընդդեմ տաճկական բռնության:

Սակայն, զարմանալի է, որ նույն վիզի եւ թուրք հարեւանները խոհեմության դասերը ավելորդ համարեցին իրենց մաքար Ռուսիայի նկատմամբ եւ առաջին առիթով չվարանեցին Եվրոպա վազելու եւ իրենց հարցը օտար անիվների կապելու:

Թուրքիայի եւս վայել չէ նախատելու հայի արեւմտասիրությունը՝ ինքնն իր գոյությամբ պարտական լինելով Եվրոպայի զորավորներին: Կարլովիցի դաշնագրից հետո (7) ահա երկու դար է, որ Օսմանյան պետությունը զլորվում է անկմամ սանդուղով եւ եթե ցայժմ չէ ջախջախվել եւ կործանվել, միմիայն շնորհիվ եվրոպական հովանավորը բազկի: Ներելի չէ «հիվանդ մարդ»-ուն արգելել ուրիշներին դիմել այն բժիշկներին, որոնցից օգտվում է ինքը:

Պակաս չեն նաեւ մեզանում այսպես մտածողները: Սրանց թվին ավելացան վերջերս հայ համայնականները (բոլշեւիկները), որ խստիվ քարկոծում են այն գործիչներին եւ դատափետում, որոնք դիմում են եվրոպական պետություններին: Հարկավ սրանց տեսակետը իր երանգն ունի, որով խորշելի են համարվում ոչ Եվրոպան ընդհանրապես, այլ իշխող դասակարգը եւ օգնություն են սպասում Եվրոպայի համայնական աշխատավորությունից:

Այս էլ մի ուրիշ ինքնախաբեություն է, որ տանում է դեպի հուսախաբություն: Հայությունը հիմք չունի վարդեր սպասելու եւ այս կողմից, մանավանդ այն օրից, երբ տեսավ, որ կարմիր Ռուսիան ուրիշ արժանավոր դաշնակից չգտավ, քան կարմիր սուլթանի գահի ժառանգները, որ ոտից գլուխ շաղախված են հայ ժողովրդյանց արյունով եւ շատ հեռու են համայնավար մտայնությունից(8):

Ամենեքեան, սակայն, բուն խնդրին, հայի արեւմտասիրության առարկությունները կարող են երբեմն արդար լինել, եթե անգամ արտահայտված լինեն անարդար բերաններով:

Հայության արեւմտահայաց հակումները քաղաքակրթական երեւույթ են ամենից առաջ, եւ նրանից ծնած է քաղաքականը: Նա հայ պատմության խթան է, որի դժվար է աքացել:

Հայաստանը երեսը դարձրեց դեպի արեւմուտք այն օրից, երբ քրիստոնեացավ: Պարսիկ ազգայնությունը նոր թափ առավ Սասանյան հարստության հաժարձումով, նա տապալեց պարթեւ տիրապետությունը(9), կենդանացրեց եւ պետական կրոն հռչակեց զրվանականությունը եւ նրա շնչով սրբագործեց մեծ աշխարհակալ ձգտումներ(10):

Չուլմամ եւ կորստյան վտանգը կախված էր Հայաստանի վրա: Ուրիշ հնար չկար փրկության, քան ապավիներ քրիստոնեության: Ահա մի մեծ խոնամտ, որ գալիս էր խզելու հայերի դարավոր կապը արեւելյան ցեղակիցների հետ եւ թեքելու նրանց դեպի Արեւմուտք: Սիրո խնդիր չէր բնավ այս թեքումը, այլ սեփական գոյությունը պահպանելու հրամայական պահանջ: Այս է հայոց դարձի պատմական խորհուրդը, այստեղ է երկու ամոլների՝ Տրդատի եւ Գրիգորի պատմական լուսապակը:

Կրոնը թեքեց եւ մեր քաղաքականության ալաքը: Եթե գաղափարները իրոք դեր ունեն պատմության մեջ, ամենագործ դերը զիջանելու է կրոնական ըմբռնումներին գոնե պատմության հին շրջաններում: Եկեղեցու նշանակությունը գուցե քիչ չափազանցված է նախարարական շրջանի նկատմամբ, բայց արեւմտասիրության խնդրում նրա կշիռը անուրանալի է:

Դեռ կենդանի էին վերջին Արշակունիները, երբ երկրի առաջնորդ ուժերը, զգալով մոտալուտ վտանգը, մտահոգ էին ապագա քաղաքական վարվելակերպի մասին, խորհուրդ արին եւ եկան այն եզրակացության, թե «արժան է գէթ զմի ոք թիկունս առնել եւ խորհեցան խորհուրդ եւ կամեցան թիկունս առնել զարքայն յունաց» (11):

Այնուհետեւ հաճախ տեղի ունեցան նման խորհուրդներ. ընդհանուր տրամադրությունը քրիստոնյա Արեւմուտքի կողմն էր:

Մի բան կարող էր փոխել հայ քաղաքական կողմնացույցը՝ քրիստոնեության տարածումը Պարսկաստանում: Արդարեւ, Զրադաշտի(12) ուսմունքն ի վիճակի չէր մրցելու Ավետարանի հետ եւ կամաց-կամաց տեղի էր տալիս նրա ծայնին: Տիզբոնի եկեղեցին արդեն գրավել էր գրեթե բոլոր կարեւոր կենտրոնները իրականան Արեւելքում(13): Խոսրովմեռի արքունիքն(14) անգամ ազատ չէր մնացել նրա ազդեցությունից: Քրիստոնեությունը հավանորեն պիտի հաղթաճակեր, եթե մի նոր հանգամանք՝ արաբական արշավանքը(15), չհեղափոխեր՝ տակն ու վրա անելով ամբողջ Արեւելքը:

Իսլամը շեղեց պատմության ղեկը: Նա հնձեց Իրանում այն սերմերը, որ ցանել էր քրիստոնեությունը եւ մի զորեղ խորոց («անշրպետ - Պ.Հ) եղավ արեւելքի եւ արեւմուտքի մեջ: Հայերը իրենց թույլ դրացիներով մնացին կղզիացած մահմեդականության մեջ՝ երեսները հառած դարձյալ արեւմուտքին:

Արեւմուտքն էր տվել հայերիվ գիր եւ գրականություն, ստեղծել հոծ մտավորություն՝ ազգային հնքնագիտակցությամբ: Նրա համակրությունը փարում էր քրիստոնեական լուսավորության կենտրոնին, հրաշափառ Բյուզանդդիոնին: Եկեղեցականությունն էր այս հոսանքի ոգին՝ իր երբեմնական տատանումներով հանդերձ:

Հայ նախարարական դասը, կապված Արեւելքին արտոնություններով, սովորություններով եւ ընդհանրապես հասարակական հիմերով, տարված չէր Արեւմուտքով եւ մի տեսակ հակակշիռ էր եկեղեցական տրամադրության: Սակայն նոր տիրապետները, ոչնչացնելով հայ ազատանին, թուլացրին նրա կազմը եւ ազդեցությունը՝ նպաստելով այդ կերպ հակաարաբական հոսանքի զորացմանն: Եկեղեցական մտավորությունը որքան եւ խրտչեր (=խրտներ - Պ.Հ.) Արեւմուտքի դավաճաքանական բռնություններից, չէր կարող վարաձել քրիստոնյա եւ մուսուլման հովանավորության ընտրության մեջ: «Խաղդախ» Բյուզանդիոնը գերադասելի էր «անօրեն» արաբից:

Երբ Արեւմտյան կայսրությունն ընկավ(16) եւ Ս. Սոփիայի խաչը տեղի տվեց մահիկին, հայի համար Արեւմուտքից հեռացավ Վոսփորից Հռեներսի ափերը, որպեսզի վերջը այնտեղից անցնե Նեւայի սառն ջրերը (17):

Այսպես, որքան մոտեցավ մեզ մոնղոլ-թաթար-թյուրք թափառաշրջիկների Արեւելքը, այքան հեռացավ մեզնից Արեւմուտքը՝ քարշելով իր հետ մեր բաղձանքն ու ակնկալությունները:

Ծանր մթնոլորտ: Հայ երկիրն իր զավակների համար բանտ եւ գերեզման: Վերերիչ հրոսակների անվերջ կարավաններ: «Սմբակք երիվարաց մաշեցին զբլուրս եւ զլերինս մեր»(18), – աղաղակում է հայի հուսահատ ձայնը հեռավոր դարերի խորքից: «Յանտառաբոյծ խոզից եւ յանցաւորաց ճանապարհի կոխեցաք իբրեւ զկաւ գոտեաց եւ ի գլուխս մեր կուտեցան քարինք», – հառաչում է մյուսը՝ տասներորդ դարից, ալեւոր Հովհաննես կաթողիկոսը եւ պատմագիրը (19), առանց երազելու, որ պիտի գան ժամանակներ, երբ իր զավակները՝ իսկական խոզերի եւ ավազակների ճիրաններում, երջանկության դար պիտի համարեն նրա կրած տառապանքի օրերը:

Արեւելքն այն օրեն, երբ մուսուլմանացավ, կորցրեց իր պատմական եւ քաղաքական հրապույրն ու հռչակը: Հային վիճակվեց ստրկության շղթան՝ խաչն ուսին եւ տրտունջը բերանին: Ելնել խավարած արգելանոցից լույս աշխարհ, թոթափել խեղդող անուրը՝ (= լուծ - Պ.Հ.՝ (20) մարդու բնական ձգտումն է եւ առաջադիմության խթանը: Քաղաքական ապապահեղում եւս տենչանքը, երբ հագուրդ չի ստանում, ավելի սաստկանում է: Արդար պահանջը, բախելով ծախողանքի, չի թուլանում բնավ, այլ լարվում է եւ ստանում կրոնական հավատի հաստատություն: Բաղձանքն ու երազները՝ կոթնած արդարության, դառնում են անդրդվելի հավատ:

Հայ դատը հայի համար հավատ է, անընկնելի հավատ: Ոդքի եւ հեծեծանքի մեջ եւ նրանց հետ պահվել է եւ մեզ ավանդվել մի անշեջ հույս, որ վերջապես արդարության դռները պիտի բացվեն եւ հայ հայրենիքի վրա:

Հույսը վատաբախտի համար կրկնակի ուժ է, մեզ համար այն հսկայական կաթեղը, որ տեսնում էի երեսուն հարյուրամյա դեմ ընդհանրապես, բայց ոչ նկատառյալ հիվանդի համար: Գաղափարը նման է բույսի եւ ծաղկում է իր հողում: Եթե ազատագրության ծառը նեղածո չլիներ, այլ տեղական տունկ՝ տեղի սերմերից ծլած, Հայաստանը սպանգանց չէր դառնա այնպիսի տկարության:

Պատերազմի ժամանակ բացվեցին մեր երկրի դռները եւ տեսան, ով չէր տեսել, հողն ու ժողովուրդը: Հուսահատական տեսարան էր: Ծանր էր հաշտվել իրականության հետ, ծանր էր մտածել, որ սերունդների երազը փարած է եղել այս ուրվականներին, որ շատ հեռու էին քաղաքական ատաղձ լինելու ուսկայությունից: Ահա՝ խեղճ քահանան, վարժապետը, գյուղի ռեսը եւ հանայն ժողովուրդը ցնցոտիների մեջ մարմնով եւ մտքով: Ոչ, այս փշաստանում վարդեր չէին կարող բուսնել:

Քաղաքական շարժումը բնական ծագումով ենթադրում է նյութական եւ հոգեկան հայտնի մակարդակ: Անտարակույս, շարժման ծրագրողները ունեին պահանջած մակարդակը, բայց նույնչափ անտարակույս է, որ այն ժողովուրդը եւ հողը, որի համար ծրագրված էր, չուներ նույն պատրաստականությունը:

Այսպիսի պայմաններում մարտական բողոքը կարող էր տալ լավագույն դեպքում առանձնակի եւ դիպվածական պայթյուններ, բայց ոչ երբեք ընդհանուր ժայթքում, գիտակցական եւ կազմ խոյանք:

Կան գլուխներ, որ մտածում են, եւ լեգիոներ, որ ասում են, թե հայ ժողովուրդը ընտրեց ըմբոստ ուղին հեռց այն պատճառով, որ չէր կարող նվիրվել խաղաղ աշխատանքի: Արկածավոր միտք է: Նա, ով չի կարող որեւէ պատճառով մի հանստ խրծիթ չիմել, հասկանալի է, որ նրա ուժերից վեր է ձեռնարկել քաղաքական մեծ շեշթի կառուցումը:

Վաղաժամ էին եւ հեշակների ողողանքը, եւ Դրոշակների ծածանումը(24): Չեմ կարծում, որ այս հասարակ ջնարտությունը հայտնի չլիներ նրանց դեկավարներին: Բայց եւ այնպես ուխտեմ արված էր: Ինչո՞ւ: Որովհետեւ ուղեցույց էին ընտրել հեռավոր փարոսը, որի լույսը այնքան թովիչ էր, օր առաջ ուզում էին փարել նրան՝ հանդգված, որ դժվար չէր փարել... բավական էր աղաղակել դարավոր բանտերից, շարժել անարգ շղթաները, եւ օգնության կիսանե մեզ ժամանակակից մարդկությունը... Հազարավոր թարմ ուժեր, գործուն ձեռքեր գնացին նրանց ետեւից, գրկեցին արյունոտ ուղին եւ մարտիրոսացան: Արտաքին ակնկալությունները հիմնովին չկշռահատած՝ շտապեցինք նետվել մրրկահույզ ծովը, բացեցինք առագաստերը մեր թեքեւ նավակի մի այնպիսի ժամանակ, երբ ոռնում էին չարաշունչ հողմեր:

Ուրիշ հնար չկար, ասում են նրանք. ովքեր կարծում են, որ պատմությունը մի բռնակալ է, որ հարկադրում է բոլորին անցնել ընդ նեղ դուռնն: Եթե կյանքը ճակատագրական պատգամներ ունենար, ապա ավելորդ էին անհատների եւ խմբերի ճիգերը, կուսակցական շփումներն ու մրցումները՝ քարշելու հասարակությունը այս կամ այն ուղիով:

Ոչ, կյանքը կարծածից ավելի ազատամիտ է, որովհետեւ նա ամենից առաջ գիտակցություն է, որի եակամ տարրն է ընտրողությունը: Ընտրել այն, ինչ որ թելադրում են իր շահերը, բանական էակի իրավունքն է: Արտասահմանյան հայության եւ կամ նրա առաջնորդ մտավորության հարազատ էր այսպես կոչված հեղափոխական մտայնությունը՝ որպես ծնունդ իր միջավայրի եւ կյանքի ազատ պայմանների: Այլ էր տեղացի հայի հոգեբանությունը, որի վրա ծանրանում էին կորացած մեջքի, կաշկանդված մտքի կարեւեր ապրումները: Նրա աչքը հեռուն էր կտրում: Խավարի մեջ նստած ժողովուրդը լույս էր ուզում, ոչ մութ հոիրգոնձերում փայլփլող փարոս, այլ ապահով ջահ, որ լուսավորեր նրա առտնին քայլերը անվտանգ շավիղներով:

Այս պետքն ու պահանջը ունեցան իրենց մատակարարները, պատրաստ լինելու ցանկացած ջահակիրները: Ուրանալ նրանց արժեքը, անարդարություն կլիներ, թեեւ նրանց ձայնը անլուր մնաց ընդհանուր աղմուկի մեջ:

Տասնեւութ դարի վերջերն էր, երբ հնչեց անդրանիկ հեղափոխության ողողացը հեռավոր Հնդկաստանից(25): Սիմեոն կաթողիկոսը, որ սրաթեւ աչքով տեսնում էր հեռուները, չվարանեց թղթով անիծել, հանդիմանել, ըմբոստ կոչի հեղինակին՝ հանդարելով նրա ծրագրերը չափազանց վտանգավոր հայ ժողովրդի համար(26): Խոսողը էջմիածնի գահակալն էր, եւ նրա բերանով խոսում էր հայ եկեղեցին՝ հայ ժողովրդի ուխտյալ ձայրը, այն սեւ օրերին, երբ նա՝ որբ, անհայր, թողնված էր իր բախտին: Հիրավի, թե որքան խակ պտուղ էր Հնդկաստանի հայի, դարաբաղցի Մովսեսի հղացումը, երեւում է նրանից, որ ամբողջ դար էր հարկավոր, որ հասունանար՝ հետեւողներ գտնելու XIX դարի վերջին:

Թողնենք, սակայն, հինը: Մեր նպատակը չէ պատմական հաշվետվությունը: Խոհերիս նյութը այն շրջանն է, որի պատասխանատվությունն ընկնում է ընթացիկ սերնդի, մեզ բոլորիս վրա: Ինչ նեղելի էր նախքան Բեռլինի վեհաժողովը, թերեւս, անհեղելի էր նրանից հետո: Այդ ժողովը փորձության հնոց էր հայ հասարակական մտքի համար: Հայ գործը փեղկվեց՝ ընտրելով տարբեր ուղիներ, փոթորկի եւ աշխատանքի ուղիներ:

Երկու հայ վարդապետների(27) ձեռնարկները Վան եւ Մուշ, վեհաժողովից առաջ եւ հետո, հայտնի են իրենց բացառիկ վեհությամբ եւ անձնվիրությամբ: Նրանցից առաջ, տակավին վաքուսական թվականներին, ակնեցի մի խուժ երիտասարդներ որոճում էին ավելի լայն ծրագրեր: Նրանց գլուխն էր Միսաք Թիմուրյան, անունը՝ Նանուշ, գաղափարը՝ մեծ, եւ այսօր գոնե արժանի երախտագետ հիշողություն:

Միսաք Թիմուրյանը հասարակագիտական հայացքով գաղափարակից էր ռուսաիայ Միքայել Նալբանդյանին: Այն, ինչ որ քարոզում էր վերջինս իր «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» գրքույկով(28), մոտ էր Թիմուրյանի սրտին:

Հավաքաբար գործելու նպատակով Թիմուրյանը հիմնեց Ակնում մի ընկերություն՝ «Խահապետական» անունով: Ի՞նչ էր նրա միտքը եւ հասարակական ծրագիրը: Այս առթիվ նա հրատարակեց մի տետր, որտեղ պարզում է իր հայացքը անպտղությունի հատակությամբ եւ պարզությամբ:

Թիմուրյան Ակնցի էր, բայց նրա երազները գետի (29) այն կողմն էին: Ակնում «բավական հող չգտնելուն համար» նա առաջարկում է իր հոգեվ Մուշ եւ հիմնել մի նոր գյուղ, անունը՝ Նոր Հայ, որ նմուշ ծառայե նման շինարարության: «Քանի մը տուն այս կողմի խեղճերէն տանելով եւ քանի մը տուն հայազգի մշակներ ի գիւղ բերել բնակեցնելու, մեր դրամը եւ քաղաքականութիւնը անոնց աշխատութեանը խառնելով, բնական ընթացքով մեր ատտի կենաց պիտոյքը հոգալով եւ բարոյականութեամբ ալ մեր հոգւոյն պէտքերը պատրաստելով, տանելով հետերնիս մաքրակեցնող քահանայ մը եւ աստուածային երկիւղով զարգացած, իմաստուն վարժապետ մը... աւելորդ սեպելով անօգուտ ուսումները, որ մեր ընթացքին եւ պարզ վարուոյը չեն վերաբերիր»(30):

Հեղինակը, շարունակելով իր միտքը, գտնում է, որ առօրյա կյանքում պետք է բավականանալ նրանով, ինչ որ տալիս է մեր երկիրը, «բաւական են բրդէ եւ բամպակէ զգեստները», «հերիք մեր աշխատանքով մեր հողէն ելած բերքերը՝ ոչխարին կաթը, մեղրէին մեղրը, ցորենին պարզ հացը, ծառի պտուղները, ծովի ձուկը եւ օրին թռչունները...»: Այս բոլորը բավական համարելք են «յօտարութիւն չգնանք»:

«Գիւղական գործերը», Թիմուրյանի ծրագրով, պիտի վարե տեսչական ժողովը՝ չորս հոգուց բաղկացած, եւ այնպես պիտի կառավարե ժողովուրդը, «որ ոչ վէճի պատճառ ըլլայ եւ ոչ տարաձայնութեան...»: «Վարուկական տուրքերը առանց ուշացնելու վճարել... Սկով իրենց հաւատարմութիւնը տէրութեան իբրեւ մշտավառ ճրագ մը փայլեցնեն եւ դրացի գիւղերուն հետ ալ իմաստութեամբ եւ սիրով վարուելու մի-ջոցներ ձեռք բերելու եւնք, որպէս զի երբ դուրսէն անծանօթ թշնամի մը պատահելու ըլլայ, ստիպուին դրացի գիւղացիք ալ պաշտպանելու զմեր գիւղերը: Կը պարտաւորիմք նաեւ դրացի գիւղացւոց մարդասիրութեամբ խնամք տանել, եւ անոնց մտաւորական եւ նիւթական պիտոյքներ ընծայել: Ասանկ կացութեամբ թշնամի բնաւ չենք ունենար եւ մէկը մեզի հակառակ չի կենար»(31):

Որքան պարզ է վեր է Նորհայը՝ իր ձգտումներով, եւ որքան նման է հին հային: Խորհիմաստ միտք, շրջանկատ մտածություն: Հող եւ

Շարունակությունը՝ էջ 34

տպագրվում է 2003թ.
հոկտեմբերի 1-ից ■
հիմնադիր եւ հրատարակիչ
«Սյունեյաց աշխարհ» ՍՊԸ ■
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ ՕՏԱՐԱԾՈՒՄ.
ՀԱՍԷ՝ ք.ԿՊՐԻՆ, ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑ
ՀԵՌԱԽՕՍ՝ (0285) 5 25 63 = (091) 45 90 47 = (077) 06 28 02
էլ.հասցէ՝ www.syuniacyerkir.am
էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑ

լարում:

Երկու ուղի կա գործունեության, երկու սիստեմ: Մեկ, երբ նպատակը դառնում է մի տեսակ փարոս, մի աստղ հեռու հորիզոնում: Մարդ տեսնում է լույսը եւ գլխիվայր վազում է դեպի նա՝ առանց նայելու ոտքերի տակ, ուշ չդնելով, որ կարող են անհաղթելի լեռներ, անանց ձորեր, անգամ ծովեր լինել ճանապարհին եւ չթողնել մոտենալ փարոսին:

Մյուս ուղին: Զգույշ եւ զգաստ՝ մարդ առնում է իր հետ մի ճրագ, մի լամպար եւ ուղղում է իր քայլերը նրա լույսով, ճանապարհ է հարթում՝ փշերը քաղելով, քարերը հեռացնելով, եթե անանց արգելք կա, պատ է տալիս, եթե ծով է հանդիպում, նավակ է նստում եւ այսպես գուցե համրաքայլ, գուցե խեցբեկ (= անհարթ - Պ.Հ.) պտույտներով, բայց անվրեպ մոտենում է նպատակակետ փարոսին: Հայ գործիչները հետեւեցին առաջին ուղուն, նետվեցին առաջ՝ որպես փուլկոտ այծյամ՝ միտ չդնելով, որ ճանապարհը որոգայթալիր է եւ բռնված չար որսկանոցներով:

Եղել են երջանիկ ազգեր, որ, նույն ճանապարհը ընտրելով, հասել են իրենց նպատակին, կարելի է ասել, բախտի թեւերի վրա: Մեզ համար նա օրհասական եղավ: Ի՞նչ էր պատճառը, որ ալեւոր ժողովուրդը, ինչպես հայը, կյանքի բոլոր դառնությունները ճաշակած, ընտրեց օրհասական ուղին:

Հայությունը՝ որպես ազգ, միաձույլ զանգված չէ, եւ հասարակական տեսակետից միօրինակ շենք չէ: Հարկեր ուզի՝ ռուսաիայ, թրքահայ, գաղթահայ, տարբեր երանգներով: Թրքահայ ասածդ եւս ցրիվ հասկացություն է. այլ է Վան եւ Մուշ, այլ՝ Պոլիս եւ Զմյուռնիա: Ողբերգությունը սկսվում է այն օրեն, երբ հայ վիլայեթների համար քաղաքական ծրագրեր են մշակում այսպես ասած դրսեցի հայերը(22):

Ազատագրական կոչը դրսեցի էր հղացումով եւ գործադրությամբ(23): Ճշմարիտ դարման էր, եթե կուզեք, որոշ հիվանդության դեմ ընդհանրապես, բայց ոչ նկատառյալ հիվանդի համար: Գաղափարը նման է բույսի եւ ծաղկում է իր հողում: Եթե ազատագրության ծառը նեղածո չլիներ, այլ տեղական տունկ՝ տեղի սերմերից ծլած, Հայաստանը սպանգանց չէր դառնա այնպիսի տկարության:

Պատերազմի ժամանակ բացվեցին մեր երկրի դռները եւ տեսան, ով չէր տեսել, հողն ու ժողովուրդը: Հուսահատական տեսարան էր: Ծանր էր հաշտվել իրականության հետ, ծանր էր մտածել, որ սերունդների երազը փարած է եղել այս ուրվականներին, որ շատ հեռու էին քաղաքական ատաղձ լինելու ուսկայությունից: Ահա՝ խեղճ քահանան, վարժապետը, գյուղի ռեսը եւ հանայն ժողովուրդը ցնցոտիների մեջ մարմնով եւ մտքով: Ոչ, այս փշաստանում վարդեր չէին կարող բուսնել:

Քաղաքական շարժումը բնական ծագումով ենթադրում է նյութական եւ հոգեկան հայտնի մակարդակ: Անտարակույս, շարժման ծրագրողները ունեին պահանջած մակարդակը, բայց նույնչափ անտարակույս է, որ այն ժողովուրդը եւ հողը, որի համար ծրագրված էր, չուներ նույն պատրաստականությունը:

Այսպիսի պայմաններում մարտական բողոքը կարող էր տալ լավագույն դեպքում առանձնակի եւ դիպվածական պայթյուններ, բայց ոչ երբեք ընդհանուր ժայթքում, գիտակցական եւ կազմ խոյանք:

Կան գլուխներ, որ մտածում են, եւ լեգիոներ, որ ասում են, թե հայ ժողովուրդը ընտրեց ըմբոստ ուղին հեռց այն պատճառով, որ չէր կարող նվիրվել խաղաղ աշխատանքի: Արկածավոր միտք է: Նա, ով չի կարող որեւէ պատճառով մի հանստ խրծիթ չիմել, հասկանալի է, որ նրա

Ծիծեռնակաբերդ. հուշարձան՝ նվիրված Հայոց Ցեղասպանության զոհերին՝ կառուցված Երեւանում՝ համանուն բլրի վրա: Հեղինակն է ճարտարապետ Արթուր Թարխանյանը (Ս. Քալաշյանի համահեղինակությամբ): Ամեն տարի՝ ապրիլի 24-ին, հարյուր հազարավոր հայեր եւ օտարազգիներ բարձրանում են այսպեղ՝ հարգանքի տուրք մատուցելու 1915 թվականին Օսմանյան կայսրության տարածքում թուրքական կառավարության իրագործած Հայոց Ցեղասպանության զոհերին: 1965-ին՝ Ցեղասպանության 50-րդ տարելիցին, Երեւանում կազմակերպվեցին միլիոնանց ցույցեր: Դրանց արդյունքում 1966-ին սկսվեց Ցեղասպանության հուշարձանի կառուցումը, որն ավարտվեց 1968-ին:

կտրում: Խավարի մեջ նստած ժողովուրդը լույս էր ուզում, ոչ մութ հոիրգոնձերում փայլփլող փարոս, այլ ապահով ջահ, որ լուսավորեր նրա առտնին քայլերը անվտանգ շավիղներով:

Այս պետքն ու պահանջը ունեցան իրենց մատակարարները, պատրաստ լինելու ցանկացած ջահակիրները: Ուրանալ նրանց արժեքը, անարդարություն կլիներ, թեեւ նրանց ձայնը անլուր մնաց ընդհանուր աղմուկի մեջ:

Տասնեւութ դարի վերջերն էր, երբ հնչեց անդրանիկ հեղափոխության ողողացը հեռավոր Հնդկաստանից(25): Սիմեոն կաթողիկոսը, որ սրաթեւ աչքով տեսնում էր հեռուները, չվարանեց թղթով անիծել, հանդիմանել, ըմբոստ կոչի հեղինակին՝ հանդարելով նրա ծրագրերը չափազանց վտանգավոր հայ ժողովրդի համար(26): Խոսողը էջմիածնի գահակալն էր, եւ նրա բերանով խոսում էր հայ եկեղեցին՝ հայ ժողովրդի ուխտյալ ձայրը, այն սեւ օրերին, երբ նա՝ որբ, անհայր, թողնված էր իր բախտին: Հիրավի, թե որքան խակ պտուղ էր Հնդկաստանի հ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌՔԵԱՅՔԻ ԱԶԳԱՅԻՆ ԿԱՄԱՒՈՐԱԿԱՆ ԿԱՍԿԱԾԱԳԻՐ
ՀԱՅՈՒՆ ք/ԱՊՈՒ, ՕՀՅՈՒՆՏԻՆ-20132
ԶԵՌՈՒՆՈՒՄ՝ (0285) 5 25 63 = (091) 45 90 47 = (077) 06 28 02
էլ. հասցէ՝ www.syuniacyerkir.am
էլ. փոստ՝ syuniacyerkir@mail.ru
տպագրվում է 2003թ. հոկտեմբերի 1-ից ■ հիմնադիր եւ հրատարակիչ «Այսօրվայ աշխարհ» ՍՊԸ ■
№ 17 236
18 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2011

Մեծ եղեռնի փարելիցին

Սկիզբը՝ էջ 33

ջուր, վարժապետ, քահանա, հաշտ կյանք, պետական հավատարմություն, համերաշխ դրացիություն՝ հայության ծանոթ, հարազատ խոտեր են՝ քաղած հայ լեռներից եւ դաշտերից: Այս ծրագիրը թելադրանք է հայ պատմական եւ այժմեական կյանքի: Մերձավոր նպատակը՝ պատնեշ դնել պանդխտության շարժման դեմ, որ արդեն սկսել էր ծայրը եւ ամենահկոր սեռերը երեւույթ էր:

Թիմնոյալը չբավականացավ խոսքով, գործի մտավ: Մուշի դաշտում՝ Ս.Կարապետից ոչ հեռու, Շկավլիան գյուղը գնեց հարյուր ռկկով(32): Ընկերները՝ վատամարդ, լքեցին նրան: Իսքը մենակ տեղափոխվեց Ակնից Մուշ... բայց իբրեւ գաղափարակիր մենակ չէր:

Մի քանի տարուց հետո նույն շավղի վրա ենք գտնում Գ.Սրվանձտյանցին: Հայրիկի աշակերտը խոսում է Բեռլինի հուսախաբությունից հետո: «Փափաքելի է, որ մեր դրամատրները իրենց ուշը դարձնէին Հայաստանի մէջ հողեր գնելու»... մեծ ազդեցութիւն պիտի ունենայինք տեղական կառավարիչներուն, թուրք եւ քիւրդ պէյերուն վրայ իբրեւ օրէնսգէտ եւ քաղաքագէտ անձինք... Թող չսարսափին այնչափ Հայաստանէն հասած չարիքներէն, միթէ պակաս են նոյն իսկ Եւրոպիոյ եւ մայրաքաղաքիս մէջ աւելի չարաչար չարիք...

Հայաստանի ամենամեծ չարիքը իւր կարող որդոց հեռի մնալն է հոգեւոր մեջ: Սրվանձտյանցը շարել է այս գոհարները այն ժամանակ, երբ տակավին հեղափոխական շարժում չկար: Հայրենասիրությունը ճշմարիտ հայրենասիրությունը հատուկ զգայարաններ ունի եւ զգում, տեսնում է առաջինց ունկայությամբ այն խմորումները, որ սպառնում են փոթորիկներ ծնել: Գ.Սրվանձտյանցի խրատները սուր փշերի նման ծակում են այսօր մեր մերկացած հոգիները...

Արդ այս երկու պանծալի օրիկաները ցույց են տալիս, որ մեր առաջ բաց էր մի ուրիշ ուղի, ուրիշ գործելակերպ, որ աչքաթող արինք, այն մեր հայրենի ինքնագական ուղիին էր՝ մեր անցյալից բխած եւ համապատասխան ներկա իրերի դրության: Հիշածս երկու անձերը թողնենք ուրիշներին, նրանց գաղափարակից, առաջարկում էին մեզ նախի ճրագը՝ որպես ուղեցույց, այն ճրագը, որ պահել է եւ կպահեր մեզ հայրենի անդաստանի ակոսների մեջ, կառաջնորդեր քաշել կյանքի ծանր լուծը, նման այն երկայնամիտ եզին, որ անուր վզին ձգում է խոփը անմռունչ՝ պահելով իր նեղսը կանաչ մարգագետնի կարոտը, ձգում է՝ որոնելով, ո՞վ գիտե, որպիսի խորհրդավոր մտորումներ, իրեն միայն հայտնի, եւ պատրաստ ժայթքելու իր նեբրքի բափից եւ դիպող ժամին...

Այսօր մենք մենակ եք մեր դիակների հետ: Սգավոր եք. Մեծ եղեռնը մեր պարանոցին, մեղապարտ ենք բոլորս, ամեն ոք իր չափով, որը՝ նրանց մեջ: Սրվանձտյանցը շարել է այս գոհարները այն ժամանակ, երբ տակավին հեղափոխական շարժում չկար: Հայրենասիրությունը ճշմարիտ հայրենասիրությունը հատուկ զգայարաններ ունի եւ զգում, տեսնում է առաջինց ունկայությամբ այն խմորումները, որ սպառնում են փոթորիկներ ծնել: Գ.Սրվանձտյանցի խրատները սուր փշերի նման ծակում են այսօր մեր մերկացած հոգիները...

Արդ այս երկու պանծալի օրիկաները ցույց են տալիս, որ մեր առաջ բաց էր մի ուրիշ ուղի, ուրիշ գործելակերպ, որ աչքաթող արինք, այն մեր հայրենի ինքնագական ուղիին էր՝ մեր անցյալից բխած եւ համապատասխան ներկա իրերի դրության: Հիշածս երկու անձերը թողնենք ուրիշներին, նրանց գաղափարակից, առաջարկում էին մեզ նախի ճրագը՝ որպես ուղեցույց, այն ճրագը, որ պահել է եւ կպահեր մեզ հայրենի անդաստանի ակոսների մեջ, կառաջնորդեր քաշել կյանքի ծանր լուծը, նման այն երկայնամիտ եզին, որ անուր վզին ձգում է խոփը անմռունչ՝ պահելով իր նեղսը կանաչ մարգագետնի կարոտը, ձգում է՝ որոնելով, ո՞վ գիտե, որպիսի խորհրդավոր մտորումներ, իրեն միայն հայտնի, եւ պատրաստ ժայթքելու իր նեբրքի բափից եւ դիպող ժամին...

Հայաստանի ամենամեծ չարիքը իւր կարող որդոց հեռի մնալն է հոգեւոր մեջ: Սրվանձտյանցը շարել է այս գոհարները այն ժամանակ, երբ տակավին հեղափոխական շարժում չկար: Հայրենասիրությունը ճշմարիտ հայրենասիրությունը հատուկ զգայարաններ ունի եւ զգում, տեսնում է առաջինց ունկայությամբ այն խմորումները, որ սպառնում են փոթորիկներ ծնել: Գ.Սրվանձտյանցի խրատները սուր փշերի նման ծակում են այսօր մեր մերկացած հոգիները...

Թիմնոյալը չբավականացավ խոսքով, գործի մտավ: Մուշի դաշտում՝ Ս.Կարապետից ոչ հեռու, Շկավլիան գյուղը գնեց հարյուր ռկով(32): Ընկերները՝ վատամարդ, լքեցին նրան: Իսքը մենակ տեղափոխվեց Ակնից Մուշ... բայց իբրեւ գաղափարակիր մենակ չէր:

Մի քանի տարուց հետո նույն շավղի վրա ենք գտնում Գ.Սրվանձտյանցին: Հայրիկի աշակերտը խոսում է Բեռլինի հուսախաբությունից հետո: «Փափաքելի է, որ մեր դրամատրները իրենց ուշը դարձնէին Հայաստանի մէջ հողեր գնելու»... մեծ ազդեցութիւն պիտի ունենայինք տեղական կառավարիչներուն, թուրք եւ քիւրդ պէյերուն վրայ իբրեւ օրէնսգէտ եւ քաղաքագէտ անձինք... Թող չսարսափին այնչափ Հայաստանէն հասած չարիքներէն, միթէ պակաս են նոյն իսկ Եւրոպիոյ եւ մայրաքաղաքիս մէջ աւելի չարաչար չարիք...

Հայաստանի ամենամեծ չարիքը իւր կարող որդոց հեռի մնալն է հոգեւոր տրտունջները դրակաւ արդուք չտվվին եւ պատճառ եղան մեծ չարիքի, գաղթականության գրդեղացման: «Ողբալ, անիծել եւ գաղթելու նպատակ ունենալ, այս է գաւառացուց վիճակը, շարունակում է նույն Սրվանձտյանցը: Երբ սուլթանական կոմիսարներն աշխատում էին խաղաղեցնելու ժողովրդյան հուզված ալիքները, «օտար պետութեանց մարդիկներէն կային, որ կը մնային կամ կը շրջէին միշտ յուզելու եւ խռովելու հայ ժողովուրդը ընդդէմ հայութեան»: ԳԴզոի ցոյց տալու «Հայն ընդդէմ տիրող կառավարութեան, բողոքել եւ կռուել տալ հայն ընդդէմ թիւրք եւ քուրդ բնակակցութեան, եւ դժբախտաբար մեր գանազան դասերէն ալ շատերը անգիտօրէն կը գտնուէին՝ շանքեր եւ ցոյցեր նւիրելու այդ օտարին շան առիթով եւ մեզ կործանումն բերող մեքենայութեանց. անշուշտ խաբուած էին ոչինչ բաներով կամ սուտ խոստմամբ...

Ոչ, եղբարք, – հառաչում է հուսահատ հայրենասերը, – այս չէր մեր ընելիքը, այդ ճանապարհը դէպի բաղձալիճ չէր հաներ: Այդ կեղծ բարեբարերները ոչ հայուն հօրեղբայրի էին եւ ոչ հայուն քեռին, այլ աւելի ճարպիկ որսորդներ եւ մսագործներ, որ գնեզ էրէ վայրի, պատրաստ ոչխարներու եւ պարարակ կովերու տեղ դնէլով, մեր փարախէն կուզէին խրտցնել, հեռացնել ու իրենց ձեռքը ձգելով ի սպանդ մատուցանել(34)...

Ուշադիր լինինք ակնածորեն այս խոսքերին: Մարգարեական շուռ կա

տպագրվում է 2003թ. հոկտեմբերի 1-ից ■ հիմնադիր եւ հրատարակիչ «Այսօրվայ աշխարհ» ՍՊԸ ■
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌՔԵԱՅՔԻ ԱԶԳԱՅԻՆ ԿԱՄԱՒՈՐԱԿԱՆ ԿԱՍԿԱԾԱԳԻՐ
ՀԱՅՈՒՆ ք/ԱՊՈՒ, ՕՀՅՈՒՆՏԻՆ-20132
ԶԵՌՈՒՆՈՒՄ՝ (0285) 5 25 63 = (091) 45 90 47 = (077) 06 28 02
էլ. հասցէ՝ www.syuniacyerkir.am
էլ. փոստ՝ syuniacyerkir@mail.ru

ՀԱՅԵՐԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Ուղղագրական եւ տառերի բարեփոխության հանձնաժողովին

Տպագրվում է Կրճատումներով

ՈՒՂՂԱԳՐԱԿԱՆ ԵՎ ՏԱՌԵՐԻ ԲԱՐԵՓՈԽՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՆ

Մեծարելի նախագահին,

Որպես պաղասխան պատվական Հանձնաժողովի, դիմումի, պատիվ ունեմ ղրկելու Ձեզ կից համեստ նպաստս ուղղագրական եւ տառերի վայելչության խնդրին: Ցանկամ հաջողություն:
Ընդունեցեք հարգալից ողջույններս:

Ն.ԱԴՈՆՑ

18 սպրիլի 1927, Փարիզ
15, rue Henri Martin 15, Paris 16e

Ստացա աղյուսակդ: Այս առթիվ պարտք եմ համարում ասել հետեւյալը: Խորք, նորալուր ուղղագրությունը, որ քննելու է կոչված Հանձնաժողովդ, խորշելի է ամենեն առաջ նորանով, որ մի մեծ եւ անտեղի խրամատ է բաց անում, հին եւ նոր գրական ճյուղը կտրում է իր բնից եւ վտանգում նրա գոյությունը: Ուղղագրությունը մեկեն պպահանջեր ունի իր առաջ, որոնց բոլորին պարտավոր է գոհացնել: Բացի հնչական հավատարմությունից, որ պատանքում է ելզվագիտությունը, բացի միակերպությունից, որ կարելուր է մանկավարժական տեսակետից, կա եւ այլ հանգամանք, որ հաճախ մոռացվում է վերանորոգիչների կողմից. այն է՝ լեզվապատմական պահանջ, որի հիմնք գիրը պետք է պատկերացնե լեզվի ամբողջությունը գեթ այն չափով, որքան արգելք չեն հարուցանում մյուս հիշյալ պահանջները:

Նոր գրական լեզուն սերտորեն կապված է գրաբարի եւ աշխարհաբար բարբառների հետ: Երկու դայակներից մեկը գրեթե զոհ գնաց բաղաքական ձախողանքի, եւ կենդանի բարբառների մնացորդներն այսօր անտուն, անտեր բափառում են կրոտյաց եւ աղավաղված ճանապարհների վերա:

Մնում է հին լեզուն՝ որպես մայր եւ սնուցիչ նորի: Մոտիկ անցյալի վեեերը գրական լեզվի զարգացման շավիղների շուրջը չարդարացրին նրանց հեղինակների գուշակությունները: Գրական լեզուն, պահելով հանդերձ իր ինքնուրույնությունը, բնավ պետք չտեսավ հրաժարվելու իր պատմական ժառանգությունից եւ լայնածավալ շահավետեց հին լեզուն: Արդի լեզուն կիսով չափ գրաբար դարձավ. եւ հոր շտեմարանը դեռ սպառված չէ նոր գրականի համար:

Այս նկատմամբ խոտելի է այն ամենը, ինչ որ խտրոց է ծառայում հին եւ նորի մեջ:

Եթե աշխարհաբարը սեփական ուղղագրություն մշակեր, որպիսին է այժմյան պաշտոնական նորածեւ ուղղագրությունը, բնական է, որ արտաքուստ պիտի անջատվի իր մորից, պիտի դժվարացնե հին ուսուցումը, որով ամենից առաջ եւ մեծապես վնասելու է աշխարհաբարի շահերին:

Ահա ինչու չի կարելի բարեկամ լինել այն ուղղագրական հեղաշրջումներին, որոնք այլ բան չեն, եթե ոչ լեզվական բռնություն:

Ինչ եւ լինին հայ գրի թերիքները, ամեն դեպքում նա այն սակավաթիվ օրինակներից է իր հասակակիցների թվում, որ կարիք չունին արմատական փոփոխության: Քաղաքակիրթ լեզուների գրեթե բոլորի մեջ վաղուց բացված է անանցանելի խորխորատ գրի եւ հնչյունի միջեւ: Թեպետ դյուրության մասին սրտացավները պակաս չեն, քան մեզանում, դարձյալ չեն նկրտում ուղղագրական բուռն խիզախումների, պահում են հին՝ շատ դեպքերում գրեթե գաղափարագիր դարձած գրությունը, որպեսզի չեղծեն լեզվի պատմական պատկերը եւ մոռացության չտան այդ լեզվով ամբարված դարավոր հարստությունը, անցյալի ճոխ գրականությունը՝ վնասելով նրա մատչելությունը:

Եթե գրոավոր լեզուներն այսքան զգույշ են եւ սիրում են մնալ կառչած իրենց անցյալին, որքան ավելի իրավունք ունի մեր տկար եւ անպաշտպան լեզուն նույնն անելու, մանավանդ որ իր գոյության համար ուրիշ ավելի զորեղ եւ վստահելի խարիսխ չունի, քան իր անցյալը:

Կասկած չունիմ եւ ուրախ եմ, որ ճիշտ այս տեսակետն ունի եւ պատմական Հանձնաժողովդ, որի հետեւանքով էլ դերաքննության գործը դրված է պատմական եւ ավանդական հողի վերա: Հանձնաժողովդ ջանացել է եւ հաջողել վերականգնել Մեսրոպյան ուղղագրությունն ընդդեմ նորամոլ ոտնձգությունների, ինչպես կարելի է տեսնել Համադուններ, ժողովրդականություն չգտավ, եւ նախկին ու-ն պահեց իր դիրքը: Հաճրության հոտառությունը նաեւ ուղղագրական խնդիրներում անտես առնելու չէ: Ու-երի սղումը լ-երի կարծես խծողում է լեզուն նոր բաղաձայնով եւ վնասում նվազայնության: Մեր լեզվի թերություններից մեկը հենց բաղաձայնների կուտակումն է, եւ նրանց թիվը նորեն զորացնել՝ ցանկալի չէ: Թվում է, թե մի երանգ կա հատված կամ հատուած եւ հատուած արտասանության մեջ. մեկը՝ ակամայից պիտի հնչվի հատված, հատ-ած, հա-տը-ված, կամ հա-տը-ուած, մյուսը՝ հատուած, աս-տուած, այսինքն՝ t'wo ուուերեն՝ two եւ ոչ տ-ը-աօ, ինչպես արտասանում են հայերից շատերը:

Հանենայն դեպս հատված գերադասելի է, քան հատված, եթե միայն ստիպված ենք թողնել պապեհական հատուածը:

Վերջապես մոռանալու չէ մանավանդ Հանձնաժողովդ, որ շահագրգռված է նաեւ տառերի վայելչության խնդրով, որ ամփոփ հյուսը անհամեմատ ավելի հարազատ է հայ գրերի ոճին, քան երկարածիգ վեւը:

Այսպես v- հնչյունի եռակի գրությունը –վ՝ բառերի սկզբում եւ ով վանկում, ու՝ բաղաձայնի եւ ձայնավորի մեջ (լեզուի, հատուած) եւ ւ՝ մյուս դեպքերում, մանավանդ ձայնավորների միջեւ -յ- պահվում է: Այս առաջարկով գրելու է՝ վկա, վկաի, հավատորեն եւ Սաքո, Սաքոի, բայց վկայով, վկայում, վկայէ, սաքոյով, սաքոյում, սաքոյէ:

Այս կանոնը հետեւողական չէ եւ ոչ էլ հաճածայն հայ հնչաբանության, որ չի հանդուրժում ձայնական հորանց (hiatus) ընդհանրապես: Բացառավան հոլովի երկու ձեւերից մեկը գրել առանց -յ-ի, մյուսը՝ յ-ով՝ վկաից եւ վկայէն, չի նշանակում դյուրացնել ուղղագրությունը: Ինչպես ասացի, հայը չի կարող արտասանել երկու կից ձայնավորը առանց միջնորդ յ-ի կամ ւ-ի, նայելով երկրորդ ձայնավորին. ճիշտ այնպես, ինչպես անընդունակ է երկու կից բաղաձայն հնչել առանց միջանկյալ ը-ի: Այս հիմնական օրենքը հայ հնչաբանության հարկադրում է հրաժարել 19-րդ կետից եւ գրել՝ վկայի, վկայով, վկայէն, Սաքոյի, Սաքոյէն կամ ազգային եւ այլն:

Ընդունելի է յ-ի հապավումը լոկ ուղղականում եզակի եւ հոգնակի՝ վկա, վկաներ, սաքո, սաքոներ:

Այս խնդրի հետ կապ ունի իսկապես 3 կետը, որը հանձնարարում է վերջահանգ e հնչյունը գրել է: Պետք է հուսալ, որ հետեւողականության առգապավ առաջարկվեր գրել վերջին e ոչ թե է, ինչպես ընդունված է գրաբարում, այլ ե՝ զեղչելով է (= ե + յ)-ի յ որպես վկա-, Սաքո, փոխակ հին վկայ, սաքոյ = հաճոյ: Հետեւապես պետք էր գրել՝ բազե, նաեւ, մարգարե: Հետեւությամբ վկա, վկայի, Սաքո, Սաքոյի, թեք հոլովներում գրելու էր բազեյի, բազեյով, որ դ բազէի, բազեով (t= ե3): Այս դեպքում մնում է ուղղականում եւս գրել բազէ եւ ոչ բազե, հանում միօրինակությամբ:

Եթե անգամ ընդունելու լինեմք, որ ե չէ խուսափում hiatus-ից եւ ուրեմն նեռելի է գրել՝ բազեի, մարգարեով, մարգարեական (հաճածայն գրաբարի սիրեի, սիրեիր, սիրեաք, սիրեիք հին գրության), այն ժամանակ եթ (= էդ), եա (= էա) հնչյունները պիտի շփոթի տեղիք տային, քանի որ եա= ya՝ ըստ 21 կետի եւ եո= yo՝ ըստ 22-րդի:

Միակ լուծումն է հաշտվել ավանդական ուղղագրության հետ՝ համաձայն 2-րդ եւ 3-րդ կետերի:

5-րդ կետը պաշտպանում է հակառակ 4-րդ կետի է-երը բայերի -էդ, էջ վանկերում: Գրաբարի -էդ եւ -էջ ստուգաբանական հիմնն ունին՝ սիր-էդ < սիրե - *t-ro, աղայր<*a-t-ro: Աշխարհաբարն ունի՝ աղամ, աղաս, աղար եւ ոչ աղայր. հետեւապես եւ սիրեմ, սիրես, սիրեր եւ ոչ սիրեյր = սիրէր: Նմանապես աղայր, սիրէք փոխված է աշխարհաբարում՝ աղաք, ուրեմն՝ սիրեք: Ասել է թե աշխարհաբարը յ զեղչում է, որով եւ սիրեր, աղար, սիրեք, աղաք գրությունն արդարացվում է ստուգաբանորեն: Եթե հեերին հետեւելով թույլ տայինք hiatus եչ-ի վերաբերյալ, կուլեեցայինք նրանց նման՝ սիրեի, սիրեիր եւ (փոխանակ սիրէր ձեւի) սիրեր, սիրեիք եւ այլն: Ներկայում եւս՝ սիրեմ, սիրես, սիրե, սիրեմք, սիրեք, որպես՝ աղամ, աղաս, աղա, աղամք, աղաք: Որոշ չէ, արդյո՞ք աղա գրությունն առանց յ-ի մնում է 18-րդ կանոնի մեջ, թե՞ թողնվում է գրել ըստ հին ուղղագրության: Եթե հանձնարարվում է գրել աղա, ապա պետք է գրել եւ սիրե (փոխան սիրէ)՝ հակառակ 3-րդ կետի:

է-երի խնդիրը, մանավանդ վերջանանց է-երի, պետք ունի վերաքննության:

4-րդ կետի տրամադրությունը միայն ընդունելի է, որ որքան հնար է կրճատել է-երի գործածությունը, բայց ոչ այնպես կտրուկ, ինչպես ձեւակերպված է կանոնը, այն ատոհման, որ շփոթե սեր եւ սէր, գէտ եւ գետ եւ նման բառեր: Մի շարք բառեր կան, որ բարվոք է թե՝ գրել, ինչպես երբեք, մեկ (<միակ>), հեք, աղետ, թերեւս բարերի մեջ եւ այլն:

11-րդ կետը ծանր վճիռ է կայացնում խեղդ եւ մի հատիկ ով դերանվան հանդեպ, բաժանում է նրան իր զուգորդ n-ից եւ զոհում օտար բառերի հաճույքին, որպիսին է օվրեստես: Քանի որ ով բացարձակ եզակի է, նրա գրության փոփոխությամբ հայ ուղղագրությունը ոչինչ չի շահում, այլ միայն հրաժարվում է հին անմեղ ավանդից: Օտար բառերի մասին՝ ստորեւ:

23-րդ կետի նախագծված միաւտառ գրերը ու, իւ, նա հնչյունների համար ավելորդ եմ գտնում, ինչպես եւ բնավ ցանկալի չէ եւ փակագրի գործածությունը՝ ըստ 14-րդ կետի ծանոթության: Տպագրության մեջ լավ կլինի եւ փոխարինել եւ-ի: Գրաշարի զգրոցների թիվը շատացնել ավելորդ փակագիր տառով, նշանակում է ծանրացնել շարելու գործը: Հայ այբուբենն առանց են էլ բազմատառ է:

Գրեթե բոլոր կետերին, գլխավոր կանոնների անդրադարձա: Իմ հայացքները չեն տանում դեպի արմատական փոփոխությունների կողմը: Ոչ թե նրա համար, որ բնական խորշանք կամ նախապաշարում ունին նորամոլության հանդիմամ: Ոչ զուտ լեզվագիտական, ոչ մանկավարժական եւ ոչ անգամ գործնական որեւէ լուրջ հիմ չեմ տեսնում շեղվելու ավանդական ուղղագրության սկզբունքներից: Եթե արդի մանուկ լեզվի շահը պահանջեր, կանցնեի առանց տատանվելու բոլոր հիշյալ կամուրջերը: Սակայն հենց այդ շահի գիտակցությունն է, որ հակառակն է թելադրում: Պահել, պահպանել ամեն կարգի լեզվի հետ՝ աշխարհիկ լեզվի կենսական շահերից էակնեմ է: Նոր գրականում չկա ոչ մի հնչական տարր, որ անծանոթ լինի գիրաբարին: Այս մի հաստատում հիմ է ուղղագրական համերաշխության: Անգամ կրավորական բայերը, որ թվում է, թե հա-

Շարունակությունը՝ էջ 36

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՒ ՀԱՅԱՀՈՏԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ
ՄԱՍՆԱՒՈՐ ԿԱՍԿԱՆԱՅԻՆ ՕՐԱԳՐԱԳԻՐ
ՀԱՍՑԷ՝ ք/Կ՝Պան, Շ.ԳԻՒՇԻՆՅԱՆ-20/32
ՀԵՌԱԽՕՍ՝ (0285) 5 25 63 = (091) 45 90 47 = (077) 06 28 02
էլ. հասցէ՝ www.syuniacyerkir.am
էլ. փոստ՝ syuniacyerkir@mail.ru

տպագրվում է 2003թ.
հոկտեմբերի 1-ից ■
հիմնադիր եւ հրատարակիչ
«Այսօրվայ աշխարհ» ՍՊԸ ■

№ 17 236
18 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2011

ՀԱՅԵՐԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Ուղղագրական եւ տառերի բարեփոխության հանձնաժողովին

Տպագրվում է կրճատումներով

Սկիզբը՝ էջ 35

տուել են միմիայն աշխարհաբարին, ուեմեն իրենց նախատիպը գրաբարի՝ հատուած. յօդուած եւ նման ձեւերում: Իսկ գրաբարի՝ հոգւոյ, գիեւոյ գրությունը արդարացնում է աշխարհաբարի՝ հանվում եմ, ասվում է ուղղագրությունը: Իմ եզրակացությունն այն է, որ արդի ուղղագրության մեջ ներելի եմ այնպիսի սրբագրություններ եւ գուցե հարկավոր, որոնք ընդունելի են նաեւ գրաբարի տեսակետից, այնպիսի սրբագրություններ, այնպիսի մասնակի ուղղումներ, որոնք չեն խախտում, չեն կորում նորը հնի հետ կապող օղակները: Միայն ծայրահեղ ստիպողական հարկը կարող է արդարացնել այս սկզբունքի խաթարումը:

Ինչպես ամեն լեզվում, մասնավանդ զառամյալ լեզուներում, գրաբարի մեջ եւս կան անհարթություններ, շեղումներ ուղղագրական կանոններից: Նրանցից շատերն են անցել աշխարհաբարին: Չգտել կոկել ամեն մի անհարթություն, որ իր պատմական նստվածքը ունի, վտարել այն, ինչ որ խոչընդոտ է թվում, նշանակում է կենդանի լեզուն հասցնել արհեստական վոլապյուկի տափակության: Յանկալի է միաներկերպությունը, բայց արհամարհելի չէ բնավ եւ պեպեսությունը: Ամեն բան իր չափն ունի, եւ միօրինակությունն էլ պետք է ազատ պահել տարտամ շաբլոններից: 3-երի զեղչը կամ փոխարինումը հ-ով, որ նախատեսում են 16-րդ եւ 17-րդ կետերը, ինչպես եւ սեր եւ սէր, հոտ եւ հօտ եւ նման հոմանունների հավասարեցումը, համաձայն 4-րդ եւ 9-րդ կետերի, սրանք թելադրանք են այն շեշտակի շաբլոնկանոնության, որ հմաստն անգամ զոհվում է ձեւին: Եվ ցավալին այն է, որ շաբլոնը ձեւակերպված է քվում երբեմն օտար բառերի ազդեցության տակ:

Օտար բառերի ուղղագրությունը

Մտահոգ չեմ եկամուտ բառերին տալ այն պատիվը, որին արժանացրել է Հանձնաժողովդ ծայրահեղ եերողամտությամբ: Ուղղագրական ցուցակի մեջ օտար բառերը վայելում են համաքաղաքացիական հավասար իրավունք եւ հարգի տեղ են բռնում հայրենի աթոռների վերա: Հարազատ ով դեղանունը նստած է այնտեղ, ուր անծանոթ օվրեստը, էգ բառը ընկեր է էքսպերտ եւ էդիսոն անունների, ոյ երկբարբառը դառնում է ույ օտար օյ-ի դրդմամբ: Հայ բառերը են, որ խոնարհվում են եկվորների առաջ, որ նրանց հաճույքով միեւնույն գիրն ստանան:

Հաճելի չեմ ցուցակի վերնագիրները՝ «Եվրոպական» այս կամ այն հնչյունը, որ կարող է կարծել տալ, իբր բե վերաքննությունը նպատակ ունի համակերպել, հարմարեցնել հայ այբուբենը եվրոպական հնչյունների:

Տիրնդեռ կուզեմ հուսալ, որ հարցը լաւիմն տառերով արտահայտված հնչյունների մասիմ է, եւ քննելի նյութը եվրոպական հնչյունները չեն, այլ հայ հնչյունների եւ դրանց գրերի փոխիարաբերությունը:

Յուրաքանչյուր լեզու ուղղագրական ներդաշնակ սիստեմ կարող է մշակել միայն իր սեփական բառամոքերքի հնչյական շրջանում, որովհետեւ սրանք, միեւնույն պատմական ճանապարհն անցած լինելով, ենթարկվեմ հաներաշխ օրենքներին: Օտարամուտ բառերը եթե միջամտեն ուղղագրական կանոններ մշակելիս, առաջ կբերեն շփոթ, քանի որ ծագում եմ ունի՝ լեզվական եւ հնչյական մթնոլորտից եւ իրենց հատկությամբ կարող են հաճախ անմարսելի լինել իյուրերկյան լեզվի համար:

Ուրիշ ազգեր բնավ հոգս չեն անում օտար բառերը ճշգրտորեն արտասանելու, այլ հնչում են այնպես, որպես ներում է իրենց սեփական լեզվի կարողությունը:

Սեգանում եւս փոխառյալ բառերը, եթե միայն պատահական անցորդներ չեն, այլ ընդունվում են որպես մնայուն բնակիչներ մեր լեզվի շեմքի մեջ, պետք է հանակերպվեմ եւ ենթարկվեմ մեր լեզվի օրենքներին, այսինքն՝ հայանան: Երբ որ օտար բառը ժողովրդի բերանից է անցնում գրական լեզուն, նա, իրոք, նախապես տաշվում է եւ հայտնվում, ինչպես եկեղեցի, հույն ἐκκλησία բառը, որ դասական օրինակ է օտարի հայացման: Բայց եթե միջնորդը գրականությունն է, օտարը մնում է անձեռնմխելի իր տարագի մեջ: Շատ անգամ արդեմ հայացած բառը նորեն օտար բառերում ամենուրեք ե եւ ո գրել, անգամ բառի սկզբում:

Ռուս լեզուն մի կետում նման է մեզ. սկզբի ե արտասանվում է ye, մի հատիկ բառ ունի ֆ-ով՝ ֆտ. ոչ միայն սլավոներենում, այլեւ մոտիկ անցյալ ռուսերենում ընդունված էր հունական ε արտահայտել e-ով: Ցայժմ էլ գրում եմ епархия, Евлогий, епископ, Евламий, Евграфии, սլավոն լեզվի ազդեցությամբ, առաջները գրում էին Ератосфен, Евклид, Епаминоид, Епикур, այժմ եվրոպական, գլխավորապես գերմաներեմի հետեւությամբ փոխել են՝ Эратосфен, Эвклид եւ այլն:

Մեր նախնիք էլ գրում էին եկեղեցի, եպարքոս, եպիսկոպոս, եդեսա, եղիսէ, եփեսոս, Եւտիքէս, Եւլամպիա եւ այլն: Հանձնաժողովդ պատվիրում է այժմ գրել էվտիքէս, էվլամպիոս, էվրիպիա, կամ եթե վեւի տեղ է գրենք՝ էրիպիդ, էէլլիդ:

Թվում է, թե անպատեհություն չկա բառասկզբում եւս գրել ե՝ կանոն դնելով, որ օտար բառերում սկզբի ե հնչվում է որպես է, առանց խորշելու, եթե ոմանք կարտասանեն ye: Այժմ անհարմարություն չեմ զգում վերեւ բերած բառերի հին արտասանությունից՝ եպիսկոպոս՝ փոխ. էպիսկոպոս, եդեսա՝ փոխ. էդեսա:

Չպետք է մոռանալ, որ եչի ye օտար բառերում ամենուրեք ե եւ ո գրել, անգամ բառի սկզբում:

Ռուս լեզուն մի կետում նման է մեզ. սկզբի ե արտասանվում է ye, մի հատիկ բառ ունի ֆ-ով՝ ֆտ. ոչ միայն սլավոներենում, այլեւ մոտիկ անցյալ ռուսերենում ընդունված էր հունական ε արտահայտել e-ով: Ցայժմ էլ գրում եմ еп

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ ԱՇԽԱՐՀԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏԻՊ ԹԵՐԹԱԿԱՆ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՕՐԱԳՐԻՆ, ՕՐԱԳՐԻՆՏԻՆ, 2010Ջ
ՀԵՌԱԽՕՍԻՄ՝ (0285) 5 25 63 = (091) 45 90 47 = (077) 06 28 02
էլ. հասցէ՝ www.syuniacyerkir.am
էլ. փոստ՝ syuniacyerkir@mail.ru
տպագրվում է 2003թ.
հոկտեմբերի 1-ից ■
հիմնադիր եւ հրատարակիչ
«Այսօրվայ աշխարհ» ՍՊԸ ■
№ 17 236
18 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2011

ԺԱՄԱՆԱԿԱԿՑԻ ՀՈՒՇԵՐ

Անփիպ հուշեր Նիկողայոս Ադոնցի մասին

ՍԻՄՈՆ ՎՐԱՑՅԱՆ

Պրոֆ. Ադոնցը Բրյուսելից Փարիզ պիտի գար(1): Ժամադրություն էր նշանակել, որ այսինչ օրը՝ երեկոյան ժամը 8-ին, սպասեմ իրեն կաֆէ Վերսալյում՝ Մոնպարնասս կայարանի դիմաց:

Ճիշտ ժամը 8-ին ես նշանակված տրճարանում էի: Տեղ գրավեցի, ապպարեսցի ավանդական կաֆէ կրնամ ես սկսեցի սպասել:

Հինգ վայրկյան, քառորդ ժամ, կես ժամ-Ադոնցը չերեւաց: Անցավ մեկ ժամ, Ադոնցը չկա ու չկա: Օրվա թերթի ծանուցումներն էլ կարդացի, բայց Ադոնցը չհայտնվեց...

Հաջորդ օրը՝ մի խիստ par pneumatique(2) պրոֆեսորական լվացողական. դու, ի՞նչ մարդ ես, որ ժամադրություն չես հարգում: Երկու ժամ ուստել եմ տրճարանում, չբարեհաճեցիր գալ եւ այլն:

Նույն երեկո, միեւնույն ժամին, հանդիպում ենք նույն տրճարանում:

Նշանավոր կաֆէ Վերսալյում սեղանները դասավորված էին այնպես, որ նստարանների մեկ շարքը մյուսից բաժանվում էր բարձր պատնեշով, որի վերեւը դնում էին գլխարկներն ու վերարկուները: Եվ պարզվեց, որ երեկ մենք նստել ենք երկու ժամ մեջ-քի՝ ջղայնացած սպասելով իրար: Ինքը ուշացել է մի քիչ եւ առանց շուրջը նայելու նստել է «հարմար դիրքում», ես է արդեն նստած եմ եղել իմ «հարմար դիրքում»: Ոչ ես եմ նայել պատնեշի մյուս կողմը, ոչ է նա:

Երբ հաջորդ օրը պատմեցի մեր ժամադրության մասին Ադոնցի մտերիմ բարեկամ Հ.Ջավդյանին(3), ան պատասխանեց խնդալով.

– Տարօրինակ է, Ադոնցը ցրված մարդ չէ: Անպատճառ միտքը մի բանով զբաղված է եղել:

Այո, Ադոնցի միտքը այդ օրերին գրավված էր «մի բանով»: Նա եւ Ահարոնյանը(4) հղացել էին մի «հանճարեղ» միտք, իրենել մշակութային մի մեծ ընկերություն, հրատարակվել է մի մեծ ամսագիր, որի շուրջ համախմբվելու էր տարաձիր մտավորականությունը: Պրոֆ. Ադոնցին ի՞նչ հանձնարարված էր կազմել ընկերության եւ ամսագրի ծրագրի նախագիծը: Ահա այդ գործի համար էր մեր ժամադրությունը կաֆէ Վերսալյում:

Հետաքրքրության համար պատմեմ այդ ձեռնարկի սկիզբն ու վախճանը, որպես հուշ անցյալի, բայց ոչ հույս ապագայի: Հայ տարագրությունը հետգհետե սկսում էր ուշքի գալ Լոզանի անիծյալ դաշնագրի շորշոփից(5): Բնականաբար, առաջին շարժվողը պիտի լիներ մտավորականությունը: Փարիզում հավախմբված էին ամեն հասակի եւ ընկերային վիճակի հայ մտավորականներ՝ Պոլսից, Թիֆլիսից, Հայաստանից, Ռուսաստանի զանազան մասերից: Արձագանքներում, ամեն երեկո, հուզումնալից վեճեր էին տեղի ունենում. վերաքննում էին անցյալը, պատասխանատուներ էին փնտրում, նոր ուղիներ հարթում, ջահելները՝ Սեն Միշելի կաֆեներում, երեցները՝ էտվալի շուրջը. ուր, Ավերյոն Քլիբրոյի վրա, գտնվում էր Լեհաստանի] Ֆլեռաբատեանքա] պատվիրակությունը:

Վերաքննություն եւ նոր ուղիների որոնում տեղի էր ունենում եւ Հայաստանի] [Հանրապետության] պատվիրակության շուրջը համախմբված մտավորականների շրջանում: Թրոկադերո հրապարակի սրճարաններից մեկում շաբաթը մի քանի երեկո հավաքվում էին Ա.Ահարոնյանը, Մ.Վարանդյանը(6), պրոֆ. Ն.Ադոնցը, որ արդեն պատրաստվում էր Բրյուսելի փոխադրվելու, Ռ.Բերբերյանը(7), Ա.Ջամալյանը(8), Ա.Վաչյանը(9), Հ.Ջավդյանը, Ա.Խատիսյանը(10), Ա.Հանդյանը(11) եւ ուրիշներ: Մի բաժակ կաֆէ կրնմի կամ բորդո բլոնի շուրջ միսկեւ ուշ գիշեր քննում էին օրվա հարցերը եւ գործունեության նոր ուղիներ էին ճերկայացնում:

Այդտեղ էր, որ Ավ.Ահարոնյանը առաջարկ բերեց հիմնելու մշակութային մի մեծ ընկերություն, որ պիտի ունենար Հայկական ճեմարան, հրատարակչական մաս, մի մեծ ամսագիր եւ այլն: Նա առիթ էր ունեցել այս նյութի մասին խոսելու Բրյուսելից մեծահարուստ վաճառական Խորասանջյանի(12) հետ, որ շատ հավանել էր եւ խոստացել նյութապես աջակցել ձեռնարկին:

Գաղափարը հիանալի էր եւ վեճ չէր ցեղնող: Սակայն ինչպե՞ս իրականացնել: Որտեղի՞ց գտնել պահանջված մեծ գումարը: Ահարոնյանը հույս հայտնեց, որ կարելի կլինի հետաքրքրել Գալուստ Գյուլբենկյանին(13) ճեմարանի հարատեւ հիմնադրամ տրամադրելու: Պրոֆ. Ադոնցը գրեթե հանդգնված էր, որ մեծահարուստ Աբր. Ղուկասյանը(14) կնվիրեր անսպառի համար պահանջված դրամը: Խորասանճյանի խոստումը արդեն ապահովված էր...

Որոշվեց, որ մշակութային ընկերության եւ ամսագրի ծրագրի նախագիծը պատրաստենք Ադոնցը եւ ես: Կազմեցինք: Փառավոր գործ պիտի դուրս գար: Մի մեծ ու լայնայնցող, զուտ մշակութային կազմակերպություն, եթե հիշողությունս ինձ չի դավաճանում, երկու միլիոն ֆրանկ հիմնական դրամագլխով, որ պիտի տար Գ.Գյուլբենկյանը: Փարիզում պիտի հիմնվեր Հայկական ճեմարան նույն Գյուլբենկյանի եւ Խորասանջյանի նյութական օժանդակությամբ: Փարիզում պիտի հրատարակվեր մի հատ ամսագիր Աբր. Ղուկասյանի աջակցությամբ: Պիտի հատատվեր հրատարակչական գործ: Հայոց պատմության մեջ նմանը չտեսնված մի կազմակերպություն:

Վե՞ղը: Վե՞ղը ինչ եղավ, պիտի հարցնե այս ընթերցողը:

Վերջը եղավ այն, ինչ որ հաճախ պատահում է հայ իրականության մեջ:

Կարծեմ մի տարուց ավելի տեւեցին «ճանապատարտական» աշխատանքները եւ բանակցությունները: Գալուստ Գյուլբենկյանը, հույսեր ներշնչելուց հետո, մերժեց դրամ տալ մշակութային ընկերության եւ ճեմարանի համար՝ այն առարկությամբ, թե ինքը չի հավատում, թե հնարավոր է արտասահմանում պահել հայությունը:

Խորասանճյանը խոսք էր տվել Գրիգորիոս վարդ. Պալաքյանին(15) Մարսելում շինել հայոց եկեղեցի եւ ի վիճակի չէր այլեւս մեծ գումար տրամադրել ճեմարանին:

Ա.Ղուկասյանը ասել էր Ադոնցին. «Պատրաստ եմ ամսագիրը իմ միջոցներով տպել իմ տպարանում, բայց խմբագիրների ծախսը դուք պիտի հոգաք»: Ադոնցը պահանջել էր, որ Ղուկասյանը հանձն առնե հոգալ ամսագրի բոլոր ծախսերը:

Մի խոսքով՝ լեռը ծնեց մուկ:

Ադոնցի՝ Բրյուսելի փոխադրվելուց հետո շուտով մեր Տրոկադերո հրապարակի հավաքույթերեր էլ վերջ գտան(16):

Բրյուսելի համալսարանում Ադոնցը հայոց պատմության պրոֆեսորի պաշտոն ուներ եւ դասախոսություններից ազատ օրերին գալիս էր Փարիզ «հայկական օդ շնչելու համար»: Ներկա էր գտնվում մեր «Գրական ակումբի»(17) հավաքույթներին: Հաճախ հանդիպում էինք այս կամ այն սրճարանում: Մեր բարեկամությունն ավելի եւս սերտացավ իմ «Վեմ» հանդեսի(18) հրատարակությունից հետո, որի առաջին թիվը բացվեց նրա՝ խաչատուր Աբովյանի մասին մի հոդվածով(19): Պատմական որոշ հոդվածների ձեռագրերը ես ուղարկում էի նրան եւ նրա հավանությունը առնելուց հետո միայն տալիս էի հրատարակության:

Իմիջիայլոց, հիշեմ այստեղ մի դեպք: «Վեմ»-ը լույս տեսնելուց հետո Կիպրոսից մի ընդարձակ «ուսումնասիրություն» ստացա՝ Նուպար Մագաուտյան ստորագրությամբ: Հեղինակը կցել էր եւ իր լուսանկարը, եւ ինքնակենսագրությունը՝ թախանձագին խնդրանքով, որ անպատճառ հրատարակեմ «Վեմ»-ում: Ձեռագիրը ուղարկեցի Ադոնցին եւ շուտով ստացա հետ՝ Ադոնցի երկտողով. «Այ տղա, որտեղի՞ց ես ճարել այս հոսհոսին: Նետիր զամբյուղը»:

Ես ձեռագիրը վերադարձրի հեղինակին: Մի քանի ամիս անց Մագաուտյանի այդ «ուսումնասիրությունը» երեւաց «Հայրենիք» ամսագրում: Ադոնցը կարծել էր, որ ես եմ ուղարկել, եւ մի խիստ լվացողական էր գրել այդ առթիվ:

Վերջը պարզվեց, որ Մագաուտյանը դիմել է խորամանկությամբ: Ձեռագիրը ուղարկել էր «Հայրենիք» ամսագրի խմբագրությունը՝ գրելով, որ իբր թե ես խմբագրել եմ «Վեմ»-ի համար, բայց ինքը գերադասում է տալ «Հայրենիքին»: Մագաուտյանը մաքուր եւ դյուրընթեռնելի ձեռագիր ուներ, սիրում էր երեւալ բոլոր թերթերում, բայց անարժեք պատմագետ էր:

Որոշ չափով ես Ադոնցին եմ պատմական, որ Հ.Ջավդյանը դարձավ «Վեմ»-ի մնայուն աշխատակից՝ տալով մի շարք լուրջ ուսումնասիրություններ Սայաթ-Նովայի, Մխիթարյան միաբանության, լեհախայերի եւ այլ նյութերի մասին: Ջավդյանը գրում էր ուսւերեն, եւ ես թարգմանում էին հայերեն: Իմ պնդումի վրա նա սկսեց աշխատանքել եւ «Հայրենիք» ամսագրին:

Զբաղված լինելով համալսարանական դասախոսություններով եւ պատմական թրանսերեն ուսումնասիրություններով՝ Ադոնցը չկարողացավ շատ աշխատակցել «Վեմ»-ին, բայց միշտ մոտ մնաց նրան եւ իրեն համարում էր «Վեմ»-ի աշխատակիցների ընտանիքի մտերիմ մի անդամ:

Իմ ծանոթությունը պրոֆ.Նիկոլայոս Ադոնցի հետ սկսվում է Պետերբուրգից, ուր ես ուսանող էի համալսարանի իրավաբանական բաժնում(24), իսկ նա նոր էր հրավիրվել հայագիտության դասախոս(25):

Եթե չեմ սխալվում, 1908-ի վերջերին էր կամ 1909-ի սկզբին: Ն.Ադոնցը պիտի տար իր մուտքի դասախոսությունը: Շատերիս համար անծանոթ անուն էր: Հանդարծում Տերտերյանը(26), Սարգիս Սրապիոնյանը(27) եւ եես որոշեցինք որքան կարելի է շատ ուսանողներ լցնել լսարանը, որպեսզի մեծ բազմության առջեւ խոսի մեր հայրենակիցը: Բայց մեծ բազմություն չհավաքվեց, ո՞վ ակամբ ուներ լսելու ինչ-որ «Ծաթ ժողովրդի մասին», որ դասախոսության նյութն է հայտնարարված(28): Հազիվ մի քանի տասնյակ ուսանողներ եւ ուսանողուհիներ էին եկել, մեծ մասը՝ հայեր, եւ մի քանի պրոֆեսորներ, որոնց մեջ եւ Ն.Մառը(29):

Դասախոսության նյութը, ինչպես ասացի, «Ծաթ ժողովրդի մասին» էր: Ովքե՞ր էին այդ ծաթերը եւ ի՞նչ գործ ունեին նրանք ցրտաշունչ Պետերբուրգի համալսարանի պաղ լսարանում: Դասախոսը՝ կարճահասակ, նիհար, թաշկինակով ճակատի քրտինքը սրբելով, ձղձիմ ձայնով ու դժվար լսելի ռուսերենով, անհույզ բաներ էր ասում անծանոթ ժողովրդի մասին, որ ինչ-որ հարաբերության մեջ է եղել մեր նախնիների հետ...

Լավ է, որ չէր հաջողվել մեզ մեծ բազմություն հավաքելու: Ես լսարանից հեռացա առանց ծանոթանալու դասախոսի հետ: Եվ միայն շաբաթներ անց վերջը առիթ ունեցա ծանոթանալու հետը:

Պետերբուրգի հայ ուսանողության միությունը կոչվում էր «Ժողով»: «Ժողով»-ի վարչության հանձնարարությամբ Խ.Կարճիկյանը(30) եւ ես տեսակցություն ունեցանք պրոֆ. Ադոնցի հետ: Չեմ հիշում՝ ինչ գործի համար: Տեսակցության ընթացքին պարզվեց, որ շատ քիչ ուսանողներ են ներկա լինում հայագիտական դասախոսության, եւ Ադոնցը բավական դառնացած էր: Առանց իրեն մի բան ասելու, Կարճիկյանի հետ որոշեցինք «մոբիլիզացիայի ենթարկել» մեր տղաներին: Հաջորդ դասախոսության Ադոնցը լսարանում տեսավ 25-30 ուսանողներ, եւ այնուհետեւ այդ թիվը երբեք չպակասեց, որով ոչ միայն Ադոնցի պրոֆեսորական վարկը բարձրացավ հաչս համալսարանի վարչության, այլեւ ամրացավ հայագիտական ամբիոնի դիրքը: Պետք է ասել, որ առավելապես Խ.Կարճիկյանի ջանքերով հայագիտական լսարանը միշտ լիքը էր լինում: Մեծ մասամբ դաշնակցական կամ համակիր ուսանողությունն էր ներկա լինում Ադոնցի դասախոսություններին: Նա այդ տեսնում էր եւ թեեւ հայացքներով պահպանողական մարդ էր՝ հակառակ ծայրահեղ ձախակողմյան գաղափարներին, իր հարաբերությունները ազատամիտ ուսանողության հետ մտերիմ էին: Թե համալսարանում, եւ թե եկեղեցական հոգաբարձության մեջ նա աչշտպան էր ուսանողական դատի(31):

Պետերբուրգից շատ հիշողություններ չունեմ Ադոնցի մասին: Իմ հարաբերությունները նրա հետ միշտ եղել են պաշտոնական հողի վրա, իբրեւ «ժողով»-ի անդամներից մեկը: Երեւի այդ էր պատճառը, որ երբեւիցե նա իմ անունը տված լիներ. միշտ կոչում էր «ազգապետ», անմեղ հեգնանքով, իհարկե:

Այնուհետեւ, ես Ադոնցին հանդիպեցի Փարիզում, տասնյակ տարիներ վերջը: Իմ տարագրության ուղին անցել էր Հայաստանից Միջին եւ Մերձավոր Արեւելքի վրայով: Ադոնցը անկախ Հայաստանում չէր եղել եւ տարագրվել էր հյուսիսային ճանապարհով: Իրար հանդիպեցինք Սենի ափին, իբրեւ քաղաքական տարագիրներ: Կյանքը վատ կատակ էր խաղացել մեր գլխին. «աջն» ու «ձախը» իրար էին խառնվել, ճախկին անջրպետները խորտակվել էին, եւ այժմ մենք ավելի մոտ էինք զգում իրար:

Հետաքրքրական է, որ Ռուսաստանում Ադոնցը ոգեբաղնորեն ավելի մոտ էր մեզանից ավելի ձախ սոցիալ-դեմոկրատների հետ: Դաշնակցական ուսանողներին նա հաշվի էր առնում իբրեւ ուժ, բայց մտերիմ էր նույնիսկ բոլշեւիկ սոցիալ-դեմոկրատների հետ: Ընդհանուր ելույթ էր այդ. հայ պահպանողականները հաճախ մեկ ջոկատ էին կազմում ծայրաեղ սոցիալիստների հետ ՀՅ Դաշնակցության դեմ՝ հետեւելով ուկրաինական իմաստությամբ. «Ինոյ ավելի դառն լիմի, միայն թե տարբեր բան լիմի»: Իրենց հերթին՝ ծայրահեղ ձախակողմյանները գործում էին ձեռք ձեռքի պահպանողականների հետ եւ աշխատակցում էին պահպանողական թերթերին: Նույնը չէ՞ եւ այժմ Սփյուռքում: Հայ պահպանողական ռամկավարները ու բոլշեւիկ համայնավարները դաշնակից ու գինակից են հակադաշնակցական պայքարում:

Տարագրությունը ցնցեց շատերի մտքերը եւ դրեց նրանց բնական հանգիստ մեջ: Անգլիական իմաստով պահպանողական՝ Ադոնցը Սփյուռքում էլ աշխարհայացքով մնաց հավատարիմ պահպանողականության, բայց (ապրումներով) ավելի դաշնակցական ոլորտում էր գտնվում: Խառնվածքով մոտիկ չէր, պայքարող կազմակերպության անդամ չէր կարող լինել, բայց իր ազգային իդեալներով անապյման ուղեկից էր ՀՅ Դաշնակցության:

Ադոնցը գերազանցապես գիտնական էր, վերջին մոհիկաններից մեկը հայ պատմագետների շարքում: Տարագրությունից առաջ, մինչեւ 1920թ. նա արդեն բարձր աստիճանի հասած գիտուն էր. իր «Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում»(32) չգերազանցված պատմական հոյակապ հատորը դասական գործ է պատմագիտության ասպարեզում: Միայն այդ գրքով Ադոնցը կարող է դասվել անմահների շարքին:

Տարագրության մեջ եւս Ադոնցը շարունակեց իր գիտահետազոտական աշխատանքը՝ ավելի եւս խորանալով հայ-բյուզանդական պատմության ուսումնասիրությունների մեջ (33):

Ես հիշում եմ իմ մի զրույցը բյուզանդագետ պրոֆեսոր Գրեգուարի (34) հետ Նյու-Յորքում՝ Կոստաս Զարյանի(35) հետ միասին: «Ադոնցը, – ասաց բելգիացի բյուզանդագետը, – Բյուզանդիայի պատմությունը դարձրեց Հայաստանի պատմություն»: Ավելի ճիշտ կլիներ ասել՝ հայերի պատմություն: Ադոնցը երեւաց հանեց ու ներկայացրեց մի շարք ակամվոր հայեր, որոնք ղեկավար դեր են կատարել Բյուզանդիայի քաղաքական, ռազմական եւ մշակութային կյանքում: Հայ կայսրեր, հայ զորավարներ, հայ զորամասեր, հայ պետական վարիչ դեմքեր: Նա կարող էր ավելացնել նաեւ, որ այդ հայերի ձեռքով էլ Բյուզանդիոնը մեծապես նպաստեց Հայաստանի քայքայման:

Զարմանալի երեւույթ է. հայ մարդը օտարի ծառայության մեջ գրեթե դադարում է հայ լինելուց: Բյուզանդիոնը բացառություն չէր: Այսօր նույնը տեսնում ենք եւ Ռուսաստանում:

Հայաստանի Հանրապետությունը կործանվեց նաեւ «ակամավոր» հայերի դավերով իրենց մայր հայրենիքի դեմ: «Եթե, – ասում էր դառնությամբ Ադոնցը, – եթե Բյուզանդիայի հայ կայսրերը ու հայ զորավարները հետաքրքրվին ու գործեին հոգուտ հայերի, Հայաստանի ճակատագիրը կարող էր տարբեր լինել»: Նույնը կարող ենք ասել եւ Ռուսաստանի հայ զորավարների եւ հայ «կայսրերի» մասին:

Եթե Լորիս-Մելիքովները(36), Կարախանները(37), Միկոյանները հետաքրքրվեին եւ աշխատեին օգտակար լինել Հայաստանին, հայության ճակատագիրը կարող էր տարբեր լինել:

Ծանոթագրություն

1. «Ն.Ադոնցը Բրյուսելից Փարիզ պիտի գար» – 1931թ. նոյեմբերից Ն.Ադոնցը մշտապես ընակվում էր Բրյուսելում, քանզի նշանակվել էր տեղի Ազատ համալսարանի հայագիտության ամբիոնի վարիչ:

2. «Pa pneumatique» - Փոստային արագ հաղորդակցության տեսակ: Օգտագործված է փոխաբերական՝ կշտամբելու իմաստով:

3. Հ.Ջավդյան (Ջավրիեւ) - Ազգային հասարակական գործիչ, պատմաբան: Ավարտել է Ս.Պետերբուրգի համալսարանի իրավաբանական ֆակուլտետը: Ն.Ադոնցի անձնական բարեկամներից էր:

4. Ա.Ահարոնյան (1866-1948) – Գրող, հասարակական-քաղաքական գործիչ, դիվանագետ: Ավարտել է Լոզանի եւ Սորբոնի համալսարանները: Հայոց ազգային խորհրդի նախագահ, Հայաստանի Հանրապետության խորհրդարանի նախագահ, Հայաստանի Հանրապետության պատվիրակության ղեկավար:

5. Լոզանի դաշնագիրը կնքվել է Լոզանի միջազգային կոնֆերանսի (20. II. 1922-24, VII) ավարտական նիստի ժամանակ: Հեռց այստեղ է գերեզմնվել Հայկական հարցը: Հետաքրքիր է, որ դաշնագրում ոչ մի հիշատակություն չկա Հայկական հարցի եւ ընդհանրապես հայերի ու Հայաստանի մասին:

6. Մ.Վարանդյան (1874-1934) – Հրապարակախոս, պատմաբան, դիվանագետ, ՀՅ Դաշնակցության գաղափարախոս-տեսաբան: Հեղինակել է «ՀՅ Դաշնակցության պատմություն» երկհատորյակը (Փարիզ, 1934-1950):

7. Ռ.Բերբերյան (1873-1942) – Մանկավարժ, գրականագետ, մշակութային գործիչ, «Հայ հանմայք» շաբաթաթերթի խմբագիր: Եղել է Ն.Ադոնցի մտերիմներից:

8. Ա.Ջամալյան (1882-1940) – Մանկավարժ, լրագրող: Ավարտել է Բեռլինի համալսարանը: «Հորիզոն» թերթի խմբագիր: Հայաստանի Հանրապետության խորհրդարանի անդամ: Հ.Օհանջանյանի կառավարությունում հաղորդակցության նախարար, ՀՅ Դաշնակցության բյուրոյի անդամ (1919-1933):

9. Ա.Վաչյանց (1863-?) - Հասարակական գործիչ: Ճարտարագետ, ավարտել է Ս. Պետերբուրգի համալսարանի տեխնիկական ֆակուլտետը: Բաքվի Հայոց ազգային խորհրդի անդամ:

10. Ա.Խատիսյան (1876-1945) - Հասարակական-քաղաքական գործիչ: Սովորել է Մոսկվայի եւ Խարկովի համալսարանների բժշկական ֆակուլտետներում: Թիֆլիսի քաղաքագլուխ, Հայոց Ազգային բյուրոյի նախագահ, Հայաստանի Հանրապետության պատվիրակությունների ընդհանուր քարտուղար:

12. Վ.Խորասանճյան - Մեծահարուստ, ազգային բարերար, «Եգիպտոսի առեւտրական ձեռնարկուների ընկերության» բաժնետեր: Բրյուսելի հայկական համայնքի ղեկավարներից:

13. Գ.Գյուլբենկյան (1869-1955) – Ազգային բարերար, ճավարդյունաբերող, «Թուրքական նավթային ընկերության» նախագահ: Հայկական ընդհանուր բարեգործության նախագահ (1930-1932):

14. Ա.Ղուկասյան – Մեծահարուստ, նավարդյունաբերող, ազգային բարերար: Ն.Ադոնցի անձնական բարեկամներից: Նա է հովանավորել Ն.Ադոնցի «Պատմական ուսումնասիրություններ» (Փարիզ, 1948) ժողովածուի հետմահու հրատարակությունը:

15. Գր.Պալաքյան (1879-1934) – Եկեղեցական գործիչ, պատմաբան: Եղել է Երզնկայի, Մանչեստրի եւ Մարսելի հայոց հոգեւոր առաջնորդ, Արեւմտյան Եվրոպայի առաջնորդական տեղապահ: Ն.Ադոնցի հետ ունեցել է նամակագրական կապ:

16. Այլ առիթով եւս Ս.Վրացյանն անդրադարձել է Ահարոնյանի եւ Ն.Ադոնցի սույն մտահղացմանը. «Ահարոնյանը եւ պրոֆ. Ն.Ադոնցը աշխատում էին երկու մեծահարուստ հայերից՝ Գալուստ Գյուլբենկյանից եւ Վահան Խորասանճյանից մի խոշոր գումար ապահովել մշակութային ընկերության եւ գրական ամսագիր հիմնելու համար: ….Դարուստ պարոնները խոստումներով օրորեցին եւ, ի վերջո, մերժեցին դրամ տալ:

…Փարիզում հայ մտավորականությունն այդ օրերին Ահարոնյանի ու պրոֆ. Ն.Ադոնցի գլխավորությամբ մշակութային մեծ-մեծ ծրագրեր էր որոճում՝ մշակութային միություն հիմնել, երկրորդական վարժարան բանալ հրատարակչական ձեռնարկներ, գրական ամսագիր: Դիմում էր եղել Գալուստ Գյուլբենկյանին, որ այդ նպատակով որոշ գումար հատկացներ: Դիմումը էր եղել եւ ուրիշ հարուստների՝ միեւնույն արդյունքով» (Ս.Վրացյան, Ամձիրք Ավիրեաց, Բեյրութ, 1969, էջ 162, 206):

17. «Գրական ակումբը» ստեղծվել է 1928թ.: Միավորում էր Ֆրանսիայում բնակվող բոլոր հայ գրողներին: Ն.Ադոնցը եղել է Ֆրանսահայ գրողների ընկերության առաջին նախագահը (1928-1930):

18. «Վեմ» - Մշակույթի ու պատմության երկամսյա, ապա եռամսյա հանդես, լույս է տեսել Փարիզում 1933-1939թթ. ընթացքում՝ Սիմոն Վրացյանի խմբագրությամբ:

19. Խոսքը Ն.Ադոնցի «Խաչատուր Աբովյանի վախճանը» (տես «Վեմ», հ. Ա, էջ 5-13) հոդվածի մասին է:

20. Ն.Ադաուտյան (1898-1958) – Կիպրահայ կրթական գործիչ, մանկավարժ, հայագետ: 1934թ. Մագաուտյանը «Հայրենիք» ամսագրում տպագրել է մի քանի հոդվածներ: Այստեղ խոսքը հավանաբար վերաբերում է նրա «Հայ վաճառականությունը» հոդվածին (տես «Հայրենիք», 1934, հուլիս, №9, էջ 112-124):

21. Ամենաթարքիր չէ նշել, որ ամերիկահայ նշանավոր բանաստեղծ Հ.Բյուրտյանը սույն հեղինակի աշխատանոցի մասին հայտնել է նույնպիսի կարծիք. «Պարոն Ն.Մագաուտյան կրնա ասիկա ապատմագիտություն կոչել, սակայն դժբախտաբար բուն հեքիաթ է, իսկ ռամկորեն՝ մասալ» (տես «Հայրենիք» 1935, №6, էջ 160):

22. «Վեմ»-ում լույս են տեսել Հովհաննես Ջավդյանի «Սայաթ-Նովա», «Թ.Թորամանյանի կյանքն ու գործը», «Պրոֆեսոր Ն.Ադոնցի վերջին գործերը», «Թիֆլիսի բարբառի վճռաբարները», «Հայաստանի մշակութային պատմությունը», «Պարսկաստանի հեղափոխությունը եւ Մելքոն խանը», «Գաբրիել Սունդուկյան» հոդվածները (տես «Վեմ», 1933-1936):

23. Բացի Դավիթ Բեկից նվիրված վերոնշված հոդվածից, Ն.Ադոնցը «Վեմ»-ում տպագրվել է եւս մեկ անգամ՝ գրախոսել է Մ.Աբեղյանի «Նոր հայերեն թերաբանություն» գերմաներեն աշխատությունը («Վեմ», 1936, №4, էջ 40-51):

24. Ս.Վրացյանն իրավաբանական ֆակուլտետում սովորել է 1908-1910թթ.:

25. Ն.Ադոնցը Պետերբուրգի համալսարանի դասախոս՝ արիվատ-դոցենտ է հաստատվել 1909թ. հուլիսի 1-ին, պրոֆեսոր՝ 1916-1920թթ.:

26. Հ.Տերտերյան (1884-1955) – Գիվանագետ, պետական գործիչ: Եղել է Հայաստանի խորհրդարանի անդամ, Ս.Վրացյանի կառավարությունում՝ ֆինանսների եւ խնամատարության նախարար, «Հայրենիքի փրկության» կոմիտեի անդամ եւ ֆինանսների նախարար:

27. Ս.Սրապիոնյան (1883-1937) – Խորհրդային պետական եւ կուսակցական գործիչ, առավելապես հայտնի է Լուկաշին կեղծամվամբ: Ավարտել է Պետերբուրգի համալսարանի իրավաբանական ֆակուլտետը (1910): Խորհրդային տարիներին զբաղեցրել է կուսակցական եւ պետական բարձր պաշտոններ, եղել է Հայկոմկուսի Կկ քարտուղար, Ժողկոմխորհի նախագահ, Անդրֆեդերացիայի կառավարության նախագահի տեղակալ, առեւտրի ժողկոմ եւ այլն:

28. Ն.Ադոնցի սույն դասախոսությունը հետագայում հրատարակվել է Ռուսաստանի լուսավորության նախարարության գիտական հանդեսում (հատոր 32, Ս. Պետերբուրգ, 1911, էջ 238-249), տես նաեւ այդ հոդվածի հայերեն թարգմանությունը («Այ ծաթերի ծագման մասին», տես «Հանդես ամսօրյա», 1912, էջ 256-271):

29. Ն.Մառ (1864-1934) – Ակադեմիկոս հայագետ, Ս. Պետերբուրգի համալսարանի հայ-վրացական բանասիրության ամբիոնի վարիչ: Դեկավարել է Ն.Ադոնցի համալսարանական ուսումնառությունը, եղել է նրա մագիստրոսական եւ դոկտորական դիսերտացիաների պաշտոնական ընդդիմախոսը: Ն.Ադոնցի հետ ունեցել է նամակագրություն:

30. Խ.Կարճիկյան (1882-1918) – Իրավաբան, հասարակական-քաղաքական գործիչ: Ավարտել է Պետերբուրգի համալսարանի իրավաբանական ֆակուլտետը (1910): Եղել է Անդրկովկասյան կոմիսարիատի ֆինանսների կոմիսար (1917-1918), Հայաստանի Հանրապետության անդրանիկ կառավարության ֆինանսների նախարար (1918):

31. Իր հուշերի գրքում Ս.Վրացյանը քիչ այլ կերպ է ներկայացնում նշված իրադարձությունները: Նկատի ունենալով ընդհանրապես Ն.Ադոնցի վերաբերյալ հուշագրությունների չափազանց սակավ լինելը՝ անհրաժեշտ ենք համարում այստեղ ներկայացնել նաեւ այդ վկայությունը. «…Դամալսարանական դեպքերից առանձնապես հիշում եմ Ն.Ադոնցի առաջին դասախոսությունը: Նա հրավիրված էր դասախոսելու հայագիտական բաժնում իբրեւ Ն.Մառի օգնական, պայմանով, որ եթե չեմ սխալվում, առնվազն 10-15 մնայուն լսողներ ունենար:

Առաջին դասախոսությանը ներկա էին բազմաթիվ ուսանողներ, մեծ մասամբ հայեր, այլեւ պրոֆեսորներից շատերը: Դասախոսության նյութը նույնիսկ ինձ՝ ճեմարանականիս համար անծանոթ, ծաթ ժողովրդի մասին էր: Ադոնցը պերճախոս չէր, նյութն էլ՝ չոր ու անհետաքրքրական: Դասախոսի հետ միասին մենք էլ բավական քրտնեցինք: «Սատանան տանի, մեր ի՞նչ գործն է ինչ-որ այդ ծաթ ժողովուրդը», – լսում էի շուրջս:

«Հաջորդ դասախոսությանը հազիվ 10-15 հոգի էր ներկա: Կարող էր Ադոնցի պաշտոնն իսկ վտանգվել, որ կլիներ խայտառակություն հայ ազգի համար: Մեր կոմիտեն պարտադիր հերթապահություն նշանակեց բոլոր ուսանողների համար, եւ Ադոնցը դասախոսություններն ունեցավ ունկնդիրների օրինական թիվը: Եվ Ադոնցը այնուհետեւ մտերմացավ ուսանողության հետ» (տես Ս.Վրացյան, Կյանքի ուղիներով, Դեպքեր, դեմքեր, ապրումներ, Գիրք Բ, Բեյրութ, 1960, էջ 118):

32. Սա Ն.Ադոնցի մագիստրոսական դիսերտացիան էր, որը լույս էր տեսել Ս.Պետերբուրգում՝ «Армения в эпоху Юстиниана. Политическое состояние на основе нахарарского строя» խորագրի ներքո (1908), երկրորդ հրատարակությունը՝ Երեւան, 1971: Տես նաեւ սույն մեծագրության Գառնկի Գյուլալյանի հայերեն մասնակի՝ տպագրված «Ակոս» ամսագրում (1947-1949) եւ առանձին գրքով (Բեյրութ, 1949), Ա.Խոնդկար-Գարսյանի անգլերեն (Լիսաբոն, 1969) թարգմանությունները:

33. Սա Ն.Ադոնցի՝ ֆրանսերենով լույս տեսած հիմնական աշխատությունները առանձին հատորով հրատարակել է բելգիացի հայագետ Ժերար Գարիտը՝ «Etudes Armeno Byzantines» (Լիսաբոն, 1965):

34. Անրի Գրեգուար (1881-1964) - Բելգիացի բյուզանդագետ եւ հայագետ: Նա է Ն.Ադոնցին իրավիրել դասախոսելու Բրյուսելի Ազատ համալսարանում: Հեղինակ է հայ-բյուզանդական հարաբերությունների նվիրված արժեքավոր աշխատությունների:

35. Կ.Զարյան (1885-1969) – նշանավոր գրող: Աշխարհի տարբեր համալսարաններում (Երեւան, Փարիզ, Նյու-Յորք, Բեյրութ եւ այլն) դասավանդել է գրականություն եւ օգտակար շատ մտահեղգումներ են գտնում: «Լեզու եւ մտածողություն», «լեզվի հնեաբանություն» հասկացությունները վերահասատեղ են իրենց գոյության իրավունքը: Մառը նաեւ գիտության խոշորագույն կազմակերպիչ էր: Նրա գլխավորությամբ արեւելագիտությունն անկառուս նվաճումների հասավ: Մառի հիմնադրած «Խրիստիանսկիյ Վոստոկ» («Христианский Восток», 1912-1922) ակադեմիական հանդեսն իր հեղինակությամբ ու կարեւորությամբ եզակի հրատարակություն է, իսկ «Հայ-վրացական բանասիրության բնագրեր եւ հետազոտություններ», «Հայկական-վրացական մատենագրաց», «Ամվր շար», «Հայ վիմագրության հուշարձաններ», «Լեզու եւ մտածողություն», «Կովկասյան բանասիրության բնագրեր եւ հետազոտություններ», «Հաբեթական տարրերը Հայաստանի լեզուներում» ես այլ մատեանշարեր դարձան հայրենական գիտության կազմավորման դպրոցներ: Մառի փի շարք աշակերտներ (Ն.Ադոնց, Հ.Օրբելի, Ի.Զավախիշվիլի, Ի.Մեշչանինով, Գ.Ղափանցյ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔԻ ԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՕԼԱՄԻՆԱՏԻՆ
ՀԱՅՈՒՄ՝ ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆ
Հեռախոս՝ (0285) 5 25 63 = (091) 45 90 47 = (077) 06 28 02
էլ. հասցե՝ www.syuniacyerkir.am
էլ. փոստ՝ syuniacyerkir@mail.ru

տպագրվում է 2003թ.
հոկտեմբերի 1-ից ■
հիմնադիր եւ հրատարակիչ
«Սյունեյաց աշխարհ» ՍՊԸ ■
№ 17 236
18 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2011

ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ Ն.ԱԴՈՆՑԻ ՄԱՍԻՆ

Պրոֆեսոր Նիկողայոս Ադոնց

Երեւան. Հայրապետը Պրոֆ. Ն.Ադոնցի մահուան (1942, Յունուար) առաջին տարելիցի առիթով, 1943 թուին, Նիւ-Եորքի մէջ տուած է Ն.Ադոնցին նուիրուած դասախօսութիւն մը (1): Հետեւեալ գրութիւնը կը ներկայացնէ այդ դասախօսութեան առաջին կարեւոր մասը, դժբախտաբար անաւարտ կը մնայ շարունակութիւնը, որ հաւանօրէն կատարուած է բերանացի: Մեր կողմէ կատարուած են որոշ թիւով լրացումներ, զորս առած ենք անկիւնաւոր փակագիծերու մէջ:



ԳԱՐԵԳԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ

Անցեալ տարին մեզ մեծ կորուստ բերաւ Նիկողայոս Ադոնցի մահուամբ. «հանգեաւ ի Տէր». ասուած ենք կրօնական մտքով, բայց «հանգցնել» բառը գործ ենք ածուն եւ մարելու մտքով. «ճրագը հանգցրու», «ճրագը հանգաւ», որ միանգամայն համապատասխան է Ադոնցի համար. նա լոյս էր, ճրագ, որ հանգաւ: Մեր մեծ գիտնականներից եւ հասարակական գործիչներից մէկն էր Պրոֆ. Նիկողայոս Ադոնց, որին իր ճիւղում փոխարինող առ այժմ ոչ ոք ունինք մեր ամբողջ ազգի մէջ: Նա ոչ միայն մեծ գիտնական էր, այլեւ գրական-գեղարուեստական զգացումով եւ կարողութեամբ օժտուած մի մտաւորական, որով նորա ուսումնասիրութիւնները, փաստակեան հետ, դառնում էին հիթեր, կենդանի եւ գրաւիչ: Բայց նաեւ ոչ միայն գիտնական էր, այլեւ մեծ հայրենասէր եւ եկեղեցասէր, հայ իւր հոգու բոլոր էութիւնը: Ադոնցին մօտիկ անձնականութիւնները միայն կարող են խորապէս զգալ անդարմանալի կորուստը՝ մեր ազգի, մեր եկեղեցու, մեր հայագիտութեան եւ գրականութեան համար նորա մահուամբ, եւ մենք՝ իրրեւ մէկը, որ հետեւել է նորա կեանքի ընթացքին՝ նորավաղ պատանեկութեան օրերից սկսած, խորապէս զգում ենք եւ ողբում այդ կորուստը՝ օրինելով նորա անմահ յիշատակը:

Ադոնցը ծագմամբ Սիւնեաց աշխարհի Ձանգեզուրի Բռնակոթ գիւղից էր: Յիշում ենք մեր առաջին հանդիպումը (2) Էջմիածնի Հոգեւոր Ճեմարանում. կայտառ, սրամիտ, համարձակ իր պատասխանների մէջ, որ հէնց առաջին օրը իր վերաբերեալ գրաւեց ճեմարանի սաների ուշադրութիւնը: Իւր ուսումը յաջողութեամբ վերջացրեց, ոչ միայն ճեմարանի երկրորդական բաժինը, այլեւ եղաւ Ա. եւ Բ. լսարաններում...(3)

Իզուր եղաւ մեր բոլոր աշխատանքները համոզել, որ մնայ ճեմարանում, ուսումը վերջացնէ մի տարի յետոյ: Ընկերների հոսանքին ենթարկուած թէեւ սրտով ոչ կամակից...(4)

Տփխիսում նա պատրաստուեցաւ եւ վերջնական քննութիւն տուաւ ռուսական-պետական գիմնազիայում եւ ապա անցաւ Պետերբուրգ՝ աշակերտելու Նիկողայոս Մաքի՝ նշանաւոր գիտնականին եւ հայագէտին: Բարձր է հարուստ դասակարգի համար ցանկալի բնակութեան վայր: Պետրոգրադի եկեղեցական խորհուրդը, որին անդամ էին ընտրուում հասարակութեան աչքի ընկնող եւ գիտական անձնաւորութիւններ, տարեկան մի քանի հարիւր հազար ռուբլիների եկամուտը գործադրում էր ոչ միայն եկեղեցու պայծառութեան, փառաւոր, երգեցիկ խմբի պահպանութեան, այլեւ մշակութային նպաստակների համար: Սիա այստեղ էր, որ Ադոնցը իւր բարերար ազդեցութիւնն ունեցաւ՝ տարեկան որոշ գումար յատկացնելով Պրոֆ. Մառի պեղումների համար Անիում, որ շատ տարիներ տեւեց եւ գիտական մեծ արդիւնք ունեցաւ: Մառի պեղումների արդիւնքը հիմք դարձաւ Անիում յատուկ թանգարանի շէնք շինելու, ուր դասաւորուեցան երեւան եկած գիւթական կուլտուրայի մնացորդները, հրատարակուեցան տարեկան տեղեկագրութիւններ, որոնք հիմնովին փոխելու վրայ էին եւ պիտի փոխէին բոլորովին մեր հասկացողութիւնները այդ թանգարանը եւ տակն ու վրայ չլինէր աւելի քան 15 տարի կատարուած պեղումների արդիւնքի մեծագոյն մասը: Մենք ամենայն տարի, գրեթէ, այցելում էինք Անի՝ պեղումների բերած նորութիւնները տեսնելու, եւ մի քանի անգամ ներկայ էր եղել եւ Ադոնցը:

Ուսական յեղափոխութիւնը նորաճ փոխադրեց Փարիզ: Այստեղ առաջին տարիների համար տեղեկութիւն չունինք. մեզ պակասում են հարկաւոր աղբիւրները նորա կեանքի ընթացքին հետեւելու: Բայց Ադոնցի նման մտքով ու սրտով հարուստ մարդը անգործ մնալ կարող չէր:

Հնագոյն աշխատութիւնը, որ մենք պատահում [ենք] նորա պանդխտութեան օրերին, կրում է ՀԻՆ ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀԱՅԵԼՍՔԸ վերնագիրը: «Աշխարհայեացք» ասելով նա հասկանում է պատմութեան մէջ այն (6), որ նորա արտաքին ատաղձին շունչ ու կենդանութիւն է տալիս. արտաքին ատաղձից ստեղծում է շէնքը, տաճարը կենդանի, ուրիշ այդ բառարանում նա տակն ու վրայ է անում եւ նոր բառեր ու տերմիններ է ստեղծում՝ ինչպէս ասում է՝ «Հայ-տաճկական պատերազմի հետեւանքով 1918 եւ 1920 թուերին, չոչնչանար հիրբեւ ամբողջ հայրենաբնակ հայութիւնը՝ Ամերիկայի մեծագոյն մասը: Մենք ամենայն տարի, գրեթէ, այցելում էինք Անի՝ պեղումների բերած նորութիւնները տեսնելու, եւ մի քանի անգամ ներկայ էր եղել եւ Ադոնցը:

«Հնագոյն աշխատութիւնը, որ մենք պատահում [ենք] նորա պանդխտութեան օրերին, կրում է ՀԻՆ ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀԱՅԵԼՍՔԸ վերնագիրը: «Աշխարհայեացք» ասելով նա հասկանում է պատմութեան մէջ այն (6), որ նորա արտաքին ատաղձին շունչ ու կենդանութիւն է տալիս. արտաքին ատաղձից ստեղծում է շէնքը, տաճարը կենդանի, ուրիշ բոլորովին մեր հասկացողութիւնները հիրբեւ ամբողջ հայրենաբնակ հայութիւնը՝ Ամերիկայի մեծագոյն մասը վայր: Պետրոգրադի եկեղեցական խորհուրդը, որին անդամ էին ընտրուում հասարակութեան աչքի ընկնող եւ գիտական անձնաւորութիւններ, տարեկան մի քանի հարիւր հազար ռուբլիների եկամուտը գործադրում էր ոչ միայն եկեղեցու պայծառութեան, փառաւոր, երգեցիկ խմբի պահպանութեան, այլեւ մշակութային նպաստակների համար: Սիա այստեղ էր, որ Ադոնցը իւր բարերար ազդեցութիւնն ունեցաւ՝ տարեկան որոշ գումար յատկացնելով Պրոֆ. Մառի պեղումների համար Անիում, որ շատ տարիներ տեւեց եւ գիտական մեծ արդիւնք ունեցաւ: Մառի պեղումների արդիւնքը հիմք դարձաւ Անիում յատուկ թանգարանի շէնք շինելու, ուր դասաւորուեցան երեւան եկած գիւթական կուլտուրայի մնացորդները, հրատարակուեցան տարեկան տեղեկագրութիւններ, որոնք հիմնովին փոխելու վրայ էին եւ պիտի փոխէին բոլորովին մեր հասկացողութիւնները Բագրատունեաց շրջանի մշակոյթի եւ արուեստի մասին, եթէ ռուսական մեծ յեղափոխութեան [եւ] հայ-տաճկական պատերազմի հետեւանքով 1918 եւ 1920 թուերին, չոչնչաներ այդ բառարանը եւ տակն ու վրայ չդարձնէր ամբողջ մշակոյթի հիմքերը՝ Ամերիկայի մեծագոյն մասը: Նա աշխատում է մեր հին, հեթանոսական կրօնի փշրանքներից, շրջապատող ազգերի կրօնների համեմատութեամբ ամբողջացնել պատկերը: Համեմատական մեթոդը գիտական լուսաբանութեան կարեւորագոյն միջոցն է լեզուաբանութեան, պատմութեան, հնէաբանութեան, գրականութեան, մի խօսքով՝ հոգեկան կոչված բոլոր գիտութիւնների համար: Այս է ճանապարհը խաւարի մէջ առկայծող բեկորներից ամբողջական շէնք կազմելու կամ հասկանալու այդ բեկորների արժէքը: Ադոնցի զարմանալի հմտութիւնը ոչ միայն մեծ ատաղձ է բերում այդ կողմից, այլեւ նոր լոյս՝ նրանց հասկացողութեան: Իսկ նորա զարմանալի սրամտութեամբ, հումորով լի, բանաստեղծական եւ հաճելի ձեւակերպութեամբ մտքերի զուգորդութիւնն ու շարայարութիւնը դարձնում են նորա գրուածքները՝ հետաքրքրական եւ գրաւիչ: Սիա ինչ է ասում նա իւր այս ձեռնարկութեան համար.

«Հշարդուել թաղուած աստուածներով այնպիսի ժամանակ, երբ կենդանի աստուածներն են նաեւ ոչ-ոչ համարուում, գուցէ եւ ուսայն աշխատանք է: Սակայն աստուածուրացութիւնը ոչ միան բարոյական լքումի նշան է, այլեւ ինքնակործութեան վատթար տեսակը: Որդարեւ, ի՞նչ է աստուածութիւնը, եթէ ոչ մարդկութեան վեհաշունչ երազների յայտնութիւն, եւ ի՞նչ է պատմութիւնը, եթէ ոչ նորանոր աստուածութեանց որոնումներ, որոնք բարձունքի տենչանք»: Ապա ուրեմն որոնել հին աստուածութիւնները, պարզել նրանց պատկերը, նշանակում է ոչ միայն «վեհաշունչ երազների յայտնութիւնը», այլեւ «նորանոր աստուածութեանց որոնումներ», ուրիշ խօսքով՝ աշխարհայեացք:

Ատիսի եւ Կիբէլէի պաշտամունքը պէտք է լինէր եւ Հայոց մէջ, որով դիւրանում էր քրիստոնէութեան ընդունելութիւնը. այդ նմանութիւնները [են] քրիստոնէական մեծ պասը, ծաղկազարդը, աւելի ճիշդ ծառզարդարը, աւագ շաբաթուայ հանդէսները եւ յարութիւնը, բնութեան մեռնելու եւ զարթումի գործողութիւնը:

Արայի եւ Շամիրամի առասպելը նոյնպէս կապում է վերակենդանացման կամ յարութեան գաղափարի հետ: Շամիրամը աստուածուհի էր, որի պաշտամունքը տարածուած էր նաեւ Միջագետքում, բայց նա Հայոց մէջ «ընդաբոյս էր եւ ոչ ներմուծուած», խալդերից ժառանգուած (7): Արալէզների պաշտման հետքը պահել են ոչ միայն Փաւստոս Բիւզանդ՝ Մամիկոնեան [Մուշեղ] իշխանին Արալէզների միջոցով յարութիւն տալու փորձի մէջ, եւ եզնիկ, այլեւ գտնում է նա «Լէգք» տեղի անուան մէջ՝ Վասպուրականում, ինչպէս եւ Սրուանձտեանի պատմած առքատիկ համբոյր տուող երեցկնոց թոնրի ջրով լցուելն ու Արալէզզ էլ շնդ էր ծագում՝ կապում է Դերկետոյի առասպելի հետ, կնոջ կերպարանքով մի ձուկ ջրհորի մէջ: Հայոց ծանօթ է եղել նաեւ Իշտարի պաշտամունքը Շամիրամի անուան տակ, որ Փ.Ասիայում կիրելէ էր կոչուում, Ատիսի ամուսինը, որոնց հետ կապուած առասպելը իրօք շատ նման է Շամիրամի եւ Արայի պատմութեան: Այս երկու ասատուածուհիների՝ Շամիրամի եւ Կիբելէի՝ Եփեսոսի Արտեմիսի պաշտամունքները, մէկը՝ Հայոց արեւելեան դրացիների, միւսը՝ արեւմտեան, ունեցել են իրենց սրբազան վայրերը: Վերջինիս հաւազօր էր Ամիհիոր. մէկի սրբավայրը՝ Տոսպում, միւսինը՝ Երիզայում: Հայոց մի ուրիշ աստուածուհի՝ Թորդանի Նանէն, համեմատելի է համարուում փռիւգիական Ատիսի մօր՝ Նանայի հետ: Նոյն կարգի աստուածուհի է եւ Աստղիկը, անուանների տարբերութեամբ



Լիբանան, Անթիլիաս, Սբ Գրիգոր եկեղեցի

տպագրվում է 2003թ.
հոկտեմբերի 1-ից ■
հիմնադիր եւ հրատարակիչ
«Սյունեյաց աշխարհ» ՍՊԸ ■
№ 17 236
18 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔԻ ԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՕԼԱՄԻՆԱՏԻՆ
ՀԱՅՈՒՄ՝ ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆ
Հեռախոս՝ (0285) 5 25 63 = (091) 45 90 47 = (077) 06 28 02
էլ. հասցե՝ www.syuniacyerkir.am
էլ. փոստ՝ syuniacyerkir@mail.ru

ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ Ն.ԱԴՈՆՑԻ ՄԱՍԻՆ

միայն, որի սրբազան վայրը Տարօնն է, իսկ Շամիրամինը՝ Վանը:

Աստղիկի անուան հետ կապուած մեր ժողովրդական աւանդությունը, իւր գիշերուայ լոգանքի ժամանակ նորան դիտել ցանկացող երիտասարդների աչքերից ծածկուելու համար, Մշոյ դաշտը մշուշով պատելը նմանութիւն ունի Ափրոդիտէի մի այլ տիպի՝ Անադիոմենէի պատմութեան հետ:

Ինչպէս բազմանուն է մայր աստվածուհին՝ Շամիրամ, Անահիտ, Աստղիկ, Նանէ, այնպէս եւ նորա զուգակցի անունը: Հնագոյնը դոցանից, ըստ Ադոնցի, Արան է՝ Շամիրամի սիրելին: Արան ոչ թե պատմական անձ է, այլ դիցաբանական պատկեր: Ինչպէս Շամիրամ, Աստարտէ, Կիբելէ փոխանակներ են իրար, այնպէս էլ Ադոնիս, Ատիս, Արան: Արայի առասպելի սրամտութեամբ, հումորով լի, բանաստեղծական եւ հաճելի ձեւակերպութեամբ մտքերի զուգորդութիւնն ու շարայարութիւնը դարձնում են նորա գրուածքները՝ հետաքրքրական եւ գրաւիչ: Սիա ինչ է ասում նա իւր այս ձեռնարկութեան համար.

«Հշարդուել թաղուած աստուածներով այնպիսի ժամանակ, երբ կենդանի աստուածներն են նաեւ ոչ-ոչ համարուում, գուցէ եւ ուսայն աշխատանք է: Սակայն աստուածուրացութիւնը ոչ միան բարոյական լքումի նշան է, այլեւ ինքնակործութեան վատթար տեսակը: Որդարեւ, ի՞նչ է աստուածութիւնը, եթէ ոչ մարդկութեան վեհաշունչ երազների յայտնութիւն, եւ ի՞նչ է պատմութիւնը, եթէ ոչ նորանոր աստուածութեանց որոնումներ, որոնք բարձունքի տենչանք»:

Արայի եւ Շամիրամի առասպելը նոյնպէս կապում է վերակենդանացման կամ յարութեան գաղափարի հետ: Շամիրամը աստուածուհի էր, որի պաշտամունքը տարածուած էր նաեւ Միջագետքում, բայց նա Հայոց մէջ «ընդաբոյս էր եւ ոչ ներմուծուած», խալդերից ժառանգուած (7): Արալէզների պաշտման հետքը պահել են ոչ միայն Փաւստոս Բիւզանդ՝ Մամիկոնեան [Մուշեղ] իշխանին Արալէզների միջոցով յարութիւն տալու փորձի մէջ, եւ եզնիկ, այլեւ գտնում է նա «Լէգք» տեղի անուան մէջ՝ Վասպուրականում, ինչպէս եւ Սրուանձտեանի պատմած առքատիկ համբոյր տուող երեցկնոց թոնրի ջրով լցուելն ու Արալէզզ էլ շնդ էր ծագում՝ կապում է Դերկետոյի առասպելի հետ, կնոջ կերպարանքով մի ձուկ ջրհորի մէջ: Հայոց ծանօթ է եղել նաեւ Իշտարի պաշտամունքը Շամիրամի անուան տակ, որ Փ.Ասիայում կիրելէ էր կոչուում, Ատիսի ամուսինը, որոնց հետ կապուած առասպելը իրօք շատ նման է Շամիրամի եւ Արայի պատմութեան: Այս երկու աստուածուհիների՝ Շամիրամի եւ Կիբելէի՝ Եփեսոսի Արտեմիսի պաշտամունքները, մէկը՝ Հայոց արեւելեան դրացիների, միւսը՝ արեւմտեան, ունեցել են իրենց սրբազան վայրերը: Վերջինիս հաւազօր էր Անահիտը. մէկի սրբավայրը՝ Տոսպում, միւսինը՝ Երիզայում: Հայոց մի ուրիշ աստուածուհի՝ Թորդանի Նանէն, համեմատելի է համարուում փռիւգիական Ատիսի մօր՝ Նանայի հետ: Նոյն կարգի աստուածուհի է եւ Աստղիկը, անուանների տարբերութեամբ եթէ «Երկնէր երկին» Վահագնի հետ է կապուել, ժառանգուած է մի ուրիշ աստուածուհիից, որ կարծում է էր-Արան պիտի լինի: Արէսը դարձել է Հերակլէս եւ հայ էրն ու Արան՝ Վահագն, որ արեւելեան Հերակլէսն է: Դիցաբանական երեւոյթների զարգացման ուղին է՝ բնութեան ուժերի աստուածացումը փոխարկում է յետոյ դիւցազուցների, ինչպէս Հերակլէս Յունաց մէջ եւ Վահագնը՝ Հայոց: Այդպէս էլ նրանց զուգակիցները Ափրոդիտէն Արէսից անցնում է Հերակլէսին, Իշտարը՝ Գիլգամէշին, Աստրեստաճեայց վէպի հերոսի, իսկ Աստղիկը՝ Վահագնին:

Այսպիսի համեմատութեան ուղիներով նա հասնում է այն եզրակացութեան, որ հին աշխարհայեացքի «հեռաւոր ղօղանջը տակաւին հնչում է կենդանի միջավայրում»՝ հազարաւոր տարիների սահելուց յետոյ: Մեւլեւի դերվիշների պարերի մէջ նա տեսնում է Կիբէլէի եւ Ատիսի աւանդը. մահմեդական «չախսէ-վախսէ» վերապրումներն են Իշտարի եւ Թամուզի. եգիպտիների Մելիք Թաուզը կարծում է նոյն Թամուզն է՝ Իշտարի ամուսինը: Նման բեկորներ նա որոնում է Լուսաւորչի եւ Տրդատի, Հռիփսիմէի, Գայիանէի եւ Նունէի անուանների հետ կապուած վկայաբանութեան մէջ, որոնց իրական դիմագծերը սքօղուած են առասպելական մշուշներով: Այսպէս է, օրինակ, Լուսավորչի մուտն ու ելն ի վիրապէն. իրողութեան հետ շաղկապուել են օձերի ընկերութիւնն ու բազմազան, անեռեւակայելի չարչարանքները: Դանիէլը նոյնպէս գնում է խոր փոսի մէջ, ուր զոյգ առիւծներն են, եւ այս ապացոյց է, որ նման հաւատալիքներ կային Առաջաւոր Ասիայի ազգերի մէջ: Նմանութիւն է նկատուում ասորական Գորիա եւ Շմոնի վկայաբանութեան հետ, ինչպէս մի-մի ձեռքից կախելը, յետոյ մի-մի ոտքից, ի վերջոյ մի փոսի մէջ ձգելը, որ էջմիածնի գիտնական միաբաններից Գալուստ Տէր Մկրտչեանը բացատրում էր, որպէս հետեւանք Ագաթանգեղոսի կախման այդ վկայաբանութիւնից: Ադոնցը յատկապէս ուշադրութիւն է դարձնում գուբի՝ «վիրապ» կոչուելու հանգամանքի վերայ: Նոյն բառով է թարգմանուած Ելից ԺԲ 29 «լակկոս» յունարէն բառը, բանդի նշանակութեամբ, փոխանակ «գուբ»-ի կամ խորխորատի(9): Եղիշէն եւս «վիրապ» բառն ունի բանդի իմաստով: Ապա նոյն վկայաբանութեան յուսարէ աւելի ընդարձակ փոփոխակի մէջ «խաւար գուբ» հայերէնի մէջ «գուբ մի խաւարային, որ կոչի վիրապ»: Բայց մեծահռչակ գիտնական Ա.Հառնակ (GESCHICHTE der altchristlichen Litteratur, II, 474) պարզէ է արդէն, որ Գորիա եւ Շմոնի վկայաբանութիւնը վաւերական գրութիւն չէ, այլ յեղիւրուած է Դ դարի վերջերին: Ասել է, թէ վկայաբանութիւնների մէջ նման չարչարանքների նկարագրութիւնը ընդհանուր տեղիք է եւ ոչ յատուկ Լուսաւորչին: Միակ պատմականը վիրապ ձգուելն է բանդի իմաստով, բայց այդ էլ հին հաւատալիքի այլաբանական հաւատիքն է, որ երեւում է եւ այլուր: Թրակացի Ձալմոքսը ահեռնտաման է գետնի տակ երեք տարի, որից յետոյ դուրս է գալիս իր առաքելութեան համար, որ անդիակաս կեանքի վարդապետութիւնն էր: Լուսաւորիչ եւս խոր եւ մութ վիրապից դուրս է գալիս հայ աշխարի լուսաւորելու համար: Ատիսն ու Ադոնիսը տարելցտարի մեռնում են, որ յետոյ յարութիւն առնեն: Արէսը 13 ամիս կալանաւոր է մնում երկաթէ թոնրի մէջ, եւ յետոյ արձակւում է: Զրադաշշտը փակւում է թագաւորի կողմից մի փոսի մէջ, ուր մի բարեպաշտ կին օրաւկան հաց էր ձգում նորա սնոնեան համար: Զգաթանգեղեոսի ձեռագիրներից ոմանք Լուսաւորչի բանտարկութիւնը 13 ամիս եւ նշանակում, որ Ադոնցին թւում է աւելի նախնական:

Այս նմանութիւնները ցոյց են տալիս, [որ] Լուսաւորչի վկայաբանութեան մէջ դիցաբանական շատ տարրեր կան խառնած:

■

Նիկողայոս Ադոնցը որպէս պատմաբան

Երեւան. Հայրապետի գիտական արխիւին մէջ գտանք նաեւ հետեւեալ անաւարտ գրախօսականը պատմաբան Պրոֆ. Գառնիկ Գիւզալեանի գիրքի մասին, նուիրուած՝ Ն.Ադոնցին: Այս գրախօսականը իր կարգին, կրկնութիւններով հանդերձ, որոշ լրացում մըն է Երեւ.Հայրապետի Ն.Ադոնցի նուիրած դասախօսութեան: Ձայն կը դնենք այստեղ անփոփոխ կերպով, միայն մեր կողմէ կատարելով որոշ լրացումներ, զանոնք առնելով անկիւնաւոր փակագիծերու մէջ:

Փոքրիկ գիրք է այս, ընդամենը 31 էջից բաղկացած, բայց բովանդակալից, եւ ուշադիր ընթերցողը շատ բան կարող է ուսանել, մանաւանդ միջակ ընթերցողը: Վերնագիրը մասամբ մատնանշում է տետրակի բովանդակութիւնը. հեղինակը կամենում է ամփոփ գաղափար տալ Ադոնցի գործերի մասին իբրեւ պատմաբանի: Եւ այդ յաջողուել է հեղինակին, գաղափար տալով նաեւ ընդհանրապէս պատմական գիտութեան մեթոդների եւ փոխնկերների մասին: Ադոնցի գործերը, նորա գլխավոր գործերը, տարաբախտաբար, արտասահմանի Հայութեան քիչ են ծանօթ. պատճառը նախ լեզուն է, գրուած են նրանք թուրքերէն կամ հայերէն գրաբարով, որ միշտ դժուարացնում են բաժանբաժան եւ ցրուած Հայութեան հաղորդակից լինել փոխադարձաբար իրար ստեղծագործութեան: Արտասահմանում Ադոնցի կատարած աշխատանքները մեծ մասով մասնաւոր խնդիրների եւ վերաբերւում, մի տեսակ նախապատրաստութիւն, ընդհանուր կարգաւորեալ հանդարութեան համար, եւ այդ աշխատանքներն էլ ցրուած՝ ֆրանսերէն կամ հայերէն պարբերականների մէջ, որ բնականաբար մատչելի են քչերին դարձեալ: Տարաբախտաբար չապրեց նա այդ նպատակն իրագործելու. գրել է միայն ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵՒՆ Ա հատորը ֆրանսերէն լեզուով: Ապա, ուրեմն, հեղինակը մի լաւ գործ է կատարել այս աշխատութեամբ՝ ծանօթացնել Ադոնցի անձն ու գործը հայ ընթերցողին:

Ադոնցը պատմաբան է, բայց նորա գիտութիւնը կեդրոնացած է հայ պատմութեան վերայ. ծանօթացնել այս մեծ աշխատաւորի գործը ընթերցասէր հասարակութեան, արժանի է գնահատութեան: Հեղինակը ինքը որոշում է իւր այս աշխատութեան նպատակը, որ է [ներկայացնել] Ադոնցի «քննութեան նիւթը, նիւթի մշակման մեթոդները եւ նրա կառուցած ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵՒՆ սիստեմը»: Այդպէս էլ նա երեք գլուխների կամ մասերի մէջ ամփոփում է իւր ասելիքը:

Ադոնցի քննութեան նիւթը Հայոց պատմութիւնն է. եթէ նա զբաղուում է եւ դրացի ազգերի այլեւայլ խնդիրներով, պատմութեան կամ դիցաբանութեան, նպատակն է լոյս ստանալ հայ ժողովրդի մէջ երեւան եկած նման խնդիրների բացատրութեան համար: Մեկուսացած, շրջապատից կտրուած պատմական երեւոյթ չկայ: Ադոնցը Հայոց պատմութեան զարգացման առանցքը աւատականութիւնն է համարում, այս նախարարութեան երեւոյթը, որ իր ծագմամբ եւ ձեւակերպութեամբ կապուած է Իրանի հետ, վերջինէն էլ ազդուած ընդունելով աւելի հին ասորաբաբելոնական քաղաքակրթութիւնից: Այս խնդրի պարզաբանութեան է նուիրուած Ադոնցի կատարած աշխատանքները, նուիրուած յատկապէս հայ-բիւզանդական մեթոդների եւ տեսութիւնների մէջ բացի Մառից օգտուել է որոշ չափով եւ եվրոպական գիտուններից:

Ադոնցի որդեգրած մեթոդը գենետիկ կամ ծագման մեթոդն է, որ երեւոյթներն ու գործողութիւնները ի նկատի ունի որպէս կապակցեալ միութիւն իրենց ծագման եւ զարգացման ընթացքի մէջ: Եթէ Յուստինիանոսի ժամանակի հայ նախարարութեան երեւոյթը պիտի բացատրէր հայ պատմութեան մէջ, պէտք է յետ գնար նորա ծագման շրջանները լուսաբանելու, մինչեւ Արտաշիսեան Հարստութեան ժամանակները, երբ հայ պետականութիւնն է երեւան գալիս, ինչպէս եւ Արշակունեաց թագաւորութեան: Ըստ Ադոնցի՝ վերջինների ժամանակն է հայ նախարարութեան զարգացման շրջանը, որպէս պետական սիստեմ: Աւատական յարաբերութեան սիստեմն էր այդ: Գենետիկ մեթոդին օգնութեան է բերում եւ բանահրականը, որովհետեւ գործածուած տերմինները արդիւնք են պատմական կեանքի եւ իրականութեան, թէեւ տերմինների բովանդակութիւնը փոխուում է ժամանակի եւ հասարակական կարգերի փոփոխութեան հետ: Մանաւանդ որ հայ լեզուի եւ գրականութեան գրաւոր երեւոյթները յառաջ են գալիս շատ ուշ, քան նախարարութեան ծագման եւ զարգացման շրջանն է:

Ծանոթագրութիւն

1. Ըստ Դերենկի Սրբազանի: - ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻ պաշտօնաթերթի 1942 եւ 1973 տարիներուն մէջ չհանդիպեցաք այդ դասախօսութեան յիշատակութեան: Ս.Ս.
2. Թուականի տեղը բաց ձգուած է: Ս.Ս.
3. Երեւ. Հայրապետը այս մասը չէ գրած իրրեւ իրեն շատ ծանօթ նիւթ, այլ բաւականացած է կախման կէտեր միայն դնելով. անշուշտ ուզած է դասախօսութեան ատեն բերանացի ընդլայնել: Ս.Ս.
4. Բուն վերնագիրն է. «ՀԱՅԱՍՏԱՆ ՅՈՒՍՏԻՆԻԱՆՈՍԻ ԴԱՐԱՇՐՋԱՆՈՒՄ», որ տպուած է ուուերէնէ, 1908 թուին: Ս.Ս.
5. Բառի մը տեղը բաց ձգուած է: Ս.Ս.
6. ՀԱՅՊԵՆԻՔ ամսագիր, 1926, Հոկտ. եր. 38:
7. Անդ, Նոյմ., եր. 83-4:
8. ԳՐՈՑ ՈՒ ԲՐՈՑ, եր. 53-4:
9. ՀԱՅՊԵՆԻՔ ամսագիր, 1926, դեկտ., եր. 79:
10. Ուզում է ասել Կաթողիկոսարանի:
11. Krumbacher-ի GESCHICHTE DER BYZANTINISCHEN LITTERATUR մեծ հատորի մէջ:
12. Առանձին գրքում:

ՀԱՍԿ, №3, 1954թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ ԱՍՏՎԱԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՆԱՆՑ ԱԶԳԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՑ
Գլխաւոր խմբագիր՝ Հրանդ Ք. Արմենեան
Հասցէ՝ Լոս Անճելըս, Քալիֆորնիա, 90029
Հեռախօս՝ (0285) 5 25 63 = (091) 45 90 47 = (077) 06 28 02
Էլ. հասցէ՝ www.syuniacyerkir.am
Էլ. փոստ՝ syuniacyerkir@mail.ru
տպագրվում է 2003թ. հոկտեմբերի 1-ից ■ հիմնադիր եւ հրատարակիչ «Այսօրվայ աշխարհ» ՍՊԸ ■
№ 17 236
Այս կարգի մտածութիւնն է նաեւ, որ ստիպում է խորապէս ցաւել ամերիկահայ գժտութիւնների առթիւ: Գարեգին սրբազանի ժամանումը մի առիթ էր վերջ դնելու անիմաստ երկպառակութեան: Մի քանի քահանաների պատճառով վիրաւորել Գարեգինի նման մի պատկառելի անձ, բացարձակապէս անհեթեվի է եւ անհասկանալի: Մոռանալու չէ մանաւանդ, որ նրա հանդէպ ցուցադրուած վարմունքը մեկնում են հեռու երկրում որպէս մի ընդդիմադրական ցոյց [այն] երկրի դէմ, որի հետ տակաւին կապուած է սրբազանը: Իսկ ի՞նչ շահ ունենք աւելի խորացնելու վիրը, որ արդէն գոյութիւն ունի:

Նամակիս նիւթից հեռացայ ակամայ: Բայց երբ մարդու գլուխը լի է անհանգիստ եւ տագնապող մտքերով, շեղուումն դառնում է հասկանալի: Եթէ ամառը կարողացայ, կը գրեմ ասելիքս «Սասմա ծրերի» մասին եւ ուրախութեամբ կը ղրկեմ: Յաւում եմ, որ ոչ մի հնարաւորութիւն կայ գլուխ հանելու այն յօդուածները, որ ծրագրել եմ տարիներ ի վեր «Հայրենիք»-ի համար:

Մեկբոնեան ֆոնդը ցանկութիւն է յայտնել հրատարակել առանձին գրքով «Հայրենիք»-ում երեւցած պատմական գրութիւններս: Ճշմարիտն ասած, ես ընդդիմացայ, բայց վերջը յօժարութիւն տուի այն յոյսով, որ այս առթիւ մի անգամ եւս այքի կ'անցնեմ այդ յօդուածները եւ կը սրբագրեմ բազմաթիւ սխալները եւ թերեւս թարմացնեմ:

Վրացեանիդ բարեւ. թո՛ղ շատ չխօսի քիչ խօսելի նիւթերի մասին, մանաւանդ հրապարակաւ:

Ողջոյն կնոջդ եւ յաջողութիւն քեզ՝
Ն. Ադոնց:
■

տպագրվում է 2003թ. հոկտեմբերի 1-ից ■
հիմնադիր եւ հրատարակիչ՝ «Սյունեյաց աշխարհ» ՍՊԸ ■
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՄԲ ԵՎԱԿԻՈՒԹՅՈՒՆ:
Գլխավոր խմբագիր՝ Ս.Գրիգորյան, 2003թ.
Հեռախոս՝ (0285) 5 25 63 = (091) 45 90 47 = (077) 06 28 02
էլ.հասցե՝ www.syuniacyerkir.am
էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru

ԱՐԽԻՎ

ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿԵԱՆ

Սիրելի Ն.Ադոնց,

Որոշել էի Հայաստան գալուս՝ Ձեզ մխիթարական բաներ գրել մեր ժողովրդի հոգեկան ու նիւթական վերելքի մասին, բայց հազիւ մի 10 օր անցած, պատահեց տարերքի հարուածը, եւ Ալեքսանդրապոլը բազմաթիւ գիւղերով դարձաւ աւերակոյտ՝ քաղելով հող ու քարի տակ հարիւրաւոր մարդիկ, կեղտաներեր ու հարստութիւններ: Ահագնէ, զարհուրելի աւերս ու աղէտ: Տասնեակ միլիոն ռուբլի ամեր: Ոչ մի չափազանցութիւն խօսքերիս մէջ: Քաղաքի տների 70-75... հարիւրը կործանուած են կամ այլեւս անբնակելի:

Յիշո՞ւմ ես մեր գիւղը (իմ գիւղը), ջրաղացը, իմ տունը - բոլորը, բոլորը՝ աւերակ, բառացի քարի հողի կոյտ, իմիջից պէտք է վերաշորդել, եթէ ---- լինի, այդպէս է բոլոր միւս վայրերում:

Ժողովուրդը, 70-80.000 ապրում է բացօթեա, սարսափած, զարհուրած: Ինչքա՜ն խելագարութեան դէպքեր:

Վախենում ենք, որ Շիրակը՝ գեղ ու բաղաք, փախչի, ամայանայ: Հարիւրներով մարդիկ փախչում են արդէն, լքելով ամէն բան: Եթէ շուտ օգնութիւն չհասնի, հայկական այս գաւառն էլ կորած պիտի հանարել:

Մխիթարականը այն է, որ առաջին ահակ... Խորհրդային Միութեան երկրներից սկզբնական օգնութիւն հասաւ. Մոսկուայից մօտ մի միլիոն ռուբլի, Թիֆլիսից, Պաքուից, Ուկրաինայից, Բիլոռուսիայից, Դաղստանից փող, սնունդ, փայտ, գործիքներ եւ այլն եւ այլն: Լայն չափերի օգնութիւն հիմա պիտի կազմակերպուի, սակայն կարիքը բարձր է, գերազանց է բոլոր չափերից: Արտասահմանը անպատճառ եւ անյապաղ օգնութեան պիտի հասնի, անվերապահ, բոլորաճուէր:

Դժբախտ ժողովուրդ ենք, շնչաւոր ու անշունչ իրերից հալածուած, բայց եւ շա՜տ քաջ ու տոկուն ենք: Աղէտի վայրերը եկած վրացիները զարմանում են՝ տեսնելով, որ մեր գիւղացիները, աւերակների տակից հաճելով իրենց փրիվեներին, մի ձեռքով քաղում են, միւս ձեռքով իւլուակներ են շինում: Ուրիշ մի ժողովուրդ մեր տեղը՝ բոլորովին կը լքէր հայրենիքը եւ շուտքը կ'առնէր ռուսական հեռաւոր տափաստաններում:

Սիրելի Ադոնց, ես կարճ եմ գրում, դուք արդէն հիմա լրագրերից իմացած կը լինէք մարմամասները:

Խնդրում եմ Ձեզ, սակայն հարկ չկայ խնդրելու Ձեզ, Դուք ամէնքդ լաւ ք հասկանում եւ խորապէս զգում-օգնութեան հասնելու հրամայականը:

Ես եկայ իմ տնտեսութիւնը կազմելու, բայց մի երկու ամիս առաջ մեծ եղբայրս մեռել էր, եւ հիմա միւս եղբայրս շա՜տ ծանր հիվանդ է, եւ նրանց ընտանիքները՝ հիմա խեղճ, անտուն, առքատ: Զրաղացը, տունը անկարող եմ վերաշինել եւ անկարող եմ նրանց էլ պահել, մոլորուել եմ..., իսկ վրայ հասնողդ է ձմեռը՝ ցուրտ ու դաժան, քաղց, հիւանդութիւններ..., դժոխք կատարեալ:

Բարեւներով քո Աւետիք
Իսահակեան
30 հոկտեմբերի 1926, Երեւան

Ծանոթագրություն
Նամակի որոշ բառեր բաց են թողնված՝ անընթեռնելի լինելու պատճառով:

ՍԻՄՈՆ ՎՐԱՑԵԱՆ

1933

Սիրելի՛ պ. Ադոնց,

Ձեր ծայնը վաղուց չի լսվում հրապարակի վրա, արդեն կարոտել ենք:

Ուզում եմ Ձեզ երկու նեղություն պատմառել եւ վստահ եմ, որ չպիտի մերժեք կատարելու: Առաջինը՝ մեր Ջամալյանի որդին՝ Արմիկ Իսահակյանը, դիմել է այդտեղ Պողոս Նուպարի թոշակատու մարմնին՝ ուսանողական թոշակի խնդրանքով: Ընդունակ եւ շնորհալի տղա է, լավ հայ երիտասարդ... Եթե Ձեզ հարցնելու լինեն նրա մասին, կամ եթե դուք հնարավորություն ունեք ազդելու, շատ պիտի խնդրեի՝ աջակցել, որ չմերժեին նրա խնդիրը:

Երկրորդ՝ մի խելագար ձեռնարկ եմ անում: Սեպտեմբերից սկսած մտածում եմ հրատարակել մի երկամսյա հանդես՝ նվիրված հայ մշակույթին եւ նոր պատմության(: Արդեն նախապատրաստական աշխատանքների մեջ եմ, նյութեր եւ աշխատակիցներ եմ ապահովում, որպեսզի սեպտեմբերին հանեմ առաջին համարը: Խնդրիս է Ձեզ՝ չմերժել դասելու Ձեզ աշխատակիցների շարքը եւ առաջին թվի համար նյութ պատրաստել: Մոտավորապես «Մշակույթի օր»-վա էջերով՝ 10-12 էջ: Լինելու են ուսումնասիրություններ, տեսություններ, քննադատություններ, գրախոսականներ, հուշեր, վավերագրեր եւ այլ՝ հայ մշակույթի (գրականություն, արվեստ, տնտեսություն եւ այլն) եւ նոր պատմության բնագավառից:

Լայն տեղ է տրվելու հատկապես հայոց պատմության ազատագրական պայքարի շրջանին:

Սպասելով Ձեր դրական պատասխանին, ողջունելով եւ աղոթիվք՝
Ձերդ Ս.Վրացյան
Հասցեն՝ S.Vratsian
4 Sg.Le'on Bertelot

«Երկիր» օրաթերթ,
1994, 5 հուլիսի

ՍՅՈՒՆԻՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Ն.Ադոնցը Սյունիք, Սիսական տեղանունների առնչությամբ

De Lagarde, Gesam. Abh.155, Arm.Stud. 1895, կարծում է, որ երկրի բուն անունը եղել է Si, իսկ սակերի կողմից գրավվելուց հետո դարձել է Si-sakan, այսինքն՝ սակերի փի: Այս մեկնաբանությունն անընդունելի է: Կրկնակի անվանումները մեծ մասամբ ունենում են առանձին ծագում: Հայկական Սիւնի ձեւը բաղկացած է սի- հիմքից եւ -ուն փերջավորությունից, միշդեռ պարսկական իրեւ հիմք ենթադրում է սիս-ը: Սյունյաց իշխանական տան պատմիչը հաղորդում է, որ Վաղարշակ թագավորը Սիսական տոհմին հանձնեց արքայական զորքերի բարձր հրամանատարության իրավունք՝ պայմանով, որ նրանք «ընդդէմ կալ հանապազ պատերազմաւ դրանն Հոնաց, որոյ անուն ասացուին Սիսան կոչիւր», Օրբելյան Ա, դ: Օրբելյանից մի քանի դար առաջ արաբ հեղինակ Իբն-ալ-Ֆակիհը (մոտ 903թ.) նշում է, որ Օսման խալիֆի ժամանակ (644-656) արաբները գրավեցին Բալյական քաղաքը եւ հեծելազորը ուղարկեցին նվաճելու... De Goeje V, p. 293= Կարապետ, Сборник Кавк. p.27: Այդ ռուսատակերի մեջ դժվար չէ նշմարել Սիսանը (փոխ. տպագր. Սիսարի), Մեսկուանը՝ Մեծկուանց-ը, Ուդի՝ Ուտիքը, Մեգիրամ՝ Մեծիրաև-ը, վերջին անունը՝ Հարճլան-ը կամ Մուխան Հարճլան-ը: Բացի առաջինից՝ մյուսները Աշխարհացույցից հայտնի են որպես Արցախ նահանգի գավառներ: Առաջին անունը Օրբելյանի Սիսանն է, որի տեղեկությունների համաձայն այդպես էին կոչվում սկզբում Հոնաց դռները, այսինքն՝ այժմյան Դերբենդը: Վերոհիշյալ արաբ հեղինակը, մանրամասն նկարագրելով Դերբենդի անցքը, որը մի երկար պարսպով ամրացրեց խոսրով Նուշիրվանը, ասում է, որ պարսպի մեջ փորված է յոթ անցք եւ նրանցից յուրաքանչյուրի մոտ կառուցված է քարաք, որի մեջ պարում են սիսսիկին կոչվող պարսիկ զինվորներ, «ասում են, - շարունակում է նույն հեղինակը, - որ Հայաստանից եկած հայերը պարտավոր են պաշտպանել այդ պարիսպը եւ այդ դռները», նույն տեղում, 291, Կարապետ, էջ 23: Վերջին խոսքերը տարակույս չեն թողնում, որ արաբական սիսսիկինը սիսական հոգեակիցն է: Արաբական իսկական արտասանությունը սիսաքան է, հոգեակին՝ սիասիքին: Այսպես է նույն տեղում, էջ 728, Կարապետ, էջ 17: Նուշիրվանը Սիսաքան երկրում շինեց Վայսը=Վայոց ձոր եւ ուրիշ ամրոցներ եւ դրանք բնակեցրեց սիսսիքիցիներով, որ ռազմասեր եւ խիզախ ցեղ էր: Արաբական ճիշտ արտասանությունից կատարված շեղումը ցույց է տալիս, որ հեղինակը ներկա դեպքում այն վերցրել է հին պարսկական աղբյուրից: Քանի որ դռների պաշտպանությունը դրված էր Սիսական հոնաց ընդ իս բարեկամացան»: Պե՞տք է արդյոք ենթադրել, որ Սիսանը Սիս-ակ-ան կամ Սիս-աջ-ական կրճատումն է, թե՞ պետք է ընդունել, որ այն կազմված է նույն Սիս հիմքից, հոգեակիի նշան հանդիսացող ան-ի օգնությամբ եւ հեծեմատության մեջ դնել այն արդի Սիսիանի հետ, որ Ջանգեզուրի գավառի՝ հին Սյունիքի մի մասն է, թեեւ Սիսիանը կարող է համարվել նաեւ Սիսական կրճատ ձեւը: Այն հարցը, թե արդյոք Սիսը առանձին ցեղի անուն է, թե միեւնույն ծագումն ունի, ինչ որ Սյունիքը, մնում է չպարզված: Սյունիքի ձեւը Սիսականից ավելի հին է: Այն հիշվում է Եվսեբիոսի երկում, Լատեշաեւ, Известия, p.664: Եթեադրվում է, որ Ստրաբոնի Φαυνῖ-τις պետք է կարդալ Σαυνῖ-τις Պրոկոպիոսը հիշատակում է Σουνῖται, որպես աղվանացիների հարեւանններ, Pers I, 15, p.74: Պարսկերեն սիսական ձեւը առաջին անգամ հիշատակում է Ջաքարիա Ռոետորը (554թ.): Sisagan-ը Ջաքարիան համարում է Հայաստանից զատ մի երկիր Arran-ի եւ Gurzan-ի նման: Հայ գրականության մեջ եւս Սիսականը հիշատակվում է Սյունիքից ավելի ուշ եղած: Ուշագրավ է, որ Անանձուն Հայկազյան տոհմի ծննդաբանության մեջ Սիսականի չի հիշատակում, թեեւ կա խորենացու երկում: Արդյոք այդ նշանակո՞ւմ է, որ նրա օրոք Սիսականը դեռ գործածական չէր, թե՞ նշում է այն շրջանը, երբ Սյունիքը անջատվել էր Հայաստանից (571-ից մինչեւ 660թ.): Սիսականի sis հիմքը կարելի է հանգեցնել Սիւնիքի սի-ին, եթե ընդունենք, որ sis-ը վերաբերում է si, si-k այնպես, ինչպես Բաղաս[ական]-ը՝ Բաղ-քին, Moks-ena-ն՝ Մոկ-քին, Akilis-ena-ն՝ Եկեղի-ք-ին, Եկեղեաց-ին եւ այլն:

«Հայաստանի Հուսիրինիանոսի դարաշրջանում», Երեւան,
«Հայաստան», 1987, էջ 4, 469-470

ՁՈՐԱՆԱՄԱԿ

Ստորեւ ներկայացնում ենք յուրաքանչյուր տոհմի հեծելազորի քանակը՝ ըստ Զորանամակի տվյալների

1. Սիւնեաց իշխան 19400
Ասպետն իշխան 1000
Արծրուեաց իշխան 1000
Մաղխազուձի իշխ. 1000
5. Մամիկոնէից իշխ. 1000
Ծոփաց իշխան 1000
Մոկաց իշխան 1000
Ռշտունեաց իշխան 1000
Վահունեաց իշխան 1000
10. Կասպէից իշխան 3000
Անձաւացեաց իշխան .....
Ապահունեաց իշխ. 1000
Կամսարական իշխ. 600
Այդ Ապահունի իշխան .....
15. Վանանդացի իշխ. 1000
Ամատունի իշխան
Գողթան իշխան 500
Գնունեաց իշխ. 500
Այդ Անձաւացի իշխան 500
20. Տայոց <իշխան> 600
Բասենոյ դատաւորն 600
Գնթունեաց իշխան 300
Վարձաւունի իշխան 200
Գարդմանաց իշխան 1000
25. Սահառունի իշխան 300
Գաբեղէնից իշխան 300
Աբեղէնից իշխան 300
Այդ Սիւնեաց իշխան .....
Այդ Արծրունեաց իշխան .....
30. Այդ Արծրունեաց III իշխ. .....
Այդ Մամիկոնէից իշխան .....
Ռոփսեան իշխան 100
Աշոցեան իշխան 500
Դիմաքսեան իշխան 300
35. Բուխա Դիմաքսեան իշխ. ... 300
Այդ Աբեղեան իշխան .....
Այդ Դիմաքսեան իշխան .....
Պալունի իշխան 300
Առաւեղեան իշխան 500
40. Աշխադարեան իշխան 100
Համբուժեան իշխան 100
Վարասպակեան իշխ. 100
Ջիւնական իշխան 300
Ակեան իշխան 300
45. Ջարեհաւանեանց իշխ. 300
Ընձայեցի իշխան 4000
Մանդակունի իշխան 300
Սղկունի իշխան 300
Տայգրեան իշխան 50
50. Երմանթունի իշխան 300
Սպանդունի իշխան 300
Առաւենեան իշխան 300
Տրունի իշխան 300
Տամբերացի իշխան 100
55. Հաւունի իշխան 300
Բժնունի իշխան 200
Քաջբերունի իշխան 100
Մեհնունի իշխան 100
Նախճերի իշխան .....
60. Քաղաքապետն արքունի .....
Որսապետն արքունի 300
Արտաշեսեան իշխան 300
Վանանդացի II իշխան .....
Ցուլն իշխան .....
65. Վիժանու<հի> իշխան 50
Աքածն = Արածոյ իշխան 50
Շիրակա Դիմաքսեան իշխ.
Գազրիկաց իշխան 50
Մարաքեաց իշխան 300
70. Վագրասպունի իշխան 100

Նիկողայոս Ադոնց,
Հայաստանի Հուսիրինիանոսի դարաշրջանում,
1987թ., էջ 280-281,
294-295

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՒՀԻՆ ԱՇԽԱՐՀԻ ԱԶԳԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԱԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՎԵՏԱՐԱՆ
Գլխավոր խմբագիր՝ Ս.ՎԱՐԱՆԵՑԻ, ՀԱՅՐԵՆԻՔ
Հեռախոս՝ (0285) 5 25 63 = (091) 45 90 47 = (077) 06 28 02
էլ.հասցե՝ www.syuniacyerkir.am
էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru
տպագրվում է 2003թ. հոկտեմբերի 1-ից ■ հիմնադիր եւ հրատարակիչ՝ «Սյունեյաց աշխարհ» ՍՊԸ ■
№ 17 236
18 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2011

ԱԴՈՆՑԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՐԱԽՏԱՎՈՐՆԵՐԻՑ ՄԵԿԸ

Պետրոս Հովհաննիսյան

Ն.Ադոնցի պատմագիտական ժառանգությանը նվիրված Պ.Հովհաննիսյանի հրատարակած աշխատությունների ցանկ

1. Նիկողայոս Ադոնց, Երկեր հինգ հատորով: Հատ. Ա, Պատմագիտական ուսումնասիրություններ, Երեւան, 2006, 652 էջ:
2. Նիկողայոս Ադոնց, Երկեր հինգ հատորով: Հատ. Բ, Պատմաբանասիրական ուսումնասիրություններ, Երեւան, 2006, 680 էջ:
3. Նիկողայոս Ադոնց, Երկեր հինգ հատորով: Հատ. Գ, Հայերենագիտական ուսումնասիրություններ, Երեւան, 2008, 688 էջ:
4. Նիկողայոս Ադոնց, Երկեր հինգ հատորով: Հատ. Դ, Քննական պատմություն Հայոց, Երեւան, 2009, 720 էջ:
5. Նիկողայոս Ադոնց, Հայկական հարց, Երեւան, 1996, 244 էջ:
6. Նիկողայոս Ադոնց, Պատկերների խնդիրը, Երեւան, 2003, 90 էջ:
7. Նիկողայոս Ադոնց, Քննություն Մովսես Կաղանկատվացու, Ս. Էջմիածին, 2005, 176 էջ:
8. Ն. Ադոնց, Հայաստանի ոսկեհանքը (փոքր ուսումնասիրություններ), Երեւան, 2006, 160 էջ:
9. N. Adonz, Towards the Solution of the Armenian Question, Yerevan, 2007, 96 էջ:
10. Նիկողայոս Ադոնց, Տիգրան Մեծ. Ուսումնասիրություններ, Երեւան, 2010, 120 էջ:
11. Նիկողայոս Ադոնցի անտիպ ճամակներից, տես «Բաներեր Երեւանի համալսարանի», 1988, Պ3, էջ 87-96:
12. Նիկողայոս Ադոնցը հայկական ցեղասպանության մասին, տես «Երեւանի համալսարան» (բազմատիրաժ), 1990, 28 ապրիլի, Պ17, էջ 3:
13. Малоизвестная статья "Турецкая нота и турецкая Армения" Николая Адонца, տես «Լրաբեր», ՀՊԱ ակադեմիայի (հասարակ. գիտ.), 1990, Պ4, էջ 72-77.
14. Երկու խոսք Նիկողայոս Ադոնցի «Մարզպան Վասակ պատմաբանների դատաստանի առաջ» աշխատության մասին, տես «Ազդակ», օրաթերթ, Բեյրութ, 1993, 18 փետրվարի, Պ283, էջ 4:
15. Ակամավոր հայագետ Նիկողայոս Ադոնցի անձնական արխիվը, տես «Ազդակ», օրաթերթ, Բեյրութ, 1993, 9 մարտի, Պ4, էջ 4,7 (Ե.Փամպուլյանի հեղինակակցությամբ):
16. Նույնը տես «Ազատամարտ», Հայ հեղափոխական դաշնակցության պաշտոնաթերթ, 1993, 9-15 ապրիլի, Պ14, էջ 13 (Ե.Փամպուլյանի հեղինակակցությամբ):
17. Հայտնաբերվել է Նիկողայոս Ադոնցի անձնական արխիվը (Հարցազրույց Պ.Հովհաննիսյանի հետ), տես «Հայաստանի Հանրապետություն», օրաթերթ, 1993, 7 մայիսի, Պ89, էջ 3-4 (գրույցը վարեց Սասուն Մայմաղը):
18. Նիկողայոս Ադոնցի բեյրության դիվանը, տես «Նպատակ», գիտահասարակական պարբերաթերթ, 1993, հուլիս, Պ8, էջ 3:
19. Նիկողայոս Ադոնցի նորահայտ հոդվածը Հայկական հարցի մասին («Հողային գիջումներ»), տես «Նպատակ», գիտահասարակական պարբերաթերթ, 1993, հուլիս, Պ8, էջ 3:
20. Նիկողայոս Ադոնցի նորահայտ հոդվածը Հայկական հարցի մասին («Հայկական հարցի ներքին կողմերից մեկը»), տես «Բաներեր Երեւանի համալսարանի», 1993, Պ1, էջ 126-132:
21. Ադոնցյան մասունքներ, տես «Հայկազյան Հայագիտական հանդես», հատ.13, Բեյրութ, 1993, էջ 107-111:
22. Еще одна малоизвестная статья Николая Адонца по Армянскому вопросу, տես «Լրաբեր», ՀՊԱ ակադեմիայի (հասարակ. գիտ.), 1993, Պ1, էջ 137-148 (Հ.Ավետիսյանի հեղինակակցությամբ):
23. Նիկողայոս Ադոնցի «Հայաստանը եւ հայկական գաղթօջախները» նոր բարախյա հոդվածը, տես «Գարուն», ամսագիր, 1994, Պ1, էջ 68-75:
24. Սիմոն Վրացյանի նորահայտ ճամպը Նիկողայոս Ադոնցին, տես «Երկիր», օրաթերթ, 1994, 5 հուլիսի, Պ126, էջ 7:
25. Նիկողայոս Ադոնցի իրանագիտական ժառանգությունից, տես «Իրան-Նասե», գիտամշակութային, հասարակական-քաղաքական հանդես, 1994, Բ տարի, Պ1, էջ 3:
26. Երկու գագաթ. Գարեգին արք. Հովսեփյանց եւ պրոֆ. Նիկողայոս Ադոնց, տես «Երեւանի համալսարան» (բազմատիրաժ), 1990, 28 ապրիլի, Պ17, էջ 3:
27. Պատրիարք Թորգոմ Գուշլայան եւ Նիկողայոս Ադոնց, տես «Հասկ-հայագիտական», տարեգիրք, նոր շրջան, Աննիլիսաս-Լիբանան, 1995-1996, Պ7-8, էջ 467-477:
28. Նիկողայոս Ադոնցի անտիպ ժառանգությունից, տես «Հայաստանի Հանրապետություն», օրաթերթ, 1996, 7 մարտի, Պ44, էջ 2:
29. Նիկողայոս Ադոնց , տես Ն.Ադոնց, Հայկական հարց, Երեւան, 1996, էջ 5-24:
30. Նիկողայոս Ադոնցը Հայոց եկեղեցու պատմության պատմաբան, տես «Հայոց պատմության եւ մշակույթի հարցեր»: Գիտական ցնտաշրջան. նվիրվում է հայագիտության հովանավոր, Հայաստանի ազգային հերոս, մեծ բարերար Ալեք Մանուկյանի հիշատակին: Զեկուցումների հիմնադրույթներ, Երեւան, 1997, էջ 65-66:
31. Նիկողայոս Ադոնցը Հայոց եկեղեցու պատմության պատմաբան, տես «Հայկազյան Հայագիտական հանդես», Բեյրութ, 1997, հատ. 17, էջ 263-286:
32. Նիկողայոս Ադոնց - Արշակ Չոպանյան, տես «Հայ-ֆրանսիական պատմամշակութային առնչություններ» (Չորրորդ միջազգային գիտաժողովի նյութերը. հոկտեմբեր, Երեւան, 1997), Երեւան, 1998, էջ 26-30:
33. Սիմոն Վրացյանի անտիպ հուշերը Նիկողայոս Ադոնցի մասին, տես «Լրաբեր», ՀՊԱ ակադեմիայի (հասարակ. գիտ.), 1998, Պ1, էջ 202-210:
34. Նիկողայոս Ադոնցի «Հայկական վարք Սրբոց ժողովածուները» անտիպ աշխատությունը, տես «Վստվածաշնչյան Հայաստան», միջազգային գիտաժողով, Օշական, 21-24 հուլիսի, 1999: Ս. Էջմիածին, 1999, էջ 23-25:
35. Նիկողայոս Ադոնցը եւ Հայկական հարցը, տես «Պատմա-բանասիրական հանդես», 1999, Պ1, էջ 130-138:
36. Ազատության երգիչը (Նիկողայոս Ադոնցի խոսքը Ավետիս Ահարոնյանի հոբելյանի առթիվ), տես «Գրական թերթ», 2000, 1 սեպտեմբերի, Պ11-12, էջ 1-2:
37. Մարզպան Վասակ Սյունեցու գործունեության վերագնահատված Նիկողայոս Ադոնցի տեսությունը, տես «Վաղարշի խորհուրդը» (Հանրապետական գիտաժողովի նյութեր), Սեւորդ Մաշտոց դպրատուն, Օշական, 2001, էջ 27-29:
38. ԺԸ դարի կեսերի Հայոց եկեղեցու պատմության հարցերին նվիրված Նիկողայոս Ադոնցի նորահայտ հոդվածը-գրախոսությունը (Ծննդյան 130-ամյակի առթիվ), տես «Էջմիածին», ամսագիր, 2001, Պ1, էջ 91-107:
39. Ազոեքավոր վավերագիր Մայր Աթոռի 1920-ական թվականների կացության վերաբերյալ (Մեսրոպ արքեպիսկոպոս Տեր-Մովսիսյանի նորահայտ նամակը պրոֆեսոր Նիկողայոս Ադոնցին), տես «Էջմիածին», ամսագիր, 2001, Պ2-3, էջ 96-104:
40. Ն.Ադոնցի «Հայոց քննական պատմության» ստեղծագործական ճակատագիրը (Ծննդյան 130-ամյակի առթիվ), տես «Պատմա-բանասիրական հանդես», 2001, Պ1, էջ 63-78:
41. Նիկողայոս Ադոնցի գիտական ժառանգության նորահայտ էջերից, տես «Պատմա-բանասիրական հանդես», 2001, Պ2, էջ 277-290:
42. Ադոնց Նիկողայոս, տես «Քրիստոնյա Հայաստան», հանրագիտարան, Երեւան, 2002, էջ 17-18:
43. Աստվածաշնչի հայերեն թարգմանության 1500-ամյակը եւ Նիկողայոս Ադոնցը, տես «Էջմիածին», 2002, Պ2-3, էջ 91-94:
44. Նիկողայոս Ադոնցի կրոնագիտական ժառանգությունը, տես Նիկողայոս Ադոնց, Պատկերների խնդիրը, Երեւան, 2003, էջ 5-14:
45. Մարզպան Վասակ Սյունեցու գործունեության վերագնահատված Նիկողայոս Ադոնցի տեսությունը, տես «Վաղարշի խորհուրդը», ժողովածու, Երեւան, 2003, էջ 65-72:
46. Նիկողայոս Ադոնցի հայագիտական անտիպ գործերը եւ նրանց պատմագիտական նշանակությունը, տես «Հայագիտության արդի վիճակը եւ նրա զարգացման հեռանկարները». Հայագիտական միջազգային հանձժողով: Զեկուցումների դրույթներ, սեպտեմբերի 15-20-ը, 2003, Երեւան, էջ 51:
47. Ամենաոք էջեր Նիկողայոս Ադոնցից, տես «Էջմիածին», 2003, Պ5, էջ 97-98:
48. Նիկողայոս Ադոնցը արվեստի մասին, տես «Հայ արվեստ», մշակութային հանդես, 2004, Պ1, էջ 27-28:
49. Նիկողայոս Ադոնց, տես «Նշանավոր ճեմարանականները», պրակ 1, Ս. Էջմիածին, 2005, էջ 157-163:
50. Նիկողայոս Ադոնցի «Քննություն Մովսես Կաղանկատվացու» ուսումնասիրությունը, տես Նիկողայոս Ադոնց, Քննություն Մովսես Կաղանկատվացու, Ս. Էջմիածին, 2005, էջ 5-12:
51. Մովսես Խորենացի եւ Նիկողայոս Ադոնց, տես «Հայոց պատմության հարցեր», ՀՊԱ ակադեմիայի Պատմության հնմտիտուտի գիտական հոդվածների ժողովածու, Պ66, Երեւան, 2005, էջ 307-316:
52. Նիկողայոս Ադոնցի անտիպ հուշերը ուսուցչապետ Նիկողայոս Մառի մասին, տես «Ակադեմիկոս Նիկողայոս Մառ», ժողովածու, Երեւան, 2005, էջ 141-156:
53. Նիկողայոս Ադոնցի «Հայկական Վարք Սրբոց ժողովածուները» անտիպ աշխատությունը, տես «Աստվածաշնչական Հայաստան», միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Երեւան, 2005, էջ 328-333:
54. Հայ պատմագիտության ոսկեհանքը, տես Ն.Ադոնց, Հայաստանի ոսկեհանքը. փոքր ուսումնասիրություններ, Երեւան, 2006, էջ 3-8:
55. Երկու խոսք, տես Ն.Ադոնց, Երկեր հինգ հատորով: Հատ. Ա Պատմագիտական ուսումնասիրություններ, Երեւան, 2006, էջ 5-10:
56. Բյուզանդագիտական մի նորահայտ արժեք, տես «Էջմիածին», ամսագիր, 2006, Պ10-11, էջ 44-69:
57. Կազմողի կողմից, տես Ն.Ադոնց, Երկեր հինգ հատորով: Հատ. Բ Պատմաբանասիրական ուսումնասիրություններ, Երեւան, 2006, էջ 5-6:
58. Никогайос Адонц об Армянском вопросе, տես «Голос Армении", 2007, 31 мая, Պ59, стр. 6.
59. XX դարի հայագիտության ամենաշնավոր դեմքը, տես «Հայագիտություն դպրոցում», գիտամեթոդական, վերլուծական հանդես, 2007, Պ1, էջ 60-64:
60. Նիկողայոս Ադոնցը Հայկական հարցի շուրջ, տես «Գոլոս Արմենիի», հասարակական-քաղաքական շաբաթաթերթ, 2007, 20-26 հունիսի, Պ17, էջ 6:
61. Nikolay Adonz (1871-1942), տես N.Adonz, Towards the Solution of the Armenian Question, Yerevan, 2007, p. III-VI.
62. Աշխատասիրողի կողմից, տես Ն.Ադոնց, Երկեր հինգ հատորով: Հատ Գ, Հայերենագիտական ուսումնասիրություններ, Երեւան, 2008, էջ V-VIII:
63. Նիկողայոս Ադոնցի «Կիբելա աստվածուհին» անհայտ աշխատությունը, տես «Բաներեր Մատենադարանի», 2008, Պ18, էջ 181-215 (Օ.Վարդազարյանի հետ):
64. Նիկողայոս Ադոնցի «Քննական պատմություն» հայոց աշխատասիրությունը», տես Նիկողայոս Ադոնց, Երկեր հինգ հատորով: Հատ. Դ, Քննական պատմություն Հայոց, Երեւան, 2009, էջ 5-22:
65. Նիկողայոս Ադոնցի ճամպագրությունից (Ծորգոմ արքեպ. Գուշլայանին, Գարեգին արքեպ. Հովսեփյանին, Արտ. Չիլինկարյանին), տես «Էջմիածին», ամսագիր, 2009, Պ6, էջ 100-109:
66. Նիկողայոս Ադոնց, տես «Новый взгляд на историю Армении¦. Сборник статей посвященный творчеству Николая Адонца, СПб., 2009, էջ 10:
67. Նիկողայոս Ադոնցի «Վրքայական պարգեւը» - Նա կրկնապատկեց իր երկրի պատմությունը (Հարցազրույց պատմաբան Պ.Հովհաննիսյանի հետ՝ Ն.Ադոնցի Երկերի Դ հատորի հրատարակության առթիվ), տես «Ազատամտություն», օրաթերթ, 2010, 5 փետրվարի, էջ 8 (հարցազրույցը վարեց Գայանե Մկրտչյանը):
բ. Նույնը ռուսերեն՝ "Свободомыслие", ежедневная газета, 2010, 5 февраля, стр. 8.
68. Առաջաբան եւ ծանոթագրություններ, տես Նիկողայոս Ադոնց, Տիգրան Մեծ Ուսումնասիրություններ, Երեւան, 2010, էջ 3-6, 110-118:
69. Նիկողայոս Ադոնցի նորահայտ ուսումնասիրությունները Տիգրան Երկրորդի մասին, տես «Տիգրան Մեծ», մեկ աշխատանքի ցուցահանդես, Երեւան, 2010, էջ 263-267:
բ. Նույնը անգլերեն՝ «Newly brought to light Studies of Nicholas Adonts concerning Tigranes the Second», նույն տեղում, էջ 262-266:
70. Տիգրան II Մեծի գործունեության լուսաբանումը Նիկողայոս Ադոնցի աշխատություններում, տես Տիգրան Մեծ (Տիգրան Մեծի գահակալության 2100-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու (2005թ.)), Երեւան, 2011, էջ 270-279: ■

տպագրվում է 2003թ. հոկտեմբերի 1-ից ■ հիմնադիր եւ հրատարակիչ՝ «Սյունեյաց աշխարհ» ՍՊԸ ■
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՒՀԻՆ ԱՇԽԱՐՀԻ ԱԶԳԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԱԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՎԵՏԱՐԱՆ
Գլխավոր խմբագիր՝ Ս.ՎԱՐԱՆԵՑԻ, ՀԱՅՐԵՆԻՔ
Հեռախոս՝ (0285) 5 25 63 = (091) 45 90 47 = (077) 06 28 02
էլ.հասցե՝ www.syuniacyerkir.am
էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru

ԱՐԽԻՎ

1942թ., մամուլը պրոֆեսոր Ն.Ադոնցի մահվան առթիվ

Փրոֆ. Նիկողայոս Ադոնց

Գրեց՝ Ս.Վրացեան

Բրիւսէլի մէջ, թոքատապէն մեռած է ժամանակակից հայ գիտութեան պանաւոր դէմքերէն մէկը՝ փրոֆ. Նիկողայոս Ադոնց, որի մահը ծանր կորուստ մըն է հայ ժողովրդի համար:

Հանգուցեալը Զանգեզուրցի էր, Սիսեանի Բռնակոթ գիւղէն, հին եւ յարգուած Ադոնց գերդաստանէն: Ծննդեան ճիշդ թիւը մեզի յայտնի չէ, ենթադրաբար մօտ 70 տարեկան էր:

Իր նախնական կրթութիւն ստացած էր գիւղական դպրոցին մէջ, ապա անցած էր Գէորգեան ճեմարանը, Էջմիածին, ուր ուսած էր Լեւոն Շանթ, Նիկ.Ադբալեանի, Ա.Վռամեանի հետ:

Բնականէն ուշիմ, հարցասէր, սուր մտքի տէր՝ Ադոնց մասնաւոր հետաքրքրութիւն ցոյց կուտար դէպի հայ մատենագրութիւնն ու հայագիտութիւնը ընդհանրապէս: Ճեմարանի լսարանական մասը աւարտելէ յետոյ, ան շարունակեց իր ուսումը եւրոպական եւ ռուսական բարձրագոյն դպրոցներու մէջ, գլխաւորաբար Անգլիա, եւ խորունկ հմտութիւն ձեռք բերաւ արեւելագիտութեան, յատկապէս Բիւզանդագիտութեան մէջ:

Մասնաւոր ընդունակութիւն ունենալով լեզուներու իւրացման մէջ՝ Ադոնց կատարելապէս կը տիրէր հին յունարէնի, լատիներէնի, հայ գրաբարի, վրացերէնի, նոր լեզուներէն՝ ռուսերէնի, անգլիերէնի, ֆրանսերէնի, օգուտլու չափ գերմաներէնի, իտալերէնի եւ այլն: Շնորհիվ բազմազան լեզուներու հմտութեան՝ ան իր գիտական աշխատանքներու մէջ կօգտուէր առաջին եւ, շատ անգամ, քիչ մնաց կամ անծանօթ առիւրներէ, այդ պատճառով իր ուսումնասիրութիւնները միշտ ոչ միայն ինքնատիպ էին ոճով ու ձեւով, այլեւ նոր փաստեր ու գաղափարներ կը պարուներէին:

Իր բարձրագոյն կրթութիւնը լրացնելէ յետոյ, Ադոնց գիտական աստիճան ստացաւ Պետերբուրգի համալսարանի մէջ, իբրեւ թեկնեկայացնելով «Հայաստանը Յուստինիանոսի դարաշրջանի մէջ» ռուսերէն հոյակապ հատորը, որ՝ իբրեւ պատմական երկ, այսօր ալ կը մնայ անգերազանցելի: Սկսող, Ն.Մառ, որ քննիչ մարմնի անդամներէն էր, անվերապահ դրուատիքով արտայայտուեցաւ այդ գործի մասին:

1909թ. Ադոնց կոչուեցաւ Պետերբուրգի համալսարանի արեւելեան բաժնի ուսուցչապետութեան: Կը յիշեմ իր առաջին դասախօսութիւնը, որ տեսակ մը տօն էր համալսարանի հայ ուսանողներուս համար: Բացի ուսանողներէ, դասախօսութեան ներկայ էին եւ համալսարանի արեւելագիտական բաժնի դասախօսները, ինչպէս նաեւ՝ հայագիտութեանը զբաղող դուրսի մարդիկ: Փրոֆ. Ադոնցի դասախօսութեան նիւթն էր՝ «Քաթերու պատմութիւնը» – հին եւ քիչ ծանօթ ժողովուրդ մը Փոքր Ասիոյ մէջ, որի մասին հիմնական եւ խիստ հետաքրքրական փաստեր հաւաքած էր Ադոնց:

Այդ օրուընէ կը սկսի Ադոնցի փրոֆեսորական-գիտական ապաւրեզը, որ երթալով զարգացաւ եւ դէմքերու, Բագրատունեաց շրջանի, Բուլգարիոյ Սամուէլ հայ թագաւորի եւ այլ պատմական ու մատենագրական նիւթերու մասին, «Հայրենիք» ամսագրի, «Հանդէս Ամսօրեայ»-ի, «Վէմ» հանդէսի եւ բիւզանդագիտական պարբերականներու մէջ եւ առանձին գրքերով: Ադոնցի ուսումնասիրութիւնները լեցուն են թանկարժէք, յաճախ նորագիւտ տուեալներով եւ սրամիտ դիտողութիւններով եւ բացատրութիւններով եւ մեզ յայտնի արժէք ունեին:

Փրոֆ. Ադոնց հայոց պատմութեան մեր շրջանի ամենէն հմուտ եւ հեղինակաւոր մասնագէտն էր, եւ զբաղած էր հայոց քննական ամբողջական պատմութեամբ: Մեծ կորուստ պիտի լինի, եթէ գործը մնացած է անաւարտ, որովհետեւ իրմէ զատ ուրիշ մէկը չուզիք այսօր, որ կարողանայ նման աշխատութիւն մը գլուխ բերել:

Փրոֆ. Ադոնց ընտանի էր եւ մեր գրականութեան մէջ: Ոչ միայն հին, այլեւ նոր մատենագրութիւնը լաւ ուսումնասիրած էր եւ ուշի ուշով կը հետեւէր նոր հեղինակներու երկերուն: Իր հրատարակած «Բաներեր» երկու փառաւոր ժողովածուները հայագէտ Փրոֆ. Ն.Մառի եւ ուրիշներու: Դեռ ուսանող՝ Ադոնց ուշագրաւ եղած է հայ լեզուի եւ պատմութեան նկատմամբ իր բացառիկ հետաքրքրութեամբ եւ ընդունակութիւններով, եւ ուսուցչապետ Մառի յանձնարարութեամբ՝ ուսուցիչ՝ նոյն ճիւղերու ուսուցումին՝ համալսարանում:

Դասախօսելով Փեթերսպուրկի համալսարանին մէջ հայ լեզուի եւ պատմութեան շուրջ՝ հրատարակած է նաեւ հայ եւ օտար լեզուներով բազմաթիւ ուսումնասիրութիւններ, ինչպէս՝ «Վասիլ բիւզանդական մեծագոյն կայսրը», «Գրիգոր Պարթեւի հարցարանը եւ եզեղիկ», «Հին Հայ Հիմնականիւնը», «Հայեր Բիւզանդական գիտութեանց մէջ», «Յուստինիանոսի դարաշրջանը», «Առասպելներ Մօրիկ եւ Կոստանդին բիւզանդական կայսրերու մասին», «Յովհ.Չմշկիկի կայսեր նամակը» եւն: Սակէ զատ ունի բազմաթիւ պատմագիտական եւ բանասիրական յօդուածներ զանազան հայ պարբերականներու, ի մասնաւորի «Հայրենիք» ամսագրի մէջ, ինչպէս՝ «Քաղաքական հոսանքներ հին Հայաստանում», «Բագրատունեաց փառքը» եւն: Սանահնեանի, Ա.Խաչատրեանի, Հացունիի, Ակիհնեանի, Չօպանեանի եւ ուրիշ պատմաբանաէրներու դէմ եւ թեր իր յօդուածները այդ կարգի հարցերու շուրջ, հատորներ կ'ընդգրկեն: Երիտասարդութեան հրատարակած է «Բանքեր գրականութեան եւ արուեստի» կիսամեայ շքեղ հանդէսը:

1919-ի վերջերը Ադոնց անցաւ արտասահման՝ հաստատուելով նախ՝ Լոնտոն, ապա՝ փոխադրուելով Փարիզ: Քանի մը տարի ետք ան հրաւիրուեցաւ Պրիքսէլի համալսարանին կողմէ իբրեւ դասախօս հայ լեզուի ու պատմութեան, եւ հոն՝ Պրիքսէլի մէջ, կնքեց իր մահկանացուն:

Իր մահը, ինչպէս ըսինք, ադէտ մըն է, վասնզի Ադոնց կը մեռնի առանց լիովին տուած ըլլալու ինչ որ կարող էր տալ: Քանքարաքաթրոյց մը չեղաւ անշուշտ, վասնզի պատմութեան գերեզմաններէն դուրս կանչեց մեծ եւ լուսաւոր հայ դէմքեր՝ փառաւորելով իր ժողովուրդի անունը յաչս աշխարհի: Բայց չլեցուց մեր սպասումը իրմէն. կ'ըսենք ասիկա պարսաւէ աւելի՝ հիացմանը մէջէն իր արժանիքին:

Երուսաղէմը իր հմայական հնայքին մէջ բարձրացնելու համար, հանգուցեալ Թորգոմ Սրբազանը, եւ ներկայ Մեսրոպ Ս.Պատրիարքը կը մնածէին օգտուիլ իրմէն, զինք Ս. Աթոռս հրաւիրելով. բայց յառաջադրութիւնները չիրականացան՝ հպատակելով ժամանակի ոժնդակ հարկադրանքին:

Կեանքի մէջ չկայ աւելի նեղգ եւ անմտածելի հնարաւորութեանց խաղերովը այնքան յդի հնչ մը՝ որքան ժամանակը ինքնին: Ի՜նչ արժէքներ, ի՜նչ դժեր ինկած ու անհետացած են իր անիմաստ կամ անանուն մոռացումին ծոցը:

Ադոնցի կեանքը իր մտքի, կորովի, գործի ու պարտականութեան բոլոր երեսներուն մէջ եղած է ստոյգ առաքինութեանց հանդիսարան մը: Ճշմարիտ գիտուն մը միայն վայելուչ բարիքով, իր մեծ հմտութենն հրաւուք չտուաւ բնաւ իրեն՝ խրոխտալ միտքով խոնարհներուն եւ սնանկներուն հանդէպ, ու անոնց չմերժեց երբեք իր աջակցութեան եւ խրախոյսին նպաստը:

«Սիոն» սրտագաղ վիշտով եւ օրհնութեամբ կ'արձանագրէ մեծաւուն գիտուն, պատուաւոր հայուն եւ իր անգուգական աշխատակցին մահը:

Օրհնէնք եւ հանգիստ իր հոգիին:

«Սիոն», մարտ-ապրիլ, 1942թ.

Սիմոն Վրացյան (1882 - 1969թթ.) (դասական ուղղագրութեամբ՝ Սիմոն Վրացեան) հայ քաղաքական գործիչ, դաշնակցական ղեկավար: Եղել է Հայաստանի առաջին հանրապետության գյուղատնտեսության եւ աշխատանքի նախարար, ինչպես եւ՝ չորրորդ վարչապետը:

ՀԱՅՐԵՆԻՔ
ՕՔԱՄԲԵՔ
ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏԱԿԱՆ
ՓՐՈՖ. Ն. ԱԴՈՆՑ

առաջնակարգ տեղ ապահովեց արեւելագիտութեան մէջ անոր համար:

Խորհրդային յեղաշրջման հետեւանքով փրոֆ. Ադոնց փոխադրուեցաւ Եւրոպա, ցանց՝ Փարիզ, յետոյ՝ Բրիւսել, ուր կը վարէր բիւզանդագիտութեան ուսուցչապետի պաշտօնը եւ միաժամանակ կաշխատակցէր մասնագիտական հանդէսներու եւ հայ մամուլին:

Իր գիտական հետաքրքրութեանց գլխաւոր շրջանակը Բիւզանդական Կայսրութիւնն էր եւ հայերու կապակցութիւնը անոր հետ եւ մէկէ աւելի խիստ շահեկան ուսումնասիրութիւնը անոր հետ եւ մէկէ աւելի խիստ շահեկան ուսումնասիրութիւնը տուած է ֆրանսերէն եւ հայերէն լեզուներու եւ անգամաւոր Պետերբուրգի մէջ փայլուն ապացոյց են իր գրական բարձր ճաշակի եւ հմտութեան: «Բանքեր»-ի մէջ ան կրցած էր համախմբել ոչ միայն արեւելեւայ առաջնակարգ ուժերը, այլեւ արեւմտահայերէն Ռ.Զարդարեանի, Ա.Արփիարեանի, Սիամանթոյի, Վ.Թէքէեանի պէս դէմքեր: Ինքն ալ ուներ քննադատական-վերլուծական բարձրորակ գրութիւններ գրականութեան եւ արուեստի մասին:

Ադոնց եւ հանրային գործիչ էր: Հայաքանակ որ կը պատկանէր պահպանողական ուղղութեան, իր լայնախոհ բնաւորութեամբ ան բարեկամներու լայն շրջանակ ուներ եւ ազատամիտ-արմատականներու, Դաշնակցականներու եւ նոյնիսկ բոլշեւիկներու մէջ՝ շնայած որ վերջիններու անհանդուրժելի զրկանքներու ենթարկած էին զինքը:

Փրոֆ. Ադոնց երկար տարիներ եղած է Պետերբուրգի Հայոց եկեղեցւոյ հոգաբարձութեան անդամ, մասնակցած է Մոսկուայի Լազարեան Ճեմարանի խնամակալության, անդամակցած է ուսանողներուն օգնող մարմիններու եւ իր օժանդակութիւնը բերած է գրական-մշակութային եւ ազգային-եկեղեցական շատ մը կարեւոր գործերու:

Անհատական կեանքի մէջ հաւնստ, սիրալիր, ընկերական, երկայնամիտ, անկեղծ եւ ազնւական հոգիի տէր-գերագոյն հանդոյք էր իր բարեկամութիւնը եւ իր մտաւորանպատ պաշարի հարստութիւնները վայելելը:

Ան ալ քամեց հայ մտաւորականութեան ընդհանուր ճակատագրի նիւթական եւ բարոյական անհաշիւ դառնութիւնները: Եւ մեռավ ով գիտէ ինչ զրկանքներու մէջ, վստահ եմ, անտրտունջ ու ներողամիտ ոգով: Եւ եթէ ցաւ ունեցաւ, անշուշտ, ան այ հայրենիքի ազատութիւնը չտեսած մեռնելու ցաւն էր:

Թող հողը թեթեւ լինի քո վրայ, սիրելի՛ բարեկամ:

Նիկողայոս Ադոնց

Դառն կսկիծով լսեցինք մահը յայտնի պատմագէտ ու բանասէր Փրոֆ. Ն.Ադոնցի: «Սիոն» ազգայնի այս սուգին մէջ ան մասնաւորէ իր վիշտը հանդէպ անգուգական իր պաշտասակցին, որուն անդարմանելի կորուստը աւելի քան ադէտ մըն է:

Բնիկ Զանգեզուրցի, Ադոնց ծնած է անցնող դարու 70-ական թուականներուն: Նախնական կրթութիւնը ստացած է ծննդավայրին մէջ, ապա էջմիածնի Գէորգեան ճեմարանը: Յետոյ կ'աւարտէ Փեթերսպուրկի համալսարանին Արեւելեան Լեզուներու բաժինը՝ աշակերտելով գլխաւորաբար մեծահռչակ հայագէտ Փրոֆ. Ն.Մառի եւ ուրիշներու: Դեռ ուսանող՝ Ադոնց ուշագրաւ եղած է հայ լեզուի եւ պատմութեան նկատմամբ իր բացառիկ հետաքրքրութեամբ եւ ընդունակութիւններով, եւ ուսուցչապետ Մառի յանձնարարութեամբ՝ ուսուցիչ՝ նոյն ճիւղերու ուսուցումին՝ համալսարանում:

Դասախօսելով Փեթերսպուրկի համալսարանին մէջ հայ լեզուի եւ պատմութեան շուրջ՝ հրատարակած է նաեւ հայ եւ օտար լեզուներով բազմաթիւ ուսումնասիրութիւններ, ինչպէս՝ «Վասիլ բիւզանդական մեծագոյն կայսրը», «Գրիգոր Պարթեւի հարցարանը եւ եզեղիկ», «Հին Հայ Հիմնականիւնը», «Հայեր Բիւզանդական գիտութեանց մէջ», «Յուստինիանոսի դարաշրջանը», «Առասպելներ Մօրիկ եւ Կոստանդին բիւզանդական կայսրերու մասին», «Յովհ.Չմշկիկի կայսեր նամակը» եւն: Սակէ զատ ունի բազմաթիւ պատմագիտական եւ բանասիրական յօդուածներ զանազան հայ պարբերականներու, ի մասնաւորի «Հայրենիք» ամսագրի մէջ, ինչպէս՝ «Քաղաքական հոսանքներ հին Հայաստանում», «Բագրատունեաց փառքը» եւն: Սանահնեանի, Ա.Խաչատրեանի, Հացունիի, Ակիհնեանի, Չօպանեանի եւ ուրիշ պատմաբանաէրներու դէմ եւ թեր իր յօդուածները այդ կարգի հարցերու շուրջ, հատորներ կ'ընդգրկեն: Երիտասարդութեան հրատարակած է «Բանքեր գրականութեան եւ արուեստի» կիսամեայ շքեղ հանդէսը:

1919-ի վերջերը Ադոնց անցաւ արտասահման՝ հաստատուելով նախ՝ Լոնտոն, ապա՝ փոխադրուելով Փարիզ: Քանի մը տարի ետք ան հրաւիրուեցաւ Պրիքսէլի համալսարանին կողմէ իբրեւ դասախօս հայ լեզուի ու պատմութեան, եւ հոն՝ Պրիքսէլի մէջ, կնքեց իր մահկանացուն:

Իր մահը, ինչպէս ըսինք, ադէտ մըն է, վասնզի Ադոնց կը մեռնի առանց լիովին տուած ըլլալու ինչ որ կարող էր տալ: Քանքարաքաթրոյց մը չեղաւ անշուշտ, վասնզի պատմութեան գերեզմաններէն դուրս կանչեց մեծ եւ լուսաւոր հայ դէմքեր՝ փառաւորելով իր ժողովուրդի անունը յաչս աշխարհի: Բայց չլեցուց մեր սպասումը իրմէն. կ'ըսենք ասիկա պարսաւէ աւելի՝ հիացմանը մէջէն իր արժանիքին:

Երուսաղէմը իր հմայական հնայքին մէջ բարձրացնելու համար, հանգուցեալ Թորգոմ Սրբազանը, եւ ներկայ Մեսրոպ Ս.Պատրիարքը կը մնածէին օգտուիլ իրմէն, զինք Ս. Աթոռս հրաւիրելով. բայց յառաջադրութիւնները չիրականացան՝ հպատակելով ժամանակի ոժնդակ հարկադրանքին:

Կեանքի մէջ չկայ աւելի նեղգ եւ անմտածելի հնարաւորութեանց խաղերովը այնքան յդի հնչ մը՝ որքան ժամանակը ինք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՎՈՐ ԱՐԱՐԱԾԱԳԻՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ:
ՀԱՍՊԱ: ք.ԿՈՊԵՆ, ՀԱՖԻՖԵՍՏ-20/32
ՀԵՌԱԽՈՍ՝ (0285) 5 25 63 = (091) 45 90 47 = (077) 06 28 02
էլ.հասցե www.syuniacyerkir.am
էլ.փոստ syuniacyerkir@mail.ru
տպագրվում է 2003թ. հոկտեմբերի 1-ից ■
հիմնադիր եւ հրատարակիչ «Այսօրվա աշխարհ» ՍՊԸ ■
№ 17 236
18 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2011

Ազգային գործիչներ ու բարերարներ, ովքեր մեծ դեր խաղացին Ն.Ադոնցի կյանքում

Խմբագրության կողմից

Անպայման կուզենայինք ներկայացնել նաեւ ֆրանսիացի մեծահարուստ Աբրահամ Ղուկասյանի, Ն.Ադոնցի կյանքի վերջին օրերի բժիշկ Սինաս Սիսաքի լուսանկարները, բայց, ցավոք, չհաջողվեց դրանք գտնել:

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՄԱՆԹԱՇՅԱՆ (1849-1911թթ.)

Հոր՝ Հովհաննեսի մահից հետո (1878թ.) Բաքվում զբաղվել է նավթարդյունաբերությամբ: Դարձել է «Թիֆլիսի առեւտրական բանկի» (մասնաճյուղեր է ունեցել Բաքվում եւ Բաթումում) գլխավոր բաժնետերը, 1899-ին հիմնել է «Ա.Մանթաշյանց եւ ընկ. առեւտրական տուն» բաժնետիրական ընկերությունը (կապիտալը՝ 1899-ին՝ 22 մլն, 1914-ին՝ 30 մլն ռուբլի): Ռուսական կառավարության հովանավորությամբ օտարերկրյա ընկերությունների հետ կատարել է մի շարք առեւտրա-ֆինանսական գործարքներ եւ դարձել Ռուսաստանի մեծահարուստներից մեկը: Նրա ընկերությունը մասնաճյուղեր է ունեցել Ռուսաստանի, Լեհաստանի, Թուրքիայի, Ռումինիայի, Անգլիայի, Ֆրանսիայի, Եգիպտոսի, Իրանի, Հնդկաստանի տարբեր քաղաքներում: Ունեցել է բազմաթիվ շոգենավեր, կալվածքներ, տներ: Բավականին գումարներ է ծախսել բարեգործական նպատակներով. Թիֆլիսում հիմնել է «Մանթաշյան առեւտրական դպրոց», կառուցել է Ներսիսյան դպրոցի նոր շենքը, վերանորոգել Մայր եկեղեցին եւ այլն: 1894-ին ցվիրատվություն է կատարել Կովկասի հայոց բարեգործական ընկերությանը եւ ընտրվել նրա Կենտրոնական խորհրդի փոխնախագահ: ■

ԿԱՐԱՊԵՏ ԵՂՅԱՆ (1835-1905թթ.)

Բանասեր, պատմաբան, ազգային-պահպանողական գործիչ, ավարտել է Լազարյան ճեմարանը, ապա՝ Պետերբուրգի հնամյաս արեւելյան լեզուների բաժինը: «Ներքին կյանք հին Հայաստանի» (1859թ., ռուս.) աշխատության համար ստացել է արեւելյան լեզուների մագիստրոսի գիտական աստիճան: Պաշտոնավարել է ներքին գործերի, ապա՝ լուսավորության մինիստրություններում:

1886-ին այցելել է Կարինի Սանասարյան վարժարան, հովանավորել այն եւ Նոր Նախիջեւանի Գոգոյան, Թիֆլիսի Հովնանյան միջնակարգ օրիորդաց դպրոցները:

Զբաղվել է Սանասարյան եւ Իզմիրյան կտակների իրականացմամբ, նյութապես օժանդակել է Ղ.Ալիշանի «Այրարատ» եւ «Սիսական» աշխատությունների հրատարակությանը:

Հրատարակել է Ղեւոնդի «Պատմությունը» (1887), Հովհան Դարդելի «Ժամանակագրություն հայոցը» (1891) եւ այլն: Հիմնական աշխատությունն է «Պետրոս Մեծի հարաբերությունները հայ ժողովրդի հետ» (1898, ռուս.) ուսումնասիրությունը: ■

Ովքեր եւ ինչպես կառուցեցին Նիկողայոս Ադոնցի հուշարձանը Սիսիանում

«Որոտանի» հարցերին պատասխանել է Հենզել Առաքելյանը

ՔԱՂՎԱԾՔ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԻՑ

– Պարո՛ն Առաքելյան, որքանով գիտեք, Նիկողայոս Ադոնցի արձանը Սիսիանում կանգնեցվել է Ձեր նախաձեռնությամբ, երբ Դուք Սիսիանի կուսշրջկոմի առաջին քարտուղարն էիք:

– Ազգային զարթոնքի շրջան էր: Շատերն առաջարկում էին Անդրանիկի կամ Նժդեհի արձանը: Ես պնդեցի իմը: Գիտեի, որ նրանց հուշարձանները, ինչպես էլ լինի, մի օր կբարձրացվեն (Այդպես էլ եղավ: Երկուսի արձանները Սիսիանում եւ Անգեղակոթում արդեն դրված են): Սիսիանը գիտության եւ մշակույթի ոլորտներում քիչ տաղանդաշատ անհատներ չի տվել: Դրանց մեջ Ադոնցն առկայծող աստղերից մեկն է: Հարկավոր էր ունենալ նրա հիշատակը հավերժացնող հուշարձան:

Հուշարձանի հեղինակը մեր համերկրացի, նշանավոր քանդակագործ Արտաշես Հովսեփյանն է: Ալեքսանդր Թամանյանի, Արմեն Տիգրանյանի եւ շատ ուրիշների՝ Երեւանում դրված հուշարձանների հեղինակը: Իսկ թե ինչու Ադոնցը հենց այդպես՝ սեւազգեստ ու մագաղաթը ձեռքերին ամուր բռնած, դրա պատասխանը կտա հեղինակը՝ աստվածատուր շնորհքով ու անբացատրելի երեւակայությամբ օժտված Վարպետը:

Հուշարձանի ճարտարապետական մասն արել է այն ժամանակվա Երեւանի գլխավոր ճարտարապետ Ռոմեո Զուլիհայանը: Գերազանց է արվել: Բազիսն ու վերաշենքը համահունչ են:

– Բնականաբար նման պարագաներում միշտ հարց է առաջանում՝ ովքե՞ր ֆինանսավորեցին հուշարձանի կառուցումը:

– Դա նույնպես կարեւոր հարց էր: Երբ նախաձեռնեցինք հուշարձանի կառուցումը, գիտեինք, թե ինչպես եւ ինչ միջոցներով պետք է սկսենք ու ավարտին հասցնենք այն: Հուշարձանի ճարտարապետական մասի ֆինանսավորումը կատարվեց քաղխորհրդի միջոցների հաշվին, իսկ զուտ արձանի ֆինանսավորման ծախսերն իր վրա վերցրեց Ադոնցի համագյուղացի Արկադյա Արշակյանը:

– Իսկ բացումը կարծես ուշ կատարվեց:

– Բացումը կատարվեց իշխանափոխությունից հետո, Ադոնցի համագյուղացի, շրջխորհրդի նախագահ Սամվել Սահակյանի կողմից:



ԱՐՏԱՇԵՍ ՀՈՎՍԵՓՅԱՆ (1931թ.)

Հայ ականավոր քանդակագործ, ժողովրդական նկարիչ: 1974թ. Երեւանում իրականացրել է Ալ.Թամանյանի հուշարձանի առաջին փարբերակը: Ուշագրավ է Արմեն Տիգրանյանի հուշակոթողը՝ Երեւանի օղակաձեւ զբոսայգում (1985թ.): Նրա ուշագրավ գործերից են նաեւ Երեւանի Սուրբ Սարգիս եկեղեցու բարձրաքանդակները: Հայ ժամանակակից արվեստում առանձնահատուկ տեղ են գրավում նրա բարձրաքանդակները Երեւանի մետրոպոլիտենի «Սասունցի Դավիթ» կայարանում:



ՌՈՄԵՈ ԶՈՒԼԻՀԱՅԱՆ (1937թ.)

ՀՀ վաստակավոր ճարտարապետ, Միջազգային ճարտարապետական եւ Երեւանի ճարտարապետաշինարարական պետական համալսարանի պրոֆեսոր: Հիմնական աշխատանքներն են՝ Հայաստանի կառավարության ընդունելության տունը Երեւանում, Երեւանի մետրոյի «Շենգավիթ» եւ «Զորավար Անդրանիկ» կայարանները, Դավիթաշենի կամուրջը Երեւանում, Սահակ Պարթեւի եւ Մեսրոպ Մաշտոցի հուշարձանը Երեւանի պետական համալսարանի փարաջքում եւ այլն:

Հենզել Առաքելյան

Սամվել Սահակյան

Արկադյա Արշակյան

Իմ Նիկողայոս Ադոնցը

ՍԱԹԵՆ ՀԱԿՈԲՅԱՆ

Այս շարադրության համար 2010թ. Սիսիանի №4 դպրոցի աշակերտուհի Սաթեն Հակոբյանն արժանացել է Սիսիանի քաղաքապետի մրցանակին: Նա այժմ Վ.Բրյուսովի համալսարանի ռոմանոգերմանական ֆակուլտետի ուսանողուհի է: Մրցույթը կազմակերպել էր Ն.Ադոնցի անվան Սիսիանի պատմության թանգարանը՝ «Ադոնցյան օրեր» ամենամյա միջոցառման 10-րդ տարեդարձի առթիվ:

Հիշում եմ, երբ դեռ փոքր աղջնակ էի, մայրիկիս ձեռքը բռնած՝ հաճախ էի անցնում Նիկողայոս Ադոնցի արձանի մոտով: Դա իմ մանկապարտեզի ճանապարհն էր: Եվ գրեթե ամեն օր՝ արձանին հասնելիս, հարցնում էի.

– Մայրի՛կ, իսկ ո՞վ է այս քեռին...

Ապա անպայման լսում էի մայրիկիս պատասխանը.

– Նիկողայոս Ադոնցն է:

Հետո նս գնացի դպրոց, առաջին դասարան: ...Անհկատ սահեցին տարիները: Հիմա սիրում եմ զբոսնել թանգարանի մերձակա պուրակում, հաճելի տեղ է, իմ սիրելի անկյունը մեր փոքրիկ քաղաքում: Պուրակի խորքում գեղեցիկ մի շենք կա. դա մեր թանգարանն է, եւ ես մի օր որոշեցի թանգարան մտնել: Այստեղ նորից լսեցի Նիկողայոս Ադոնցի մասին: Հետաքրքիր է՝ ով է Ադոնցը, որին Սիսիանում շատերը գիտեն: Այս հարցն ինձ ստիպեց թերթել նրա կենսագրության էջերը:

...1871 թվական: Բռնակոթցի Գեւորգ Ադոնցի տանն ուրախություն է. արու զավակ է ծնվել: Գեւորգը նրան անվանեց Նիկողայոս: Մեծ ու շեն Բռնակոթը երեք քահանա ուներ: Այն ժամանակ գյուղը մելիքանիստ էր, եւ այդ մարդկանց ջանքերի շնորհիվ տարածաշրջանում դպրոց բացվեց: Գյուղի մյուս երեխաների պես, Նիկողայոսը եւս հաճախեց դպրոց: Հենց այստեղից է սկսվել նրա մեծ ճանապարհը: Լինելով ուշիմ աշակերտ՝ Նիկողայոսն անցավ ժամանակի բոլոր դպրոցները: Սովորեց Տաթեւում, էջմիածնում, Թիֆլիսում, Սանկտ-Պետերբուրգում, Դորպատում, Վիեննայում, Վենետիկում, Փարիզում, սովորեց մեկ տասնյակից ավելի մեռած եւ կենդանի լեզուներ, խորացավ հայագիտության եւ բյուզանդագիտության մեջ: Ադոնցի կենսագրության էջերը թերթելով՝ հասկացա, որ բոլոր ժամանակներում էլ կարեւորվել են կրթությունն ու գիտելիքը, եւ ես փորձում եմ գտնել եզրերը՝ իմ եւ ադոնցյան ժամանակների: Այսօր դա կարեւորվում է ինձ համար այնքանով, որ ես եւս պատրաստվում եմ շարունակել կրթությունս, եւ իմ կյանքում իրական օրինակ է ծառայում Ադոնցը՝ դժվարությունները հաղթահարելու իր ձգտումով ու կարողությամբ: Նրա այս արժանիքները գնահատելով է, որ հայ մեծ մեկենաս Ալ.Մանթաշյանը սիրով է ֆինանսավորել Ադոնցի ուսման եւ ապրելու ամբողջ ծախսերը մի քանի տարի շարունակ: Պատկերացնելն անգամ դժվար է, թե ինչպես հասարակ գյուղացու որդին, հաղթահարելով ժամանակի խոչընդոտներն ու սահմանափակ պայմանները, կրթվեց ու աշխատեց Եվրոպայի լավագույն համալսարաններում, գրադարաններում: Քսամնմեկերորդ դարի դպրոց, ապրելու լավագույն պայմաններ, վիրտուալ գրադարան-ինտերնետ, մի խոսքով՝ մեծագույն հնարավորություններ՝ կրթվելու համար: Իրական օրինակ ունենալով իմ մեծ հայրենակից Ադոնցին եւ այժմյան պայմանները՝ ձգտում եմ կյանքում գտնել իմ տեղը, մի քար ավելացնել այն շեքին, որ կոչվում է հայրենի տուն:

Այդ տունը սիրելով, նրան մինչեւ վերջ նվիրվելով՝ ապրեց հայ մեծ գիտնականը, մարդը, որը գնահատվում է ժամանակների հեռվից եւ իմ ժամանակակիցների կողմից: ■

տպագրվում է 2003թ. հոկտեմբերի 1-ից ■
հիմնադիր եւ հրատարակիչ «Այսօրվա աշխարհ» ՍՊԸ ■
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՎՈՐ ԱՐԱՐԱԾԱԳԻՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ:
ՀԱՍՊԱ: ք.ԿՈՊԵՆ, ՀԱՖԻՖԵՍՏ-20/32
ՀԵՌԱԽՈՍ՝ (0285) 5 25 63 = (091) 45 90 47 = (077) 06 28 02
էլ.հասցե www.syuniacyerkir.am
էլ.փոստ syuniacyerkir@mail.ru

ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Հնավայրեր, որոնց պեղումներին մասնակցել է Նիկողայոս Ադոնցը

1912թ. ամռանը Ն.Ադոնցը մասնակցում է Անիի հնագիտական 11-րդ դաշտային աշխատանքներին: 1916թ. ամռանը միանում է գիտական այն արշավախմբին, որը գործուղվել էր ռուսական բանակի կողմից ազատագրված Մուշ եւ Էրզրում: Այնուհետեւ Ն.Ադոնցը ղեկավարել է Վանի հնագիտական արշավախումբը:

Վան: Քաղաքը հիմնադրել է Ուրարտուի թագավոր Սարդուր Ա-ն (835-825թթ. մ.թ.ա.), անվանել Տուշպա եւ դարձրել պետության մայրաքաղաքը: Մինչեւ 1915թ. Վանը հին աշխարհի անառիկ ու մարդաշատ քաղաքներից էր:

Լուսանկարում՝ Վանա լճի Աղթամար կղզու հայկական Սուրբ Խաչ եկեղեցին:

Անի: Հայոց մայրաքաղաքը էր հռչակվել 961-ին՝ Բագարատունիների կողմից եւ որպես մայրաքաղաք մնաց մինչեւ 1064թ.: Այդ ժամանակ սելջուկների՝ հայաստան կարարած արշավանքի ժամանակ մեծ զոհերի գնով Անին գրավվեց: Ավանդությունը Անիի վերջնական ամայացումը կապում է 1319-ի երկրաշարժի հետ:

1920-ին Անին հանձնվեց Թուրքիային:

Լուսանկարում՝ Ս.Գրիգոր եկեղեցին:

Մուշ: Այժմ Մուշը Թուրքիայի համանուն նահանգի կենտրոնն է:

Էրզրում (Կարին): Քաղաքի բնակչության մեծ մասը Եղեռնի զոհ դարձավ:

Անի, 1912թ.: Ձախից աջ՝ Արամ Վրույր, Հովսեփ Օրբելի, Պ.Կնյազեվիցկի, Զ.Բերիձե, Ն.Ադոնց, Ն.Մառ, Ա.Անդրյանով, Լոռի Մելիք-Քալանթար, Յու. Սարրումմե, Յու. Սմիրնով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌՔԵԼԱԿԱՆ ԱԾԽԱՆՔԸ
ՄԱՍԱՆԱՒՈՐ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՕՐԱԳՐԻՇ.
ՊԱՐԲ. ԹԻՒ ԱՀՊՊԱ, ՕՐԻՇԻՆՍԿԻ 20/32
ՀԵՌԱԽՕՍ՝ (0285) 5 25 63 = (091) 45 90 47 = (077) 06 28 02
էլ. հասցէ՝ www.syuniacyerkir.am
էլ. փոստ՝ syuniacyerkir@mail.ru
տպագրվում է 2003թ. հոկտեմբերի 1-ից ■ հիմնադիր եւ հրատարակիչ «Սյունեյաց աշխարհ» ՍՊԸ ■
№ 17 236
18 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2011

ԱՆԴՐԱԴԱՐՁ ԻՐ ՏՈՀՄԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆԸ

Դավիթ Բեկ եւ Տեր Ավետիքի սերունդը

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԴՈՆՑ

Ստեփան Շահումյան՝ Դավիթ Բեկի գործակիցը եւ պատմագիրը(1), գրեթե ոչինչ չի հայտնում նրա ծագման եւ ընտանեկան պայմանների մասին:

Ինչո՞ւ էր բեկ կոչվում, արդյո՞ք մելիքական տանից էր, թե բեկ լոկ տիտղոս էր titulus ornans, որպես այժմ հայ գյուղացիների մեջ սովորություն է այդպես անվանել փոքր ի շատե դիրք ունեցող անձերի: Հայտնի չէ նաեւ, թե Դավիթ Բեկ ամուսնացա՞ծ էր, թե՞ ամուրի:

Ռաֆֆին կարծում էր, որ նա ամուսնացած չէր: Բայց իր գործի վերջում հրատարակել է մի վավերագիր, որ հակառակն եւթ տեսնում: Վավերագիրը կրում է «Վկայագիր Ուռպելեանց» վերնագիրը եւ բեռնավորված է շատ պատկառելի ստորագրություններով, ինչպես՝ արքեպիսկոպոս Սիմեոն Տաթեւացի, արքեպիսկոպոս եւ մետրոպոլիտ Բաղդասար Հասան-Ջալալյան, արքեպիսկոպոս Սարգիս Հասան-Ջալալյան՝ Ղարաբաղի թեմու առաջնորդ, Մելիք-Մանուչար Ուռպելյանց Տաթեւացի եւ այլն: Թուղթը հորինված է 1835 թվին, սեպտեմբերի 25. «Ի Սիւնիս»:

Ստորագրողները վկայում են, որ Դավիթ Բեկ որդի էր Աստվածատուր իշխանին Սյունյաց եւ ուներ երկու հորեղբայր՝ Սարգիս բեկ եւ Մելիք Եղիա, «որոց բնակութիւն էր ի Դավիթ գեաւառի ի բերդին Ղալիձորոյ»: Սակայն երեք եղբայրների ծննդաբանական տախտակը.

1. Աստվածատուր իշխան
- Դավիթ բեկ
- Սարգիս բեկ
- Էյվազ=Սարգիս քահանա

2. Սարգիս բեկ
- Մելիք Պալի
- Մելիք Փարսադան
- Մելիք Հովհաննես

3. Մելիք Եղիա
- Մելիք Հարություն
- Մելիք Ստեփան
- Կարապետ քահանա:

Երեք եղբայրների թոռնորդիները՝ Սարգիս քահանա, մելիք Հովհաննես եւ Կարապետ քահանա՝ իր երկու զավակներով՝ մահտեսի Հովհաննես եւ Հակոբ, կենդանի էին 1835 թվին եւ վկայագիրը տրված սրանց՝ հաստատելու, թե «իշխանազն են եւ ազնվատոհմ»:

Դավիթ Բեկն «Հասեալ ի յարբունս հասակի», թողնում է տունտեղ եւ գնում Թիֆլիս «առ Շահնազուզ իշխանն վրաց, որոյ եւ սիրով ընկալեալ զնա կարգեաց զօրապետ

Կապան, Դավիթ Բեկի հուշահամալիրը: Քանդակագործ՝ Սերգեյ Բաղդասարյան, 1978թ.:

ի վերայ զօրաց իւրոց»: Սյունեցիների խնդրով Դավիթ Բեկ գալիս է հայրենիք 1722 թվին, վանում թշնամիներին եւ նստում «զօրապետ եւ իշխան Սիւնեաց»: Շահթամրազ թագավորը «ընծայամատոյց եղեւ նմին վերստին զիշխանութիւն ի վերոյ Սիւնեաց եւ ամենայն գաւառաց մինչեւ ցՆուր գետ»: եւ Բեկի կրտսեր հորեղբայր՝ Եղիան, ստանում է մելիքություն՝ իշխելու «ի վերայ գաւառաց»:

Դավիթ Բեկ, ուրեմն, հեռացել էր Վրաստան պատանեկան հասակում: Երեք վրացի թագավորներից, որ Շահնավազ վերանում են կրում, առաջինը Վախթանգ V թագավորն էր (1658-1676), երկրորդը՝ նրա որդին՝ Գեւորգի (1676-1688, երկրորդ անգամ՝ 1691-1695, եւ մեռավ Պարսկաստան 1709 թվին): Երրորդ՝ Շահնավազը՝ Բակուր, գահի վրա նստեց 1714-1716 թվականներին փոխան իր հոր՝ Վախթանգ VI եւ 1722 թվին կենդանի էր եւ գործակից էր իր հոր: Պատանի Դավիթ Բեկին ընդունող Շահնավազը եթե Ի կամ II էր, նա չէր կարող 1722 թվին ղրկել Դավթին Սյունեիք: Այս թվին կար մի իշխան Շահնավազ, որ սակայն թագավոր չէր: Հայոց հետ հարաբերության մեջ էր հայոց՝ Վախթանգը:

Թվում է, թե «Վկայագրի» խմբագրողի եռթարդությունն է, որ Դավիթ Բեկի պատանի օրերին է գնացել Վրաստան, եւ Շահնավազ անունը հայտնի է նրան Շահուժյանի պատմությունից: Դավիթ Բեկը իր հաղթությունների հետո ստանում է շահից Սյունյաց իշխանությունը եւ ստանում է «Վերստին», այսինքն՝ ստանում է ինչ որ իրեն էր պատկանում, քանի որ իր հայր Աստվածատուրը «իշխան էր Սիւնեաց»:

Ի՞նչ է նշանակում իշխան Սյունյաց: Ուրիշ ոչինչ, քան մելիք, եթե միայն հավատանք, որ Աստվածատուրը գոյություն է ունեցել եւ բարձր դիրք է վայելել: Նույն բդթի համաձայն՝ եղիան ստացավ մելիքություն Դավիթ Բեկի օրով: Առաջ նրանց տան մելիք չկար: Կարծում ենք, որ հեղինակին հայտնի լինելով Շահուժյանի պատմությունից, թե Դավիթ Բեկ կարգվել է իշխան Սյունյաց, կամեցել է ցույց տալ, որ այդ պաշտոնն ուներ նրա հայրը: Ավելի քան կասկածելի է, որ Դավիթ Բեկ Ղալիձորցի լիներ: Նա եկավ Սյունիք, բաակեց Ուչթեփե՝ ....մի սարահարթ, եւ այնտեղից գնաց Շնոհեր եւ ոչ Ղալիձոր.... Պատճառն այն էր, որ Ղալիձորի մելիքն էր Փարսադանը, որի հետ ընդհարում ունեցավ Դավիթ Բեկ, կալաճավորեց եւ բանտարկեց Շնոհեր Տեր Ավետիք քահանայի հետ, որ մելիքի փեսան էր:

Զարմանալի է, որ Դավթի ազգականներից եւ ոչ մեկը չէ հիշվում նրա կոիվների մեջ, չէ հիշվում Ղալիձորի բերդի շինության առթիվ Դավիթ Բեկի ձեռքով:

Թուղթը նպաստավոր տպավորություն չէ թողնում նաեւ իր ստորագրություններով: Տաթեւի առաջնորդ իրավ է, որ Սիմեոն արքեպիսկոպոսն էր, ինքը Տաթեւի Ուստաթլուճց տնից հայտնի է եւ այժմ հաջորդել էր 1830 թվին Մարտիրոս արքեպիսկոպոսին, որը եւս Տաթեւի էր եւ պապ Տիգրան Տեր-Հակոբյանի, ծեմարանի անդրանիկ ավարտողներից, որ հետո ուսուցիչ էր Տաթեւի վանքի դպրոցում եւ մեռավ եղերական մահով: Բաղդասար արքեպիսկոպոսը, «մետրոպոլիտ հաময հայոց Աղուանից», նույնպես 1835 թվին կենդանի էր, մեռավ 1854 թվին:

Սարգիս արքեպիսկոպոսի ստորագրությունը խիստ կասկածելի է: Նա իրեն անվանում է Հասան-Ջալալյան, մինչդեռ այդ տոհմից չէր եւ 1835 թվին չէր կարող Ղարաբաղի թեմի առաջնորդ լինել: Նա Ջալալյան էր (առանց Հասանի) եւ առաջնորդ նշանակվեց Բաղդասար մետրոպոլիտի մահից հետո, ուրեմն 1854 թվից հետո: Նրա «Ճանապարհորդութիւնը» հրատարակված է 1842 թվին, կրում է հեղինակի ստույգ անունը՝ Սարգիս վարդապետ Ջալալյան: Եթե 1842 թվին նա դեռեւս վարդապետ էր, ինչպես կարող էր 1835 թվին իրեն անվանել արքեպիսկոպոս, այլեւ առաջնորդ թեմին Ղարաբաղու, եւ Հասան-Ջալալյան:

Ռաֆֆին տրամադրել է նրա մի ուրիշ աշխատությունը՝ «Պատմութիւն Սղուանից աշխարհի» կրկնակի խմբագրությամբ, որի հեղինակն իրեն կոչում է Սարգիս Ջալալյան (եւ ոչ Հասան Ջալալյան):

Ստորագրողները հայտարարում են, որ իրենք 60, 70 եւ 80-ամյա ծերունիներ են, հարկավ ցույց տալու համար, որ գործին տեղյակ մարդիկ են: Բաղդասար ծնված էր 1775 թվին եւ ուրեմն 1835 թվին ուներ 60-ամյա հասակ: Շեմ կարծում, որ Սարգիս Ջալալյան հասակակից լիներ մետրոպոլիտին. անտարակույս, ավելի պակաս տարիք ուներ, պակաս քան 60: Մելիք Մանուչար նույնպես չէր կարող 1835 թվին լինել 60-ամյա: Նա իմ պապ էր, ավելի ճիշտ պապիս՝ Ռուստամ բեկի ավագ եղբայրն է, եւ կենդանի էր 1870-ական թվականներին, որ Ղալիձորում տրամադրությունները փոխված էին, որի հետեւանքով Մխիթար սպարապետ՝ իր զինակիցը, հեռացել էր Խնձորեսք, ուր եւ սպանվեց: Տեր Ավետիք թողնում է Ղալիձորը, բայց ո՞ւր է գնում, հայտնի չէ:

Ինչ վերաբերում է նրա սերունդին, դարձյալ հաստատ տեղեկություն չունենք, բայց կա ավելի քան հավանական եզրակացություն, որի մասին ավելորդ չենք համարում խոսել:

Տաթեւի եպիսկոպոս Հովակիմի օրով Բռնակոթ գյուղի մի քանի անձեր շինել են իրենց ծախքով մի դամբարան Գրիգոր Տաթեւացու գերեզմանի վրա: Հովակիմ ծագումով անգեղակոթցի էր եւ եպիսկոպոս գահակալ Տաթեւում 1775 թվականից մինչեւ 1796 թվականը, երբ Ադա Մահմեդ խանի արշավանքի հետեւանքով թողեց վանքը եւ գնաց էջմիածին, ուր եւ մեռավ: Հավանորեն նրա խորհուրդով են բռնակոթցիք հանձն առել հիշյալ շինությունը 1787 թվին: Դամբարանի վրա կա երկար արձանագրություն, որ բերում ենք ամբողջապես.

«Շնորհիւն Այ. շինեցաւ Սբ. մատուռս եւաթեալոյս բաբուսապետին եւ երկրորդ Ոսկերերանին երիցս երանեալ վարժապետին մերոյ եւ չորրորդ Լուսաւորչին Սբ. Գրիգոր Տաթեւացւոյն ձեռաքբ բազմաշխատ եւ աւգտաքաս Սիւնեաց պետի Տն. Յովակիմայ Սիւնեցւոյ արդեամբ եւ ծախիւք բռնակոթեցւոց, այսինքն՝ Տր. Գէորգ, Տր. Յակոբ եւ Տր. Յարութիւն քահանայիցն. նաեւ Կարապետին եւ Մկրտչին, Յակոբջանին, Սիմիոնին, Աղդէրին, Յովակիմին, Պետրոսին, Գրիգորին եւ Մարտիրոսին, ՔարամՁոլոյնն (ՔարամՁոլոյնն, ՄարամՁոլոյնն, հավանորեն), Ստեփանին եւ Յաւնանին, Մսուեսին, Մկրտչին, Շահնազարին եւ Ամատուրին. այլ եւ բարեպաշտուտիի կանանցն Նազլուին, Հուրիզատին, Մարիամին, Գուլփա-

տպագրվում է 2003թ. հոկտեմբերի 1-ից ■ հիմնադիր եւ հրատարակիչ «Սյունեյաց աշխարհ» ՍՊԸ ■
№ 17 236
18 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌՔԵԼԱԿԱՆ ԱԾԽԱՆՔԸ
ՄԱՍԱՆԱՒՈՐ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՕՐԱԳՐԻՇ.
ՊԱՐԲ. ԹԻՒ ԱՀՊՊԱ, ՕՐԻՇԻՆՍԿԻ 20/32
ՀԵՌԱԽՕՍ՝ (0285) 5 25 63 = (091) 45 90 47 = (077) 06 28 02
էլ. հասցէ՝ www.syuniacyerkir.am
էլ. փոստ՝ syuniacyerkir@mail.ru

ԱՆԴՐԱԴԱՐՁ ԻՐ ՏՈՀՄԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆԸ

...րիհմ, որոց յիշատակն արիւնութեամբ եղիցի եւ աղաւաթ Սրբոյս Գրիգորի ի վերա նոցա լիցի, ամէն: Կառուցաւ Սբ. մատուռս ի հայրապետութեան Սրբ. գահիս Եջմիածնի Տն. Ղուկասու ի ռվլչ թուոջս մերում յաւուրս Քանահեան Իբրահիմ խանին»(9):

Այստեղ բված անձերի ժառանգները կան մինչեւ այժմ: Տեր Գեւորգի թոռան թոռն է ուսուցիչ Խոնարհը, որ սպանվեց Գորիսում՝ որդի Տեր Խորեն քահանայի Տեր-Գեւորգյան: Տեր Հարությունի տունն էլ քահանայական մնացել է մինչեւ այժմ: Այս տանն է պատկանում Տաթեւի հոգեւոր կառավարության երկարամյա քարտուղար Պետրոս Տեր-Հարությունյան: Հակոբջանանց, Կարապետանց, Ավակիմանց (Ղազկիմոնց), Քեռամանց եւ այլն տները, որ ցայժմ հայտնի են Բռնակոթում, հիշված անձերի անուններն են կրում:

Ադդեն՝ ճախահայր է այն տոհմի, որ կոչվում է Ադոնց: Ադդյո՞ք Ադի՝ կրճատ ձեւն է Ադդեի-ի, թե՞ այլ ծագում ունի, թողնենք: Ամեն պարագային արձանագրության գրողն այդպես է հասկացել եւ, հավանորեն, որեւէ հիմք է ունեցել: Այս Ադդեիի որդին քահանա էր, եւ անունը՝ Տեր Ավետիք: Սա երեք որդի ուներ՝ Առաքել, Գրիգոր եւ Միհրաք: Վերջինիս որդին եւս կոչվում է Ավետիք (Ավետիս):

Տեր Ավետիք սպանված է թուրքերից եւ որպես նահատակ թաղված է հիմ Գորիսի եկեղեցու դրան: Այս տեղեկությունն ինձ հայտնել է ժամանակով Տաթեւի քարտուղար Պետրոս Տեր-Հարությունյան՝ մի բանիմաց անձ, որ իր պաշտոնի բերումով հաճախ շրջագայել էր Տաթեւում վիճակը եւ լավ ծանոթ էր տեղական հնություններին եւ ավանդություններին: Հայր Ալիշանին եւս պիտանի է եղել՝ ինչ-ինչ նյութեր հայթայթելով «Սիսական»-ի համար:

Ադոնց տան պաշտոնական ազգանունն է Տեր-Վեստիքյան: Այդպես էի կոչվում նաեւ ես Ս. Էջմիածնի ճեմարանում աշակերտելիս: Երբ հետո ռուսական գիմնազիոն մտա՝ Թիֆլիզի երկրորդ գիմնազիոնը, դպրոցի դիվանը, ռուսական սովորությամբ, փոխեց անունս Տեր-Ավետիքով: Տեսուչը չեխ մարդ էր՝ Դրբոզլավ, հեռու ռուսամոլությունից: Վստահաբար նրա բարյացակամ վերաբերումին՝ նկատեցի, որ անունս աղավաղել են եւ չեն ուզում ուղղել: Շատ սառը պատասխանեց, որ տրտունջի տեղ չէ եւ պետք է հնազանդել դպրոցական կարգերին: Գիմնազիոն ավարտելիս չուզեցի բնավ, որ վկայական մեջ Տեր-Ավետիքով գրեն, որով ընդամիշտ պաշտոնական ձեւ պիտի առներ եւ համապարանում, եւ հետո, ուստի գրեցի Երեւան կոնսիստորիա եւ ստացա վկայաթուղթ, թե Տեր-Ավետիքյան է նույն Ադոնց: Ավարտական քննությունների ժամանակ ես արդեն Ադոնց էի եւ ոչ Ավետիքով:

Ահա այս փոփոխության առթիվ էր, որ բարեկամս՝ Պետրոս քարտուղարը, ժպտով նկատեց, որ Տեր-Ավետիքյան ավելի հարգի անուն է, երբ 1897 թ 1899 թվականի ամառը տեսա նրան Տաթեւում: Գորիսի գերեզմանի մասին հայտնեց նաեւ, որ ասողներ կան, թե գերեզմանը ոչ թե Ադոնց որդու Տեր Ավետիքի է, այլ Ադոնց հոր՝ Տեր Ավետիքի են, որ այս Տեր Ավետիքը Դավիթ Բեկի հերոսներից է:

Այն ժամանակվա հետաքրքրությանս շրջանից դուրս էին նման խնդիրները, ուստի եւ լուրջ ուշադրություն չդարձրի եւ հետամուտ չեղա անգամ ստուգելու գերեզմանի ինքնությունը: Անտարակույս, վրան արձանագրություն կա, եւ այնտեղից գիտե քարտուղարը նահատակության պարագան:

Հետագայում հոգեւոր կառավարությունը տեղափոխեցին Տաթեւից Գորիս: Քարտուղարն եւս հասնելավեց Գորիս, ուր ապրում է եւ այժմ, եւ հուսամ՝ տակավին կենդանի է: Ով գիտե, գուցե դիպվածով ներկա տողերս հասնին իրեն եւ պատասխանդրեցնեն պարզաբանել խնդիրը:

Բացի այս աղոտ ակնարկից՝ ուրիշ դրական փաստ չկա վկայելու, թե Ադին իրոք զավակ էր Տեր Ավետիք զորավար-երեցին: Սակայն, կողմնակի նշաններ կան, որ խոսում են ի նպաստ այս ակնարկիի: Ամբողջ Զանգեզուրում (= Սիսիան, Դափան, Զանգեզուր) չկա ուրիշ տոհմ, որ կրեր Տեր-Ավետիքյան անունը (կան Տեր-Ավետիքյաններ Գանձակի Բանանց գյուղում, բայց սրանք խնդրից դուրս են(4)): Դավիթ Բեկ ամուսնացած էր, թե չէ, հայտնի չէ, բայց Տեր Ավետիքը քահանա էր եւ, ուրեմն, հաստատապես ընտանիքի տեր էր, եւ որդին կարող էր կենդանի լինել 1785 թվին: Տեր Ավետիքի վերջին բնակավայրը հայտնի չէ. Հալիձորից հեռացել էր:

Ադոնց տոհմը ընկել չէ Բռնակոթում, այլ եկվող, եւ եկողն հենց ինքն Ադին է, որի անունով իր սերունդը կոչվել է Ադոնց: Ես լսել եմ, որ Ադին եկել է Անգեղակոթի կողմերից: Ատորեւ կիիշեմ, թե ումից եմ լսել: Ամհիմն չէ այս տեղեկությունը: Անգեղակոթից է գաղթած Բռնակոթ մելիք Սաֆրազի տունը Իսրայել Օրու ժամանակ, 1699 թվին մելիք Սաֆրազ Անգեղակոթ էր: Բռնակոթի Սաֆրազբեյյան տոհմը սրա սերունդն է, եւ մեր, այսինքն՝ Ադոնց տան ավանդական կնքահայրն էին եւ կան տեղական բառով՝ պելի են: Գաղթողը մելիք Սաֆրազը չէ, այլ իր սերնդից ոմն Ադաստ, ուստի եւ տոհմը հայտնի է Ադաստնց անունով, իսկ պաշտոնական ազգանունն են Սաֆրազբեկյան, նախնի մելիքի անունով: Այս տան մի ճյուղը հաստատված է Ղարաբիլիսե գյուղում՝ Որոտն գետի ափին: Ջիլֆիղար բեկ 1800-ական թվականների վերջերը Տաթեւի կալվածքների կառավարիչն էր եւ, չար լեզուների ասելով, հաջողել է գրավել վանքի հողերը Ղարաբիլիսում եւ հաստատվել է այնտեղ՝ թողնելով Բռնակոթը:

Եթե ոչ Տեր Ավետիք, իր եղբայրյալ որդի Ադդեն = Ադին, ապրել է միառժամանակ Անգեղակոթի մեջ եւ այնտեղից, թերեւս, Սաֆրազբեկյանների հետ, գաղթել Բռնակոթ: Մելիք-Թանգյան տոհմը եւս բնիկ չէ եւ թվում է, թե գաղթած է Խաչենից:

Կա մի արձանագրություն 1682 թվից, որ ասված է հետեւյալը.

«Ես Յակոբ վարդապետ, աշակերտ եսայայ վարդապետի Կոճոնենցւոյ ազգէ Թանկնոց, առաջնորդ կարգեալ հայրապետնէ Անանիայ տեսած Երեմիայի քան մի գիւղաւրէից ղուզայեցնոյ ոչ թողին մեզ ընակիլ ի հայրենի պառոն մեր»(9)... Եվ վերջը ստիպված է լինում հաստատվել Ծակ Ուռի կոչված տեղում: Հակոբը էր Թանկնոց ազգից, թե իր ուսուցիչ Եսայիի, որոշ չէ: Եթե Եսային է, նա Կոճոնեցի է եւ ոչ Բռնակոթցի. եթե Կոճոբ է, սրա հայրենի երկիրը Երեմիա կաթողիկոսի գիշած գյուղերի շրջանումն է, որ գտնվում է Խաչեն, հավանորեն, Գանձասարի մոտերը, ուրեմն եւ նա Բռնակոթից չէ:

Հիշեցնեք, որ Տեր Ավետիք եղեւ որդի ուներ: Մեծի՝ Առաքելի որդին է հայրս՝ Գեւորգ, Գրիգորի որդին է Ստեփան եւ Մեհրաքի որդին՝ Ավետ: Լսել եմ, որ իրքը մի թուղթ ունի, որտեղից երեւում է, որ մեր պապը՝ Ադին, եկել է Բազարչայի կողմերից: Բազարչայը այժմ ռուս աղանդավորների գյուղն է: Ռուսները Բազարչայ են անվանում, թուրքերից առնելով, Որոտն գետը: Նույնանուն ավանը գտնվում է Անգեղակոթից վերեւ՝ Որոտնի հովտում: Ի՞նչ է եղել նախքան ռուսները, ինձ հայտնի չէ: Ծերեւս հին բնակություն է եղել: Ամեն պարագային հաստատ է երեւում, որ Ադոնք եկած են Անգեղակոթ՝ Բազարչայ շրջանից:

Ստեփանը խոստացել էր ցույց տալ ինձ այդ թուղթը, բայց այնպիսի անկարգ կյանք էր վարում, որ նրան բռնել եւ խնդրել, որ խոստումը կատարի, դժվար էր:

Ավելորդ չեմ համարում քանի մը խոսք ասել այս անձի մասին, որի կյանքը շոշափմամբ կեր ուզի Դավիթ Բեկի գործունեության հետ:

Հայտնի է, որ Դավիթ Բեկի գենքն ուղղված էր հատկապես թուրքմեն-թարաքյամա քոչվորների դեմ: Առաջին բախումը տեղի ունեցավ Ուչթեփե՝ Գորիսից դեպի Սիսիան տանող ճանապարհի վրա: Այժմ էլ վատահամբավ վայր է. այդտեղ սպանեցին դարանակալ թուրքերը հայ-թուրքական կռիվների շրջանում վերոհիշյալ Ջիլֆիղար բեկին իր որդի Աղեքսանդրի հետ, Մելիք-Թանգյան՝ Պարոնքեկին, եղբայր՝ մեր փրելի արքեպիսկոպոսին, Սաֆրազբեկյան՝ Ջավադ բեկին, բոլորն էլ՝ մոտիկ ազներ: Աղեքսանդր բեկը մորաքրոջս որդին է:

Քոչվորների հետ ընդհարումները շարունակվում են ցայժմ Ուչթեփեից անցնելիս: Վերջին աղետալի դեպքը, թե հայտնի, տեղի ունեցավ անցյալ դարու վերջերը, թե այս դարու սկզբի տարիներին: Թուրքերից մարդ է սպանվել եւ Գորիսի ոստիկանապետ (Համբարձում բեկ Խուրշուդյան, խնձորեսքցի), մեղադրվելով եղած արյունահեղության համար, պաշտոնանկ է եղել եւ եկել էր Պետերբուրգ՝ հուսալով արդարանալ եւ վերստանալ պաշտոնը:

Քոչվորները մեծ վնաս են պատճառում հայ գյուղերին, արտերը արածացնելով, եւ աշնանՁ սարից իջնելիս, խառնում են իրենց ապրանքին հայ գյուղացիների անասուններն եւ քշում դեպի իրենց ձմեռանոցը: Կուրի ափերից լեռնային Արցախի վրայից բարձրանում են մինչեւ Սիսիանի եւ Նախնվանի սահմանագլուխս սարերը:

Սրդ՝ մեր Ստեփանը գտել էր քոչվորներից դաս տալու լավագույն եղանակը: Լինելով պատվավոր հոր՝ խոջա Գրիգորի միակ զավակ, մանկությունից «երես առած», անընդունակ լուրջ աշխատանքի, սովորությունը էր արել գարնան-աշնան հարձակվել թուրք վրանների վրա, հափշտակել անասուններ, մասնավորապես ծիեր, որ իր գործակալների միջոցով վաճառում էր հեռու գյուղերը եւ այդպիսով գլուխ պահում: Թուրք քոչվորները, քանի մը ժամերից հետո, անօգուտ համարելով գանգատներ եւ գերադասում էին հաշտության վերջացնել Ստեփանի հետ: Գալիս էին մոտը եւ խնդրում, որ գտնե «գողացած» ապարանքը, պայմանով, որ կեսն իրեն մնա: Ստեփանը, հարկավ, գտնում էր «գողը» եւ կիսում: Վերջին անգամ, սակայն, Ստեփանի հարձակումը մարդկային զոհեր է տալիս: Գորիսի ոստիկանությունը գալիս կալանավորում է Ստեփանին եւ ձգում Գորիսի բանտը, մինչեւ որ գործը քննվի: Ստեփան բանտում նստող մարդ չէր: Հաջողում է եւ փախչում մի գիշեր եւ անհետ կորչում: Այն կորչելն էր, որ կորավ, ինչպես ասում են հեքիաթներում:

Պատերազմի տարիներին Ռուստամ Զորյաս Պետերբուրգ էր եկել, եւ հաճախ հանդիպում էինք: Մի օր ժպիտով դարձավ ինձ, թե մոռանում եմ մի լավ բան պատմել ձեր Ստեփանի մասին:

Ստեփանը բանտից փախչում է Պարսկաստան, Թավրիզ: Մի օր էլ մտնում է Դաշնակցության մեջ, բայց բռնանալով մի քանի գյուղերի վրա՝ ապրում է պարսիկ խանի նման: Վերջը բողոքներ եմ գալիս Դաշնակցական բյուրո, տարօրինակ դաշնակցական անվայել բարքի դեմ: Զորյան ստիպված է լինում կանչել եւ խրատ տալ, որ գաղափարական դաշնակցականի վայել կյանք չէ վարում:

«Մի օր, – շարունակում է Զորյանը, – **մենակ էի Բյուրո եւ մեկ էլ տեսնեմ մի վիթխարի մարդ ներս է մտնում:** – Ո՞վ եւ՝ – **Ստեփանն եմ, ի՞նչ կա, ինչո՞ւ ես կանչել ո՞վ է գանգատավորը: «Վրտաքին տեսքը, խոստովանում եմ,** – ասում է Ռուստոմ, – **եւ սարսուռ. եւ հիացում պատճառեց ինձ: Հագվածայուտ տղամարդ՝ հաղորդնում եւ իսկապես գեղեցիկ: Այլեւս խրատի տեղը չէր. բզրուկ էի նրա առաջ: Բավական է ձեռքը գլխիս դներ, կկորչեի»:**

Ռուստոմ ասում է նրան, որ կանչել է, որ հայտնի, որ մոտիկ ապագայում մտադիր է նրան մի մեծ հանձնարարություն անել: Ասելիքն այս էր: Եվ իրապես Ռուստոմը ափսոսացել էր, որ ցայժմ անգործ եւ թողել այդպիսի մի մարդու եւ մտադիր է եղել լծել նրան: Մինչ այս, մինչ այն, Զորյան լուր է ստանում, որ Ստեփանի թուրք ծառան կաշառված, ինքը թե կաշառողները հրացանով խփել են գետի մեջ լողալիս:

Ստեփանը սիրելի չէր ո՛չ յուրայիների շրջանում եւ ո՛չ իր գյուղում: Բոլորը խեթ էին նայում եւ համարում են վտանգավոր «Ադոնց շեթը», ինչպես որակում էին նրան: Շեթ ՁշանակումէՁ այն, ինչ որ Սասնո ծուռը՝ գիժ, բայց կտրիճ գիժ: Իր նախնին՝ Ադին, եւս արժանացել է այս կոչման. նա էլ էր շեթ: Զորյոյ այդ շեթությունը Ադին չէ՞ր ժառանգել Տեր Ավետիք քահանայից, եթե ինքը նրա զավակն էր: Մի քահանա, որ, խաչը թողած, սուր է առնում ձեռքը, անպայման շեթ է:

Ստեփանի կյանքը խորհրդավոր է. քոչվորական ախոյանը դառնում է դաշնակցական: Զորյանը, դաշնակցական համբավավոր խմբապետները ի՞նչ են, եթե ոչ քոչվոր զարկող Դավիթ Բեկի հոգեւոր շառավիղները...

Թող այս տողերը պահեն Ստեփանի հիշատակը: «Շեթերը» եւս հարգ ունին եւ հարգանքի բաժին: Մանի վրա կքած եւ աշխատանքի գերի հայ գյուղացուն կից հարկավոր են նաեւ այլ կառուցվածքի անձեր, որոնց օրինակ կարող է ծառայել Ստեփանի առնական պատկերը՝ ոչ կորացած, այլ ուղեշ, բարձրագլուխ, քաջ՝ քաջի նման, գիվերի՝ գիվերի նման, առանց երկյուղի, տեր իր ցանկություններին եւ խիզախ՝ արհամարհելու չափ եւ կյանքը, եւ մահը:

Ծանոթագրություն

1. Տե՛ս այս մասին մեր հոդվածը՝ «Դավիթ Բեկ» վեպի պատմական հիմք եւ գաղափարական արժեքը». «Ռաֆֆի», հոբելյանական ժողովածու, Փարիզ, 1937, էջ 122-148:
2. Ռաֆֆին «Դավիթ Բեկ» վեպի վերջում հրատարակել է Մելիք-Փարսադանցյան եղբայրների կարեւոր մի նամակ, որտեղ պատմված է, թե ինչպես են Մելիք-Փարսադանցյանները ընկել Դավալլու գյուղը (այժմյան Խորհրդային Հայաստանի եւ Նախնվանի հիքմավար շրջանի սահմանագլուխ): Միայն, կարծեմ, սխալվում են Սակուռ շրջանի գյուղերի անվանելով Դանալու: Պետք է լինի Դավալլու: Սրդի Դավալլուն պարտակած է իր անունը այդ Դավալլուին, որի բնակիչները գաղթած են 1827 թվականին: Ամեն տեղ հայ գաղթականներ, եկած Պարսկաստանից, թե Թուրքիայից, պահած են, դժբախտաբար, իրենց նախկին բնակության օտար եւ տգեղ անունները:
3. Կ.Կոստանյանց, Վիմական տարեգիր, Ս. Պետերբուրգ, 1913, էջ 217:
4. Ինչպես եւ Շուշի քաղաքի Տեր-Ավետիքյան տունը:
5. Ս.Ջալալյան, հատ. Բ, էջ 262: Կ.Կոստանյանց, էջ 195: 1937, Բրյուսել:

■

ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ Ն.ԱԴՈՆՑԻ ՄԱՍԻՆ

Ականավոր հայագետ Նիկողայոս Ադոնցի անձնական արխիվը

Սկիզբը՝ էջ 45

որոնք, երեւի թէ, տարբերակներ են վերջնական ուսումնասիրութեան համար: Տարբերակներից մէկը ունի 500, իսկ միւսը՝ 600 էջ: Ադոնցի գիտական ժառանգութեան այս կողմը ներկայացնող ընդամէնը մի քանի յօդուածներ են լոյս տեսել եւ, ըստ էութեան, այն լիովին անծանօթ է հայագիտութեանը: Կարծում ենք, որ հայոց եկեղեցւոյ պատմութեանը զբաղուող մասնագէտներին խիստ կը հետաքրքրի եւ կը շահագրգռի հրապարակումը եւ կը ստիպի նրանց շուտուտփոյթ ծանօթանալու ադոնցեան անբաւ հարստութեանը:

Զ - ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻՆ ԵՒ ՅԱՐԱԿԻՑ ԽՆԴԻՐՆԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՆԻՒԹԵՐ

Ն.Ադոնցի գիտական ժառանգութեանը զբաղուողներին եւ հետաքրքրուողներին սպասում է հաճելի անակնկալ: Արխիւում պահուող նիւթերի մէջ զգալի են Հայկական Հարցին, հայ ազատագրական շարժումներին նուիրուած էջերը: Դրանք բազմաթիւ են եւ բազմաբնոյթ: Այս ամէնը վկայում եւ ոմն նեաւ, թէ որքան խորութեամբ է դրանց հեղինկաը զբաղուել Հայկական Հարցով, որքան է նա ապրել ու ցաւել իր Ժողովրդի ճակատագրով: Եղած նիւթերի մէջ կ'առանձնացնենք «Խորհրդային Հայաստանը եւ հայկական գաղթավայրերը» (անգլերէն՝ 16 էջ, հայերէն՝ 19 էջ), «Հայկական Հարցը Սեւրում» (ռուսերէն, 20 էջ), «Հայկական Հարց» (հայերէն, 10 էջ), «Հայ ազատագրական շարժումները 1547-1711թթ.» (հայերէն, 10 էջ), «Պետրոս Մեծի եւ Օրիի բանակցութիւնները» (հայերէն, 16 էջ) յօդուածները եւ առանձնապէս «Ռուսաւոր ասիական խնդրի լուծման շուրջ» աւարտուն ուսումնասիրութիւնը (ռուսերէն, 115 էջ): Ապագային թողնելով եւուած աշխատութիւնների վերջնական գնահատականը՝ միայն նշենք, որ ուսուերէն մեկնաբանութիւնը այսօր էլ կարելի է ներկայացնել տպագրութեան:

Հայկական Հարցի հետ են աղերսւում նաեւ ժողովրդական ուսումնասիրութեան նուիրուած հեղինկայի հետազօտութիւնները: Ուշագրավ են արխիւում պահուող վիճակագրական եւ ժողովրդագրական այդ նիւթերը: Դրանք վկայում են հեղինկաի ոչ միայն գիտական լայն հետաքրքրութիւնների մասին, այլեւ ապացոյց են նրա վիթխարի ու բծախնդիր աշխատասիրութեան: Սասնաձէտների ուշադրութեանն են ներկայացնում «Փոքր Սասիայի յոյն եւ հայ ազգաբնակչութիւնը» (19-րդ դարի վերջ – 20-րդ դարի սկիզբ):

«Արեւմտեան Հայաստանի ազգաբնակչութիւնը» (19-րդ դարի վերջ – 20-րդ դարի սկիզբ), «Վասպուրականի գաւառի ազգաբնակչութիւնը», «

ՀԵՌԱՐԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿՉ «ՍՅՈՒՆԻՔԻ ԱՇԽԱՐՀ»
ՍՊՈՒՏԱՆՈՒ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՕԳՆԱԿԱՆՈՒԹՅԱՄԲ
ՀԱՍՑԵ՝ ք.ԿՀՊԱՆ, ՍՈՒՐԻՆՅԱՆ-20/32
ՀԵՌԱԽՈՍ՝ (0285) 5 25 63 = (091) 45 90 47 = (077) 06 28 02
էլ.հասցե՝ www.syuniacyerkir.am
էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru

տպագրվում է 2003թ.
հոկտեմբերի 1-ից ■
հիմնադիր եւ հրատարակիչ
«Սյունեյաց աշխարհ» ՍՊԸ ■

№ 17 236
18 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2011

ԿՐԹԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ

Անվանի գիտնականի ուսումնառության (նաեւ աշխատանքային) ուղին. մի քանի հասցե

Սանկտ Պետերբուրգի համալսարան: 1894թ. Ն.Ադոնցն ընդունվել է այդ համալսարանի պատմաբանասիրական ֆակուլտետ եւ ավարտել 1899-ին: 1902թ. վերադարձել է այդ համալսարան, որտեղ 1909թ. նրան շնորհվել է հայկական բանասիրության մագիստրոսի աստիճան: Նույն տարում նա այնտեղ դասավանդելու իրավունք է ստացել: Մինչեւ 1920թ. դասավանդում էր այդ համալսարանում:

Լոնդոն, Օքսֆորդի համալսարան: 1901-1902թթ. նա ծանոթանում է նշանավոր ձեռագրական հավաքածուներին:

Փարիզ, Ազգային գրադարան: 1900-1901թթ. նա այնտեղ հետեւում էր բյուզանդագիտական, լեզվագիտական, ասորերենի, հունարենի, ֆրանսերենի դասընթացներին:

Մյունխենի համալսարան: 1899-1900թթ. այդ համալսարանում նա հետեւել է նշանավոր բյուզանդագետների դասընթացներին:

Սբ Էջմիածնի Գեւորգյան ճեմարան: Տաթեւի վանական վարժարանը 1882թ. ավարտելուց հետո ընդունվել է ճեմարան եւ այն ավարտել 1889թ.: Նույն տարվա սեպտեմբերից շարունակել է ուսումնառությունը ճեմարանի լսարանական մասնագիտական բաժնում, որն ընդհատվել է 1891-ին: 1903թ. Ադոնցը պարապել է Սուրբ Էջմիածնի նշանավոր ձեռագրատանը:

Բրյուսելի Ազատ համալսարան (Արեւելագիտության ինստիտուտ): Այդ համալսարանի հետ են կապված նրա կյանքի վերջին 10 տարիները, որտեղ զբաղեցնում էր հայագիտության ամբիոնի վարիչի պաշտոնը:

տպագրվում է 2003թ.
հոկտեմբերի 1-ից ■
հիմնադիր եւ հրատարակիչ
«Սյունեյաց աշխարհ» ՍՊԸ ■
ՀԵՌԱՐԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿՉ «ՍՅՈՒՆԻՔԻ ԱՇԽԱՐՀ»
ՍՊՈՒՏԱՆՈՒ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՕԳՆԱԿԱՆՈՒԹՅԱՄԲ
ՀԱՍՑԵ՝ ք.ԿՀՊԱՆ, ՍՈՒՐԻՆՅԱՆ-20/32
ՀԵՌԱԽՈՍ՝ (0285) 5 25 63 = (091) 45 90 47 = (077) 06 28 02
էլ.հասցե՝ www.syuniacyerkir.am
էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru

ՀԱՋՎԱԳՅՈՒՏ

Ն.Ադոնցի մոր՝ Դյանյա Ադոնցի (Ռոստոմբեկյանի) նամակը որդուն (Հայկ Ադոնցին)



Ծանոթագրություն

Նամակը խմբագրությանն է տրամադրել պատմական գիտությունների թեկնածու, պրոֆ. Պետրոս Հովհաննիսյանը:

«Սյունյաց երկիրը» երախտագիտություն է հայտնում Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության Հայկական բաժանմունքի տնօրեն դոկտոր **Զավեն Եկավյանին՝** Ն.Ադոնցի երկերի ժողովածուի հինգհատորյակի հրատարակչությունը նախաձեռնելու եւ հովանավորելու համար:

Ծնվել է 1946թ. Հալեպում: Մանուկ հասակում տեղափոխվել է Փարիզ, որտեղ էլ ստացել է նախնական կրթությունը: Ավարտել է երեւանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը: Կրթություն է ստացել նաեւ Սորբոնի համալսարանում եւ եվրոպական այլ ուսումնական հաստատություններում՝ մասնագիտանալով լեզվագիտության, իրավագիտության, պատմագիտության բնագավառներում:

Կյուլպենկյան հիմնարկության Հայկական բաժանմունքի տնօրենի պաշտոնում եկավյանն առաջնորդվել է Մեծ բարերարի նշանաբանով. «Ազգի համար իրական եւ մնայուն արժեքներ ստեղծել»:

Նրա 25-ամյա անընդմեջ պաշտոնավարության ողջ ընթացքն իր գործի հանդեպ բացառիկ պատասխանատվության եւ նվիրումի վկայությունն է:

Կյուլպենկյան հիմնարկության հովանավորությամբ ԵՊՀ հրատարակչությունը լույս է ընծայել 120 հատոր հայագիտական ստվարածավալ գրքեր: Իսկ Հայաստանի եւ Սփյուռքի հրատարակչությունների կողմից հրատարակված հայագիտական գրքերի թիվն անցնում է 750-ից:

Դրանք հայկական մշակույթի պատմության եւ հայագիտության հիմնական բնագավառներն ընդգրկող ելակետային եւ աղբյուրագիտական արժեք ներկայացնող ծանրակշիռ գործեր են:

Եկավյանի նախաձեռնությամբ Կյուլպենկյան հիմնարկության կողմից հովանավորվում են Սփյուռքի հայերեն եւ օտարալեզու հայագիտական հանդեսները՝ «Բազմավեպը», «Հանդես ամսօրյան», «Կամարը», «Newsletter»-ը (Լեյդեն), «Revue des Etudes Armeniennes»-ը (Փարիզ), աշխարհի տարբեր համալսարաններում (Օքսֆորդ, Հարվարդ, Միչիգան եւ այլն) գործող հայագիտական ամբիոնները:

Զ.Եկավյանի գործունեությունը բարձր է գնահատվել ինչպես Հայաստանում, այնպես էլ արտասահմանում: Ֆրանսիայի նախագահը նրան պարգեւատրել է «Պատվո լեգիոնի ասպետի» շքանշանով: Հռոմի Պապի՝ երջանկահիշատակ Հովհաննես Պողոս 2-րդի հրամանով պարգեւատրվել է հատուկ համազգեստով եւ գրանցված գենքով (սուր): Հայաստանի Հանրապետությունը նրան շնորհել է Մովսես Խորենացու մեդալ, Սուրբ Մեսրոպ Մաշտոցի շքանշան: Իր հարազատ բուհը՝ ԵՊՀ-ն, նրան արժանացրել է պատվավոր դոկտորի կոչման: ■

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ
ՀԱՍՑԵ՝ ք.ԿԱՊԱՆ, ՍՈՍԵՓԻՆՅԱՆ 20/32
ՀԵՌԱԽՈՍ՝ (0285) 5 25 63 = (091) 45 90 47 = (077) 06 28 02
էլ.հասցե՝ www.syuniacyerkir.am
էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru

տպագրվում է 2003թ.
հոկտեմբերի 1-ից ■
հիմնադիր եւ հրատարակիչ
«Սյունյաց աշխարհ» ՍՊԸ ■

№ 17 236
18 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2011

ԷԷ ԲԵՕՐԲԱՆ

140 ՏԱՐԻ ԱՌԱՋ՝ 1871Թ. ՀՈՒՆՎԱՐԻ 10-ԻՆ (22-ԻՆ), ԾՆՎԵՑ XX ԴԱՐԻ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՄՏՔԻ ԱՄԵՆԱԿԱԿԱՆԱՎՈՐ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻՑ ՄԵԿԸ՝ ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԴՈՆՑԸ:

Բռնակոթ. պապմական ակնարկ

«Սիսիանի բնակավայրերի պատմություն» գրքից



ՇՉՈՐՍ ԴԱՎԹՅԱՆ
Բանասիրական գիտությունների դոկտոր

Լինելով Որոտանի աջափնյա գյուղերի կենտրոնական, հատկանշական եւ գերիշխող բնակավայրը՝ Բռնակոթը, հսկայական ազդեցություն է թողել շրջապատի վրա, որն էլ պատճառ է դարձել, որպեսզի նրա շուրջը համախմբվեին եւ ի վերջո նրա հետ ծուլվեին նրան հարող ծեռ ու փոքր շատ գյուղեր, նույնիսկ հին ցուցակում որոշակի կշիռ ու մեծություն ունեցող բնակավայրեր: Վերջիններիս մի մասի հետքերը մինչեւ այժմ էլ պահպանվում են, իսկ մի մասի վերաբերյալ էլ դեռ ճշգրիտ տեղեկություններ են հարկավոր: Բոլոր դեպքերում չի կարելի մոռացության տալ հետեւյալ անունները.

ա) Գիլելվանքը (Գիլելվանց), որ հին ցուցակում նշվում է Գայլոց վանք, իսկ Տաթեւի երկրորդ հարկացուցակում՝ Կելվանց անունով: Գտնվում է Բռնակոթից հյուսիս-արեւմուտք՝ Որոտանի աջափնյակում:

բ) Կամավանքը (Գյուլենց), որ հին ցուցակում ուներ 10 հարկաչափ եւ թվարկվում է Բռնակոթից անմիջապես հետո: Գտնվում է Բռնակոթից հյուսիս-արեւելք:

գ) Կրոովը, որ հին ցուցակի Կորովի գյուղն է՝ 12 հարկաչափով: Գտնվում է Բռնակոթից հարավ-արեւմուտք:

Անշուշտ, այս արվարձան գյուղերի թվին պետք է դասել նաեւ Որնաբերդը, թերեւս նաեւ Կիրակոսիկը՝ 12-ական հարկաչափով, որովհետեւ սրանք են, որ հին ցուցակում խմբված են Բռնակոթի շուրջը: Այս ընդհանրությանը միացած են եղել նաեւ այլ գյուղեր՝ Խաքը, Ծաղկա, Մուցք, Կրփածոր եւ այլն, որոնք միմյանց նկատմամբ տնտեսական, պաշտպանական միասնության հետ ունեցել են նաեւ ընդհանրություն, ինչպես նաեւ կրոնական, էթնիկական կապեր:

Ահա այս միջավայրում էլ Բռնակոթը 17-18-րդ դարերին հասնում է այնպիսի տնտեսական հզորության, որ դառնում է Սիսիանի ամենամեծ գյուղը եւ Տաթեւի վանքի երկրորդ հարկացուցակով ամենաշատ հարկն է տալիս (11 հազար 200 դահեկան): Հենց այս ժամանակ էլ Բռնակոթի՝ 5-6-րդ դարերի բազիլիկ եկեղեցու հիմքի վրա կառուցվում է նոր եկեղեցի (1701-1704թթ.)՝ Ս.Գեւորգ անվամբ (Ալիշանը սխալմամբ գրում է Ս.Գրիգոր): Այս շինարարությունն իրականացնում է Տաթեւի, այսինքն՝ Սյունիքի թեմական առաջնորդ Հովասափ Ըղուերծեցի եպիսկոպոսը: Ընդգծենք, որ Բռնակոթի եկեղեցու պատերի մեջ ագուցված են մի շարք տապանաքար-խաչքարեր, ինչպես նաեւ մեխանիկական ժամացույցի մի ծանրակերտ, որոնք հետազոտողներին խորհել են տալիս ինչպես գյուղի պատմության հնագույն ժամանակների, այնպես էլ նրա առաջադիմության մի շարք կարեւոր խնդիրների մասին: Ավելացնենք, որ այդ ժամանակներում Բռնակոթում ստեղծվել են ձեռագիր մատյաններ, որոնցից հնագույնը 1636թ. ավետարանն է՝ արտագրված Աստվածատուր գրչի կողմից՝ Արիստակես վարդապետի հրամանով (Մատենադարան. ձեռ. 2656):

Որ 18-րդ դարասկզբին Բռնակոթ իր ծաղկման կարեւոր փուլն էր ապրում, ապացուցում է նաեւ այն հանգամանքը, որ այդ ժամանակ արդեն գյուղաքաղաք էր կոչվում: Մ.Հասրաթյանը բերում է ժամանակագրի թողած հետեւյալ արձանագրությունը. «Եւ Աստուածատուր կրօնուաւորս, որ եմ երկրէն Սիւնեաց, ի գիւղաքաղաքն Բռնակոթու ի ազգէն Թորոսենցի, ի թվականութեանս հայոց ՌՃԾԵ (1706) ի թագաւորութեանն պարսից Շահ Սուլթան Հիւսեինի եւ ի Հայրապետութեանս Ս. Էջմիածնայ տեառն հանգուցեալ Նահապետ կաթողիկոսին, ի տէրութեանն գիւղաքաղքիս աղա Սադաղ-բեկին եւ իշխանութեանն հայոց Մելիք-Ամիրխանին, ի հայրապետութեանն սուրբ աթոռոյս Թաթէի (Տաթեւի) Հովասափ վարդապետին»:

Այս վավերագիրը, ինչպես նշում է Մ.Հասրաթյանը, հարկադրում է որոշակի եզրակացությունների հանգել: Նախ՝ պարզվում է, որ Մելիք-Ամիրխանն Անգեղակոթի հայտնի ժողովի նախաձեռնող Մելիք-Սաֆրազի որդին ու հաջորդն է, եւ որ այդ ժամանակներից էին արդեն Անգեղակոթի մելիքները մտածում իրենց ոստանը տեղափոխել Բռնակոթ, որովհետեւ Մելիք-Սաֆրազը մահացած պիտի լիներ, քանի որ վավերագրում որպես իշխող նշվում է Մելիք-Ամիրխանը: Թերեւս հենց այդ տեղափոխման նպատակով էր վերակառուցվել Բռնակոթի եկեղեցին՝ տեղի բնակիչների եւ ավելի շատ Մելիքի ծախսերով եւ Տաթեւի թեմական առաջնորդի նախաձեռնությամբ: Դա անհրաժեշտ պայման էր իրենց ազդեցությունը կորցրած բազմաթիվ գյուղերի անկումից հետո Սիսիանի տարածքում բարձրացնելու գոնե մեկ-երկու հզոր բնակավայր, իսկ Անգեղակոթի մելիքներն այդպիսին տեսնում էին միավորված, մեծ ճանապարհ ունեցող, սակայն խաչմերուկ չհանդիսացող Բռնակոթի մեջ: Մեզ հայտնի է, որ Մելիք-Ամիրխանին հաջորդել են որդին՝ Մելիք-Նարիկը, եւ թոռը՝ Մելիք-Սադաթը, ում 1749թ. Նախիջեւանի Հեյդար խանը սպանել է: Այս Մելիք-Սադաթի որդի Մելիք-Սաֆրազ եղբորորը, հպատակվելով Փաշան խանի հիմնադրած Ղարաբաղի խանությանը, կազմակերպում է Նախիջեւանի խանության դեմ ապստամբած շահկերտցիների (ղազանչեցիների) եւ ազդուլեցիների գաղթը Շուշի:

Այնուհետեւ Բռնակոթում սկսում է բարձրանալ մելիքական մեկ այլ՝ Մելիք-Թանգյան տոհմը, որի այստեղ գալու եւ հիմնավորվելու ժամանակը համարվում է 18-րդ դարի երկրորդ կեսի սկիզբը: Նրանց ծագման մասին երկու ենթադրություն կա: Մեկ, որ տոհմի Նահապետ Մելիք-Ստեփանը Անիում զորապետ է եղել եւ գաղթել է Բռնակոթ: Եվ երկրորդ՝ նրանք եկել են Լոռիից կամ Վրաստանից: Ինչեւէ: Բռնակոթում իշխող դիրք գրավելուց հետո այս երկու մելիքական տների մեջ մշտապես հակամարտություններ են առաջանում, որոնք հանգուցալուծվում կամ լիցքաթափվում են տիրող խաների շահարկող միջամտության, իսկ հիմնականում՝ շահագրգիռ կողմնակալության միջոցով: Ուստի այդ մելիքական տների գործունեությունն էլ ունեցել է հարափոփոխ ընթաց՝ ժամանակի տիրողների պահվածքին ու նպատակին համապատասխան: Մի բան, սակայն, անժխտելի է: Այն, որ մելիքությունները՝ որպես տեղական ինքնակառավարման մարմիններ, ուսեին բավականաչափ իրավունքներ: Նրանք էին կատարում զորահավաքը եւ մասնակցում պատերազմներին, հարկեր հավաքում, ժողովրդից տուգանքներ առնում, զանազան պատժամիջոցներ կիրառում՝ ընդհուպ մինչեւ մահապատիժը, իհարկե, առանց գրված օրենքների, դատակնի կամ կանոնակարգի ապավինելով միայն սեփական խղճին ու տրամաբանությանը:

Բռնակոթը, մնալով որպես մելիքական նստավայր, ունենալով բարեբեր հողահանդակներ եւ հիանալի արոտավայրեր, շարունակեց տնտեսական ու քաղաքական վերելք ապրել մինչեւ 18-րդ դարի վերջին քառորդը: Այս երեւույթն ապացուցելու է գալիս նաեւ մի պատմական առաքելություն, որ 1787թ. կատարվում է բռնակոթցիների ձեռքով: Այդ տարում Տաթեւի մայր տաճարի հարավային պատի եւ Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու մուտքի անկյունում՝ այն ժամանակ դեռ կանգուն թաղակապ գավիթում, նրանք կառուցում են միջնադարի խոշոր մտածող եւ կրոնական գործիչ Գրիգոր Տաթեւացու մատուռ-դամբարանը: Բովանդակ Սյունիքում այս պատիվը բռնակոթցիներին տալը, այն էլ մեր ժողովրդի համար մռայլ այդ տարիներին, պետք է բացատրել հենց Բռնակոթի մելիքների աճող հեղինակությամբ եւ գյուղի անմրցակից լինելու հանգամանքով: Յայսօր անվթար մնացած այդ մատուռի վրա փորագրված արձանագրությունը ազդարարում է.

«Շնորհիւն Այ շինեցաւ սբ Սատուռս եօթանասուս ռաբուլաւպետին եւ երկրորդ ոսկեբերանին, երիցս երանեալ վրժպետին մերոյ եւ չորրորդ Լուսաւորչին սբն Գրիգորի Տաթեւացւոյն ձեռամբ բազմաշխատ եւ օգտաջան Սիւնեաց պետի տն Յովակիմայ Սիւնեցւոյ արդեամբ եւ ծախիւք բռնակոթեցւոց, այսինքն Տր Գէորգ, Տր Յակոբ եւ Տր Յարութիւն քահանայից. նաեւ Կարապետին եւ Սկրտչին, Յակոբջանին, Սիմիօնին, Աղդէին, Յովակիմին, Պետրոսին, Գրիգորին եւ Մարտիրոսին, Քարամդուլոյն, Ստեփանին եւ Յօճանին, Յարութիւնին, Մօսեսին, Սկրտչին, Շահնազարին եւ Ամատուրին, այլեւ բարեպաշտուտիւի կանաց Նազլուին, Հուրիզատին, Մարիամին, Գուլփարիին, որոց հիշտկն օրհնութք եղիցի եւ աղօթք սրբոյս Գրիգորի ի վերս նոցա լիցի ամէն: Կառուցաւ սբ մատուռս ի հայրապետութեան սբ գանիին էջմիածնի Տն Ղուկասու ի ՌՄԼՋ թուոջս մերում, յաւուրս Փանահեան Իբրահիմ խանին»: (այսինքն՝ 1787 թվականին):

Այս արձանագրությունը, սակայն, միայն պատմական վավերագիր չէ: Խնդիրն այն է, որ նույն թվագրությամբ նույնանման մի արձանագրություն էլ փորագրված է Բռնակոթի եկեղեցու ներսում: Սակայն հենց այս երկու արձանագրությունների մի տարբերությունն էլ լույս է սփռում Բռնակոթի մելիքական երկու տների փոխհարաբերությունների վրա: Այսպես՝ Տաթեւի արձանագրության մեջ Տեր Գեւորգ, Տեր Յակոբ եւ Տեր Հարություն քահանաների հետո գրված են Կարապետ եւ Սկրտիչ Մելիք-Թանգյան եղբայրների անունները, իսկ այնուհետեւ՝ գյուղի ազդեցիկ ու ծախս կատարած տների գլխավորների, նաեւ՝ նրանց կանանց անունները: Իսկ Բռնակոթի եկեղեցու արձանագրության մեջ երեք քահանաների անուններից հետո գրված են Մելիք-Շահնազարի եւ Մելիք-Սաֆրազի անունները: Այս հանգամանքը խորագիտակ Մ.Հասրաթյանին բերում է այն եզրակացության, որ Կարապետ եւ Սկրտիչ Մելիք-Թանգյաններն առաջին եւ երկրորդ արձանագրությունների միջեւ ընկած ժամանակաշրջանում տապալվել եւ հեռացվել են ասպարեզից՝ իրենց տեղը զիջելով Մելիք-Սաֆրազյաններին: Բռնակոթի եկեղեցու գավթում մինչեւ վերջին տարիները պահպանվել էր վերոհիշյալ Մելիք-Շահնազարի որդու տապանաքարը՝ հետեւյալ գրությամբ. «Տապանս Շահնազարի որդի Գրիգորին, որ է Ընկեղակոթքի, թվին ՌՄԼէ» (1788): Սակայն Մ.Հասրաթյանի այս եզրակացության կողքին չենք կարող չտեսնել մեկ այլ վարկած եւս: Գրիգոր Տաթեւացու մատուռի վրա հավանաբար բռնակոթցիները ցանկացել են գրել եւ Մելիք-Թանգյանների, եւ Մելիք-Սաֆրազյանների անունները (իհարկե չնշելով նրանց մելիքական տիտղոսները): Սակայն իրար հակառակ կանգնած մելիքների համաձայնությունը չստանալով՝ Տաթեւի մատուռի վրա գրել են Մելիք-Թանգյանների, իսկ Բռնակոթի եկեղեցում՝ Մելիք-Սաֆրազյանների անունները, որպեսզի երկու կողմերի միջեւ նոր հակամարտություն չառաջանա, եւ երկու կողմերը մասնակցած լինեն ժամանակի շատ կարեւոր եւ հանրահայտ այդ կոթողի կառուցմանը:

Մի տեսակ հանդիպ չէ նաեւ Մ.Հասրաթյանի այն կարծիքը, թե նույն Փանահի որդի Իբրահիմ խանը մի դեպքում համածայնում է Կարապետ եւ Սկրտիչ Մելիք-Թանգյանների տապալվել-հեռացվելու հետ, իսկ մի քանի ամսից հետո նրանց որդուն հաստատում է ամբողջ Սիսիանի մելիք: Ավելի հավանական է թվում, որ 1780-ական թվականներից արդեն 1796թ. Ռուսաստանի պարսկական արշավանքի, իսկ հետագայում՝ 1801-04թթ., Անդրկովկասի մի մասին տիրանալու հետեւանքով մելիքությունները՝ որպես պարսկական իշխանությունների հենարան եւ տեղական կառավարման մարմիններ, արդեն ամենուրեք պետք է կորցրած լինեին իրենց նախկին դիրքը: Այդ հանգամանքը չէր կարող չազդել եւ Բռնակոթի երկու մելիքական տների փոխհարաբերությունների վրա: Ուստի, երբ Ղարաբաղի խանությունն ընդունեց ռուսական հպատակություն, իսկ Ղզոնդիի մարտում՝ Թանգի-բեկ Մելիք-Թանգյանը: Մելիք-Թանգյանների տոհմի ակամավոր ներկայացուցիչն էր Ներսես արքեպիսկոպոս Մելիք-Թանգյանը (1866-1948): Նա ավարտել էր Պետերբուրգի հանալսարանի իրավաբանական ֆակուլտետը: Եղել է Տաթեւի թեմի առաջնորդական փոխանորդ եւ վանքի վանահայր, էջմիածնի Մայր Աթոռի գործերի կառավարիչ: 1912թ. մինչեւ մաթ Ատրպատականի (Թավրիզ) թեմի առաջնորդն էր: Նա խոր գիտելիքների տեր եւ բազմաբեղուն գիտնական-իրավաբան, նաեւ լեզվաբան ու պատմաբան էր: Մի շարք աշխատություններից բացի՝ «Հայոց եկեղեցական իրավունքը» հիմնարար աշխատությանն հեղինակն է:

Մելիք-Սաֆրազբեկյանների Մելիք-Թանգյանը, իսկ Աղուդիի մարտում՝ Թանգի-բեկ Մելիք-Թանգյանը: Մելիք-Թանգյանների տոհմի ակամավոր ներկայացուցիչն էր Ներսես արքեպիսկոպոս Մելիք-Թանգյանը (1866-1948): Նա ավարտել էր Պետերբուրգի հանալսարանի իրավաբանական ֆակուլտետը: Եղել է Տաթեւի թեմի առաջնորդական փոխանորդ եւ վանքի վանահայր, էջմիածնի Մայր Աթոռի գործերի կառավարիչ: 1912թ. մինչեւ մաթ Ատրպատականի (Թավրիզ) թեմի առաջնորդն էր: Նա խոր գիտելիքների տեր եւ բազմաբեղուն գիտնական-իրավաբան, նաեւ լեզվաբան ու պատմաբան էր: Մի շարք աշխատություններից բացի՝ «Հայոց եկեղեցական իրավունքը» հիմնարար աշխատությանն հեղինակն է:



Ն.Ադոնցի տունը Բռնակոթում: Կառուցել է պապը՝ Առաքելը, 1861թ.: Երկրորդ հարկը փլվել է 1931թ. Երկրաշարժից: Մուտքի դարպասի սալաքարի վրա պահպանվում է գրվածքը. «Այս է տունս սուտեաց բռնակոթցի բարոն Հովհաննես Առաքելեան Տէր Ավէտիսեանցի 1861»:

Բռնակոթի Սբ Գեւորգ եկեղեցին: Մուտքի ձախ մասում է թաղված Ն.Ադոնցի հայրը՝ Գեւորգը: Տապանաքարի վրա գրված է. «ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ԱԴՈՆՑ ԳԵՎՈՐԳ ԱՌԱՔԵԼԻ ծն. 1842թ. վ. 1912թ. հիշ. Ադոնց. ԴՅԱՆՅԱՅԻՑ»

տպագրվում է 2003թ.
հոկտեմբերի 1-ից ■
հիմնադիր եւ հրատարակիչ
«Սյունյաց աշխարհ» ՍՊԸ ■
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ
ՀԱՍՑԵ՝ ք.ԿԱՊԱՆ, ՍՈՍԵՓԻՆՅԱՆ 20/32
ՀԵՌԱԽՈՍ՝ (0285) 5 25 63 = (091) 45 90 47 = (077) 06 28 02
էլ.հասցե՝ www.syuniacyerkir.am
էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru

ԷԷ ԲԵՕՐԲԱՆ

140 ՏԱՐԻ ԱՌԱՋ՝ 1871Թ. ՀՈՒՆՎԱՐԻ 10-ԻՆ (22-ԻՆ), ԾՆՎԵՑ XX ԴԱՐԻ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՄՏՔԻ ԱՄԵՆԱԿԱԿԱՆԱՎՈՐ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻՑ ՄԵԿԸ՝ ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԴՈՆՑԸ:

Բռնակոթ՝ Ն.Ադոնցը վերջին անգամ գյուղ է եկել 1916-ին: Գտնվում է Սիսիան քաղաքից 6 կմ հարավ-արեւմուտք՝ նույնանուն գետի ընդարձակ հովտում:

Բռնակոթը պապմական առումով ունեցել է վերելքի մի քանի ժամանակաշրջան: Առաջինի սկիզբը համընկնում է Սյունյաց նախարարության անկման եւ մարզպանական Հայաստանի հաստատման (5-7-րդ դար), երկրորդը՝ Սյունյաց նոր նահապետների, Սյունիքի թագավորության եւ հետագա իշխանության (9-14-րդ դար), երրորդը՝ Սյունյաց մելիքությունների (17-18-րդ դար) ժամանակահատվածներին: Կասկած չկա, որ հենց վերելքի ու ինքնահաստատման այս վերջին երկու դարերում է Բռնակոթը դարձել Սիսիանի տնտեսական ու ռազմական ապավենը, այն դեպքում, երբ դասնյակ այլ հայկական գյուղեր դատարկվել են կամ վերացել պատմական ասպարեզից:

Բռնակոթի պապմական ակնարկ

Գիլելվանքի ավերակներ

Գիլելվանքի ավերակներ

Գիլելվանքի ավերակներ

Գիլելվանքի ավերակներ

Գիլելվանքի ավերակներ

Գիլելվանքի ավերակներ

Գիլելվանքի ավերակներ

Գիլելվանքի ավերակներ

Գիլելվանքի ավերակներ

Գիլելվանքի ավերակներ

Գիլելվանքի ավերակներ

Գիլելվանքի ավերակներ

Գիլելվանքի ավերակներ

Գիլելվանքի ավերակներ

Գիլելվանքի ավերակներ

Գիլելվանքի ավերակներ

Գիլելվանքի ավերակներ

Գիլելվանքի ավերակներ

Գիլելվանքի ավերակներ

Գիլելվանքի ավերակներ

Գիլելվանքի ավերակներ

ՀԵՌԱՐԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿՈՂ ՀԱՅՐԱՊԵՏԱՅԻՆ ԱՇԽԱՐՀԸ
ՍՈՒՆՅԱՑՈՒ ՊԱՐԱՆՈՒԹՅՈՒՆԻՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ՀԱՍՑԵ՝ ք.ԿՈՂԲ, Շ.ՊՈՂՈՍՅԱՆ-20/32
ՀԵՌԱԽՈՍ՝ (0285) 5 25 63 = (091) 45 90 47 = (077) 06 28 02
էլ.հասցե՝ www.syuniacyerkir.am
էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru
տպագրվում է 2003թ.
հոկտեմբերի 1-ից ■
հիմնադիր եւ հրատարակիչ
«Սյունյաց աշխարհ» ՍՊԸ ■
№ 17 236
18 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2011

ՀԱՅՐԵՆԻ ԵՂԵՐՔ

140 ՏԱՐԻ ԱՌԱՋ՝ 1871Թ. ՀՈՒՆՎԱՐԻ 10-ԻՆ (22-ԻՆ), ԾՆՎԵՑ XX ԴԱՐԻ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՄՏՔԻ ԱՄԵՆԱԿԱԿԱՆԱՎՈՐ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻՑ ՄԵԿԸ՝ ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԴՈՆՑԸ:

Հավերժացվել է Նիկողայոս Ադոնցի հիշատակը

Սիսիան քաղաքում ստեղծված պատմության թանգարանը, Հայկական ԽՍՀ ժողովրդական դեպուտատների Սիսիանի քաղաքային խորհրդի գործկոմի 1989թ. նոյեմբերի 28-ի որոշմամբ անվանակոչվել է հայ ականավոր պատմաբան Նիկողայոս Ադոնցի անունով: Քաղխորհրդի գործկոմի նիստը նախագահել է գործկոմի նախագահ Նորիկ Հակոբյանը, իսկ քաղխորհրդի գործկոմի անդամներն էին Մ.Ալչանյանը, Ա.Դանիելյանը, Է.Հակոբյանը, Հ.Միհնայանը, Ա.Սիմոնյանը:

Սիսիանի այս փողոցը Նիկողայոս Ադոնցի անունով կոչվեց 1992թ.: Քաղխորհրդի գործկոմի նախագահ՝ Ն.Հակոբյան, Շրջխորհրդի գործկոմի նախագահ՝ Մ.Պողոսյան:

1992թ. ապրիլի 21-ին Երեւանի քաղխորհրդի №8/1 որոշմամբ նախկին Գվարդիականների փողոցը (Արաբկիր վարչական շրջան) կոչվել է 20-րդ դարի ականավոր պատմաբան Նիկողայոս Ադոնցի (Տեր-Ավետիքյան) անվամբ:

տպագրվում է 2003թ.
հոկտեմբերի 1-ից ■
հիմնադիր եւ հրատարակիչ
«Սյունյաց աշխարհ» ՍՊԸ ■
ՀԵՌԱՐԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿՈՂ ՀԱՅՐԱՊԵՏԱՅԻՆ ԱՇԽԱՐՀԸ
ՍՈՒՆՅԱՑՈՒ ՊԱՐԱՆՈՒԹՅՈՒՆԻՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ՀԱՍՑԵ՝ ք.ԿՈՂԲ, Շ.ՊՈՂՈՍՅԱՆ-20/32
ՀԵՌԱԽՈՍ՝ (0285) 5 25 63 = (091) 45 90 47 = (077) 06 28 02
էլ.հասցե՝ www.syuniacyerkir.am
էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru

ԱՆՅԱՍ ՈՒԴԻ

140 ՏԱՐԻ ԱՌԱՋ՝ 1871Թ. ՀՈՒՆՎԱՐԻ 10-ԻՆ (22-ԻՆ), ԾՆՎԵՑ XX ԴԱՐԻ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՄՏՔԻ ԱՄԵՆԱԿԱԿԱՆԱՎՈՐ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻՑ ՄԵԿԸ՝ ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԴՈՆՑԸ:

Լուսանկարում՝ Ամենայն հայոց կաթողիկոս Գէորգ Սուրենյանցը Սանկտ Պետերբուրգի Հայոց եկեղեցական խորհրդի անդամների հետ. աջից երրորդը՝ Նիկողայոս Ադոնցը: Սանկտ Պետերբուրգ, 1912թ.:

Ն.Ադոնցի հոգեւոր-ազգային գործունեությունը. ԴՐՎԱԳՆԵՐ

Բրեստ-Լիտովսկ: 1917թ. դեկտեմբեր-1918թ. մարտ ամիսներին այստեղ ընթացող հաշտության բանակցություններում, որն ավարտվեց 1918թ. մարտի 3-ի պայմանագրով, Հայկական հարցի վերաբերյալ Վահան Տերյանի գրամադրության ներքո գտնվող թղթածրարի ստեղծման աշխատանքներին գործուն մասնակցություն է ունեցել Ն.Ադոնցը: Բանակցությունները տեղի էին ունենում Ռուսաստանի եւ Քառյակ միության երկրների միջեւ (Գերմանիա, Ավստրո-հունգարիա, Թուրքիա եւ Բուլղարիա):

Գեներալ Հակոբ Բագրատունի: Ն.Ադոնցը կազմակերպչական կարեւոր դեր է խաղացել 1916թ. մայիսին Պետրոգրադում գումարված հայկական խորհրդաժողովի աշխատանքում, մասնավորապես օգնել է Հ.Բագրատունուն՝ հայկական բանակային կորպուսի կազմավորման ուղղությամբ ձեռնարկվելիք միջոցառումներում:

Լազարյան ճեմարան: 1917-18թթ. Ն.Ադոնցը եղել է այդ ճեմարանի պատվավոր հոգաբարձու:

Կ.Պոլիս: «Սանկտ Պետերբուրգի հայկական կոմիտեի» հանձնարարությամբ եւ ցարական Ռուսաստանի արտաքին գործոց նախարարության հավանությամբ 1912թ. վերջին Ն.Ադոնցն այցելել է Կ.Պոլիս, որտեղ գործնական հանդիպումներ է ունեցել համայնքի երեւելի դեմքերի հետ:

Կ.Պոլսի հայոց պատրիարք Հովհաննես եպիսկոպոս Արշարունի, Մ.Օրմանյան, Գ.Զոհրապ, Գ.Նորատունկյան, Ն.Տաղավարյան, Պ.Հալաճյան եւ ուրիշներ, փորձել նրանց կողմնորոշել դեպի Ռուսաստանը:

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ԻՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆԻՔՅԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՍՑԵ՝ ք.ԿԱՊԱՆ, ՇԱՀՈՒՄՅԱՆ 20/32
ՀԵՌԱԽՈՍ՝ (0285) 5 25 63 (091) 45 90 47 (077) 06 28 02
էլ.հասցե www.syuniacyerkir.am
էլ.փոստ syuniacyerkir@mail.ru
տպագրվում է 2003թ.
հոկտեմբերի 1-ից
հիմնադիր եւ հրատարակիչ
«Սյունյաց աշխարհ» ՍՊԸ
№ 17 236
18 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2011

ՀԱՅՐԵՆԻ ԵԶԵՐՔ

Համո Սահյան

Միսիանը արոտավետ սարեր ունի ու ցորենաշատ լեռնահովիտներ: Երկնքի համը դաշտերին բերող ջրեր ունի ու կիրճերի մամռահոտը երկինք տանող արահետներ:
Լեռների գագաթները յոթերորդ երկնքի մեջ են, խարիսխները՝ վիհավոր անտակ կիրճերում:
Տարվա բոլոր եղանակները ապրում են իրար հարեւանությամբ: Օգոստոսին (երբ մինչեւ անգամ տարին երաշտ է) կարող ես լեռնագագաթներից դեղապետի ձյուն բերել, հունվարին մանուշակ ու կակաչ քաղել կիրճերի հատակին:
Ցից Քարեր բնակավայրը, որն առընթեր է շրջկենտրոնին՝ Միսիան քաղաքին, 4-6 հազար տարվա պատմություն ունի: Ամեն անգամ, երբ այդ բնակավայրն եմ մտնում, ինձ թվում է, թե տեսնում եմ նրա բնակիչներին, վիթխարի ժայռաբեկորները ձորից ձորաբերան հանող շինարարներին, տեսնում եմ նրանց, լսում նրանց ձայները, խոսում նրանց հետ նախնական մի լեզվով եւ դառնում նրանց ժամանակակիցը: Երբ դուրս եմ գալիս այնտեղից, ինձ զգում եմ ոչ թե յոթանասուն, այլ յոթ հազար տարեկան: Եվ նրանք էլ, այդ քաղաքի բնակիչներն ու շինարարները հեռս գալիս մտնում են այսօրվա Միսիան քաղաքի քարտաշների, որմնադիրների եւ ճարտարապետների կերպարանքի մեջ եւ դառնում են մեր ժամանակակիցները:
Պատմական հուշարձանները շատ են Միսիանում: Ժայռերի զանգախոռոչներում ծվարած բերդեր, բլուրների թամբին նստած վանքեր, ժողովրդյան հանճարի ուրիշ վկաներ... Եվ Միսիանն էլ իմ բնաշխարհն է, իմ ծննդավայրը, ամեն քարը իմ հոգու մի բեկորն է, ամեն պտղունց հողը՝ իմ սրտի մի մասունքը: Բոլորն իմ մեջ են, բոլորի մեջ ես եմ...
Եվ, սակայն, ամենից շատ սիրում եմ Միսիանի մարդկանց, սիսիանցիներին, մարդիկ, որ օգտվել գիտեն ժամանակակից քաղաքակրթության բոլոր բարիքներից եւ պահպանել գիտեն նախնիների լավագույն սովորույթները: Միրում եմ նրանց աշխատասիրությունը, տիրոջական զգացումը հողի նկատմամբ, համեստությունը, ամոթխածությունը, պարզամտությունը:
Առուկուլից, առուծախից, առուփախից փախած այդ մարդիկ եթե գլխիդ սպիտակ մազ են տեսել, ուրքի կկանգնեն, եթե նստած են, եթե կանգնած են, գլխարկները կհանեն:
Դիրքը այստեղ դեր չունի, որոշողը գարիքն է:
Նրանք հացի պատառը գետնին չեն գցի, գետնին հացի պատառ տեսնեն, կառնեն կփշրեն, կդնեն քարին, որ թռչուններն ուտեն: Հացը մեղք է, հացը սուրբ է՝ կասեն:
Աչքերդ առան երեսին, եթե աղջիկ է, այտերը որդան կարմիր կդառնան, եթե տղա է, կշփոթվի, աչքերը գետնին կխոնարհի, կանցնի: Հետո հետ կդառնա կնայի:
Միրելի՛, սիրելի՛ սիսիանցիներ, ինչքան բան ունի այս խառնիխուռն, այս ամբարտավան ժամանակների մարդը ձեզանից սովորելու: Ձեր չկորցրածը, ձեր պահպանածը նահապետականություն չէ, ծիսական խեղճություն չէ, հետամնացություն չէ, այլ կպարարյալ մարդկայնություն, որ մարդուն պետք է գալու ամենուր եւ ամեն օր, քանի կյանքը կա: Ճակատը համբուրելի ժողովուրդ է Միսիանի ժողովուրդը: Եվ ես շնորհակալ եմ ճակատագրից, որ այդ ժողովրդի զավակն եմ եւ նրա երազաշատ ապրումների թարգման բանաստեղծը:

Լուսանկարը՝ Ս.Գրիգորյանի

«ՋՈՐԱՑ ՔԱՐԵՐ ԲՆԱԿԱՏԵՂԻ» ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹՅԱՒՆ ԱՐԳԵԼՈՑ

Զորաց քարերը (Քարահունջ) գտնվում է Սիսիան քաղաքից 3 կմ հյուսիս: Հուշարձանը որոշակի դասավորությամբ, ուղղահայաց կանգնեցված բազմաթիվ քարերի համալիր է: Հնագետները կարծում են, որ Զորաց քարերը կառուցվել է Ք.ա. 3-2-րդ հազ. սահմանագլխին՝ վաղ բրոնզից միջին բրոնզին անցումային ժամանակաշրջանում, եւ հարատեւել մինչեւ Ք. ա. 1-ին հազ. կեսերը: Ըստ ակադեմիկոս Պարիս Հերունու, ով Քարահունջ անունն է տվել, հուշարձանը 7500 տարի առաջ եղել է սրբավայր եւ աստղադիտարան: Հնագիտական պեղումների ընթացքում այստեղ հայտնաբերվել են մ.թ.ա. 3-1-րդ հազ. դամբարաններ:

Լուսանկարը՝ Կ.Յովհաննիսյանի

ՇԱՔԵԻ ՋՐՎԵԺ Գտնվում է Որոտանի կիրճում՝ Սիսիանից 3կմ հյուսիս-արեւմուտք՝ Որոտանի ձախակողմյա Շաքե վտակի վրա: Բարձրությունը 18մ է: Շաքեն Հայաստանի ամենաբարձր եւ գեղեցիկ ջրվեժն է, այն մշտապես գրավել է այցելուներին եւ եղել զբոսաշրջիկների ուշադրության կենտրոնում: Հեռավորությունը Երեւան-Ղարաբաղ մայրուղուց 4կմ է: